

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՀ ԳԱԱ ՇԻՐԱԿԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԵՐԱԺԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ V-XV ԴԱՐԵՐԻ  
ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵջ**

HASMIK HARUTYUNYAN

*MUSIC IN THE V-XV CENTURIES'  
ARMENIAN LITERATURE*

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն

---

Երևան 2010

**ՀՏԴ 78 (091) (479.25)**

**ԳՄԴ 85.313 (2Հ) դ**

**Հ 422**

Գիրքը հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական  
հետազոտությունների կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ:

**Պատասխանատու խմբագիր՝**

արվեստագիտ. դոկտոր, պրոֆեսոր **Աննա Արևշատյան**

**Գրախոսներ՝** բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Մերգոն Հայրապետյան**  
արվեստագիտ. թեկնածու, դոցենտ **Անահիտ Բաղդասարյան**  
արվեստագիտ. թեկնածու, դոցենտ **Սիեր Նավոյան**

**Հ 422 Հ. Հարությունյան.**

«Երաժշտությունը V-XVդդ. հայ մատենագրության մեջ»,

«Գիտություն» հրատ.- Երևան, 2010, 219 էջ:

Գիրքը նվիրված է հայ երաժշտության պատմության մեջ առյուրագիտական մեծ արժեք ներկայացնող V-XVդդ. մատենագրական սկզբնադրյությունների (պատմիչներ, ծեռագրերի հիշատակարաններ, գրական ստեղծագործություններ) համահավաք ըննությանը: Հայագիտության տարբեր ոլորտներում լայնորեն մեկնաբանված հիշատակությունների բաղդատական դիտարկումների կողմին բերված են նոր հիշատակություններ, որոնք ընդլայնում են նախաքրիստոնեական և միջնադարյան Հայաստանի երաժշտապատմական գործնթացների ճանաչողական սահմանները:

Գիրքը հասցեագրված է հայ մշակույթի պատմության խնդիրներով գրադարձումների, ինչպես նաև հայագիտությամբ հետաքրքրվողների համար:

**ՀՏԴ 78 (091) (479.25)**

**ԳՄԴ 85.313 (2Հ) դ**

ISBN 978-5-8080-0815-1

@ ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2010թ.

@ Հարությունյան Հ.Հ.

Նվիրում եմ ուսուցչիս՝ վաստակաշատ երաժշտագետ  
Ոորերտ Աքայանի պայծառ հիշտակին

Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Հայ ազգային երաժշտությունը հնդեվրոպական մշակույթի արժեքավոր մասն է, և որպես այդպիսին՝ հանդիսանում է պատմամշակութային ուսումնասիրության մեծածավալ ասպարեզ՝ համապատասխան աղբյուրների համակարգով:

Ընդհանրապես երաժշտապատմական որևէ գործընթացի աղբյուրագիտական ընտրանին կազմում են որոշակի երաժշտական ստեղծագործությունները, այս կամ այն համակարգով դրանց գրառումները: Պատմագիտական արժեք է ձեռք բերում երաժշտական նյութական մշակույթը, մասնավորապես՝ պեղածո նվագարանները:

Իբրև հնագույն մշակութային արժեքների կրող, Հայ երաժշտության որոշ շերտեր այսօր պահպանվել են վերապրուկի տեսքով: Այս պայմաններում երաժշտական մշակույթի պատմությունը վեր հանելու կարևոր աղբյուր է դառնում նաև միջնադարյան Հայ մատենագրությունը՝ մասնավորապես Հայ պատմիչների երկերը: Թեև Հայ պատմական երաժշտագիտությունը հասել է նշանակալի ձեռքբերումների, այդուհանդեռձ հատուկ աղբյուրագիտական հետազոտություններն այս ընագավառում մեծ թիվ չեն կազմում: Դրանց հիշյալ մեթոդաբանական մոտեցումը կարևորվում է Հայ երաժշտարկեստի պատմության բոլոր նշանավոր հետազոտողների աշխատություններում: Այստեղ հատուկ ընդգծվում է Հայ միջնադարյան մատենագրության տարբեր տվյալների համաձափաք ուսումնասիրության անհրաժեշտությունը և դրա հիմքի վրա՝ ազգային երաժշտապատմական գործընթացի սրբագրումը, հիմնադրույթների շարունակական կատարելագործումը և այդ նյութերի աղբյուրագիտական արժեքի կարևորումը:

Հայ երաժշտագետներից առաջինը Հակոբ Հովհաննիսյանն էր, որի «Հայոց երաժշտության պատմություն» աշխատությունն ամփոփում էր

միջնադարյան գրավոր աղբյուրների բազմաթիվ տվյալներ<sup>1</sup>: Այս աշխատությունը բարձր է գնահատվել Հայ երաժշտագիտության մեջ, սակայն որոշ կարևորագույն պատմամշակութային դրութների լրամշակման պատճառով չի հրատարակվել: Աշխատության «ուժեղ» կողմերից մեկը համարվել է պատմական աղբյուրների տեղին օգտագործումը<sup>2</sup>:

Նշերով աշխատության մեջ առկա վիճելի դրութները և, ընդհանուր առմամբ, անսավարտ բնույթը, Ալ.Շահվերդյանը գրում է, որ «Հ.Հովհաննիսյանի աշխատությունը որոշակի նշանակություն ունի, քանի որ պահպանված նյութերի և պատմական տեղեկությունների առատության մասին լայն պատկերացում է տալիս և, մյուս կողմից, հաստատում է, որ Հին և միջնադարյան փուլերի երաժշտական-պատմական պրոցեսը Հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական և ընդհանուր կուլտուրական պատմության հետ կենդանի միամնության մեջ Հետեղողականորեն ուսումնասիրելը միանգամայն հնարավոր և արդասավոր է»<sup>3</sup>: Ն.Թաշհմիզյանի բնորոշմամբ, Հ.Հովհաննիսյանի մենագրությունը «փաստորեն դարձավ Հայ երաժշտության պատմության անդրանիկ ուրվագիրը»<sup>4</sup>:

Ք.Քուչնարյանի,<sup>5</sup> Ալ.Շահվերդյանի<sup>6</sup>, Ռ.Աթայանի<sup>7</sup> մենագրություններում իրենց պատշաճ տեղն են գրավում Հայ միջնադարյան գրավոր հիշատակությունները, որոնք մշտապես արժեքավորվում են երաժշտապատմական կարևոր աղբյուրների շարքում:

XX դարի երկրորդ կեսին Հայ երաժշտական պատմագիտության մեջ աստիճանաբար երևակվեցին նախկին ուրվագծերը և «շոշափելի» դարձան երաժշտական մշակութի զարգացման փուլերն ու առավել պարզ արտահայտվեցին դրանց ներքին օրինաչափությունները: Այս

<sup>1</sup> Հակոբ Հովհաննիսյան, Հայոց երաժշտության պատմություն, 1939, ձեռագիր, Եր., Գրականության և արվեստի թանգարան:

<sup>2</sup> X. Кушнарев, Вопросы истории и теории армянского монодических музыки, Ленинград, 1958, стр. 10.

<sup>3</sup> Ալ.Շահվերդյան, Հայ երաժշտության պատմության ակնարկներ, Եր., 1959, էջ 38-39:

<sup>4</sup> Ն. Թաշհմիզյան, Քննական տեսություն Հայոց Հին և միջնադարյան երաժշտության պատմության, Լրաբեր հասարակական գիտությունների, Եր., 1970,

<sup>5</sup> N 10, էջ 15:

<sup>6</sup> Ք. Քուչնարյան, նշվ. աշխ.:

<sup>7</sup> Ալ. Շահվերդյան, նշվ. աշխ.:

<sup>7</sup> Ռ. Աթայան, Հայկական խազային նոտագրություն, Եր., 1959, էջ 69-111:

գործընթացում է՛լ ավելի խորացավ հետաքրքրությունը միջնադարյան գրավոր աղբյուրների, պատմագրական հիշատակությունների, ժամանակագրությունների նկատմամբ: «Չի կարելի հաշվի չառնել ֆեռազական շրջանի գրական աղբյուրներում երաժշտության մասին եղած ասույթները, որոնք նույնպես էական նշանակություն ունեն: Այդ ասույթները ... գլխավորապես վերաբերում են երաժշտության տեսության հարցերին, երաժշտական ժանրերին և նրանց պատմական գոյության պայմաններին, գործիքներին և գործիքային անսամբլներին»-, գործ են «Ակնարկ հայ երաժշտության պատմության» աշխատության հեղինակները<sup>8</sup>:

Պատմական գրավոր աղբյուրների տվյալների հնարավորինս կանոնակարգված և ինքնատիպ մեկնությունները սփռված են վաստակաշատ երաժշտագետ-միջնադարագետ Ն.Թահմիզյանի բազմաթիվ հոդվածներում և արժեքավոր մենագրություններում: Դեռևս 70-ական թվականների սկզբին նա առանձնահատուկ շեշտադրումով նկատեց մինչ այդ հայ երաժշտագիտության մեջ պատմական և գրական արժեքավոր փաստերի հավաքագրման և համակարգման աշխատանքների հավաղման փաստը<sup>9</sup>: Իր հոգվածաշարում արժեքավորելով Ք.Քուչնարյանի հիմնարար հետագության գիտական բարձր արժանիքները, Ն.Թահմիզյանը շարունակում է. «Հիմք ընդունելով այս ամենը և ի մտի ունենալով պատմական, գրական ու երաժշտական մատչելի բոլոր նյութերը, ներկա աշխատության մեջ նպատակ ենք դնում հայ մոնողիկ երաժշտության անցած ուղղու գլխավոր շրջափուկերը հստակելով դրանք բնորոշելու, ինչպես և բազմադարյան այդ ճանապարհի մտաշղացքային ըմբռնումը տալու գործում կատարել հերթական առաջնմթաց քայլը»<sup>10</sup>:

Հիրավի, այդ քայլը կատարվեց և դրան հաջորդեցին վճռորոշ հաստատուն քայլեր երաժշտական միջնադարագիտության բոլոր ոլորտներում: Նորովի դիտարկվեցին հայ երաժշտապատմական գործընթացին, անհատ երաժշտներին, մասնագիտացված երգարվեստի ժանրերին, Հոգեւոր երգերի հեղինակներին, միջնադարի

<sup>8</sup> Ակնարկ հայ երաժշտության պատմության, հեղինակներ՝ Ք.Քուչնարյան, Մ.Մուրագյան, Գ.Գյուղակյան, Եր., 1963, էջ 13:

<sup>9</sup> Ն.Թահմիզյան, նշվ. աշխ., էջ 15:

<sup>10</sup> Նոյյնը:

երաժշտագեղագիտական հայացքներին, երաժշտության տեսության, խաղաբանության խնդիրներին նվիրված հարցադրումներն ու տրվեցին ինքնատիպ մեկնաբանություններ: Դրանք տեղ են գտել գիտնականի բազմաթիվ հոդվածներում, ինչպես նաև Ներսես Շնորհալուն, Գրիգոր Նարեկացուն, Կոմիտասին նվիրված մենագրություններում<sup>11</sup>: Այստեղ թարմ ու ինքնատիպ մեկնաբանություններ ստացան նաև գրավոր աղբյուրների բազմաթիվ փաստերը և տվյալները:

Ն.Թահմիզյանի աշխատությունները պարարտ հող նախապատրաստեցին նաև Հայ երաժշտական միջնադարագիտության հետագա զարգացման և առաջննթացի համար:

Ա.Արեշատյանի աշխատություններում<sup>12</sup> դիտարկված է միջնադարյան գրավոր աղբյուրների մեծ ընտրանի, որի մեջ Հատկապես կարեւոր տեղ են զբաղեցնում մեկնողական տիպի աշխատությունները: Հատկապես Հայ միջնադարյան «ձայնից» մեկնությունների բնագրերի հնարավորինս ամբողջական ուսումնասիրումը այստեղ կարևորագույն քայլերից մեկն է Հայկական Ութձայնի պատմատեսական խնդիրների պարզաբանման համար: Հեղինակի մի շարք հոդվածներում և Հատկապես Ստեփանոս Սյունեցու<sup>13</sup> ու Գրիգոր Մագիստրոսի<sup>14</sup> ստեղծագործական ժառանգության կարևոր հարցերի պատմաքննական նորովի մեկնաբանություններում արդիական շեշտադրումներով են դիտարկել նաև պատմագրական և մատենագրական բազմաթիվ տվյալներ:

<sup>11</sup> Դրանց հիմնական մասը գետեղված է Հեղինակի «Երաժշտության տեսությունը Հին Հայաստանում» աշխատության վերջում, Եր., 1977, էջ 307-310:

<sup>12</sup> Ա.Արեշատյան, «Մաշտոց» ժողովածուն որպես Հայ միջնադարյան երաժշտական մշակույթի հուշարձան, Եր., 1991; նույնի, Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ, Եր., 2003:

<sup>13</sup> Ա.Արեշատյան, Ո՞վ է «Զորս ըստ պատկերի Քում» շարականի հեղինակը, «Էջմիածին», 1997, Դ-Ե, էջ 106-115:

<sup>14</sup> Ա.Արեշատյան, Ստեփանոս Սյունեցի. Իրական անձը և վաստակը (Սյունեցի համանուն երկու երաժշտաների գոյության հարցի շուրջ), Հայ արվեստի հարցեր, Հ-2, Եր. 2009, էջ 23-34; նույնի՝ Գրիգոր Մագիստրոսը՝ շարականագիր և տաղասաց, «Արվեստ և ժամանակ», 2007, N1, էջ 12-15:

ՄՆԱՎՈՐԱՆԻ<sup>15</sup> ուսումնասիրության մեջ գրավոր աղբյուրների բաղդատական քննության հիման վրա բացահայտվում են Հայ միջնադարյան մասնագիտացված երգարվեստում ազատ մեղեղիական մտածողության վրա Հիմնաված տաղերգության ծագումնաբանության ու զարգացման օրինաչափություններին առնչվող կարևորագույն հիմնադրույթներ:

Հայ միջնադարյան գրավոր աղբյուրների շարքում պատմամշակութային բնույթի հարուստ և բազմակողմանի տեղեկատվություն են ընդգրկում նաև Հայ պատմիչների երկերը: Այստեղ ընդգրկված երաժշտապատմական փաստագրական նյութերի համահավաք գիտական ուսումնասիրությունն առայսօր բացակայում է: Մինչդեռ՝ աղբյուրագիտական համայիր ուսումնասիրությունը մի կողմից երևան կբերեր երաժշտապատմական փաստերի ու տվյալների հարուստ ընտրանի, մյուս կողմից այդ նյութերի արժեքագորումը մեծապես կընդլայներ քննվող այն հարցերի շրջանակը, որն անմիջականորեն կբնիր այդ նյութերի բովանդակությունից: Այսպես. երաժշտագիտական հետազոտություններում քիչ են արժարձվել Գրիգոր Մագիստրոսի գրավոր ժառանգության մեջ տեղ գտած անհայտ հետաքրքիր երաժշտագիտական տվյալները, և այդ բացը մենք փորձել ենք հնարավորինս ամբողջությամբ դնել պատմահամեմատական գիտարկումներում և արժեքագորել դրանք տարրեր տեսանկյուններից:

Իբրև արժեքագոր պատմամշակութային ժառանգություն, պատմագրությունը Հայ երաժշտության պատմության ընթացքի լուսաբանումը կարող է հագեցնել լուրջ կտվաններով՝ երբեմն ներկայացնելով այս կամ այն երեսույթի մասին եղակի նշանակության տեղեկատվություն: Վերջինս կարող է պայմանավորել նաև բաղդատական դիտարկումների լայն դաշտ, որի շնորհիվ քննվող երևոյթը կարող է ներկայացվել բազմակողմանի՝ ի վերջո հանգելով առավել հավանական մեկնության: Նշենք Հայ երաժշտական միջնադարագիտության մեջ առանցքային դիրք գրավող մի շարք երևոյթներ, որոնց լուսաբանությանն առնչվող հույժ կարևոր փաստեր են ներկայացնում պատմական աղբյուրները: Դրանցից են՝ նախաքրիստոնեական

<sup>15</sup> ՄՆԱՎՈՐԱՆ, Տաղերի ժանրի ծագումնաբանությունը և ազատ մեղեղիական մտածողությունը Հայ միջնադարյան մասնագիտացված երգարվեստում, Եր., 2001:

մշակութային շերտերում երաժշտական դրսևը որումների առանձնահատկությունների բացահայտումը, ժողովրդական, ժողովրդամասնագիտացված երաժշտարվեստի կարևոր բնորոշչինների արժեքավորումը, Հայ ինքնուրույն հոգևոր երգի սկզբնավորումն ու պատմական զարգացման փուլերի ձևավորումը, անհատ երաժիշտների ստեղծագործական ժառանգության խնդիրները, Հայկական խազային նոտագրության և երաժշտության տեսությանն առնչվող բազմաթիվ հարցեր և այլն:

Պատմագրությունը յուրահատուկ տեղ է զբաղեցնում Հայ միջնադարյան մատենագրության մեջ: Հայ պատմիչների արժեքավոր գրառումներն ու տեղեկատվական հարուստ նյութերը ծանրակշիռ գերեն կատարել Հայագիտության բոլոր ոլորտներում: Հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական, պատմամշակութային կյանքին առնչվող բազմաթիվ փաստեր, դիտարկումներ և ճանաչողական բնույթի այլեայլ դրույթներ վաղուց դարձել են ազգային մշակույթը լավագույնս բնորոշող չափանիշներ: Բավական է հիշատակել V դարի դասականների, զարգացած ավատատիրության դարաշրջանի մատենագիրների փայլուն համաստեղության գրական ժառանգությունը, որը ի զորու է վեր հանելու հայոց հին և միջնադարյան մշակույթի կարևորագույն երևույթներ:

Սույն աշխատությունը նվիրված է Հայ միջնադարյան պատմագրության դասական շրջանին (V-XV դդ.) վերաբերող հիմնական աշխատություններում տեղ գոած երաժշտապատմական տվյալների և հիշատակությունների ուսումնասիրությանն ու դրանց ճանաչողական արժեքի բացահայտմանը: Ժամանակաշրջանի սահմանափակումը թելադրված է սոցիալ-մշակութային ամբողջականությամբ՝ ընդգրկելով վաղ միջնադարից մինչև՝ զարգացած ավատատիրական հասարակարգի մշակույթը, որի փոխարինումը, հետագայում առավել պարզունակ հասարակական հարաբերություններով, թեև ամբողջովին չոչնչացրեց նախկինում ձեռք բերվածը, սակայն պայմանագորեց մշակութային այլ իրողություն:

Հայ միջնադարյան պատմական գրավոր աղբյուրները դարերի ընթացքում ձևավորել են յուրահատուկ մի համակարգ, որտեղ կարևորագույն տեղ են զբաղեցնում նշանավոր պատմաբան գիտնականների մատյանները: Սրանց կողքին առավել մեծ թիվ են կազմում ժամանակաբարական բազմաթիվ գրավոր աղբյուրներ, որոնց հեղինակները հոգևոր դասի

տարբեր աստիճաններ ունեցող ներկայացուցիչներ, հաճախ նաև՝ հասարակ եկեղեցականներ և աշխարհիկ բարձր դասի փոքրաթիվ ներկայացուցիչներ են:

Անդրադառնալով պատմական գրավոր աղբյուրների ժամրային բնորոշիչներին նշենք, որ պատմագիտության մեջ տարրուշված են պատմագիրների և պատմիչների աշխատությունները, առաջնները՝ պատմաբան գիտնականների և երկրորդները՝ սոսկ ժամանակագիրների հեղինակությամբ: Աշխատության մեջ, ենելով ուսումնասիրվող նյութի առանձնահատկություններից (միայն երաժշտապատմական տվյալների քննություն), որպես աշխատանքային բառեզր, հիմնականում օգտագործել ենք պատմագիր անվանումը, ինչը, համոզված ենք, ընդունելի է տվյալ աշխատանքի շրջանակներում:

Ուսումնասիրվող նյութի ճանաչողական պատմամշակութային լայն շրջանակով են պայմանավորված աշխատանքի հիմնական նպատակները. պատմագրական նյութի հնարավորինս համահավաք ամփոփումը, բնագրային տեքստերի քննական խմբագրումը՝ ընդգրկելով նաև բնագրերի թարգմանությունները, որպես հեղինակային բնագրերի բովանդակային ճշգրտման հավելյալ փաստարկներ, դրանց համակարգումը և ճանաչողական արժեքի բացահայտումը:

Պատմական աղբյուրներում ներկայացված երաժշտապատմական երևոյթների ուսումնասիրումը տարգել է նախագրիասոնեական և միջնադարյան Հայաստանի պատմամշակութային լայն ետնախորքի վրա: Հայագիտական տարբեր ոլորտների հետ առնչակցությունների և ընդհանուր հարցերի շրջանակում դիտարկվող երևոյթների բացահայտման և արժեքավորման համար իրեն հիմնական սկզբունք օգտագործել ենք պատմահամեմատական մեթոդը:

Պատմագրական աղբյուրներից աշխատանքում ընդգրկել ենք պատմությունները, ժամանակագրությունները, հայերեն ձեռագրերի հիշատակարանները, ինչպես նաև գրական այլ ժանրի պատկանող նմուշներ՝ թղթեր, ներբողներ և այլ բնույթի գրվածքներ: Վերջինների ընդգրկումը պայմանավորված է գրական այլ ժանրերում և պատմագրական հետաքրքիր նյութերի հայտնաբերման և արժեքավորման հնարավորությամբ:

Կարևորագույն հարցերից մեկը, որ ծառանում է ներկա աշխատանքում, հայ միջնադարյան պատմագրական աշխատությունների հնա-

բավորինս ամբողջական քանակի ընդգրկումն է: Դեռևս Ղ.Ալիշանը այսպես էր ներկայացնում Հայ պատմագիրներին. «Այս քանի մի ցանկողաց զուտ Հայ պատմիչները թուելով՝ ծանօթ և անծանօթ՝ ... յիսնեակ մի կ'լան, բայց Հարկ է, որ բոլորովին անծանօթներէն զատ՝ նոյնչափ այլ դեռ ուրիշ ծանօթ և կիսածանօթ, կամ պատահաբար յիշեալքն այլ գումարելով՝ գուցե նոյնչափ մ'այլ աւելանայ»<sup>16</sup>: Բոլոր պատմագիրների և նրանց գրական ժառանգության ամբողջ ծավալի ընդգրկման անհնարինությամբ է պայմանավորված ներկա աշխատանքում շուրջ 27 հեղինակների գործերի և V-XV դգ. Հայերեն ձեռագրերի հիշատակարանների համապատասխան նյութերի ուսումնասիրումը:

Պատմագրական Համահավաքը նյութն ընդգրկել ենք Հավելվածում՝ Հետեալ սկզբունքով: Ժանրային բնորոշիչն Համապատասխան առանձնացրել են երեք հիմնական բաժիններ: Առաջին բաժնում զետեղված են հիշատակություններ Հայ միջնադարյան պատմագիրների աշխատություններից: Ընդգրկել ենք Կորյունի, Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Եղիշեի, Ղազար Փարպեցու, Մովսես Խորենացու, Հովհանն Մամիկոնյանի, Սեբեսոսի, Մովսես Կաղանկատվացու, Հովհաննես Դրասիանակերտոցու, Թովմա Արծրունու և Անանունի, Գրիգոր Նարեկացու, Ուխտանեսի, Ստեփանոս Տարոնեցու, Արիստակես Լաստիվերտցու, Գրիգոր Մագիստրոսի, Շապուհ Բագրատունու (Կարծեցյալ), Մատթեոս Ուռհայեցու, Սամուել Անեցու, Աբուսահլ Հայի, Միհթար Այրիվանեցու, Կիրակոս Գանձակեցու, Վարդան Արևելցու, Մմբատ Սպարապետի, Ստեփանոս Օրբելյանի, Հովհաննես Դարդելի, Թովմա Մեծոփեցու և այլոց աշխատություններից քաղված հիշատակություններ:

Քանի որ պատմագրական նյութը առնչվում է Հայ ժողովրդի պատմության աղբյուրագիտական Համակարգին, Հետևաբար, իբրև կարեւոր կողմնորոշչիչ ենք դիտել Ստ.Մելիք-Բախսչանի աշխատությունը<sup>17</sup>: Նշենք, որ այստեղ ներկայացված պատմական աղբյուրներից մենք դուրս ենք թողել Ղեռնդ պատմիչի և Հեթում

<sup>16</sup>Ղ.Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 13:

<sup>17</sup>Ստ. Մելիք-Բախսչան, Հայ ժողովրդի պատմության աղբյուրագիտություն, Եր., 1996:

պատմիչի երկերը<sup>18</sup>, քանի որ մեզ հետաքրքրող համապատասխան նյութեր այս մատյաններում չենք հանդիպել:

Սույն աշխատության հավելվածի երկրորդ բաժնում ընդգրկել ենք Հայերեն ձեռագրերի հիշատակարաններից քաղված համապատասխան հատվածները: Օգտագործել ենք V-XVդր. վերաբերող հրատարակված ձեռագիր հիշատակարանները:

Հավելվածի երրորդ բաժնում տեղ են գտել միջնադարյան մատենագրության այլ ժանրեր, որտեղ առկա են պատմական փաստեր: Դրանք ներբռներ են և այլ գրվածքներ: Ընդգրկել ենք Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական» աշխատությունը<sup>19</sup>, Եղեսիային նվիրված Ողբը<sup>20</sup>, Ներսես Լամբրոնացու և Կարապետ Սասնեցու ներբռները<sup>21</sup>, Առաքել Սյունեցու «Դրախտագիրք»-ը<sup>22</sup>: Այս ստեղծագործություններն ու աշխատություններն ընդգրկել ենք իբրև ցայտուն նմուշներ՝ հայ միջնադարյան մատենագրության այլ ժանրերում ևս պատմական որոշակի նյութերի առկայության և, հետևաբար, մի առանձին ուսումնասիրության մեջ դրանք ամփոփելու և արժեքավորելու անհրաժեշտության նկատառումով:

Ելնելով դիտարկվող նյութի բավական ընդգրկուն ծավալից, աշխատության մեջ ընդգրկել ենք ձեռագրերի հրատարակված քննական բնագրերը: Անդրադարձել ենք նաև Հիշյալ նյութերի հրատարակված աշխարհաբար թարգմանություններին: Հենց դրանք էլ ընդգրկել ենք Հավելվածում, որտեղ յուրաքանչյուր հիշատակությունից առաջ նշել ենք նաև վերջինիս համառոտ բովանդակյային համատեքստը:

Պատմագրական նյութը հավելվածում դասավորել ենք Հեղինակների ժամանակագրային կարգով և մեր կողմից մշակված հաջորդական համարանիշերի համակարգով: Յուրաքանչյուր հիշատա-

<sup>18</sup>Պատմութիւն Ղեւնողեայ մեծի վարդապետի Հայոց, Ս.Պետերբուրգ, 1887:

<sup>19</sup>Հեթում պատմիչ, Պատմութիւն թաթարաց, Վենետիկ, 1842:

<sup>20</sup>Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, աշխատասիրությամբ է.Բարյմասարյանի, Եր., 1995:

<sup>21</sup>Ներսես Շնորհալի, Ողբ Եղեսիոյ, Քննական բնագիրը, բանասիրական դիտողություններ, ծանոթագրություններ Մանիկ Մկրտչյանի, Եր., 1973:

<sup>22</sup>Ներսես Լամբրոնացի, Գովեստ ներբռղական պատմագրական բանիւ յաղագս վարուց մեծի հայրապետին Ներսիսի Կայեցւոյ Հայոց կաթողիկոսի, Էջմիածին, 1865: Կարապետ Սասնեցի, Ներբռղեան յաղագս վարուց սրբոյն Մեսրոպայ, «Արարատ», Էջմիածին, 1897:

<sup>23</sup>Առաքել Սյունեցի, Դրախտագիրք, Վենետիկ, 1956:

կություն տրված է Համապասխան համարով, փակագծերի մեջ՝ որպես Հղում Հավելվածից:

Պատմագրական Հիշատակությունների բնորոշչչներից մեկը բովանդակության բազմազանությունն է, ինչի շնորհիվ հնարավոր է դառնում անդրադարձը երաժշտապատմական հիմնական ոլորտներին. նախաքրիստոնեական ժամանակաշրջանի երաժշտական մշակույթի յուրահատուկ դրսեորումներին, միջնադարում երաժշտության հասարակական գործառնությանը, մասնակցությանը ծիսական սիմվոլիկայում, նվագարանային արվեստին, ժանրային համակարգին, անհատ երաժիշտներին, երաժշտության տեսությանն առնչվող խնդիրներին և այլն: Այսպիսով՝ պատմագրական նյութերի հավաքումը, դրանց համատեքստի մանրազնին քննությունը, համակարգումն ու ճանաչողական արժեքի բացահայտումը ներկա աշխատանքի առանցքն է կազմում:

Հայ միջնադարյան պատմագրության նորովի դիտարկումը որպես առանձին ուսումնասիրության աղբյուր, միտված՝ բնագրային տեքստերի բովանդակային առավել ստույգ մեկնությունների, դրանց մեջ ընդգրկված առանձին բառերի և արտահայտությունների ստուգաբանությունների, վերջիններիս տարբերակների բաղդատական ուսումնասիրությանը, հնարավորություն կընձեռի լավագույնս բացահայտելու երաժշտապատմական այս կարևոր աղբյուրի ճանաչողական արժեքը:

Աշխատանքի մեջ ուղղորդող կարևոր գործոն է նաև դիտարկված պատմագրական որոշ Հիշատակություններին երաժշտագիտության և Հայագիտության այլ որորտներում տրված տարբեր մեկնությունների քննական դիտարկումը: Այս առումով կարևոր կողմնորոշիչ դեր են կատարել երկու հեղինակների աշխատությունները: Առաջինը՝ Ն.Թահմիզյանի մենագրություններն են<sup>23</sup>, որոնցում Հայ հին և միջնադարյան երաժշտության պատմական զարգացման ընթացքը լուսաբանվում է վերոնշյալ տվյալների գգալի ներկայությամբ: Երկրորդը՝ թատերագետ Հենրիկ Հովհաննիսյանի Հայ միջնադարյան

<sup>23</sup> Ն. Թահմիզյան, նշվ. աշխ.; նույնի, Ներսես Շնորհավին՝ երաժիշտ և երգահան, Եր., 1973; նույնի, Գրիգոր Նարեկացին և Հայ երաժշտությունը V-XVդդ., Եր., 1985:

թատրոնին նվիրված աշխատությունն է,<sup>24</sup> որը մեր աշխատանքում կարևոր նշանակություն է ստացել նաև մեթոդաբանական առումով՝ միջնադարյան պատմամշակութային խնդիրների բացահայտման և համապատասխան փաստերի պատմաքննական առավել արդյունավետ և ստույգ մեկնաբանման գործընթացում:

Նորովի մոտենալով Հայ միջնադարյան պատմագրական աղբյուր-ների երաժշտապատմական արժեքավորման խնդիրներին, ուսումնասիրվող նյութը ներկայացրել ենք երեք գլուխներում: Դրանց բովանդակությունը անդրադարձնում է դիտարկվող նյութերի ընձեռած պատմամշակութային դիտարկումների և՝ ծավալները, և՝ տեսադաշտի սահմանները: Հետևաբար, մեր աշխատանքը ոչ թե Հայ երաժշտության պատմության ընթացքի սրբագրումն է, այլ պատմական խնդիրների բացահայտման գործընթացում արժեքավոր մի աղբյուրի ճանաչողական դերի կարևորումը:

Առաջին գլուխը նվիրված է Հայոց նախաքրիստոնեական պատմաշրջանի երաժշտական մշակույթին առնչվող Հարցերի ու խնդիրների դիտարկման մեջ Հայ միջնադարյան պատմագրական նյութերի ճանաչողական արժեքի բացահայտմանը: Դրանք վերաբերում են Հարսանեկան և Հուղարկավորության Հինավուրց ծիսական արարողակարգերին, ռազմական իրադարձությունների ժամանակ հնչող նվագարանային ազգանշան-կոչնակներին, ինչպես նաև վիպաշավանդման տարբեր եղանակների ամբողջության մեջ վիպաշանների արվեստի տարբեր դրսևորումներին:

Երկրորդ գլուխը վերաբերում է Հայ աշխարհիկ երաժշտական արվեստի միջնադարյան բնորոշչների արժեքավորման մեջ պատմագրական աղբյուրների գերին ու նշանակությանը: Այստեղ մի կողմից դիտարկված են անմիջապես հելլենիզմի դարաշրջանից ժառանգված ծիսապաշտամունքային արարողակարգերի փոխակերպումները քրիստոնեական արժեքային համակարգում, մյուս կողմից՝ դրանց վերապրուկային կայուն կենսակերպերի գոյության պայմանները: Իբրև «միջնադարյան հումանիզմի» բացառիկ արժեքավոր դրսևորումներ են մեկնաբանված նաև քաղաքային ծաղկուն մշակութային միջնորոտում փայլուն զարգացում ապրած գուսանական արվեստի տարբեր ոլորտները:

<sup>24</sup> Հ. Հովհաննիսյան, Թատրոնը միջնադարյան Հայաստանում, Եր., 1978:

Երրորդ գլուխը նվիրված է Հայ միջնադարյան քրիստոնեական մշակույթի մնայուն արժեներին՝ պաշտոներգության մեջ բուռն վերելք ապրած՝ մասնագիտացված երգարվեստի այն խնդիրներին, որոնց լուսաբանման մեջ էական դեր են խաղում նաև պատմագրական աղբյուրները:

Մասնագիտացված երգարվեստի առանձին ժանրերը պատմագրական աղբյուրներում ներկայացված են գործառույթի անմիջական հիշատակմամբ, ինչը հնարավորություն է տալիս գիտարկելու դրանց կիրառման ոլորտները:

Պատմագրական աղբյուրների հնարավորինս ամբողջական ուսումնասիրումը նաև թույլ կտա ստեղծելու Հայ միջնադարյան անհատ երաժիշտների մասին հավաստի տվյալների մի հանրագումար, որն առայսօր բացակայում է Հայագիտության մեջ: Աշխատանքի մեջ փորձել ենք լրացնել այդ բացը՝ V-XVդդ. պատմագրության սահմաններում: Դիտարկել ենք պատմագրական տվյալների երկու խումբ:

ա. Տվյալներ, որոնք հավաստում են միջնադարյան որևէ հեղինակի գործունեությունը՝ առանց որևէ ստեղծագործության հիշատակության:

բ. Տվյալներ, որոնք հավաստում են միջնադարյան որևէ հեղինակի կոնկրետ ստեղծագործությունը (կամ ստեղծագործությունները):

Հատուկ ուշագրություն ենք դարձել երաժիշտ-տեսաբանների և հմուտ գիտակների՝ երաժշտապետերի մասին հիշատակություններին՝ Հայ երաժշտական միջնադարագիտության մեջ նրանց գործունեությունը կարեռելու և նորովի արժեքավորելու նկատառումներով: Փորձել ենք վեր հանել նաև դիտարկված նյութերում տեղ գտած երաժշտության գործնական տեսությանն առնչվող որոշ փաստեր՝ համալրելով հիշյալ ոլորտի աղբյուրագիտական ընտրանին:

**Գ Լ Ո Ւ Ա**  
**ՀԱՅ ՄԻջնադարական ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԱՂԹՑՈՒՄՆԵՐԻ ԴԵՐԸ**  
**ՆԱԽԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԵՐԱԺՇՏԱՊԱՏՄԱԿԱՆ**  
**ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՄԵԶ**

Մշակութային հնագույն շերտերի ընդերքում բազմակերպ  
դրսերումներ ապրած հայոց երգ-երաժշտությունը գարերի ընթացքում  
փոխակերպումների է ենթարկվել: Այդ շերտերը գոյացել են զորեղ ծիսա-  
հավատալիքային համակարգերի հիմքի վրա՝ պայմանավորելով արվես-  
տի անտարրանջատ կամ միաձույլ (սինկրետիկ) կերպեր: Դրանց մեջ ե-  
րաժշտության, որպես օրգանական բաղադրատարրի գործառույթի  
առանձնահատկությունների երևակումը հայ երաժշտական  
պատմագիտության առաջնային խնդիրների մեջ էական տեղ է  
զբաղեցրել: Պեղածո նվագարանների ժամանակագրական տվյալների և  
հայ ազգային մոնողիայի տիպաբանության խնդիրների համատեքստում  
քննության առնված մի շարք կարեոր գրույթներ համեմատական լուրջ  
եզրեր են առաջ բերել՝ մատենագրական տվյալների բաղդատությամբ:

Պատմագրությունն այսոեղ առաջադրում է կոնկրետ փաստեր՝  
լուրջ հիմքեր նախապատրաստելով երաժշտապատմական  
դիտարկումների համար: Թեև գրառումները պատկանում են վաղ միջ-  
նադարին, սակայն ներկայացված փաստագրական նյութը «վերծանելի»  
է տարբեր դիտակետերից և երբեմն հնարավորություն է տալիս  
նշմարելու դեռևս բնապաշտական ծիսապաշտամոնքային ինչ-ինչ  
դրսերումներ:

Նախ անդրադառնանք հայ մշակույթի հնագույն շերտերում ձևա-  
վորված և հետագայում զարգացում ապրած ծիսական երաժշտությանը:

Հայ ժողովրդի բազմադարյա ծեսերում այլ բաղադրիչների կողքին  
ուրույն տեղ են զբաղեցրել նաև երաժշտական արտահայտչաձևերը,  
որոնք հատուկ մտածողության և արտահայտման արգասիք են:  
Անտարրանջատ բանահյուսության հնագույն դրսերումներից մեկի՝  
Հարասնեկան ինքնօրինակ ծեսի ձևի մասին է վկայում Ագաթմանգեղոսի  
Պատմության մեջ Տըրդաստ թագավորի հարսանիքի նկարագրությունը

(Հ. 6).<sup>25</sup> Այստեղ հիշատակվում են Հարսանելան երգերը, որոնց ուղեկցել են կրակոտ՝ կայթ (մեր կարծիքով՝ թոփչքներով կամ բարձր ցատկերով) պարերը, դրանց հետևել են Հարսանելան խմբապարերը և, վերջապես՝ կաքավները՝ իրեւ մենապարերի ինքնօրինակ դրսերումներ։ Կայթ և կաքաւ պարերի բնապաշտական ծագումը հետաքրքիր զուգահեռների տեղիք է տալիս։ Վերջինս նոր բառզրկում մեկնաբանվում է որպես մենապար<sup>26</sup>։

Բազմատարր այս նկարագրությանը հայագիտության մեջ միանշանակ չեն վերաբերվել։ Օրինակ՝ Շ.Գրիգորյանը պնդել է, որ մեր առջև խրթին գրաբարի (Հնարավոր է նաև աղավաղված բնագրի) մի դրսերում է<sup>27</sup>։ Ավելացնենք նաև ցուց բառի յուրօրինակ գործառույթը։ Ցուցը որպես թատերային կամ խաղային տարրի բնորոշչի<sup>28</sup> առավել ընդգծում է նկարագրված երևոյթի ծիսական-խորհրդապաշտական հիմքը։

Ավելի հեռում է տանում Սրբ. Լիսիցյանի մեկնակերպը. «Պետք է ենթադրել, - գրում է նա, - որ Ագաթանգեղոսի այս նկարագրության մեջ «ցուց»-ը նշանակում է նաև «իր վրա ինչ որ բան կրել», իսկ «մարդկան»-ը ընդգծում է, որ դիմակները եղել են մարդակերպ, մարդկանց տեսքով և ոչ այլակերպ»<sup>29</sup>։

Ենթատեքստային այլևայլ կրահումներից գերծ մնալով, միանշանակ կարող ենք նշել, որ բազմատարր այս ծիսապատկերում հիշատակված են հնավանդ «պարաշարեր»՝ քաղված, հնարավոր է երբեմնի միաձույլ համատեքստից։ Աշակասիկ, մեր առջև հնագույն ծիսապարերի մի շարքի վկայությունն է։

Երաժշտության ծիսական բնորոշչները յուրովի են դրսերվել նաև մեկ այլ հինավորց ծեսում՝ հուղարկավորության կամ ողբական արարողության մեջ։ Այդ բնորոշչները ներկայացնել են տարրեր ոլորտ-

<sup>25</sup> Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց (Հետայու՝ Ագաթանգեղոս), աշխատութեամբ Գ. Տէր-Մլուտչեան եւ Ստ. Կանայեանց, Տիգիս, 1909, էջ 107։ Հետայու վակագծում նշվում է աշխատանքի վերջում զետեղված բնագրային հավելվածի համապատասխան համարը։

<sup>26</sup> Նոր բառգիրք Հայկագեն լեզուի, Հ. Ա. Վենեսիկ, 1836, էջ 1080։

<sup>27</sup> Շ. Գրիգորյան, Հայոց հին գուսանական երգերը, Եր., 1971, էջ 22։

<sup>28</sup> Հ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 129։

<sup>29</sup> С. Лисициан, Старинные пляски и театральные представления армянского народа, т.1, Еր., 1958, стр. 69.

ներում՝ պարերում, պարերգերում, երգերում։ Զնայած անտարրանջառ բնույթին, երաժշտությունը որպես յուրօրինակ հնչյունակերտ տարր ներկայացել է յուրովի։ Արմատներով խորանալով հայ մշակույթի հինավորք շերտերի մեջ, իր խիստ ավանդականությամբ, ծիսական այս համակարգը պահպանել է ոչ միայն իր կենսունակությունը, այլև ժամանակի ընթացքում խթանել է նոր՝ վիպական-զբանարկական մշակույթի զարգացումը։

Իբրև կայուն խորհրդանիշ-տարր ծեսում երաժշտությունը ներկայանում է գործառույթի բազմազանությամբ։ Թեև ծեսի նկարագրությունները վերաբերում են միջնադարին, սակայն հինավորք ավանդական տարրերի կենսունակությունը դրանցում ակնհայտ է։ Հիշատակությունները արժեքավոր են նրանով, որ ականատես նկարագրություններ են և իրենց համառոտ շարադրանքում անգամ ընդգրկում են կարեռ մանրամասներ։

Փորձենք ճշգրտել երաժշտության գործառույթի շրջանակները ողբի ծիսական խորհրդանիշերի համալիրում։ Ողբի արարողությանը պատմագիրները անդրադարձել են որևէ նշանավոր դեմքի հուղարկավորության և կամ ողբերգական իրադարձությունների նկարագրություններում։ Դրանցից հնագույնը Խորենացու «Հայոց Պատմության» մեջ Արտաշես թագավորի հուղարկավորության նկարագրությունն է («. 45)։ Անդրադառնանք մեզ հետաքրքրող ծիսական բաղադրատարրերից յուրաքանչյուրին։

Զայնարկու բառն այստեղ, փաստորեն յուրահասուկ եզր է։ Զայն և արկանել բառերի միակցությունը՝ այսպիսի համատեքստում առաջին ընթերցումից ենթադրում է ձայնարկուն իբրև լալկան կին մեկնաբանելու հնարագորություն՝ ինչպես և վարկել է Ստ.Մալխասյանը<sup>30</sup>։

Սակայն Խորենացու հիշատակության մեջ ձայնարկուներից բացի հիշատակված են նաև աշխարող լալկան կանայք և այդ երկուաը միացված են և շաղկապով։ Քերթողահայրը դրանք ներկայացրել է որպես ինքնուրույն նշանակալիներ։ Հետևաբար, եթե ձայնարկուն մեկնաբանվում է որպես լալկան կին, ապա նրա լացը լացերի մի տեսակն է՝ իր որոշակի առանձնահատկություններով։ Դա պարզորոշ ընդգծել է

<sup>30</sup> Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունն  
ու  
մեկնաբանությունները Ստ.Մալխասյանի, Եր., 1981, էջ 231։

նաև Փավստոս Բուղանդը՝ առանձնացնելով լացը, կոծը, ձայն արկանելը (Հ. 20): Ձայն արկանելը Ստ.Մալիսայանցը թարգմանել է ողբեր ասել: Այսինքն ձայնարկուի հոմանիշը կարելի է համարել ողբասացը, նկատի ունենալով ասել բայի միջնադարյան երգել իմաստը<sup>31</sup>:

Պատմական աղբյուրներում հանդիպում են նաև այլ հոմանիշներ. «Ե յառաջ կոչեալ զդատերս՝ սպոյ յօրինէ կարգս» (Հ. 92) (քնագրային ընդգծումներն այսուհետ մերն են - Հ.Հ.), «անդ էր ապա տեսանել կուսանս ողբերգակս» (Հ. 78), «աղիողորմ ձայնք երգեցիկ կուսանաց» (Հ. 79): Նըշված հիշատակություններում ձայնարկուների կատարումները որակելի են իբրև խմբերգեր: Հետևաբար իբրև ծիսական կարևոր տարր վկայված է խմբերգեցողությունը:

Մեզ են հասել եղակի արժեք ներկայացնող հիշատակություններ, որոնք հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու ողբերի հորինման և կատարման առանձնահատուկ կողմերի մասին: Նախ անդրադառնանք Փավստոս Բուղանդի Պատմության հայտնի դրվագին, որտեղ մանրամասն նկարագրված է իշխան Գնելի սպանությունը և հուզարկավորությունը (Հ. 16): Այստեղ ասվում է, որ ձայնարկուները հանգատաստից հորինել և կատարել են ծավալուն մի ողբերգ՝ նվիրված այդ չարաբաստիկ սպանությանը: Ուշագրավ է հատկապես մայր ողբոցն բառակապակցությունը, որն ամենայն հավանականությամբ վերաբերել է սպոյ արարողության գլխավոր մասնակցին և կազմակերպողին: Նրան են ձայնակցել ձայնարկուները: Տվյալ դեպքում մայր ողբոց է ներկայացել իշխանուհի Փառանձեմը: Սա բացառիկ հիշատակություն չէ: Թուվմա Արծրունին նկարագրել է IX դարին վերաբերող գրեթե նույնափակ արարողություն, որը գլխավորել է Վասպուրականի իշխանությամբ Սոփին (Հ. 92): Ամենայն հավանականությամբ նույնափակ «պարտականություն» են կատարել նաև Սյունյաց իշխանուհիներ Մարիամը (IX դար) և Շուշանը (X դար), որոնց առանձնահատուկ մասնակցության մասին ակնարկել է Ստեփանոս Օրբելյանը (Հ. 175, 176):

Միանման փաստերի համարդումը հավաստում է որոշակի օրինաչափություն մասին: Այս առումով դիտարժան է նաև այն, որ նշված փաստերը վերաբերում են Մեծ Հայքի կարևոր նահանգներին՝ Վասպուրականին և Սյունիքին:

<sup>31</sup> Նոր բառգիրք, Հ.Ա., Էջ 313:

Հետաքրքրական է Արծրունու յօրինէ կարգս  
արտահայտությունը, որը վերստին հաստատում է մայր ողբոցի կարևոր  
դերը ողբական արարողություններում։ Այստեղից հնարավոր է  
ենթադրել, որ կազմակերպողից բացի նրանք կատարել են նաև որոշակի  
երգամաս՝ հաճախ ուղղորդելով խմբերգի ընթացքը։ Մենակատար և  
երգչախումբ փոխեփոխ կատարումը երգեցողության ընդունված ձևերից  
մեկն էր միջնադարում։

Եղերամայրերի բարձրարվեստ ողբերգերի հետ ներդաշնակ  
ամբողջություն են կազմել ձայնարկուների ողբերգերը, որ «բարբառէին  
գեղգեղեալ խանդաղատութեամբ» (Հ. 16)։ Բուզանդի հիշալ  
նկարագրությունը ցույց է տալիս այդ ողբերգերի բովանդակության,  
ինչպես նաև հորինվածքային հնարների և արտահայտչամիջոցների  
բազմազանությունը։ Հետևաբար, ծեսի շրջանակներում պետք է զարգա-  
նար նաև մասնագիտացված արվեստ։ Այս առումով բացառիկ հե-  
տաքրքրություն է ներկայացնում Փավստոս Բուզանդի հիշատակության  
մեջ նշված ի ձայն ողբոցն և ձայնիւք մրմնջոցն արտահայտությունները։  
Առանձնահատուկ մոտեցում է պահանջում ձայն բառը, որի իմաստային  
նշանակությունն այստեղ հնարավոր է մեկնաբանել որպես հնչում,  
հնչողություն կամ երգեցողություն։ Բայ այդմ, հիշալ արտահայտու-  
թյունը կարելի է թարգմանել՝ ողբերի և մրմունջների հնչունների  
ներքո։ Երաժշտագիտության մեջ ընդունված է նաև մեկ այլ  
մեկնություն, որի համաձայն ձայնը իմաստավորվում է որպես  
ձայնեղանակ<sup>32</sup>։

Ողբերի և մրմունջների ձայնեղանակները, որոնք, փաստորեն,  
իմաստավորվել ու մշակվել են ձայնարկուների կողմից, նրանց  
հնարավորություն է տվել հանպատրաստից հորինել ծավալուն  
ստեղծագործություններ։ Բուզանդի հիշատակությունը վկայում է, որ  
տվյալ ժամանակաշրջանում հայ երաժշտության ձայնեղանակները ար-  
դեն որոշակիորեն ձևավորվել էին, ավելին, դրանք իմաստավորվել էին  
մասնագետ երաժիշտների կողմից, ըստ տարբեր ժանրերի։

---

<sup>32</sup> **Х. Կյանարես**, Вопросы истории и теории армянской монодической музыки, Л., 1958, стр 21,60. **Н. Тагмизян**, Теория музыки в древней Армении, Еր., 1977, стр 27, 74.

Արդյո՞ք միայն երաժշտաբանաստեղծական ստեղծագործություններ էին ձայնարկուների հորինումները։ Փավստոս Բյուզանդի նկարագրության մեջ ձայնարկուները «ակսան նուագել իրեւ զիսաղ» (Հ. 16), իսկ Թումա Արծրունին մատնանշում է՝ «դասս-դասս պարաւորս» (Հ. 92)։ Ի վերջո Գրիգոր Մագիստրոսը գրում է՝ «պարել ողբա» (Հ. 115)։ Նշենք, որ խաղի վաղմիջնադարյան իմաստային տարբերակը պարերգն էր<sup>33</sup>։

Ցուրահատուկ մոտեցում է պահանջում պարաւոր բառի մեկնությունը։ Սակայն նախ անդրադառնանք պար արմատի միջնադարյան իմաստին։ Նոր բառգիրքը այն մեկնաբանել է բոլորումն, որի բառարանային համարժեքը դիտվել է Հին Հունական խորոսը՝ «բազմութիւն բոլորեալ ի կաքաւել երգովք» բացատրությամբ<sup>34</sup>, որտեղ կաքաւը միջնադարյան պարի (այժմյան նշանակությամբ) մի տեսակն է<sup>35</sup>։ Ավելացնելով Հ. Աճառյանի Արմատական բառարանի բացատրությունները՝ ըրջան, շուրջ, խոռոք, հավաքույթ<sup>36</sup>, կարելի է եզրակացնել, որ պարը միջնադարում արտահայտել է խմբապար և խմբերգ իմաստային նշանակությունները միաժամանակ, պարաւոր բառը ենթադրում է նաև պարերգի մասնակից իմաստը։ Սակայն բառարանային համարժեքների և դրանց նշանակյալների վերլուծությունը երկրնտրանքի տեղիք է տալիս։

Ինչպես ցույց է տվել թատերագետ Հ. Հովհաննիսյանը, պարաւոր բառը «նույնիմաստ է և հատակորեն եղերվում է հունարեն պարերգակ, ի պար ու երգող (խմբերգից) նշանակություններին։ ... Սատենագրական վկայությունների մեծ մասը թույլ է տալիս այս բառի տակ հասկանալ ոչ միայն «երգիչ և կաքաւիչ», այլև որոշ դեպքերում պարզապես խմբերգիչ, խորիսու»<sup>37</sup>։ Սակայն Թումա Արծրունու հիշատակության մեջ հավանական է թվում պարաւորի՝ երգիչ և կաքաւիչ իմաստը։ Առավել ուշադիր ընթերցումը բերում է այն համոզման, որ դաս-դաս բաժանված, կարգավորված ձայնարկուները, որոնց իշխանութիւն Սոփին բոլորել տալով երգեցրել է, ինչպես կարգում ենք Վ. Վարդանյանի թարգմանության մեջ, փաստորեն ներկայացրել են յուրահատուկ

<sup>33</sup> Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Հ. Ե, Եր., 1932, Էջ 953-956։

<sup>34</sup> Նոր բառգիրք, Հ. Բ, Վենետիկ, 1837, Էջ 625։

<sup>35</sup> Նույն տեղում, Հ. Ա, Էջ 1080։

<sup>36</sup> Հ. Աճառյան, նշվ. աշխ., Հ. Ե, Էջ 955։

<sup>37</sup> Հ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., Էջ 118։

«բեմավիճակ», որտեղ կարևոր տեղ պետք է զբաղեցներ երաժշտապատիկական գործողությունը: Նույնը հեշտությամբ կարելի է վերագրել Փավստոս Բուզանդի և Գրիգոր Մագիստրոսի հիշյալ նկարագրություններին:

Բաղադրյալների այսպիսի համակարգը թաղման արարողությանը թատերային գծեր է հաղորդել: Այս հանդամանքը ծանրակշիռ, բայց հակամես եղրակացությունների առիթ է հանդիսացել թատերագետների մոտ: Ոմանք եկել են այն կարծիքին, որ հեթանոսական թաղման արարողությունը միջնադարում վերաճել է թատրոնի: Հստ Գ.Գոյանի, այստեղ հանդես են եկել գուսաններ, որոնք միջնադարում արդեն միմերի թատրոնի ներկայացուցիչներ էին<sup>38</sup>: Նույնպիսին են Գ.Լևոնյանի և Վ.Խեչումյանի եղրահանգումները<sup>39</sup>:

Իբրև փաստարկ ընդունելով նաև Մովսես Կաղանկատվացու Պատմության մեջ կոծ անող գուսանների մասին հիշատակությունը (Հ. 68), թատերագետները հիմնավորել են ձայնարկութ-գուսան անվանումի գոյության օրինաչափությունը միջնադարում: Ճիշտ է, նոր բառգրքում ձայնարկուի իմաստներից մեկը համարվում է գուսանը<sup>40</sup>, որը Գ.Գոյանը կարևոր կողմնորոշիչ է ընդունել, ասկայն բացառված չէ, որ նոր բառգրքում նկատի է առնվել միայն Կաղանկատվացու հիշատակությունը: Հայ միջնադարյան մատենագրության մեջ չի հանդիպում ձայնարկութուսան անվանումը: Նոր բառգրքում բերվել է Հովհանն Ոսկեբերանի աշխատություններից մեկի թարգմանության մեջ հանդիպող նման անվանումը:

Եթե ողբական արարողությանը մասնակցել են գուսաններ, ինչպես վկայել է Մովսես Կաղանկատվացին, ապա դրանից եղրակացնել, թե ձայնարկուները նույնպես գուսաններ են, թվում է անհամոզիչ: Ձայնարկուների արվեստը, ինչպես ցույց են տալիս պատմագրական հիշատակությունները, միջնադարում պահպանել է իր յուրահատկությունը՝ ողբական արարողության ավանդականության չնորհիվ: Պետք է նկատի ունենալ նաև այն կարևոր հանդամանքը, որ

<sup>38</sup> Г. Гоян, 2000 лет армянского театра, т. 1, Москва, 1952, стр. 306.

<sup>39</sup> Գ. Լևոնյան, Թատրոնը Քին Հայաստանում, Երևան, 1941: Վ.Խեչումյան, Կոծի թատերականացված հանդեսներ, Սովետական

<sup>40</sup> Գրականություն, 1972, N7:

<sup>40</sup> Նոր բառգիրք, Հ.Բ, 1837, Էջ 147:

բուսան բառը վաղ միջնադարում չի սահմանափակվել մեկ որոշակի իմաստով, հետևաբար, Կաղանկատվացու մոտ այն կարող էր օգտագործվել երաժիշտ-բանաստեղծ ձայնարկուի իմաստով: Այդպիսին է նաև այն թատերագետների տեսակետը, ովքեր ողբական արարողության մեջ ժխտել են թատրոնի մի տեսակի գոյությունը<sup>41</sup>:

**Ողբերգություն** բառեզրի վաղմիջնադարյան իմաստային ոլորտների համակողմանի ուսումնասիրության վրա հիմնվելով, Հ.Հովհաննիսյանն ապացուցել է այդ եզրի միայն ձևական համապատասխանությունը հունական անտիկ տրագոդիայի հետ<sup>42</sup>: Ճիշտ է, նա չի ժխտել հին հունական թրենոս-ողբի կարևոր նշանակությունը հունական անտիկ տրագոդիայի ձևավորման գործընթացում և, հետևաբար, նույն տրամաբանությամբ՝ հին հայկական ողբական արարողության կարևոր դերը հայ թատրոնի և ընդհանրապես արվեստի ձևավորման մեջ: Այստեղ նկատի են առնվել ծիսական արարողության թատերային ասրիբուտները:

Այսպիսով, ձայնարկուների արվեստը, որպես ինքնատիպ մի երեվույթ, ձևավորվելով խոր անցյալում, զարգացման բարձր աստիճանի է հասել հատկապես ստրկատիրական հասարակարգում, երբ միավետների և բարձր դասի ներկայացուցիչների հուղարկավորության արարողության մաս կազմող ողբական ծեսը նրանց մեծարման կարևոր պահն է եղել:

Ակներև է, որ հինավուրց ծեսը պահպանել է իր հիմնական առանձնահատկությունները նաև վաղ միջնադարում: Դրա լավագույն ապացույցներից է նաև Փավստոս Բուղանդի Պատմության մեջ չորրորդ դարին վերաբերող ողբական արարողության նկարագրությունը (Հ. 21): Աչքի է ընկնում հատկապես պարային տարրի ակտիվ վիճակը: Հետաքրքիր է հատկապես ծիփաղական պարերին ուղեկցող նվազարանային երաժշտության գործառույթը: Անդրադառնանք այդ բաղադրատարրերի առանձնահատկություններին առավել հանգամանորեն:

Նշենք, որ ծիսական նվազարանային երաժշտության տիպական գծերը բացահայտող կարևորագույն աղբյուրը պատմագրական հիշատակություններն են: Ժամանակագրական առումով տարբեր հիշատակու-

<sup>41</sup> Լ. Քալանթար, Արվեստի մայրուղիներում, Եր., 1963, Էջ 362:

<sup>42</sup> Հ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., Էջ 46-79:

թյունների համապրումը թույլ է տալիս այդ երաժշտության հիմնական տիպը համարել անսամբլայինը։ Փավստոս Բուզանդի հիշյալ նկարագրության մեջ դա փողերից, վիներից և փանդիռներից կազմված մի յուրահատուկ անսամբլ է։ Ստեփանոս Օրբելյանի հիշատակություններում անսամբլներն ընդգրկում են փողեր և քնարներ, ինչպես նաև փողեր և գլարափողեր։ Այունյաց Վասակ Իշխանի հուղարկավորության նկարագրության մեջ ասվում է. «ողբերգական պարուք փողոց և քնարահարաց» (Հ. 175)։ Այունյաց Աշոտ իշխանի հուղարկավորության նկարագրության մեջ գրված է. «դամբանական փողովք և ողբերգական քնարահարիւք» (Հ. 176)։

Անհրաժեշտ է նկատի առնել այն, որ անսամբլային երաժշտության առավել գարգացած տեսակ, տվյալ դեպքում կարող էր պատմագիրների դիտակետում չգտնվել։ Նշենք նաև, որ միջնադարյան մատենագրության մեջ փող և քնար անվանումները յուրահատուկ բառեզրի իմաստ են ձեռք բերել։ Առաջինը՝ ընդհանրապես փողային նվագարան է նշանակել, երկրորդը՝ լարային։ Այս առումով վերը նշված անսամբլները կարող են ենթադրել դրանցում ընդգրկված նվագարանների բազմազանություն։

Առանձնահատուկ ուշադրություն է գրավում լարային և փողային նվագարաններից կազմված մյուս տեսակը։ Անշուշտ, անսամբլի նմանատիպ կազմը կարող էր պայմանագործել պաշտամունքային թուշական գործողության առանձնահատկություններով։ Հետևաբար բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ անսամբլի տվյալ տիպը ստեղծվել է հայ ժողովրդի ձևավորման վաղագույն ժամանակաշրջանում։ Եվ չնայած լարավոր նվագարանների անվանումները փոխառություններ են, այսուամենայնիվ, եթե ոչ հիշյալ նվագարանները, ապա դրանց նախատիպերը վաղուց ավանդական կիրառություն պետք է ունենային։ Համազրելով փանդիռ նվագարանը հայկական բարձրավանդակի հնագույն ծիսական խորհրդանիշերի և դիցաստեղծման հետ, Ա. Ցիցիկյանը հնարավոր է համարել այն դիտել իբրև հայկական հնագույն ուղի տեսակ՝ լրուտնային նվագարան<sup>43</sup>։ Սրանից կարելի է եզրակացնել, որ հեթանոսական

<sup>43</sup> А. Цицикян, Лютневые инструменты Армении в аспекте генетического рассмотрения проблемы, // Конференция по проблемам генезиса и специфики ранних форм муз. культуры/, Дилижан, 1986.

ծիսապաշտամունքային երաժշտության հնագույն շերտերին է պատկանել նաև վերը նշված անսամբլային երաժշտությունը:

Թեև պատմագրությունը հնարավորություն չի ընձեռում բացահայտելու բուն նվագարանային երաժշտության առանձնահատկությունները, սակայն վերջինիս զարգացման աստիճանի մասին հավաստում են նկարագրությունների որոշ մանրամասներ: Ինչպես տեսանք Ստեփանոս Օրբելյանը հիշատակել է դամբանական փողերի և ողբերգութնարանների մասին: Վերջինից դժվար չէ եղակացնել, որ քնարահարները միևնույն ձայնարկու ողբասացներն են, որոնց զարգացած արվեստը, ինչպես ցոյց է տալիս Օրբելյանի հիշատակությունը, ընդգրկել է նաև համապատասխան նվագարանային երաժշտություն:

Այսպիսով, նախաքրիստոնեական հուղարկավորության ծեսը պատմագրական աղբյուրներում ներկայանում է անտարրանջատ ամբողջության մեջ, որտեղ միաժամանակ զարգացել են ողբական պարը, երգը և նվագը:

Մովսես Խորենացու Պատմության վերը հիշատակված այն դրվագը, որտեղ նկարագրված էր Արտաշես Ա-ի հուղարկավորությունը (Հ. 45), հայոց նախաքրիստոնեական երաժշտական մշակույթի ինքնատիպ ևս մեկ երևույթի մասին է վկայում: Խոսքն այստեղ հիշատակված պղնձե փողերի մասին է, որոնք, անտարակույս կարևոր մասն են կազմել արքունական զորքի ռազմական պարագաների մեջ: Նկատի ունենք ռազմական նվագարանները, որոնց միջոցով կատարվող կոչագանչանները կարևոր դեր են կատարել հայոց և առհասարակ քննվող ժամանակաշրջանին վերաբերող ռազմական գործողությունների ժամանակ:

Համաշխարհային երաժշտության պատմության հնագույն շերտերի մեջ են ձևավորվել ռազմական իրադարձություններին առնչվող երաժտական ավանդույթները: Զերբազատվելով ծիսահավատալիքային պատիճից (օրինակ՝ որսի ծիսապարեր), ռազմի երգն ու նվազն ամենատարբեր դրսերումներով են ներկայացել թե՛ ռազմական պարերում, և թե՛ բուն պատերազմական գործողությունների ընթացքում:

Հայոց ռազմական նվագարանների մասին հետաքրքիր դիտարկումներ է կատարել Ա.Քոչարյանը՝ կարևորելով ինչպես դրանց

գործառույթի, այնպես էլ նվազարանային տեսականին առնչվող մի շարք հարցերի պարզաբանումը<sup>44</sup>:

Իբրև կարևոր բաղադրիչ տարր, Հայոց միապետների բանակներում ևս հնչել են նվազարանային կոչ-մեղեղիներ, որոնց գործառույթը պայմանավորվել է մարտական գործողության կոնկրետ իրադրությամբ: Այս մասին իբրև Հավաստի և արժեքավոր աղյուռը են ներկայանում հայ միջնադարյան պատմագրության տվյալները: Թեև Հիշատակված նյութը վերաբերում է Հիմնականում միջնադարին, այդուհանդերձ ակնհայտ է, որ ավանդույթը որպես հելենիստական մշակութային արժեքների համակարգի արգասիք, ժառանգված է և, թվում է, անդրադարձնում է Համբուլհանուր բնույթի երևույթներ: Այն է՝ ռազմի դաշտում հնչող նվազարանային ազգանշան-մեղեղիների միևնույն համակարգի գործառույթը տարբեր ժողովուրդների բանակ-ներում:

Միևնույն ժամանակ, պատմագրական աղյուռներից անհնար է դուրս բերել բուն հնչող նյութի երաժշտաարտահայտչական բնորոշիչները: Հետևաբար, հնարավոր ենք համարում ենթադրել, որ համբուլհանուր կոչ-մեղեղիներից զատ հիշալ ժամանակաշրջանում կարող էին հնչել նաև տվյալ ժողովրդի երաժշտամտածողությանը բնորոշ մեղեղիական դարձվածքներ: Այս ենթադրությանն ենք հանդում, օրինակ՝ Հովհանն Մամիկոնյանի Պատմության մեջ բերված թեև համառոտ, բայց դիպուկ մի բնորոշման առնչությամբ: Պարսիկների գեմ հայոց զորքի մղած թեծ մարտերից մեկի նկարագրության մեջ նա նշում է, որ հակառակորդ կողմերը ճանաչելի էին դառնում միմիայն իրենց ինքնատիպ ռազմակոչերի ազգանշանների տարբերակման շնորհիվ (Հ. 61):

Պատմագրական տվյալները հավաստի աղյուռներ են հիշալ ոլորտում կիրառված նվազարանների տեսականի և առանձին դեպքերում՝ դրանց կառուցվածքի և հնչերանգի առանձնահատկությունների ուսումնասիրման համար:

Այդ վկայությունները բնորոշվում են ինֆորմացիայի բազմազանությամբ, որի շնորհիվ կարելի է վստահությամբ նշել, որ

<sup>44</sup> Ա. Քոչարյան, Երաժշտական գործիքները Հայաստանում: Հարկանային և շնչական գործիքներ, Եր., 2008:

ուազմական տարբեր իրավիճակների ժամանակ Հայոց բանակում հնչել է Համապատասխան փողավոր նվազարաններով կատարվող երաժշտություն։ Հիմնական նվազարանը հիշատակված է փող անունով։ Ավելի ստույգ՝ հետևյալ տարբերակներով։ Փող, «ի ձայն փողոց» (Հ. 26, 27, 60, 83, 84, 180), փող պատերազմին (Հ. 62, 53, 135, 137, 138), փող պատերազմացն (Հ. 55), փող պատերազմական (Հ. 104), ազդարար փող (Հ. 56)։

Հովհան Մամիկոնյանը գրում է ճակատամարտի սկիզբն ազդարարող պատերազմական փողերի մասին, Կվառա գյուղաքաղաքի քրմի դեմ Գրիգոր Լուսավորչի մղած զինված պայքարի նկարագրության դրվագներում։ «և Հնչեցուցին զփողն պատերազմացն, և յանդկնաբար յարձակեաց ի վերայ» (Հ. 53)։ Ապա՝ «Արդ իբրև հարստացան երկոքին կողմանքն, ... Հնչեցուցին զփողն պատերազմացն»։ IV դարում Հայոց Տրդատ թագավորի և հունաց բանակների ճակատամարտի նկարագրության մեջ նշված է. «Եւ սկսան Հնչեցուցանել զփողն պատերազմաց, և թնդիւն սաստիկ շուրջանակի» (Հ. 55)։

Նույն գործառույթը կրող փողերի մասին են հիշատակել նաև Հովհան Մամիկոնյանը և Սեբեոսը։ VII դարում Հայ-պարսկական ընդհարումներից մեկի նկարագրության մեջ Հովհան Մամիկոնյանը գրում է. «յանկարձակի Հնչեցուցին զփողն յետոյ և յառաջոյ։ Եւ ՚ի մէջ առին զնոսա» (Հ. 60)։ Նույն ժամանակաշրջանին վերաբերող Հայ-պարսկական ընդհարումներից մեկի նկարագրության մեջ նշված է. «Եւ իբրև իսթեցին զջորիսն սրով և արկին ի բանակն, և ինքնեանք զհետ մտել՝ զփող պատերազմին Հնչեցուցին, և առ ձեռն սկսան կոտրել» (Հ. 62)։ Պարսիկների դեմ Վահան Մամիկոնյանի կազմակերպած ապստամբության նկարագրության մեջ կարդում ենք. «... և յարձակին ի միմեանս ի ձայն փողոց տագնապաւ ի դաշտին Գերամնայ»<sup>45</sup>։ Գագիկ Բագրատունու որդիների՝ Աշոտի և Հովհաննեսի երկպառակտության առիթով պատմագիրը նշում է. «Եւ իբրև լոււաւ Յովհաննէս զգալն Աշոտոյ եղթօր իւրոյ, Հրամայեաց փող պատերազմի Հարկանել» (Հ. 135)։

Որոշ վկայություններում հիշատակվում է ճակատամարտի ավարտն ազդարարող փողերի մասին։ Հովհան Մամիկոնյանի

<sup>45</sup> Պատմութիւն Սեբեոսի (այսուհետև՝ Սեբեոս), աշխատասիրությամբ գ. Աբգարյանի, Եր., 1979, էջ 66։

Հիշատակություններից մեկում նշվում է. «Արդ իբրև մեռավ Դեմետր ի նոյն պատերազմին, Հնչեցոյց իշխանն Սիւնեաց զփող պատերազմին ի խաղաղութիւն և լուցին երկրին կողմանքն ի կոտորելոյ զմիմեանս» (Հ. 106):

Պատերազմական փողի մասնակցությունը նաև ճակատամարտի ընթացքում հիշատակել են Հովհան Մամիկոնյանը և Թովմա Արծրունին: VII դարում տեղի ունեցած Հայ-պարսկական ընդհարումներից մեկի նկարագրության մեջ Հովհան Մամիկոնյանը գրում է. «Եւ յամենայն կողմանց ի վերայ Հարձակեցան, և ի մէջ առին զգօրն պարսից: Եւ խմբեցաւ պատերազմն այնչափ, որ ոչ գոյր Հնար ճանաչել զմիմեանս, բայց միայն ի ձայն փողոցն և ի տեսա զրոշացն» (Հ. 61): Մեկ այլ զրվագում «Եւ իբրև խթեցին զղորիսն արով և արկին ի բանակն, և ինքեանք զհետ մտել՝ զփող պատերազմին Հնչեցուցին և առ ձեռն սկսան կոտորել» (Հ. 62): Հայ-պարաբական մարտերից մեկի նկարագրության մեջ Թովմա Արծրունին հիշատակում է. «մինչ և նոքա ... ընդդեմ միմեանց ճակատեալ կազմէին զուզմն, և փողքն գոչէին և դրօշքն տարածէին» (Հ. 83):

Դատելով առանձին վկայություններից ռազմական փողերի քանակը Հայոց բանակում բավական մեծ է եղել: Ըստ Եղիշեի, Հայկական յուրաքանչյուր զորագունդը մի քանի փողՀար է ունեցել: Ավարայրի ճակատամարտի նախօրյակին պարսից զորավար Միջներսեհը Վասակից Հարցրել է. «թէ քանի գունդ զզօրսն բաժանիցեն, և ... քանի փողահարք ի մէջ գնդին ճայնիցեն» (Հ. 26):

Ներկայացված նյութից ակներև է դառնում պատերազմական փողի գործառույթի բազմազանությունը, ինչից ենթադրելի է նաև Համարժեք Հնչող նյութի առկայությունը: Այստեղից էլ օրինաչափորեն ծագում է այն Հարցը, թե ռազմական այս կամ այն իրադարձության ժամանակ բանակում արդյո՞ք միւսնույն փող նվազարանն է գործածել: Քննելով Հարցը, անհրաժեշտ ենք Համարել անդրադառնալ գրավոր այն Հիշատակություններին, որոնցում տեղ են գտել նաև Հարեան ժողովուրդների բանակների նկարագրությունները:

Այստեղ կարևորել ենք երկու իրողություն. նախ՝ Հիշատակվող նվազարանների բացառապես Հայերն անվանումները, և ապա՝ այդ նույն նվազարանների Հիշատակումները Հայ իրականությանը առնչվող այլ նկարագրություններում: Այստեղից էլ այն մեծ Հավանա-

կանությունը, որ հիշատակված ռազմի նվագարանները կիրառվել են նաև Հայոց բանակում: Նշենք նաև Հակառակ պարագայի մասին: Նույն պատերազմական փողերի մասին նշված է նաև Հունաց բանակում: Հայոց Տրդատ թագավորի երիտասարդ տարիներին անդրադառնալով, Ագաթանգեղոսը գրում է Հունական բանակում նրա քաջադրությունների մասին. «Եւ նորա առեալ զգունդն զօրաց բազմութեան՝ ի ձայն փողոյ տագնապաւ յառաջ մատուցանէր մինչև Հանդիման թշնամեացն» (Հ. 5): IX դարին վերաբերող իրադարձություններից մեկի նկարագրության մեջ Ստեփանոս Տարոնեցին գրում է բյուզանդական բանակի մասին. «Եւ ինքն թագաւորն ցամաքաւն եկեալ մերձենայ ի բանակն... և Հնչեցուցանել հրամայէր զպատերազմական փողոն» (Հ. 104): Մատթեոս Ուռհայեցին, պատմելով 1055թ. Տուրքի Սուլթանի արշավանքի մասին, գրում է. «Իսկ յորժամ բաժանէր առաւտոն, հրամայէր հարկանել պատերազմական փողոն» (Հ. 136, 196, 137, 143, 84, 87, 110, 168):

Այժմ անդրադառնանք փողերի տեսակներին վերաբերող Հիշատակություններին: Եղիշեի մոտ նշվում են մեծ փող և մեծ գալարափող նվագարանները. «Նշանա բաշխէր, գրօս արձակէր, և ի ձայն մեծի փողոյն պատրաստ հրամայէր լինել» (Հ. 27): Ապա՝ «Զայն իբրև ետես Մուշկան Նիւսալաւուրտն, մնայր գազանացն Արտաշրի, որ ՚ի վերայ գազանացն նստէր ՚ի բարձր դիտանոցին և ... ի ձայն մեծ գալարափողոցն զիւր գունդարն ստիպէր, և յառաջամարտիկ զօրօքն զնա ի մէջ փակէր» (Հ. 27):

Կայսերալուր փողեր է Հիշատակել Թովմա Արծրունին, IV դարում Սերուժան Արծրունու դեմ Սմբատ Բագրատունու տարած Հաղթական ճակատամարտի նկարագրության մեջ. «և փողք կայսերալուրք և գունդք վառելոցն վաշտիցն շուրջ փակեալ զՄեհրուժանեան գնդիմ, զի մի ճողովրելին աճապարիցի» (Հ. 82): Մատթեոս Ուռհայեցու Պատմության աշխարհաբար թարգմանության մեջ պատերազմական փողի փոխարեն Հանդիպում է պատերազմական շեփոր անվանումը (Հ. 135-139): Այս մասին կատարենք Հետելյալ դիտարկումը: Նվագարանների անվանումների ձեռագրական տարրնթերցումը, ինչը Հավանական է թվում այս դեպքում, Հանդիպում է մատենագրության մեջ: Մենք, սակայն, պարզեցինք, որ Մատթեոս Ուռհայեցու թարգմանված աշխատությանը Հիմք ծառայած բնագրերում ևս նշվում են

պատերազմական փողերի մասին: Այստեղից էլ եղբակացրինք, որ բնագրերի թարգմանության հեղինակը պարզապես անվանափոխել է Հիշալ նվագարանը, չկամկածելով, որ այդ նվագարանները թե՛ իրենց անուններով և թե՛ կառուցվածքով կարող էին միմյանցից տարբերվել: Նույն իրողությանն ենք հանդիպում նաև Հովհաննես Դրասիանակերտու պատմության թարգմանության մեջ<sup>46</sup>: Պատմիչը Տիգրանի առասպելի մասին Հիշատակելիս նշում է նաև մի նվագարանի մասին, որի անվանումի փոխարեն բերում է կատարման կերպը՝ կտնտոցահար աղերսիս (Հ. 73), այսինքն՝ լարերը բախելով: Աշխարհաբար թարգմանության մեջ Գ.Բոսունյանը պատմիչի այս արժեքավոր նվագարանագիտական նկարագիրը փոխարինել է մեկ բառով՝ քնարահարությամբ:

Մենք հակված ենք այն կարծիքին, որ բնագրերի ախարհաբար թարգմանություններում նվագարանների բնագրային անվանումների նրկատմամբ անհրաժեշտ է ցուցաբերել առավել զգույշ մոտեցում և կամայական ընտրությամբ զերծ մնալ բնագրում բերված արժեքավոր ինֆորմացիայի հավանական խեղաթյուրումից:

Քննվող գրավոր ազբյուրներում տեղ են գտել նաև բացառիկ արժեք ներկայացնող Հիշատակություններ, որոնք վերաբերում են ուսումնական փողերի նկարագրին, մասնավորապես՝ Հնչերանգին և կառուցվածքին: Արտաշես Ա-ի օրոք Հայոց բանակում, ըստ Մովսես Խորենացու Հնչել են պղնձե փողեր. «Եւ Սմբատ հրամայէր զփողսն պղնձիս Հնչեցուցանել և յառաջեալ զճակատն իւր, իբրև արծիւ յերամս կաքաւոց խոյանայր» (Հ. 42): Նույնը՝ նաև Արտաշես Ա-ի Հուդարկավորության նկարագրության մեջ. «... և առաջի պղնձիս հարկանելով փողս, և զինիս՝ ձայնարկու կուսանք, սեազգեստ և աշխարող կանայք, և զհետ՝ բազմութիւն ուամկին» (Հ. 45):

Իրենց Հնչերանգով այլ գործառույթ են կրել եղջերափողերը: Այսպես, Շապուհ Բագրատունին, նկարագրելով VIII դարում արաբական զորաբանակներից մեկը, նշում է. «Հնչեցուցին զփողն եղջիւրէ ի բանակն անօրինաց» (Հ. 129): 1098թ. Անտիոքի գրավման պատմության մանրամասների մեջ Մատթեոս Ուռհայեցին հատուկ նշել է. «... և բացեալ ի

<sup>46</sup> Յովհաննու կալվողիկոսի Դրասիանակերտուց (այսուհետ՝ Յովհաննես Դրասիանակերտոցի), Պատմութիւն Հայոց: Աշխարհաբար թարգմանությունը և ձանոթագրությունները Գ.Բ.Բոսունյանի, Եր., 1996, էջ 25:

պարիսպն և զկլայեած դուռն, և ամենայն բանակն Յուանկաց մտին ի քաղաքն Անտիոք. և ընդ առաւօտն միաբան Հնչեցուցին զփող եղջերացն ամենայն զօրքն» (Հ. 142):

Պղնձե և եղջուրե փողերի Հնչերանգային տարբերությունները դարձյալ Հնարավոր է դիտարկել փող նվագարանի գործառույթի բազմազանության շրջանակներում: Նույնը կարելի է նշել նաև այդ նվագարանների կառուցվածքային առանձնահատկությունների մասին: Մովսես Կաղանկատվացու մոտ Հիշատակվում են բազմաձայն փողեր: Աղվանքի թագավոր Վաչեին ուղղված նամակում ավում է. «Եկն եհաս ի վերայ քո միանգամայն բազմութիւն ազգաց Հեթանոսաց, ահաւոր գաղանօք, խառնաղրոշմն նշանօք, բազմաձայն փողովք, գալարափող դոչմամբ, անտառախիս նիզակօք» (Հ. 66):

Բազմաձայն բնորոշումը կարելի է մեկնաբանել և՛ իբրև նվագարանների քանակի ընդգծում, և՛ իբրև Հնչողության բազմաձայն կերտվածքի նշում: Համանման եղրակացությունների ենք հանդում նաև Սեբեոսի Հիշատակություններից մեկի քննության մեջ: 607թ. Սմբատ Բագրատունու և պարսից Խոսրով արքայի համագործակցությանն անդրադառնալով, պատմագիրը նշում է. «Տայ նմա զփող չորեքձայնեանս և պահապանս դրանն նորա ի հետեւակաց արքունի» (Հ. 65): Այս դեպքում ևս չորեքձայնեա փողերը կարող են ստուգաբանական տարբեր մեկնությունների ենթարկվել: Կարելի է ենթադրել, որ փողերից յուրաքանչյուրը արձակել է չորս Հնչուն, կամ ունեցել է չորս ձայնանցք: Հնարավոր է դրանք դիտել նաև որպես մեկ Հնչուն արձակող չորս փողերի խումբ և այլն: Տվյալ դեպքում փողերի չորեքձայնեա լինելը դրանց որոշակի տեսակի մասին է վկայում: Նույնը կարելի է ասել նաև պղնձե փողերի, եղջերափողերի, գալարափողերի մասին: Հնարավոր է, որ փող անվանումը պատմագիրների մոտ հաճախ ընդհանրացված անվանումի իմաստ է ձեռք բերել և օգտագործվել որպես յուրահատուկ եզր:

Համալրելով նվագարանների տեսականիին վերաբերող պատմագրական բնութագրումները՝ նշենք, որ դրանցից մի քանիսում Հիշատակվում են նաև տարբեր նվագարաններից (փող, թմբուկ, քնար, ջնար) բաղկացած նվագախմբերի մասին: IX դարում Հայ-արաբական ուազմական ընդհարումներից մեկի նախօրյակին, ըստ Թովմա Արծրունու, արաբ թագավոր Զափրը «խնդրէ և տեղեկութիւն թե քանի՛

դրօշք են, և կամ քանի՛ նշանք, և կամ քանի առաջս զօրքն բաժանիցին, և կամ քանի՛ փողք գոչիցին, և կամ քանի՛ թմրուկ դափիցեն» (Հ. 84): Արաբ գորապետ Բուղայի արշավանքներից մեկի նկարագրության մեջ ասվում է. «... նշանս կանգնեալ և քնարք հնչէին, և թմրուկն դափիցին» (Հ. 85): Նույն ճակատամարտի նկարագրության մեջ նշվում է. «և ահա աղաղակ և փողք և քնարք և ննարք, և վառեալ զինու և սրոյ և ամենայն պատրաստութեամբ անհուն զօրացն» (Հ. 88, 87):

Ի տարբերություն պատերազմական փողի, թմբուկների տեսականիի մասին համապատասխան ինֆորմացիա պատմագրությունը չի տալիս: Քնարներ և ննարներ հիշատակվում էր միայն արաբական զողքի նկարագրություններում, ինչը խոսում էր այդ նվազարանների սահմանափակ գործառույթի մասին՝ ի տարբերություն փողերի և թմբուկների: Միևնույն ժամանակ, լիովին ժխտել դրանց գործածությունը մյուս ժողովուրդների մոտ նույնպես համոզիչ չէ: Ամենայն հավանականությամբ, հայ պատմագիրների հաղորդած տեղեկությունները վերաբերում են ինչպես հայերի, այնպես էլ հարեան ժողովուրդների մոտ ընդհանուր կիրառություն ստացած նվազարանների մասին:

Ընդհանուր առմամբ, քննվող ոլորտը դիտարկելով երևույթի մաքողջական համայնապատկերի մեջ, նշենք, որ բացի նվազարանային երաժշտությունից, ուազմական իրադարձությունների ժամանակ և առհասարակ հին հայոց բանակում հնչել են նաև այլ ժանրի և տիպի երաժշտական ստեղծագործություններ (իմա՞ ժողովրդական երգեր, հոգմոր երգեր, պարեր և այլն):

Մեր դիտարկումը սոսկ նվազարանային երաժշտության ոլորտում մասնավորեցումը ակնկալում է այլ աղբյուրների՝ հնագիտության, կերպ-արվեստի (հատկապես՝ մանրանկարչության), ինչպես նաև հարեան ժողովուրդների համապատասխան և համարժեք աղբյուրների տվյալների համարդական ուսումնասիրում: Պատմագրական նյութը լուրջ հիմք է տալիս հայոց բանակում կիրառված նվազարանային երաժշտությունը արժենորել իբրև ժամանակի երաժշտարվեստի մի ինքնատիպ ոլորտ, որտեղ բազմապիսի գործառույթի մեջ են դրվել ինչպես մասնահատուկ, այնպես էլ ավանդական նվազարաններ:

Գետականության կորուստը միակ պատճառն էր, որ հայոց հինավորց ուազմակոչերը մնացին լոկ մատենագրական

Հիշատակություններում՝ իբրև ազգային բանակը խորհրդանշող յուրօրինակ տարր:

Հայոց նախաքրիստոնեական ժամանակաշրջանի երաժշտապատմական խնդիրներ է ասպարեզ բերում Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» մեծարժեք աշխատությունը։ Դրանք վերաբերում են վիպական բանահայուսության մեջ ձևավորված և հելենիզմի դարաշրջանում ծաղկում ապրած բանավոր ավանդույթի մասնավիտացված ինքնատիպ արվեստին՝ վիպասանների և գուսանների ստեղծագործությանը։

Իբրև կարևոր պատմական աղբյուր օգտագործելով Հայոց ավանդական վիպական բանահայուսությունը, Խորենացին հիշատակել է նաև վերջինիս ավանդման եղանակների մասին։ Նոյի և նրա որդիների մասին առասպելները, ըստ Խորենացու վկայության, հիշատակել են «Հինքն արամազնեաց ի նուազս փանդրան և յերգս ցցոց և պարուց» (Հ. 34), Արամի մասին հիշատակվել են «ի գուսանականնեն» (Հ. 35), Տիգրան Ա-ի և նրա որդիների մասին երգվել են փանդիռի նվազակցությամբ՝ «Թուելեաց» երգերում (Հ. 38), Տորք Անգեղի և Սանատրուկի մասին տեղեկացնում են «երգ բանիցն» (Հ. 40), Արտաշեսի մասին՝ «յերգս վիպասանաց» (Հ. 43), Արտավագդ Ա-ի մասին՝ «երգիչք գողթան առասպելաբաննեն» (Հ. 46)։

Մովսես Խորենացու վկայությունների համաձայն, թե՛ առասպելները և թե՛ վիպական պատումները՝ ա. երգվել են; բ. երգվել են հատուկ կատարողների կողմից, հաճախ՝ փանդիռի նվազակցությամբ։ Կատարողներին Խորենացին հիշատակում է մի քանի անգանումով։ Գուսան, երգիչ, վիպասան։ Այս անունների վաղմիջնադարյան նշանակությունը լայնորեն մեկնաբանվել է Հայագիտության տարբեր ոլորտներում։

Մեզ հետաքրքրող խնդիրների շրջանակը դիտելի է հետեւյալ հիմնահարցերի տեսանկյունից։ ավանդական բանահայուսության ի՞նչ երևույթների վրա են հիմնվել ժողովրդապրոֆեսիոնալ կատարողները, վերջիններիս արվեստի ո՞ր բնորոշիչներն են արժեորվում որպես առավել տիպական։

Պատմա-բանասիրական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ թե՛ առասպելները և թե՛ վիպական պատումները ստեղծվելով պատմական տարբեր ժամանակաշրջաններում, աստիճանաբար

Հարակցվել են: Ինչպես նշել է Հ.Հովհաննիսյանը. «Հայ Հնագույն երգային-վիպական կոչվող բանահյուսությունը, որ ավանդված է վաղ միջնադարից, ներկայացնում է գեղարվեստական մտածողության մի որակ, որ առեղծվածային է շատ կողմերով և դժվար է տեղափորվում բանավոր արվեստի ավանդական պատկերացումների մեջ, դժվար է բացատրվում բանագիտության ավանդական հասկացությունների օգնությամբ: Հայկական վաղ միջնադարի մեզ հայտնի բանահյուսական երևույթները ենթադրում են ավելին, քան ենթադրում են վեպ, զրոյց, առասպել, երգ և նման ժանրային անվանումները»<sup>47</sup>:

Մովսես Խորենացու հիշատակությունների աչքի ընկնող կողմերից մեկը համառոտությունն է, ինչը, կարծում ենք մեծապես կապված է պատմական նյութի շարադրման առաջնային նշանակությունից: Այս պարագայում, բնականաբար, նյութի փոխանցման կերպը Պատմության մեջ ավելի երկրորդական տեղ է զբաղեցնում, ինչի շնորհիվ, պատմահայրը հիշատակում է Համառոտ անվանումներ:

Բազմագան մեկնությունների առիթ է տվել հատկապես յերգացոց և պարուց ժանրային բարդ անվանումը: Դրանք կարելի է բաժանել երկու խմբի: Որոշ ուսումնասիրություններում ցցոց երգերը տարբերվում են պարուց երգերից, որպես անկախ երևույթներ, մինչդեռ մեկնությունների մի ստվար խումբ ցցոց և պարուց երգերը դիտում է որպես մեկ ամբողջական երևույթի բաղկացուցիչներ: Խորենացու Պատմության ֆրանսերեն թարգմանության հեղինակ Ֆլորիվալը, Ստ.Պալասանյանը, Մ.Աբեղյանը պարուց երգերը դիտել են որպես քնարական պարերգեր՝ «նման մեր արդի երկտողերին ու քառասողերին»<sup>48</sup>: Նույն հեղինակները որպես գրեթե նույն բնույթի երգեր են մեկնաբանել նաև ցցոց երգերը: Ֆլորիվալը դրանք նույնացրել է ֆրանսիական քնարական բալլադների հետ<sup>49</sup>: Իսկ Ստ.Պալասանյանն ու Մ.Աբեղյանը դրանք դիտել են որպես հարասնեկան երգերի մի տեսակ՝ ենելով Ազգաթանգեղոսի Պատմության մեջ Տրդատ թագավորի հարսանիքի նախապատրաստության նկարագրության մեջ Հանդիպող «ցուց բառնալ մարդկանն»

<sup>47</sup> Հ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 107:

<sup>48</sup> Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական վեպը, Թիֆլիս, 1908, էջ 256:

<sup>49</sup> Մովսէս Խորենացու հայկական պատմություն, աշխարհաբար թարգմանեց և լուսաբանեց Խորէն ծայր. Վարդապետ Ստեփանէ, ՄՊր., 1889, էջ 27:

արտահայտությունից: Մ.Աբեղյանը գրել է, որ ցուցը նույն նշանակությունն է արտահայտում նաև Ողիմպիանոսի IV առակում. «Հարսանիք էին և ցոյցք և դամբարք առաջաստաց» և Գր.Նարեկացու Ողբերգության մատյանում. «կաքաւս կայթից եւ ցուցս վազից Խաղաղակացն դիւաց գարշելեաց՝ ճարտար խաբողանց Ծովութեամբս իմով չնորհեացի»: Հստ Մ.Աբեղյանի, «Այդպիսի երգերի մեջ ևս կարող էին Սուլք Գրքի այս կամ այն տեղական անվան մասին հիշատակություններ եղած լինել, ինչպես նույնը գտնում ենք մեր արդի պար-երգերի մեջ»<sup>50</sup>:

Ինչպես տեսնում ենք, Մ.Աբեղյանը ցուցը մեկնաբանում է հիմ-նականում ենելով Համատեքստից: Բայց չէ՞ որ նշված Հատվածներում ցուցը կարող էր նաև այլ իմաստ կրել: Հատկապես Նարեկացու մոտ Համատեքստը բոլորովին այլ բան է հուշում:

Անդրադառնանք նաև այլ մեկնությունների: Դրանք կարող են դիտվել որպես մեկ հիմնական մեկնակերպի միմյանց լրացնող տարբերակներ, որոնց հիմքում Խորենացու հիշատակության լեզվաբանական մանրակրկիտ վերլուծությունն է: Ինչպես նշեցինք, մեկնությունների այս սովոր խումբը ցցոց և պարուց երգերը դիտել է իբրև մեկ միասնական երևույթ: «Նուազը և երգը, - գրել է Հ.Հովհաննիսյանը, - այն տարրերն են, որոնք ցուցք և պարք տարրերը միավորում են սինկրետիկ ամբողջության մեջ: ... Ցցոց երգի և պարուց երգի միասին գործածությունը ենթադրում են մի տարրարժեք (էկվիպոլենտ) գույքազրություն, որի երկու կողմերի նմանությունն ու տարբերությունը հավասարակշռված է մեկ ընդհանուր դիֆերենցիալ հատկանիշի հիման վրա: Այդ դիֆերենցիալը նշանակված է երգ բառով, ... որը քննկող հասկացությունում ոչ թե անջատող, այլ միավորող մոմենտ է»<sup>51</sup>:

Ի՞նչ է իրենից ներկայացրել բանավոր արվեստի այս անտարբանջատ երևույթի յուրաքանչյուր տարրը: Նշենք, որ առավել տարարժեք մեկնությունների առիթ է ներկայացրել ցցոց երգը կամ ցուցը, որը մատենագրական սակալաթիվ աղբյուրներում է հիշատակվել: Մ.Էմինի «գգործս որևէ անձին ցուցանէ» մեկնությունը առավել մանրամասն է ներկայացրել Խորեն Ստեփանեն. «Երգը ցցոց նշանակում է ... այնպիսի երգ, որն երգվում էր ցոյցերով կամ միմոսով,

<sup>50</sup> Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 256-257:

<sup>51</sup> Հ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 114:

մնջախաղով, որ արդարեւ այնպես և պետք է լիներ: Այս երգերի մեջ երգվում էին հին հայկական թագավորների և հակաների քաջագործությունները: Շատ բնական է, որ երգիչներն երգում էին այն երգերը ժողովրդի առաջ, աշխատում էին իրենց ձեռներով և շարժմունքով աւելի կենդանութիւն և կեանք տալ իրենց երգերին»<sup>52</sup>:

**Ցցոց երգերը** նույն կերպ են մեկնաբանել նաև Ալ.Վեսելովսկին, Ն.Մառը, Ստ.Մալխասյանցը, Գ.Լևոնյանը, Լ.Քալանթարը, Գ.Գոյանը, Հակոբ Հովհաննիսյանը, Ք.Քուչնարյանը, Ն.Թահմիզյանը և ուրիշներ: Մեկ այլ մեկնակերպ է առաջարկել Սրբ.Լիսիցյանը: **Ցցոց երգերը** դիտելով իբրև հայ ժողովրդի մշակույթի վաղագույն շրջանի երևույթ, նա մատնանշել է երգ բառի վաղմիջնադարյան իմաստային տարրերակներից մեկը՝ որն է պարերգը<sup>53</sup>, որից էլ հետեւում է, որ դիցաստեղծման գործընթացի հետ կապված այդ պարերգերը (պեչեռլաց) կատարվել են դիմակավորված: Հեղինակը հիմնվել է Ազաթանգեղոսի Պատմության մեջ ցուց բառի դիմակ նշանակության վրա (Հ. 6) ներկայացումների ժամանակ, որտեղ կերպավորվել են զանազան հերոսներ՝ դյուցազներ, ոգիներ, կուռքեր<sup>54</sup>: Այսպիսով, ցցոց երգերը կապված են ներկայացման, ցուցադրման հետ:

Ցուց բառի իմաստային նշանակալների համալիր մի քննություն ենք գտնում Հենրիկ Հովհաննիսյանի աշխատություններում: Համարդելով բառարանային մի շարք համարժեքներ՝ ցուցադրել, հայտնաբերել, ապացուց, երեսումն, ցուցումն, նշան և այլն, հեղինակը եկել է այն եղանակացության, որ այս բառը միայն իր «Հեռակա նշանակությամբ» կարող էր օգտագործվել **յերգա ցցոց** արտահայտության մեջ՝ այն է «առակ նշավակի», «տեսիլ նշավակի», այն դեպքում, երբ ցուցը նախնական լինելով, նաև ժողովրդական, խոսակցական ձևն է, որ մնացել է իր մերձակա սահմաններում, երբեք չփոխարինելով ցոյց քերականական-տրամաբանական բառեզրին<sup>55</sup>:

<sup>52</sup> Մովսէս Խորենացու հայկական պատմություն, ՍՊբ., 1889, էջ 27:

<sup>53</sup> Բառդիրք հայոց, Վենետիկ, 1728, էջ 127:

<sup>54</sup> Սրբ. Լիսիցյան, նշվ. աշխ., Հ.Ա., էջ 66:

<sup>55</sup> Հ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 124-125:

**Այսպիս է ցուցը ռուսերեն թարգմանել նաև Գ. Սարգսյանը. «в песнях с представлениями и танцами»<sup>56</sup>:**

Երաժշտագիտության մեջ հիշյալ արտահայտությունը դիտվել է իբրև երաժշտական անտարրանջատ արվեստի ինքնատիպ դրսերում. «Ժողովրդա-պրոֆեսիոնալ տիպի երաժշտները ... - գրում է Ա. Արևշատյանը, - լայնորեն կիրառել են հնագույն սինկրետիկ արվեստի բոլոր միջոցները՝ ասմունք, երգեցողություն, պար, մնջախաղ և նվագ.»<sup>57</sup>

Ցուցի՝ միջնադարյան բանավոր արվեստի երևոյթի մասին կարելի է ամբողջական պատկերացում կազմել միայն պարուց երգի հետ: Ինչպես նկատեցինք, միջնադարյան պարն արտահայտել է նախ և առաջ խմբվածություն:<sup>58</sup> Իսկ ինչպես է մեկնարանվել պարը Մովսես Խորենացու վկայության մեջ: Մ. Էմինը դիտարկել է որպես շրջան,<sup>59</sup> որը ի վերջո հանգում է վիպական շարքի: Ռուսերեն թարգմանության մեջ Մ. Էմինը գրել է «в плясовых песнях»: Անդրադառնալով այս թարգմանությանը Սրբ. Լիսիցյանը առանձնահատուկ ուշադրություն է դարձրել պար բառի ոչ լիարժեք մեկնությանը: Սեփական թարգմանության մեջ նա գրել է. «в песчеплясках представлений и хороводов»<sup>60</sup>:

**Պարուց երգերի համակողմանի ուսումնասիրությանն է անդրադարձել Հ. Հովհաննիսյանը:** Պար բառի նախորդ մեկնությունների քննական վերլուծությունը համարելով այդ բառի հումարեն, ասորերեն, երայերեն բառարանային համարժեքներին, նա եկել է այն եղրակացության, որ միջնադարյան պարը իր իմաստային տարբերակներով՝ խմբական պարերգ, խմբերգ, շարք, շուրջպատր, ինչպես նաև համատեքստային մի շարք կիրառություններով կարող էր դիտվել որպես թատերայնացված խմբական պարերգի հինավորց տեսակներից մեկը՝ իր առանձնահատկություններով համեմատվելով անտիկ պարերգի հետ, որն հետագայում (մ.թ.ա. VII դար) հիմք է ծառայել հին հումական խորոսի ստեղծմանը. «Անտիկ պարերգը որպես համեմատական

<sup>56</sup> **Мовсес Хоренаци.** История Армении, пер. с древнеарм. яз., введение и прим. Г. Саркисяна, Ер., 1990, стр. 15.

<sup>57</sup> **Ա. Արևշատյան.** Մովսէս Խորենացու հիմներպական ժառանգութիւնը, «Բազմավիճակ», Վեհապետիկ, 1992, թիւ 1-4, էջ 139:

<sup>58</sup> **Հ. Աճառյան.** նշվ. աշխ., Հ. Ե. Եր., 1932, էջ 953-956:

<sup>59</sup> **Մ. Էմին.** Վէպիք Հնոյն Հայաստանի, Մոսկվա, 1850, էջ 97:

<sup>60</sup> **Սրբ. Լիսիցյան.** նշվ. աշխ., էջ 67-68:

ընդունելով տեսնում ենք, որ Հայկական վաղ միջնադարյան պարանցիկ երգը (կամ պարուց երգը) կառուցված է եղել նույն տրամաբանությամբ՝ պարերգակների շրջանաձև, կիսաշրջան կամ ուղղագիծ շղթա և կենտրոնում կամ հանդիման՝ մենակատարը»<sup>61</sup>: Այստեղից էլ հետևում է, որ ցցոց երգերը, որոնց գործառույթը, ինչպես նշվեց, ցուցադրումն է, կարող են դիտվել հիմնականում որպես մենակատարումներ:

Որևէ կապ կ'ա արդյոք ցցոց և պարուց երգերի, և Մովսես Խորենացու հիշատակած մյուս երգերի միջև. թուելեաց երգը, յերգս վիպասանաց, երգ բանիցն: Այսօր Էլ շարունակվում են տարակարծություններն այն մասին, թե՛ այս անվանումները վիպասասպելական երգերի տարբե՞ր տեսակներին են վերաբերում, թե զրանք պարզապես վիպասանների միևնույն երգերի անվանական տարբերակներն են: Հարցը բարդացնում է այն, որ նշված բոլոր ժանրային անվանումները հանդիպում են միայն Մովսես Խորենացու Պատմության մեջ: Դրանք իբրև առանձին աղբյուրներ է ներկայացրել Ուխտանես եպիսկոպոս՝ վերապատմելով Խորենացու նկարագրությունները (Հ. 100) և Փակստոս Բուզանդի մոտ մեկ անգամ հիշատակվում են երգս առասպելեաց զիպասանութեանն (Հ. 14):

Հայագիտության մեջ հատկապես մեծ հետաքրքրություն են առաջցրել թուելեաց երգերը, որոնք հիմնականում չեն առանձնացվել Վիպասանքից: Տարբեր մեկնություններում փորձել են բացահայտել զրանց առանձնահատկությունները՝ ելնելով երգերի ինքնատիպ անվանումից: Վերջինիս վերագրել են երգերում պատմվող նյութի, հորինման եղանակի, ավանդման եղանակի յուրահատկությունները:

Թուելեաց անվանումը մեկնաբանվել է թուել բառի իմաստային տարբերակներին համապատասխան: Այսպես, այս բառի համարել, Հաշվել իմաստային նշանակությունն ի նկատի ունենալով<sup>62</sup>, ոմանք եկել են այն եղբակացության, որ այս երգերում «թվել ու համբել են թագավորների ու իշխանների գործերը»<sup>63</sup>: Որոշ հեղինակներ այդ երգերը դիտել են որպես Վիպասանաց երգերի մի ինքնուրույն տեսակ: Բ.Գևորգյանը նշում է, որ «Խորենացու թարգմանության մեջ պետք է

<sup>61</sup> Հ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 116-123:

<sup>62</sup> Նոր բառգիրք, Հ.Ա., էջ 820:

<sup>63</sup> Ստ.Պալասանյան, Պատմություն հայոց գրականության, Թիֆ., 1865, էջ 131:

անփոփոխ պահել թուելեաց երգք բառերը՝ իբրև հատուկ անուն երգի տեսակի, այնպես ինչպես ... մեղեղի, շարական և այլն»<sup>64</sup>: Իսկ Հ.Դավթյանը ենթադրում է, որ Մովսես Խորենացին հայ Հնագույն երգերի այդ տեսակին թուելեաց անունն է տվել, որ նշանակում է Աստվածաշնչի թուելեաց դրքում Հանդիպող երգերի նմանությամբ երգեր՝<sup>65</sup>: Ստ.Պալասանյանն էլ գտնում է, որ դրանք ոչ թե Վիպասանաց երգերի մի տեսակն են, այլ նույն՝ Վիպասանաց երգերն են, որոնց ընորոշել են պատմվող նյութի «թուելեաց երգերում» նշված առանձնահատկությունները<sup>66</sup>: Այսպիսով, երգերի առասպելեաց, վիպասանաց, թուելեաց անվանումները դիտվում են որպես Համանիշներ: Այս նույն տեսակետին են Հանգել նաև այն Հեղինակները, որոնք թուելեաց անվանումը վերագրել են վիպական երգերի ավանդման եղանակին:

Այս մեկնությունների հիմնական կողմնորոշչը թուել բայի միջնադարյան իմաստային «ի թիւ ասել» ձևն է, որը նոր բառզրկում ներկայացված է որպես «առանց եղանակի երգոց»<sup>67</sup>: Ն.Մառը ենթադրել է, որ այդ բառը «ցույց է տվել ոտանակոր հորինելու կամ արտաքերելու եղանակներից մեկը, բայց պարզ չէ, արդյոք եղանակավոր (հարածեալ կարդալուն, իբրև ուեխտատիվ արտասանելուն, թե առողջանումին (декламация) են վերագրվել»<sup>68</sup>: Մ. Աբեղյանի և Գ. Լևոնյանի տեսակետի համաձայն, խոսքը վերաբերել է առանց եղանակի կարդալուն, այսինքն՝ պատմեաձնելին՝<sup>69</sup>:

Երաժշտագիտության մեջ հիշյալ երգերը հիմնականում մեկնաբանվում են որպես ասերգ կամ ուեխտատիվ, այն է՝ երգեցողության մի տեսակ, որտեղ գերակռում է խոսքի գերը: Կարծում ենք՝ այս հարցում վճռորոշ գեր է խաղացել Կոմիտասի Հստակ ձևակերպումը «թիւ երգելու» վերաբերյալ<sup>70</sup>: Հ.Հովհաննիսյանի

<sup>64</sup> Բարդուղիմեան վարդ. Գէորգեան, Խորենացուն Խորենացիով պետք է հասկանալ, Վաղարշապատ, 1899, էջ 43-49:

<sup>65</sup> Հ.Դավթյան, «Թուելեաց» երգերի անվանման առթիվ, Էջմիածին, 1973, N7, էջ 47:

<sup>66</sup> Ստ.Պալասանյան, նշվ. աշխ., էջ 131:

<sup>67</sup> Նոր բառզրկության, Հ.Ա., էջ 812:

<sup>68</sup> Շ.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 18: Տե՛ս նաև Հ.Տագմազյան, Տеория музыки в древней Армении, Еր., 1977, стр. 20.

<sup>69</sup> Մ.Աբեղյան, Երկեր, Հ.1, Եր., 1966, էջ 163: Գ.Լևոնյան, Աշուղական արուեստը, Ազգագրական հանգես, 1906, N13, էջ 25:

<sup>70</sup> Կոմիտաս, Տետր երաժշտության, Կոմիտասի ֆոնդ, թիվ 655, էջ 2:

մեկնությունը, ըստ որի՝ Վիպասանքի «երգելի մասերը կոչվում են երգ կամ պարերգ, իսկ արտասանելի մասերը՝ թվելաց երգ (ռեշտատիվ)»<sup>71</sup>:

Հետաքրքիր է նաև Ն.Գալթրճյանի մեկնությունը: Նա թուելեաց բառը կապել է երգերի Հորինման եղանակի հետ, որի առանձնահատկությունը խոսքի «չափականության» և երաժշտության կապն է: «չափականությունը, այսինքն՝ խոսքին թիվը, չափակցությունը կամ քայլը, հին քերթվածի մը շարժում տվողն էր: Շատ հավանական կերևա, որ Խորենացին այս երգերը թվելաց երգ կանչելուն ալ հիմն՝ նույն թվականությունը կամ չափականությունն ըլլա: Որովհետև ի սկզբանէ բանաստեղծությունն երաժշտական կամ գուսանական արվեստի հետ կապված էր՝ պետք էր ինքն ալ չափով մը ընթանար, և սա չափին յուրաքանչյուր նյութին համեմատ խոսքին ներդաշնակարար սահուն ընթացք մը, հոսում մը ունենալը»<sup>72</sup>:

Առանձնահատուկ հետաքրքրություն է առաջացնում Լ.Քալանթարի մեկնությունը: Ի տարբերություն նախորդ հեղինակների, նա թուելեաց բառի հիմքը համարում է ոչ թե թուելը, այլ թովելը<sup>73</sup>: Այսինքն այդ երգերը կարող էին կապված լինել պաշտամունքի յուրահատուկ ձևերից մեկի՝ զյութովթյան հետ և ավանդաբար համել վաղ միջնադար: Այս դեպքում հնարավոր է թուելեաց երգերը առանձնացնել Վիպասանքից և դիտել որպես ինքնուրույն երգեր: Թեև պետք է նաև նկատի ունենալ, որ Վիպասանքը նաև առասպելախառն վեպ է: Իսկ առասպելներում կրօնը՝ իր տարբեր ձևերում առանձնահատուկ՝ որոշիչ գործառույթ է կրել<sup>74</sup>: Հետևաբար, թուելեց երգերը, որպես այդպիսին, կարող էին ներկայացնել Վիպասանաց երգերի առանձնահատուկ կողմերից մեկը:

Այս տեսակետը չենք սահմանափակում միայն ենթադրություններով: Կարծում ենք այդ մասին կարող է վկայել նաև Գրիգոր Մագիստրոսի թղթերից մեկում մահամերձ Արտաշես Ա-ի վերջին երգի մասին հիշատակությունը (Հ. 119): Հստ Արք. Լիսիցյանի, Մագիստրոսի հիշատակության մեջ ոչ միայն Արտաշես Ա-ի հուշերն են, այլ մահից

<sup>71</sup> Հ.Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 15:

<sup>72</sup> Հ.Գալթրճյան, Պատմութիւն մատենագրութեան Հայոց, Կ.Պոլիս, 1851, էջ 33-34:

<sup>73</sup> Լ.Քալանթար, Արվեստի մայրուղիներում, Եր., 1963, էջ 361:

<sup>74</sup> Մ.Աքեղյան, Երկեր, Հ. Գ., Եր., 1969, էջ 50-51:

առաջ նրա կողմից կատարած դյուժական գործողովթյունը՝ մահը վանելու նպատակով երգած հմայախոսքը<sup>75</sup>: Այսպիսով, XI դարում կատարված վիպական երգերում հմայախոսքի առկայությունը կարող է հավաստել Հայոց Վիպասանքում դրանց որոշակի գործառույթի մասին:

Տարաբնույթ մեկնությունները ցույց են տալիս, որ թուելեաց երգերը անկախ այն բանից, Վիպասանաց երգեր են համարվել, թե այդ երգերի մի առանձին տեսակը, կարևոր դեր են կատարել Վիպասանքի առանձնահատկությունների բացահայտման գործում:

Այժմ անդրագառնանք Մովսես Խորենացու հիշատակած մյուս երգերին: Տորք Անգեղի մասին պատմելիս որպես աղյուր նա հիշատակել է «երգ բանիցն» (Հ. 40): Բանասիրության մեջ ընդունված է Մ. Աբեղյանի մեկնակերպը, ըստ որի հիշատակվածը (առասպելական) պատմվածքների երգ է կամ մի երգ, որի մեջ որևէ բան է պատմվում<sup>76</sup>: Հետևաբար նույն տեսանկյունից (ի նկատի ունենք թուելեաց երգերը) կարելի է մոտենալ նաև այս երգերին: Բացառված չէ, որ Վիպասանաց երգերի մի տեսակը լինելով, դրանք կարող էին ավանդման նույն եղանակն ունենալ: Վերջինիս հավանականության մասին խոսում է նաև այն, որ պատմահայրը առասպելեաց երգերում հիշատակել է նաև Վահագնի առասպելի փանդիռով կատարումների մասին (Հ. 39): Մ. Աբեղյանը գտնում է, որ դա չպետք է վերագրել բոլոր առասպելներին: Բայց չէ՞ որ Մովսես Խորենացին կարող էր այդ մասին չնշել: Տվյալ դեպքում մեզ առավել հետաքրքրում է այն փաստը, որ պատմահայրը հիշատակում է միևնույն նվազարանը Տիգրանի մասին վիպերգում, ինչպես նաև ցցոց և պարուց երգերում: Ուրեմն կարող ենք նշել, որ առասպելը որպես բանահյուսական ինքնուրույն ժանր միևնույն ժամանակ տեղ է գտել նաև Վիպասանաց երգերում այստեղ զարգացման մի նոր ու նշանակալի աստիճանի բարձրանալով: Բայցի դրանից, ինչպես վերեւում նշեցինք, միևնույն նվազարանի մասին հիշատակությունը վկայում է նաև ցցոց և պարուց երգերի հետ առասպելների և, հնարավոր է՝ դիցաստեղծման հնագույն շերտերի հետ առնչությունների մասին: Հետևաբար, Վահագնի առասպելը, ինչպես նաև Մովսես Խորենացու հիշատակած մյուս առասպելները կարող էին կատարվել ցցոց և պարուց երգերում: Այս մասին է հուշում նաև Ուխտանես եպիսկոպոսի

<sup>75</sup> Սրբ. Լիսիցյան, նշվ. աշխ., Հ.Բ. Եր., 1972, էջ 74:

<sup>76</sup> Մ. Աբեղյան, Երկեր, Հ.Գ. Եր., 1969, էջ 53:

Հիշատակությունն այն մասին, որ Վահագնի առասպելը «երգիչն երգիչք ի պարս խաղուց» (Հ. 99, 100): Հիշենք նաև այն, որ հայոց ավանդական բանահյուսության մեջ պահպանված «Զինչ ու զինչ» և «Զիմ վրզի» երգերը, որոնք վերագրվում են Շամիրամի առասպելին, նույնպես պարերգեր են:

Այս երգերի ծագումնաբանության, ձևակառուցողական, տաղաչափական առանձնահատկությունների ուսումնասիրության մեջ անչափ հետաքրքիր դիտարկումներ է կատարել Կ.Խուդաբաշյանը: Առավել խորացնելով դրանց կրոնառասպեկտական հենքը, նա երգերի բուն գործառությը կապել է հեթանոսական տաճարային հետերիզմի կրոնական ծեսերին<sup>77</sup>: Կայուն տիպաբանական ձևերի մեջ պարփակվելու շնորհիվ, դրանք հարատեղել են բանահյուսության մեջ: «Հստ երևութին, - շարունակում է հեղինակը, - այս երգերը հետագայում փոխադրվեցին հարսանեկան (այդ մասին գրում են Ի.Դյակոնովը և Սրբ.Լիսիցյանը) կամ էլ գուսանական արվեստի որորտը, «երգը ցցոց և պարուց»»<sup>78</sup>:

Մովսես Խորենացու հիշատակած աղբյուրների թվում նշվում է նաև Հագներգություն անվանումը (Հ. 36): Տիգրանի մասին պատմական նյութը նա քաղել է չորս Հագներգություններից: Դրանցից մեկի հատվածն ընդգրկված է Դիոնիսոս Թրակացու «Մեկնութիւն քերականին» աշխատության մեկնություններից մեկում, որի հեղինակն է Անանուն մեկնիչը: Հատվածը բերված է աշխատության «Վերծանութիւն» բաժնում և ներկայացված է որպես «քաջոլորակ» տաղի ժամրին բնորոշ նմուշ: Հատվածի առնչությամբ հետաքրքիր դիտարկումներ է կատարել Մ.Նավոյանը<sup>79</sup>: Դրանց մենք անդրադարձել ենք աշխատության երկրորդ գլխում, որտեղ բաղդատել ենք Հագներգություն բառի տարրեր նշանակյալները:

Ընդհանրացնելով Մովսես Խորենացու Պատմության մեջ հետաքրքրող աղբյուրների քննությունը, կարող ենք գալ այն եղրակացության, որ ցցոց և պարուց երգերը վիպական բանահյուսության ավանդման

<sup>77</sup> Կ. Խուդաբաշյան, Անահիտ դիցուհու պաշտամունքի երաժշտաբանաստեղծական վերապրուկները, Հայ ժողովրդական մշակույթ, XI հանրապետական դիտաժողով, Զեկուցումների հիմնադրույթներ, Եր., 2001, էջ 46:

<sup>78</sup> Նույն տեղում, էջ 47-48:

<sup>79</sup> Մ. Նավոյան, նշվ. աշխ., էջ 79:

առավել ընդունված, նախասիրված ձևերն են եղել: Խիստ բնութագրական են Հ.Հովհաննիսյանի եզրահանգումները. «Պատմապատճեղական համարնույթ թեմաները, կարծում ենք, ունեցել են բանավոր ավանդման համարնույթ ձևեր, և այդ ձևերի ընդհանրական (ունիվերսալ) տիպը պարերգական դրաման է՝ ցցոց և պարուց կոչվող երգերը»<sup>80</sup>:

Այժմ անդրադառնանք վիպական պատումները կատարողների արվեստի տիպական բնորոշչների խնդրին: Հիշենք, որ Մովսես Խորենացին հիշատակում է վիպասաններին և գուսանական արվեստը՝ «ի գուսանականէն», նա նույնիսկ նշում է իմաստալից երգարանների՝ երգարանաց բանաւորաց մասին» (Հ. 48):

Առաջինը Մ. Էմինն էր, որ բացահայտեց վիպասանների և գուսանների արվեստի մասնագիտացված բնույթը. «Գուսան առ մեզ զիսաղացողն՝ ի թատրոնի կամ զկատակերգուն յայտ առնէ՝ յոյր սակա առաւել յարմար թուփ մեզ առաջի ժողովրդեան ի հրապարակս ձևացուցանէին զպարունակեալն յերգս վիպասանաց՝ որպես և առ զանազան նախնի ազինս»<sup>81</sup>: Այլ կերպ ասած՝ «վիպական բանաստեղծությունը մշակվել է պրոֆեսիոնալ արվեստավորների ձեռքով»<sup>82</sup>:

Պատմա-բանասիրական, արվեստագիտական մի շարք ուսումնասիրություններ ցույց են տվել, որ գուսանը վիպասանի մի տեսակն է հանդիսացել, որն իբրև ուշ երևույթ աստիճանաբար առանձնացել է՝ ներկայացնելով մասնագիտացված արվեստի մի ինքնատիպ ճյուղը՝ միմերի թատրոնը: Հետեարար հայ մասնագիտացված արվեստի հնագույն տիպը զարգացել է վիպասանների ստեղծագործության մեջ: Մովսես Խորենացու վկայությունների համաձայն, այստեղ երաժշտությունը ուրույն տեղ է զբաղեցրել: Հետաքրքիր է, որ վիպասան բառեզրը որոշ գիտնականներ մեկնաբանել են որպես վեպ երգող, ասել բայի միջնադարյան երգել նշանակությունն ի նկատի ունենալով: «Վիպասանն, - գրել է Մ. Էմինը, - բարդեալ է՝ ի վեպ և՝ ի աս բառից, յորոց յետինդ արմատ է բայիս ասեմ, իսկ ասեմ առ հինան մեր նշանակեր երգեմ»<sup>83</sup>:

<sup>80</sup> Հ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 142:

<sup>81</sup> Մ. Էմին, Վէպք Հնոյն Հայաստանի, Մովսես, 1850, էջ 96:

<sup>82</sup> Մ. Աբեղյան, Երկեր, Հ.9, Եր., 1970, էջ 56:

<sup>83</sup> Մ. Էմին, նշվ. աշխ., էջ 95:

Նույնպիսի մեկնաբանությունների ենք Հանդիպում նաև Առ. Պալասանյանի<sup>84</sup>, Գր. Խալաթյանցի<sup>85</sup> աշխատություններում: Սրան հետեւ է այն եղրակացությունը, որ Հայոց առասպեկներն ու վիպերգերը ներկայացել են մեկ միասնական ստեղծագործության՝ եղանակավոր վեպի մեջ: Նոր բառզրում ասել բայի բացատրության մեջ ուշագրավ են Հատկապես երգել և պատմել իմաստային տարբերակները. «Ասել - լայնաբար վարի յամենայն գիրս՝ որպես նշանակել Հաստատել, ստորոտել, արտաքերել, երգել, պատմել, ճառել»<sup>86</sup>: Խորենացու Պատմության մեջ կարգում ենք «յերգս ցցոց և պարուց զայսոսիկ ասեն յիշատակօք», «զորմէ ասէին ՚ի Գինսն մեր որք փանդուամբ երգէին», «ասէին երգն»: Նշենք, որ զարգացած ավատատիրության ժամանակաշրջանում ևս ասել բայը պահպանել է երգել իմաստը: Տաղասաց՝ նշանակել է տաղ երգող, իսկ տաղերգու՝ տաղ Հորինող: Ինչպես նկատել է Ք. Քուչնարյանը, որոշ հեղինակներ այդ երկու հասկացությունները նույնացրել են<sup>87</sup>:

Այսպիսով, վիպասանի՝ որպես վեպ ասողի ստուգաբանությունն ակնհայտ է: Առավել հետաքրքիր է գուսան բառի, որպես վիպասանի համարժեք գործառուցիթի պարագան: Ինչպես տեսանք, ըստ Մ. Էմինի ընորոշման, գուսանը վիպասանի մի տեսակն է: Հետևաբար, օրինաչափ է նաև երաժշտագիտության մեջ վիպասան-գուսան անվանումի գործառուցիթը<sup>88</sup>:

Գուսանական արվեստը, սակայն, Հայտնի է, որ չի սահմանափակվել միայն հիշյալ ոլորտի շրջանակներում: Այդ ոլորտներին, ինչպես նաև գուսան բառի ստուգաբանությանն անդրադարձել ենք աշխատության երկրորդ գլխում:

Այստեղ դիտարկվող նյութի տեսանկյունից հնարավոր ենք Համարում հունական համանման թվացող երևույթի հետ զուգահեռի անցկացումը: Նկատի ունենք հին հունական աեղների և ուսպողների արվեստի

<sup>84</sup> Առ. Պալասանյան, նշվ. աշխ., էջ 92-93:

<sup>85</sup> Գ. Խալաթյան, Армянский эпос в истории Армении Монселя Хоренского, т.1, Москва, 1896, стр. 122.

<sup>86</sup> Նոր բառզիրք, հ.Ա., էջ 313:

<sup>87</sup> Ք. Քուչնարյան, նշվ. աշխ., էջ 132:

<sup>88</sup> Ա. Սահակեան, Ա. Փաշլեւանեան, Սասնա ծոեր դիցագնալէպը, առասպեկական բնդերք, վիպական կառոյց, վիպասանական եղանակ, Փաստաենա, 1996, էջ 97:

Հաջորդականության իրողությունը<sup>89</sup>: Հելլենիզմի մշակութային մթնոլորտում կարեոր տեղ զբաղեցնող գուսանական արվեստը հնարավոր է դիտել իրեւ վիպասանների արվեստի մի նոր՝ ավելի կատարյալ դրսեղորում, կամ զարգացման փուլ:

Անդրադառնանք նաև պատմառասապելական պատումների ավանդման եղանակների մեջ հիշատակված փանդիռ նվազարանին, որը որոշ ձեռագրերում հանդիպում է բանդիռն կամ բամբիռն անվանումներով<sup>90</sup>: Զեռագրահամեմատական վերլուծությունից հետո Մ.Աբեղյանը նախնական է համարել փանդիռ անվանումը: Հայագիտության մեջ այս նվագարանի շուրջ ևս ծավալվել են տարակարծիք մեկնություններ: Հետագրքիրն այն է, որ իրեւ ձեռագրական տարրներումներ բամբիռնը և փանդիռը նոր բառագրում ներկայացված են որպես տարրեր նվագարաններ: Բամբիռն՝ այստեղ նշանակում է ծնծղա կամ էլ թամապուռ կամ սանդուռ<sup>91</sup>, իսկ փանդիռը՝ լարավոր նվագարան<sup>92</sup>: «Ծնծղաների ճայնարկությամբ» - այսպես է ֆրանսերեն թարգմանել «ի նուագս բանդուան» արտահայտությունը Թլորիվալը<sup>93</sup>: Ուշադրություն է գրավում այն, որ թարգմանության մեջ նվագարանը հիշատակվել է հոգնակի թվով՝ ծնծղաներ, մինչդեռ ձեռագրում հիշատակվում է փանդրամբ, իմա՝ փանդիռով: Տարօրինակ է, որ Մտ.Մալխասյանցը ևս աշխարհաբար թարգմանել է հոգնակի թվով՝ փանդիռներով, մինչդեռ վերջինիս համապատասխանում է հոգնակի՝ փանդոք անվանումը: Խորենացու Պատմության ձեռագրերում նման անվանաձև չկա: Վերջինս Հանդիպում է Փալստոս Բուզանդի մոտ (Հ. 21): Անդրադառնալով փանդիռի՝ որպես ծնծղա մեկնաբանությանը<sup>94</sup>, Արք. Լիսիցյանը միևնույն ժամանակ ժամանակակից ազգագրական նյութերի հիման վրա ենթադրել է, որ փանդիռը XX դարի սկզբում հայ

<sup>89</sup> Р. Грубер, История музыкальной культуры, т. 1, М.-Л., 1941.

<sup>90</sup> Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական վեպը, Թիֆլիս, 1908, էջ 26:

<sup>91</sup> Նոր բառդիրք, Հ.Ա, էջ 430:

<sup>92</sup> Նոր բառդիրք, Հ.Բ, էջ 932:

<sup>93</sup> Սովոր Խորենացու Հայկական պատմություն, ՍՊբ., 1889, էջ 29:

<sup>94</sup> Նշենք, որ փանդիռը իրեւ հարգածային նվագարան է ներկայացրել նաև Մ.Քաջունին: Տես՝ Մ.Քաջունի, Բառդիրք արուեստից և գիտութեանց և գեղեցիկ գպրութեանց, Հ.Ա, Վենետիկ, 1892, էջ 618:

ժողովրդի կենցաղում պահպանված գիլեր կոչվող նվագարանը կարող էր լինել<sup>95</sup>:

Մեզ թվում է, որ Մովսես Խորենացու Հիշատակած «ի նուագու» արտահայտությունը չի համապատասխանում հարվածային նվագարանի էռթյանը, այլ նկատի ունի այս կամ այն չափով մեղեղիական երաժշտությունը: Այս պատճառով առավել համոզիչ է փանդիռի՝ որպես լարավոր նվագարանի մեկնաբանությունը: Վերջինս փորձել են ապացուցել դեռևս XIX դարում, իբրև կարեոր փաստարկ դիտելով Հովհաննես Դրասիանակերտցու արժեքավոր Հիշատակությունը Վահագնի առասպելի մասին, որտեղ փանդիռը փոխարինված է «կտնտոցահար աղեքախս» արտահայտությամբ (Հ. 73): Հետաքրին այն է, որ վերջինից դարձյալ ոչ նույնական եզրակացություններ են կատարվել: Ըստ Մ.Էմինի փանդիռը «Հնոց չէր ծնծղայ, այլ նուագարան լարիւք և ղեօք հանդերձ»<sup>96</sup>: Մինչեւ Ստ.Պալասանյանը եզրակացրել է, որ «Հին Հայերի բամբեկոր գիտառի տեսակ մի բան էր»<sup>97</sup>:

Կարծում ենք, պատմագրական տվյալների արժեքավոր լրացումը պետք է դիտել մատենագրական մի այլ աղբյուր, որտեղ նկարագրված է փանդիռի արտաքին տեսքը: Դա Մատենագրարանի N2490 ձեռագիրն է (XIV դար), որի 190-րդ էջում ասվում է, որ եթե փանդիռի լարերը ձգված չեն, ձայն չի հանում, իսկ երբ ձգում են և բախում նա հնչում է<sup>98</sup>: Ըստ նկարագրության, ակներև է կամիթային նվագարանի առկայությունը:

Մեկ այլ ձեռագրում հանդիպում ենք բոլորովին այլ տվյալի: Հովհաննես Վանականի «Հարցմունք և պատասխանիք»-ում ասվում է, որ փանդիռը «Պարկ է ուղինի և փող է դրած ի ներս: Յանթն դնեն ցից ի վեր և ձայն տան ածել ձեռաւքն»<sup>99</sup>:

Մանրամասն քննելով տարբեր ժողովուրդների վիպական բանահյուսության մեջ կիրառված նվագարաններին բնորոշ

<sup>95</sup> Սրբ. Լիսիցյան, նշվ. աշխ., Հ.Ա., էջեր 139-140:

<sup>96</sup> Մ. Էմին, նշվ. աշխ., էջ 98:

<sup>97</sup> Ստ. Պալասանյան, նշվ. աշխ., էջ 29:

<sup>98</sup> Է. Խանզադյան, Հայկական հին երաժշտական գործիքները, Առանձնատիպ Հայաստանի պետական թանգարանի

«Աշխատություններից», հ.5, Եր., 1959, էջ 84:

<sup>99</sup> ՄՄ, ձեռ. 5611, էջ 94ա: Բերում ենք բատ՝ Ա.Արևշատյան, Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ, Եր., 2003, էջ 61:

Ներդաշնակության հենքի տիպի լարվածք ունեցող նվագարանների առանձնահատկությունները, Ն.Թահճիպյանը եկել է այն եզրակացության, որ փանդիուր նույնպես չորս (կամ երեք) լարանի մի նվագարան է՝ *c-f-g-c*(2) կամ *c-f-g* տիպի լարվածքով<sup>100</sup>:

Դիտարկված մեկնություններում բամբիոնը և փանդիուր համարժեք անվանումներ են ներկայանում: Այդպիսին է նաև Հ.Աճառյանի մեկնությունը, որտեղ կարդում ենք, որ փանդիուր կամ բամբիուր թելավոր մի նվագարան է, որը *Փոքր-Ասիական ծագում* ունի և պետք է համեմատել լիդիական «երեք լարով քնարի» հետ: Հ.Աճառյանը հիշատակում է նաև այն մասին, որ «Յունաց մօտ աւանդութիւն կար միշտ թէ փանդիուր Փոքր-Ասիայից է եկած»<sup>101</sup>:

Այլ է Գ.Լևոնյանի մոտեցումը, որտեղ դրանք դիտարկված են որպես ինքնուրույն, լարավոր նվագարաններ: Հստ հեղինակի, փանդիուր «յիշում է Ս. Գրքի և օտար մատենագիրների մեջ»<sup>102</sup>: Նա չի անդրադարձել *Փալւառոս Բուզանդի հիշատակությանը* (Հ. 21): Իսկ ահա բամբիոնը՝ Գ.Լևոնյանի դիտարկմամբ, «զուտ հայրենի նուագարան է», որի կառուցվածքը զգայի տարբերվում է նախորդից: Ցավոք դիտնականը չի նշել այն աղբյուրները, որտեղից նվագարանագիտական արժեքավոր նյութեր է քաղել: Նա գրում է. «Բամբիոնի և փանդիուր միջև տարբերությունը ակներեւ է դառնում ամենքի համար, եթե յիշենք՝ որ առաջինի իրանի (գուշ) կազմութիւնը այլ է հիմնովին. առաջինի լարերը աղիք են, երկրորդինը մետաղի սիմեր: Առաջինը կտրնտոցով էին խփում, երկրորդը մատներին անցկացրած ուկոռներով: Այսափ բաւարար ենք համարում համոզելու, որ այլ բաներ են բամբիոն ու փանդիոնը»<sup>103</sup>:

Անշուշտ, բամբիոնի «զուտ հայրենի նուագարան» դիտարկումը մեծ հետաքրքրություն է առաջացնում: Բաղդատենք նաև վերեւում հիշատակված Ա.Թիգիկյանի արժեքավոր ենթադրությունը և հատկապես մինչպատմական ծագում ունեցող Վահագնի առասպելի հետ բամբիոնի

<sup>100</sup> Ն. Թահճիպյան, Ներդաշնակության հենքի ուսմունքը միջնադարյան Հայաստանում, (V-VI դդ.), Պատմա-բանասիրական հանդես, 1966, N1, էջ 84:

<sup>101</sup> Հ.Աճառյան, նշվ. աշխ., Հ.Դ. Եր., 1932, էջ 466-468:

<sup>102</sup> Գ. Լևոնյան, Աշուղական արուեստը, «Ազգագրական հանդես», 1906,

<sup>103</sup> Ն 5, էջ 94:

Գ. Լևոնյան, Աշուղական արուեստը, էջ 94:

առնչությունը<sup>104</sup>, ինչպես նաև XII դարում Գրիգոր Տղայի ստեղծագործություններից մեկում բամբասաց բառի հիշատակումը<sup>105</sup> և, իրոք, կարելի է հավանական համարել բամբիոնի՝ հայկական հնագույն լարավոր նվագարաններից մեկի դիտարկումը։ Միևնույն ժամանակ հավանական է թվում նաև փանդիռի՝ որպես ինքնուրուց մեկ այլ նվագարանի գոյությունը։ Նշենք նաև, որ Ք.Քուչնարյանի տեսակետի համաձայն, Հին Արևելքում տարածված այս նվագարանը հանդիսացել է ավելի ուշ ժամանակներում անդրկովկասյան ժողովուրդների մշակույթում մեծ կիրառում ստացած փանդուրայի նախատիպը<sup>106</sup>։

Հնագույն նվագարաններից մեկին վերաբերող տարակերպ մեկնությունների առկայությունը հնարավոր է բացատրել նաև տարբեր ժամանակաշրջաններում նույնանուն, սակայն բոլորովին այլ տեսակ ունեցող նվագարանների գոյությամբ և դրա շնորհիվ առաջացած նվագարանների տեսականին բազմազանությամբ<sup>107</sup>։

Նվագարանագիտական դիտարկումները թողնելով հատուկ ուսումնասիրության շրջանակների մեջ, նշենք, որ մենք կարևորվում ենք փանդիռի արժեքավորումը՝ որպես հայոց հնագույն ծիսահավատալիքային համալիրի նվագարանային երաժշտության տարր։

Այսպիսով, հայոց նախաքրիստոնեական երաժշտական մշակույթի դրսերումները «շոշափելի» դարձնելու հնարավորությունը հայ միջնադարյան պատմագրության մեջ, թույլ է տալիս առավել հստակեցնել իսրնդիրների այն շրջանակը, որը իր նպաստը կարող է բերել հիշալ մշակութային երևույթների համակողմանի ուսումնասիրությանը։ Դրանք վերաբերում են ծիսահավատալիքային հնագույն շերտերից եկող, հելենիզմի դարաշրջանում կայում կայում ըանաձևային

<sup>104</sup> Հ.Համբարձումյան, Մտորումներ Հոմերոսի մասին, Եր., 1964,  
Էջ 370-371։

<sup>105</sup> Բան ողբերգական փասն առմանն երուսաղեմի, տե՛ս Ն.Թահմիպյան, Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V-XVդդ., Եր., 1985, Էջ 33։ Տե՛ս նաև Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Եր., 1985, Էջ 616։

<sup>106</sup> Ք.Քուչնարյան, նշվ. աշխ., Էջ 72։

<sup>107</sup> Այս է վկայում նաև Ա. Արևշատյանի դիտարկումը։Տե՛ս  
Ա. Արևշատյան, Հայ միջնադարյան «Ճայնից» մեկնություններ, Եր., 2003, Էջ 61։

**Երաժշտամտածողության վերածվող արքեստիպերի գոյությունը  
Հավաստող լուրջ փաստարկներին:**

Հարսանեկան և հուղարկավորության հինավուլց ծեսերի միջնադարյան նկարագրություններում երեակվում են համապատասխան ժանրային հատկանիշներ և դրանց համարժեք ժանրային անվանումների տարատեսակներ՝ առագաստի երգ, հարսանեկան պար, ողբ, լաց, կոծ և այլն: Մյուս կողմից, այստեղ ցցուն կերպով արտահայտվում են նաև ծիսական անտարրանջատ միասնության մեջ ծավալվող երաժշտատեսակներ՝ երգը, պարը, նվագը: Վերջինս ներկայանում է բազմազան տեսականիով՝ անսամբլային երաժշտությանը վերաբերող արժեքավոր մանրամասներով:

Նվագարանային երաժշտության ինքնօրինակ մի ոլորտի՝ ռազմակոչագանցանների համակարգի համառոտ նկարագրությունների մեջ նկատելի են հատկապես փողային նվագարանների՝ փողերի և դրանց տարրեր տեսակների գործառույթի արժեքավոր մանրամասներ, ռազմական գործողությունների համապատասխան պահերի համար նախատեսված նվագարանների և կոչ-մեղեղիների արժեքավոր վկայություններ:

Հայոց նախաքրիստոնեական մշակույթի հնագույն շերտերում բյուրեղացած վիպական բանահյուսության տարրեր դրսեորումներում են ձևավորվել երաժշտարարտահայտչական և կատարողական տիպական այն բնորոշիչները, որոնք լավագույնս գարգացել են միջնադարյան գուսանական և հոգևոր մոնողիաներում:

**Գ Լ ՈՒ Խ Բ**  
**ԱՇԽԱՐՀԻԿ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԹԻ ՄԻԶՆԱԴԱՐՑԱՆ  
ԲՆՈՐՇԵՒԶՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ  
ԱՂԲՑՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Հելլենիզմի դարաշրջանից անմիջականորեն ժառանգված հայ աշխարհիկ երաժշտարվեստի բազմաթիվ դրսեղորումներ միջնադարում նորովի վերաիմաստավորվեցին քրիստոնեական ծիսապաշտամունքային արժեքների մժմուրուտում և գաղափարական դաշտում, մյուս մասը կամ հետզետե դուրս մղվեց ասպարեզից, կամ էլ ձեռք բերելով նոր կարգավիճակ, զարգացավ սոցիալ-մշակութային համարժեք պայմաններում:

Միջնադարում ստեղծվեցին կրոնակելեցական կանոնական նոր ավանդույթներ, որոնք մի կողմից բնորոշվում էին խստակեցության և «աշխարհամերժ» արժեքների ջատագովությամբ, մյուս կողմից՝ նեռալլատնականության վրա հիմնված և անտեկ շրջանի գիտական մտքի շարունակականությամբ պայմանավորված ընթացքով։ Վերջինիս մեծապես նպաստում էր նաև աշխարհիկ մշակույթի ինքնամդիչ զարգացումը, որին մեծապես նպաստում էին ավանդութային կայուն հիմքերը։

Հայ միջնադարյան պատմագրության մեջ հնարավոր է դիտարկել այնպիսի յուրահատուկ երևոյթ, ինչպիսին ծիսական ավանդական արարողակարգերի կարևոր տարրերի միջնադարյան փոխակերպումների կողքին, միևնույն ժամանակ դրանց նախաքրիստոնեական ավանդույթների կենսունակ դրսեղորումների առկայությունն է։ Ահավասիկ հարսանելան ծեալ. եկեղեցին բացի կանոնակարգելուց, զարգացած ավատատիրության շրջանում էլ փորձում էր «վերահսկել» բուն արարողությունը։ Հովհաննես Երգնկացի Պլուզը իր ճառերից մեկում ժողովրդին հորդորում է հարսանիքի և մկրտության արարողությունների ժամանակ հնարավորինս զերծ մնալ գուսանների արվեստից, որը, ըստ Հեղինակի, օժտված է «գիշվային» ուժով։<sup>108</sup> Երգնկացին մեկնաբանում է նաև Անտիոքի ժողովի որոշումներից մեկը, ըստ որի «քահանան եւ եկեղեցւոյ հաւատացեալ ժողովուրդը երբ հարսանիքի

<sup>108</sup> Յովհաննու վրդ. Երգնկացւոյ զարդք երկնից առ Ալպոյ իշխան, Կալկաթա, 1846, էջ 74։

երթան, պետք չէ պարեն ու խաղան, այլ պետք է պարկեշտութեամբ հաց ուստեն, ինչպես որ քահանաներուն վայել է:»<sup>109</sup>

Հայ պատմագիրներն, այնուամենայնիվ հիշատակում են հարսանեկան պարերի ու երգերի մասին՝ նախընտրելով տիպական, ավանդական անվանումներ. **առագաստի երգեր** (Հ. 52), **հարսանեկան պարեր** (Հ. 81), **կաքաւներ** (Հ. 81):

«Հասարակաց տեսութեամբ յայտնի դիցի պսակն, - զրում է Ներսես Շնորհալին, - զի վկայեսցի յամենեցունց՝ թէ ուղիղ է, և ոչ ընդդեմ օրինացըն Աստուծոյ, որով և երգոցն ձայնք և նուագարանացն՝ զնոյն նշանակեն, իբրև թէ վկայս պսակելոցն՝ զամենեցունց լսելիս և զտեսանելիս կացուցանելով: ... Եւ ի ժամ կատարելոյ զսուրբ պսակն՝ երգք գուսանացն լրեալ դադարեսցեն, մինչև ելցեն յեկեղեցոյն, զի մի դիւսական երգք խառնեսցին ընդ աստուածային երգոցն»<sup>110</sup>: Համատեքստը հուշում է, որ երգեմն նույնիսկ եկեղեցում հնչել է գուսանական երգն ու նվազը (Հ. 374, 375): Լրբացնենք ասվածը նաև XIV դարին վերաբերող մի ձեռագրական հատվածով. «Սովորութիւն է տանել ի դուռն եկեղեցոյն բազում երգաւք և նուագարանաւք, ծնծղայիւք և քնարիւք և երիվարաւք»<sup>111</sup>:

Եկեղեցու կողմից ծեսի «վերահսկման» ցայտում դրսելորումներից են Ներսես Շնորհալու Հորինած Հանելուկները, որոնք «ասասցեն ի գին-արբուս և ի հարսնիս» (Հ. 162), որտեղ ասաացեն Համարժեք է երգելուն: Հատ Ն. Թահմիջյանի, այդ Հանելուկները ընդհանուր կողմեր կարող էին ունենալ Կոմիտասի հիշատակած Հանելուկների հետ<sup>112</sup>: Այս հիշատակությունների շնորհիվ ակնառու է դառնում նաև Ներսես Շնորհալու բավական զգուշացոր և ուշադիր վերաբերմունքը ծիսական երաժշտության Հանդեպ: Նույնը չենք տեսնում Առաքել Մյունեցու ճառերում (Հ. 373, 374, 375), որտեղ ուղղակի պատկերագրված են շքեղաշուք Հարսանյաց Հանդեսներ և դրանց Համարժեք երգ ու նվագի «դրվագներ»: Դրանց Համառոտ բնութափերում Հանդիպում ենք տիպիկ դարձվածքներ. «Թէ լուսն զձայն երգոց պարոցն» (Հ. 374), «գինի ու

<sup>109</sup> Նույն տեղում, էջ 99:

<sup>110</sup> Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, էջմիածին, 1865, էջ 83, 86:

<sup>111</sup> ՄՊ. ձեռ. N 3937, էջ 195ա:

<sup>112</sup> Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Եր., 1941, էջ 12:

Ն. Թահմիջյան, Ներսես Շնորհալին երաժշտ և երգահան, Եր., 1973, էջ 94:

գուսան և զարդարանք որ անդէն պարես քեզ» (Հ. 374): Գուսանական արվեստի դրսելորումներին դեռ կանդրադառնանք:

Ընդհանուր առմամբ, նկատելի է Հատկապես Հարսանեկան պարերի կայուն նկարագրի պահպանումը պատմագրական հիշատակություններում, ինչը խոսում է երաժշտածիսական այդ ժանրի խորը ավանդականության մասին՝ անդամ միջնադարյան եկեղեցածիսական համալիրում:

Մեծ հետաքրքրություն է առաջացնում նաև Հեթանոսական նախաքրիստոնեական ժամանակաշրջանի ծեսի Հարմարեցման ընթացքը միջնադարյան բարոյաաշխարահայացքային գաղափարական համատեքստում: Եթե Հեթանոսական ողբը խորհրդանշում էր մահվան եղերականության էությունը, ապա քրիստոնեական ողբերգությունը «զմիթարական ասէ զորս ի վերայ մեռելոց և կամ այլ ինչ թշուառութիւն կերակրելուց առնեն»<sup>113</sup>: Բնականաբար, քրիստոնեական հուղարկավորության ծեսը, ի տարբերություն Հեթանոսականի, իր յուրահատուկ ծիսակարգը պետք է հաստատեր: IV դարում, ինչպես նշել է Փափստոս Բուզանդը, հատկապես Ներսես Մեծի օրոք (ըստ երեսութիւն պատմիչն ի նկատի է ունեցել Աշտիշատի եկեղեցական համաժողովը) այն լիարժեք ձևավորվել է (Հ. 20), թեև պետք է նկատի ունենալ այն կարեւոր հանգամանքը, որ Հայոց եկեղեցին, ի տարբերություն քրիստոնեական մյուս եկեղեցիների, չի ընդունել «Վերջին օծում» կոչված եկեղեցական խորհուրդը<sup>114</sup>:

Դատելով պատմագրական նյութից այստեղ հիմնականում հնչել են սաղմուներ, օրհնություններ և այլ հոգմոր երգեր: Խոսելով նոր ծիսային երաժշտության մասին, Հնարավոր չէ շրջանցել պատմական հաջորդականության հարցը: Ըստ Ն.Թահմիզյանի՝ «վաղ միջնադարը անմիջաբար Հենվեց նախաքրիստոնեական Հայաստանի երաժշտական բոլոր նվաճումների վրա, անկախ այն հանգամանքներից, որ հիշալ նվաճումները այժմ պետք է վերաարժեքավորվեին նոր աշխարհիմացության դիրքերից»<sup>115</sup>:

<sup>113</sup> Հ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 51:

<sup>114</sup> Մ. Օրմանյան, Հայոց եկեղեցին, Կ. Պոլիս, 1911, էջ 143-144:

<sup>115</sup> Ն. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին և Հայ երաժշտությունը V-XVդդ., Եր., 1985, էջ 15:

Անկասկած այստեղ իր ծանրակշխու ավանդն ունի նաև նախաքրիստոնեական հուղարկավորության ծեսը, որն ինչպես տեսանք, վաղ միջնադարում դրսեորման կատարյալ ձևի էր հասել: Հստ Ե. Լալյայանի «պատը՝ որպես թաղման ծես՝ սկիզբն է տուել կրոնական պատերին, իսկ ննջեցյալին ուղղված գովաբանություններն ու թախանձանքը դարձել են կրօնական փառաբանություններ և աղօթքներ»<sup>116</sup>: Կարծում ենք ասվածի անմիջական դրսեորումը լավագույնս պետք է կրեին հանգստյան շարականները: Հատկապես եթե ի նկատի ունենանք Սարգիս Երեցի կազմած շարականների ցուցակի այն արժեքավոր հաղորդումը, թե «զՀանգստեանն սուրբ Ներսես Պարթևն (իմա՝ Ներսես Մեծ - Հ. Հ.) ասաց»<sup>117</sup>:

Բոլոր հիմքերը կան պնդելու, որ համատիպ փոխակերպությունների պետք է ենթարկվեր նաև հեթանոսական հուղարկավորության ծեսի երաժշտությունը: Դա եկեղեցու պրագմատիկ նպատակների իրագործման կարևոր միջոցներից էր: Այդ մասին լավագույնս հավաստում են և՛ Կոմիտասի հանրահայտ դրույթը՝ «Քառյակների դրությամբ են հորինված և մեր թե՛ ժողովրդական, թե՛ եկեղեցական եղանակները, որոնք քույր-եղբայր են և նույն կազմությունն ունեն»<sup>118</sup>, և Ք.Քուչնարյանի երաժշտահամեմատական ուսումնասիրության արդյունքները<sup>119</sup>: Անհրաժեշտ է նըշել, որ բանահյուսության ներգործությունը բնորոշ էր ոչ միայն վաղ, այլև ողջ միջնադարին: Այդ է հավաստում Հովհաննես Դրախտանակերտցու արժեքավոր հիշատակությունը IX դարում Աշոտ Ա-ի հուղարկավորության մասին, որը հեթանոսական և քրիստոնեական ծեսերի համատեղման ցայտուն օրինակն է (Հ. 78): Միևնույն ժամանակ այս հիշատակությունը թույլ է տալիս նշել հակադարձ գործընթացի՝ այսինքն քրիստոնեական ծեսից հեթանոսականի կրած ազդեցության հնարավորության մասին:

Ինչպես նշել է Ք.Քուչնարյանը, հեթանոսական հուղարկավորության ծեսը, չնայած եկեղեցու տարած հետևողական պայքարին ոչ միայն շարունակել է կենցաղավարել, այլ վերաիմաստավորվելով շարունակ

<sup>116</sup> Ե. Լալյայան, Ծիսական կարգերը հայոց մեջ, Թիֆլիս, 1913, Էջ 6:

<sup>117</sup> ՄՄ. ձեռ. 2092, Էջ 223:

<sup>118</sup> Կոմիտաս, Հողվածներ և ուսումնասիրություններ, Եր., 1941, Էջ 139:

<sup>119</sup> Ք. Քուչնարյան, նշվ. այս., Էջ 87-92:

էվոլյուցիա է ապրել՝ հատկապես ձեփ առումով<sup>120</sup>: Նշենք թեկուզ՝ Հովհան Մայրագոմեցու (VIIդ.) «Խրատ վարուց» ճառերի շարքը (վերագրված՝ Հովհան Մանդակունուն), որի «Թուղթ միսիթարութեան վախճանելոց յաշխարհէս» ճառում ասվում է. «բարձէք զկոծս, խափանեցէք զողբս, ի բաց արարէք զտրտմութիւն, դադարեցուցէք զարտասուս, արգելէք զլալականս, լուեցուցէք զկառաչիւն լալեաց և վայից. արհամարհեցէք զեղանակամարս լալականաց»<sup>121</sup>: Համաձայն Անանուն Արծրունու IX դարին վերաբերվող հիշատակության, ձայնարկուները երգել են «երբայեցիների և Խրայելի թագավորների ողբերը» (Հ. 92), իսկ Արիստակես Լաստիվերացին գրում է. «Կոչեմ և ձայնարկու կանայ ընդ Երեմիայ, զի ընդ իս զողբս յարդարեսցին» (Հ. 109): Իշարկե, այս հիշատակություններում ակներև է Սուրբ Գրքի համապատասխան հատվածների ազդեցությունը, սակայն դրանք հնչում են իբրև պատկերավոր նկարագրություններ, որոնք համարժեք են քրիստոնեական հանգստյան հանդեսների բովանդակությանն ու էությանը:

Ասվածից հետևում է, որ միջնադարում տեղի է ունեցել այս երկու ծեսերի փոխազդեցություն: Վերջինիս արդյունքը պետք է համարել նաև նոր ողբի ժանրի ստեղծումը, թե՛ գրականության, և թե՛ երաժշտաբանաստեղծական արվեստում: Առաջինի փայլուն օրինակներից են Մովսես Խորենացու և Արիստակես Լաստիվերացու Պատմությունների կարեսոր բաժինները, Ներսես Շնորհալու հանրահայտ «Ողբ Եղեսիոյ», կամ Էլ Ստեփանոս Օրբելյանի «Ողբ ի սուրբ կաթուղիկէն» պոեմները: Իսկ երկրորդի մասին արժեքավոր վկայություն ունի Մովսես Կաղանկատվացին<sup>122</sup>: Դա Դավիթակ Քերթողի Ողբն է, որի երաժշտությունը ցալվոք չի պահպանվել: Ինչպես ցույց է տվել Ն. Թահմիզյանի ուսումնասիրությունը, այն (երաժշտությունը) պետք է հանդիսանար ինչպես գրական բարձրարժեք բաղադրիչին համարժեք, այնպես էլ VII դարում արդեն ծաղկման հասած մասնագիտացված երգարվեստի դրամուրումներից մեկը<sup>123</sup>:

<sup>120</sup> Նույն տեղում, էջ 60:

<sup>121</sup> Յովհաննու Մանդակունւոյ ձառք, Վենետիկ, 1836, էջ 175: Տե՛ս նաև Հ.Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 76:

<sup>122</sup> Մովսէս Կաղանկատուացի, էջ 179:

<sup>123</sup> Ն. Թահմիզյան, նշվ. աշխ., էջ 267-274:

Ողբերգը իբրև միջնադարյան մասնագիտացված երգարվեստի տեսակ հետաքրքիր է ներկայացված Թովմա Արծրունու այս արտահայտության մեջ. «զողբերգականացն ճոխաբանել ճարտասանութիւնը» (Հ. 91): Այստեղ Հասունկ ընդգծվում է ողբերգերի կատարման կայուն սկզբունքները Հավասարող ճարտասանական-հոեսորական երգելառնի մասին:

Ըստ երևույթին Հանկարծաստեղծ, բայց և ծիսական օրինաչափություններով է ստեղծել իր բարձրարվեստ ողբ-գովքը Խոսրովիդուխտ Գողթնեցին, եղբոր՝ Վահան Գողթնեցու մահվան առթիվ<sup>124</sup>: Ստեղծագործությունը կանոնացվել է եկեղեցու կողմից, միևնույն ժամանակ այն դիտվել է իբրև միջնադարյան ողբերգերի առանձնահատկությունների մասին ընդհանուր պատկերացում տվող մի յուրահատուկ նմուշ: Ստեղծագործության երաժշտական բաղադրիչի քննությունը բացահայտել է ինչպես ձայնակարգային ինքնօրինակ կերտվածքի, այնպես էլ մեղեղային ծավալման ոճական այն ընորոշիչները, որոնք լավագույնս փաստում են ավանդական ողբերգերին բնորոշ հատկանիշների առկայությունը<sup>125</sup>:

Ն. Թաշճյանն այսոել դիտել է Ակ և ԳԶ ձայնեղանակների փոխներթափանցումից առաջացած զարտուղի ձայնեղանակ: Ն. Թաշճիզյանի ուսումնասիրության Համաձայն դա ԲԶ ձայնեղանակն է, որը Հասարակ օրերի կանոնագլուխներում «բոլորովին կողցներով իր ուրույն դեմքը» պահպանվել է Հանդիսավոր օրերի կանոնագլուխներում<sup>126</sup>:

Բոլորովին այլ է վերջերս Ա. Արևշատյանի ներկայացրած տեսակետը իննդրո առարկայի վերաբերյալ: Վերջինս դիտարկված է որպես Դ կողմ դարձվածք ձայնեղանակի ինքնօրինակ դրսեւորումներից մեկը<sup>127</sup>: Իբրև Հիշյալ ձայնեղանակի ինքնատիպ դրսեւորում այս բարձրարժեքը կոթողը ներկայանում է նաև որպես աշխարհիկ երաժշտամտածողության տիպական գծեր բացահայտող նմուշ և, որ

<sup>124</sup> Ղ. Ալիշան, Հուշիկը Հայրենյաց Հայոց, Հ.Բ, Էջ 173-178:

<sup>125</sup> Ք. Քուշնարյան, նշվ. աշխ., Էջ 513:

<sup>126</sup> Տե՛ս Ն. Թաշճիզյան, Գր.Նարեկացին և Հայ երաժշտությունը V-XVդդ., Եր., 1985, Էջ 194:

<sup>127</sup> Ա. Արևշատյան, Վկայաբանություն և Շարականերգություն. Հայկական Ուժայինի ԴԿ դարձվածքի առեղծվածը, «Հայկական Հայագիտական Հանդես», Բեյրութ, 2003:

առավել հետաքրքիր է, Հայ միջնադարյան մասնագիտացված երաժշտության ձայնեղանակային համակարգի հարստացման փաստ արձանագրող մի դրամորում:

Խորովիդուխտի Գովքը հայագիտության մեջ համարվել է Գողթան երգարվեստի լավագույն ավանդույթները կրող կոթողներից մեկը, որը հուշում է նաև այն, որ ծիսական խորհրդանիշ լինելուց զատ, եղերերով միջնադարում լիովին համապատասխանում էր մասնագիտացված երաժշտաբանաստեղծական արվեստի չափանիշներին:

Հարսանեկան ծեսի երաժշտական բաղադրիչի նմանությամբ, այս արարողություններում ևս նկատելի են միջնադարում պահպանված կայուն ավանդական արտահայտչաձևեր, որոնց վերաբերող նկարագրություններում ակնհայտ է դրանց անտարրանջատ կերպը՝ երգ, նվագ, պար, խաղ: Ահա Գր.Մագիստրոսի պատկերավոր նկարագրությունները. «արական և բնական իմաստասիրական երգով գքոյդ ներբողական և գերեզմանական պարել ողբա» (Հ. 115), «զի՞նչ ձեւ զմայլական պարառաբար կաքաւողացն խնջիւնս և սոնջանս և ոտիւք թափառումն, և դաստակօք անյօրինաբար բախրաղումն, և քարշումն քղանցից մրրկեալ պառուտելով զիտոչի կնքելոյ գերեզմանին, թէպէտև ոչ ըստ օրինի քրիստոսական կրօնից» (Հ. 116): Դրանց համարժեք են նաև Առաքել Սյունեցու յուրօրինակ խորհուրդները.

«Զայն ձեր լալոյ եւ ողբալոյ

դառնայ գուսան ձեզ.

Զի անդ պարեք և ծիծաղիք

ու ծափ հարկանեք ձեզ» (Հ. 374):

Այսպիսով, Հայոց հինավորյ ծեսերից մեկում երաժշտարատահայտչական տարրի արժեքավորման մեջ կարևորում ենք երաժշտության գործառույթի բազմազանությունը (նվազարանային, երգային, պարային), որի շնորհիվ ծիսական խորհրդանիշերի համակարգում զարգացան ժողովրդական և մասնագիտացված երաժշտարվեստների կարևոր տիպական գծերը՝ նպաստելով ձայնակարգային, ելլէջային և բանաձևային այն համակարգերի ձևավորմանը, որոնք հետագայում տարրալուծվեցին և նորովի կերպավորվեցին միջնադարյան ձայնեղանակների համակարգում:

Հայ միջնադարյան հոգևոր մշակույթի ինքնատիպ մի ոլորտը զարգացել է գուսանական արվեստում, որը ժառանգվելով հեղենիզմի

սոցիալ-մշակութային ավանդույթներից, հղվել և կատարելագործվել է ավատատիրության ժամանակաշրջանի գեղագիտական և կենսափիլիտիայական դոգմատիզմին գուգահեռ: Թեև հալածված և հույժքնադատված հոգևոր դասի կողմից, գուսանական կենսագոյա արվեստը, միևնույն ժամանակ ապրել է ինքնուրույն չափանիշներով և մշակութային վերելքներին համընթաց, հասնելով զարգացման բարձր աստիճանի, մեծապես ազդել է նաև հոգևոր մշակույթի վրա:

Իր բազմադեմ նկարագրով, գուսանական արվեստը այսօր մեզ ներկայանում է ոչ ծավալուն հիշատակություններում, որոնք սփռված են միջնադարյան տարբեր գրավոր աղբյուրներում: Դրանց թվում պատմագրությունը ամենաարժեքավորներից մեկն է: Հայագիտական հետազոտություններում անչափ մեծ է պատմագրական հիշատակությունների ճանաչողական արժեքը: Յուրաքանչյուր ոլորտում, նշանագոր հայագետների կողմից դրանց տրվել են բազմապիսի մեկնություններ: Դրանք շարունակ լրացվել են, համարվել և, ի վերջո ասպարեզ են հանել իր կերպի մեջ ինքնօրինակ այդ արվեստի կարեռագույն բնորոշչիները, որոնք, սակայն, այսօր էլ մեծիվ չափով ինքնապարփակ են և շատ կողմերով անհաս՝ ամբողջական նկարագրի համար:

Հայ երաժշտության պատմությանը վերաբերող բոլոր աշխատություններում գուսաններին վերաբերող պատմագրական տվյալների ընտրանին, անշուշտ, գրավոր այլ աղբյուրների (եկեղեցական ժողովների որոշումներ, տարբեր մեկնություններ, գրական ստեղծագործություններ և այլն) համադրությամբ, հնարավորություն է տվել պատկերացում կազմելու բանավոր ավանդույթի մասնագիտացված երաժշտարվեստի ընդհանուր բնորոշչիների մասին: Դա վերաբերել է գուսանների մասնագիտացված երգարվեստին, նվազարանային երաժշտության զարգացման մակարդակին և գուսանական արվեստի հասարակական դերին և նշանակությանը:

Այստեղ մենք փորձել ենք ոչ միայն լրացնել պատմագրական հիշատակությունների վերոհիշյալ ընտրանին, այլև կարևորել ենք այն իրողությունը, որ հայագիտության այլ ոլորտներում տեղ են գտել այդ նյութերի վերաբերող բավական հետաքրքիր դիտարկումներ և մեկնություններ, որոնք ինչ-ինչ պատճառներով դուրս են մնացել երաժշտագիտական հետազոտություններից:

Իբրև եղակետային դրույթ ընդգծենք գուսանական արվեստի անտարրանջատ բնույթը, որտեղ, փաստորեն, մշտակայուն գործառույթի մեջ են եղել բանավոր գեղարվեստական խոսքը, թատերային խաղը, պարը, նվագարանային արվեստը և սրանց ենթակա այլ տարրերը: «Միջնադարյան թատրոնը, - գրում է Հենրիկ Հովհաննիայանը, - որ ազատ է եղել գրված խոսքի, որպես տիրապետող ուժի իշխանությունից, որ իր նյութը և ձեւ վերցրել է ոչ միջնորդաբար, այլ ուղղակիորեն կանքից: Սա միջնադարյան թատրոնի և՛ ուժն է և՛ թուլությունը. ուժը՝ բեմական երևակայության և թուլությունը՝ բանաստեղծական երևակայության ոլորտում»<sup>128</sup>: Միւնույն ժամանակ նշվում է, որ «երգը, երաժշտությունը և պարը միջնադարյան թատրոնի ողին են»<sup>129</sup>:

Անդրադառնանք գուսանական արվեստը բնութագրող, կամ այդ բնութագրին առնչվող պատմագրական հիշատակություններին՝ հնարավորին չափով համահունչ «խոսեցներով» դրանք:

Գուսանները հանդես են եկել թե՛ խմբերով և թե՛ միայնակ: Հիշատակվում են «պէսպէս ամբոխս գուսանացն» (Հ. 22), «դասս գուսանաց» (Հ. 94), «երաժշտաց գունդ» (Հ. 149) և այլն: Իբրև մասնակիցներ նշվում են գուսանները, վարձակները, կատակները (Հ. 15, 151): Միջնադարյան մատենագիրները հիմնականում անդրադառնում են գուսանների արվեստին, երբ խոսում են որևէ նշանավոր դեմքի կամ ավատատեր վերնախավին ներկայացուցիչների գվարճանքի, խնջույքի և այլ ժամանցի նկարագրություններին:

Զարգացած ավատատիրության ժամանակաշրջանի աշխարհիկ երաժշտական կենցաղի կարևոր մասն են կազմել ինչույզները, «ուր հայ ազնուականը գինւոյ հետ երգ ալ կ' ուզէր, որպես զի իւր հրճուանքը կատարեալ լինէր»<sup>130</sup>: Այստեղ ինքնատինքյան երևակվում է գուսանական երգարվեստի կարևորագույն բնորոշչիներից մեկը, այն է՝ տարբեր արտահայտչամիջոցների վարպետ համարդությամբ կատարվող գովերգությունը կամ գովերգը, գվարճացող անհատին ուղղված ձոներգը:

Մովսես Խորենացին պատմում է վարձակների մասին, որոնք գովերգել են Արշակ Բ-ին (Հ. 49): Աղվանից իշխան Զվանշիրին նվիրված

<sup>128</sup> Հ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 214-215:

<sup>129</sup> Նույն տեղում, էջ 241:

<sup>130</sup> Վ. Հացունի, ձաշեր և իննույզք հին Հայաստանի մեջ, Վենետիկ, 1912, էջ 203:

գուսանական ներբողների մասին է Հիշատակել Մովսես Կաղանկատվացին (*հ.* 70): Նա այդ ստեղծագործությունների մասին մասնավոր տեղեկություններ չի հաղորդել, այլ անդրադարձել է Զվանշիրի Հիշատակին ասված Ողբին: Արշակ թագավորին զվարճացնող գուսաններին Փալստոս Բուզանդը անվանել է նաև արվեստականներ (*հ.* 17,18), Շապուհ Բագրատունին տարանջատել է «երգեցիկը և գուսանք» (*հ.* 132), ինչպես և Հովհաննես Երզնկացին՝ «երգեցօղաց և գուսանաց»<sup>131</sup>:

Հիշատակությունների մի խմբում բացակայում է գուսան անվանումը, սակայն Համատեքստը լիովին Համապատասխանում է վերոհիշյալ գուսանական ներբողային արվեստի բնութագրին: Գրիգոր Մագիստրոսը նշում է Գագիկի Բագրատունուն գովերգող ջնարահարների մասին (*հ.* 126), Վահրամ Պահլավունուն՝ փողհարների և թմբկահարների (*հ.* 114), Շապուհ Բագրատունին՝ Գրիգոր Դերենին զվարճացնող փողհարներին, ջնարահարներին, տավղահարներին, որոնց միացել են նաև կաքավող խաղարարիքն (*հ.* 130):

Այս հիշատակությունների ճանաչողական արժեքը կարևոր է նրանով, որ դրանց մեջ ուշմիջնադարյան մշակութային կորաված արժեքների թվին դասված գուսանական ներբողներն ու գովերը ներկայանում են որպես երբեմնի զարգացած և ծաղկում ապրած մշակութային արժեքներ: Դրանք հայագիտության մեջ դիտվում են որպես գուսանական երգացանկին բնորոշ ստեղծագործություններ: Այդ է պատճառը, որ գուսան-ի ստուգաբանություններից մեկը հիմնվում է գովասաց բառի վրա: Վերջինիս անդրադարձալով Լ. Երնջակյանը նշում է, որ պահանջման գովասաց այդ լեզվում չի ստուգաբանվում<sup>132</sup>, մինչեւ գովասացը լավագույնս ընկալվում է որպես այդակիսին: Գովասաց անվանումը հանդիպում է Թովմա Արծրունու մոտ՝ տարանջատվելով երգասացից (*հ.* 89):

Չխորանալով բառի ստուգաբանության մանրամասների մեջ, նշենք, որ գովասաց մեկնությունը Համապատասխանում է գուսանական արվեստի էական գծերին, սակայն ամենենին չի սահմանափակում այդ արվեստի բովանդակային շրջանակները: Գուսանական արվեստը

<sup>131</sup> Հովհաննես Երզնկացի, Էջ 33:

<sup>132</sup> Լ. Երնջակյան, Աշուղական սիրավեպի ձևավորման պատմությունից, Լրաբեր Հասարակական գիտությունների, Եր., 2002, թիվ 2, Էջ 60:

մատչելի և ընդունելի է եղել հասարակական բոլոր շերտերի համար։ Մատթեոս Ուռհայեցին ցավով նշում է, որ Աշոտ Դ Բագրատունու մահից հետո Հայ զինվորները լիովին տրվել են գուսանական արվեստի հմայքին (Հ. 167):

Այժմ անդրադառնանք այն հիշատակություններին, որտեղ թեև բացակայում է գուսան անվանումը, սակայն նկարագրված երևույթը լիովին համաշխատ է գուսաններին վերաբերող այլ վկայություններին։ Խնջույքային նկարագրություններում Եղիշեն հիշատակում է. «յերգս արբեցողութեան և ի կաքաւս լկտութեան, ... զկարգս երաժշտական և զերգս հեթանոսականս» (Հ. 24)։ Մեծ թիվ են կազմում գուսանական նվագախմբերին կամ առանձին նվագարանային կատարումներին վերաբերող տվյալները (Հ. 46, 95, 105, 108, 114, 127)։ Դրանց բովանդակությունը ցույց է տալիս, որ գուսանների արվեստը միջնադարյան խնջույքների և զիարձանքների հական մասն է կազմել։ Եվ ոչ միայն դրանց։ Առանձնահատուկ հետաքրքրություն են առաջացնում նաև բազմամարդ տոնախմբություններն ու այսպես կոչված հանդեսները։

Մշակութային ինչ երևույթ է առհասարակ միջնադարյան հանդեպ։ Նոր բառդրքի բացատրությունը խիստ համառոտ է. «Տօնախմբութիւն, միաբանական ցնծութիւն»<sup>133</sup>։ Հնարավո՞ր է արդյոք գրավոր աղբյուրներից «գուրս բերել» բուն երևույթը։ Անշուշտ, պատմական համառոտ հիշատակություններից ակնկալել երևույթի ամբողջական նկարագիրը դժվար է։ Սակայն տարբեր աղբյուրների տվյալների փոխբացման միջոցով հնարավոր է նշմարել երևույթի կարևոր բնորոշիչները։ Արիստակես Լաստիվերացին, վերհիշելով Անիի ծաղկուն կյանքը, նշում է քաղաքային հանդեսների մասին (Հ. 108)։ Քաղաքի այս գունառատ պատկերագրման մեջ մեզ հետաքրքրող նյութը խոտացած է ուրախական երգոց և բանից հանդեսներում, որտեղ պատմիչը կարևորել է նաև փողերի և ծնծղաների գործառությունը։

Միջնադարյան հանդեսների ուսումնասիրության հարուստ աղբյուր են ներկայանում Գրիգոր Մագիստրոսի «Թղթերը»։ Դրանք փառազեղ տոնախմբությունների շքեղ նկարագրություններ են, որտեղ իբրև մասնակիցներ ներկա են գտնվել հասարակական գրեթե բոլոր շերտերի ներկայացուցիչները։ Ճիշտ է, այստեղ գուսանների մասին ուղղակի

<sup>133</sup> Նոր բառդրք, Հ.Բ, Էջ 42:

Հիշատակումներ չկան, սակայն նկարագրված երևոյթներում մասնագիտացված արվեստի առկայությունը կասկած չի հարուցում: Դաստակերտներում տոնախմբված հանդեսներում կատարվել են խմբերգեր, խմբապարեր, մեներգեր, որոնց ընդհանուր բնորոշչիչները համապատասխանում են հագներգության ժանրային առանձնահատկություններին (Հ. 128): Վերջինս հեղինակը բնութագրում է որպես Հռմերական քերթուած (Հ. 127), որն է՝ չափածո հորինվածք: Հէ թղթում նկարագրված հանդեսում ակնառու է երաժշտական ժանրերի բազմազանությունը՝ պարեր, կաքավներ, երգեր: Փողագոչ մեղեղիները փաստում են նաև նվազարանային երաժշտության մասին: Հանդիսատարրերի տեսականին կարող ենք լրացնել նաև Գրիգոր Մագիստրոսի ԺԱ թղթում զորավար Վահրամ Պահավունուն ձոնված պատվո հանդեսների նկարագրության մեջ (Հ. 113), որտեղ խմբված ազատներն ու հասարակ ժողովուրդը մեծ զորավարին ձոնել են դյուցագներգեր: Տաղ և սոինչ անվանումները այստեղ երգի համարժեքներն են և վերաբերում են երաժշտաբանաստեղծական հորինումներին, որոնք կատարվել են հանպատրաստից և ուղեկցվել են պարով:

Ուգախ հանդեսի յուրօրինակ նկարագրություն ենք հանդիպում նաև Հովհան Մամիկոնյանի Պատմության դրվագներից մեկում, երբ ժողովուրդը դիմավորում է պարսիկներին Հաղթած Հայ զորականներին (Հ. 63): Պատմիչը հիշատակում է կատակային բնույթի չէր կոչված երաժշտական ժանրի անունը, իսկ ձեռագրային տարբնթերցումները միտված են ավանդական պարերգական տեսարանի համառոտ նկարագրի:

Մենք հակված չենք Գրիգոր Մագիստրոսի վերոնշյալ երեք հիշատակություններում նկարագրված երևոյթը Հանդեցնել մեկ՝ յուրահատուկ ձևի կամ ժանրի: Սակայն դրանց համագրումը հնարավորություն է տալիս նկատել երաժշտամտածողության որոշակի ձևավորված և տարածված մի տիպ, որը զարգացել է միջնադարյան բանավոր երգարվեստում և տվյալ ժամանակաշրջանի երաժշտարվեստի բնորոշչիչներից մեկն է: Այդ է վկայում նշված հիշատակությունների բաղդատական վերլուծությունը: ՀԶ թղթում բերված նկարագրությունը գրեթե նույնությամբ կրկնվում է Գրիգոր Մագիստրոսի «Մեկնութիւն

քերականի» աշխատության մեջ իրրև հագներգության բնորոշում<sup>134</sup>: Այստեղ ասվում է. «Հագներգութիւն, ըստ որում ասէ ի հագներոյ կարկատուն բանս», «կարկատուն բանիւք յարամանին շարամանեալ ամենայն մրմունջք եւ երգք գուսանութեան, քանզի բազում բանից պետք են կարկատել եւ աւարտել զսա, զոր այժմ ի հայումս առաւել քան յունականին գտանեմք»<sup>135</sup>:

Հագներգությունը բազմիմաստ բառ է, որը կիրառվել է միջնադարյան քերականական գրականության մեջ, սակայն իմաստային առումով ընդգրկում է բավական լայն շրջանակ: Կարևորներից մեկը վերաբերում է գրական արվեստին, բանաստեղծությանը. «Հագներգութիւն որպես մասնավոր քերթուած Հոմերոսի, չափավոր ոչ կարճ և ոչ լի տողիւք», «որպես գիրք պատմութեանց և բաժանումն մատենին յայլ և յայլ գիրս ի զլուխս ճառ. բան. դպրութիւն»<sup>136</sup>: Այլ իմաստների թվում է երգվող հագներգությունը. «Հագներգութիւն հոռոմին լոի գաւազաներգութիւն. կամ ի հագներոյ կարկատուն բանս, կամ է հագներգութիւն՝ ելք չնչոյ հագափին, զօր երաժշտականութեամբ նուազեն ի տաղս պարանցիկ երգոցն. կամ ի հագուցաներոյ ընդ միմեանս և կարկատերով բանս՝ յիրարս յեռել»<sup>137</sup>:

Հանդիպում է նաև երաժշտաժանրային իմաստը. «Որ մեկնի յոմանց գաւազաներգութիւն և յայլոց՝ կարկատերգությիւն. (զի «ուալուու» է գալազան և «ուաբդօ» կարեմ, կարկատեմ), իսկ ի մեզ ոմանք ի հագնի բառե ածանցեն, և այլօք ի հագներոյ կամ ի հագափէ, կամ յագուցաներոյ: Որպես և է, նշանակէ քերթուած, տաղ, վէպ կամ վիպասանութիւն»<sup>138</sup>:

Հագներգության մեկնությունը որպես երաժշտաբանաստեղծական հորինվածք, հանդիպում է Դիոնիսիոս Թրակացու «Մեկնութիւն քերականի» աշխատության մեջ, որի հայ մեկնիչները նույնպես անդրագարձել են հիշյալ հասկացությանը: Առավել տիպական բնորոշչներ բերված են XIII-XIV դդ. հեղինակ Հովհաննես Երգնկացի

<sup>134</sup> Լ. Խաչերեան, Գրիգոր Պահապունի Մագիստրոս, Լոս Անձելլա, 1987, էջ 383:

<sup>135</sup> Նույնը:

<sup>136</sup> Նոր բառգիրք, հ. Բ, էջ 2:

<sup>137</sup> Նույնը:

<sup>138</sup> Նույնը:

Ծործորեցու «Համառօտ տեսութիւն քերականին» աշխատության մեջ<sup>139</sup>:

Տաղերի արվեստի ծագումնաբանության և հորինվածքային առանձնահատկություններին նվիրված ուսումնասիրության մեջ Մ. Նավոյանն առավել հանգամանորեն անդրադարձել է վերոհիշյալ բնորոշիչներին և կատարել մի շարք արժեքավոր դիտարկումներ՝ հագներգության երաժշտաբանաստեղծական առումների վերաբերյալ<sup>140</sup>: Նա կանգ է առել նախ՝ հասկացության բացատրության մանրամասների վրա: «Ըստ Ծործորեցու, - գրում է Մ.Նավոյանը, - (Հագներգությունը - Հ.Հ.) բացատրվում է որպես իրար «Հագներով», հանգուցելով և կարկատելով իրար «Հեռել», որը «երգեցողք» առնելով երգում են, քանի որ իսկապես, մրմունջները և գուսանական երգերը հյուսվում են մտքերի «կարկատումով»<sup>141</sup>: Այստեղից նա եղրակացրել է, որ Հագներգութիւն նշանակում է բարդ կառույց ձևավորող երաժշտաբանաստեղծական հորինվածքի ստեղծագործական սկզբունք կամ հնար: Այնուհետև ասվածը համեմատվում է Ստեփանոս Սյունեցու «Սեկնութիւն քերականի» աշխատության մեջ տրված մեկնությանը, ըստ որի Հագներգությունը ներկայացվում է որպես գեղարվեստական խոսքի եղանակավորման կերպը որոշող հասկացություն<sup>142</sup>:

Աչա Սյունեցու մեկնակերպը. «Եւ գքնարական քերթութիւնն ներդաշնակաբէս, այսինքն զգուսանական դայլայլիկան, նման ամին թեթես յընթացուցանել ըստ նմին խորհրդոց, եւ ատեղծանին ամենայն դայլայլիկըն հագներգութեամբ եւ ոչ այն միայն, այլեւ յաստուածայինս»<sup>143</sup>:

Դիտարկումների տրամաբանական ընթացքը, ի վերջո հանգում է միջնադարյան տաղերի երաժշտաբանաստեղծական արվեստի հորինվածքային-ձևակառուցողական, կատարողական արտահայտչամիջոցների համալիրի և հագներգության համադրմանը և բազմաթիվ զուգահեռների անցկացմանը:

<sup>139</sup> Տե՛ս Մ. Նավոյան, նշվ. աշխ., էջ 86:

<sup>140</sup> Նույնիվ:

<sup>141</sup> Նույնիվ:

<sup>142</sup> *Н. Адоնц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, стр. 193.*

<sup>143</sup> Նույնիվ:

Ստեփանոս Այունեցու և Հովհաննես Ծործորեցու աշխատություններում հազներգությանը վերաբերող արժեքավոր տեսակետները այժմ փորձենք Համալրել Գրիգոր Մագիստրոսի «Մեկնության» հետ, կարևորելով՝ նրա «Թղթեր»-ը որպես յուրօրինակ «ասպարեզ», որտեղ լավագույն անդրադարձն են գտել Հեղինակի կողմից իր ժամանակի մշակութային երևոյթներին տրված մեկնություններն ու գնահատականները:

«Թղթերում» Մագիստրոսը մի քանի անգամ հիշատակում է Հագներգությունը՝ ոչ միանշանակ: Այսպես. ՀԱ թղթում, որն ուղղված էր Իբրահիմ ամիրային, նա խոսում է Հագներգությունների բովանդակության մասին. «Այսոքիկ առասացութիւնք առականք Հագներգությունք սակա իմաստութեան ներհակաց իբրու Տիւռենացւոց զելադացիս և Պառնասոյ զԱտուիկ»<sup>144</sup>: Թղթում է, որ Հեղինակը վիպական բնույթի գրական գործի մասին է խոսում:

Աղանդակորների գեմ ուղղված ԿԵ թղթում Հեղինակը վկայում է երաժշտական Հագներգության մասին (հ. 125): Համատեքստը հուշում է, որ այս Հագներգությունը կարող է վերագրվել նաև Հոգեորեգեցողությանը: Արան մենք գեռ կանգըադառնանք:

Հարունակենք դիտարկումը: Գագիկ Բագրատունուն Հասցեագրված թղթում Գրիգոր Մագիստրոսը նրան խորհուրդ է տալիս «ի Հոմերական տաղմն վերտառեալ չափաբերական և ոտանաւորս Հագներգական կարկատեալ» (հ. 121): Այսոեւ ակներև է Հագներգության և տաղի Համակցությունը և կարկատեալ կողմնորոշչի գործողության չնորհիկ պարզորշ զգացվում է Հագներգության՝ որպես ստեղծագործական սկզբունքի կամ, եթե երգվող տաղ է, ապա նաև՝ տեքստի եղանակավորման միջոցի կամ կերպի գործառույթը:

Գրիգոր Մագիստրոսն իր «Թղթեր»-ում ընդգրկել է նաև գրական (որոնք, Հնարավոր է ենթագրել, որ նաև երգվել են) ստեղծագործությունների՝ տաղերի նմուշներ: Դրանցից մեկը, որը նա նվիրել է իր որդուն, ընութագրված է այսպես. «Ազ՛ ա՛ռ ընթերցի՛ր զարհեստ ոտանավորացդ. դիւցազնական է տաղը, քաջ ոլորեալ, և տաղ պղպջուն, օղուն և զեղուն»<sup>145</sup>: Այսոեւ տաղը բնութագրվում է որպես քաջ ոլորեալ

<sup>144</sup> Գրիգոր Մագիստրոս, էջ 204:

<sup>145</sup> Նույն տեղում, էջ 234:

Հորինվածք: Նույնը հանդիպում ենք նաև Պետրոս Գետադարձի խաչանշան գավազանին նվիրված տաղի բնութագրության մեջ. «Հագներգութիւնս այս ... տաղ է հոմերական քաջ ոլորեալ» (Հ. 111):

Քաջոլորակ-ը նույնպես միջնադարյան քերականական գրականության մեջ մեկնաբանված հասկացություն է, որը բնորոշում է տաղ ժանրի եղանակավորման կերպը: Անանուն մեկնիչի հիշտակած քաջոլորակ տաղի առնչությամբ Մ. Նավոյանի համակողմանի ուսումնասիրությունը թույլ է տվել միջնադարյան ընթերցանության արվեստում բացահայտելու կատարողական ուրույն մի սկզբունք, որը զարգացել է գուսանական արվեստում և ապա անցել նաև միջնադարյան մասնագիտացված երգարվեստի ոլորտ<sup>146</sup>: «Երբ ասվում է, թե «քաջոլորակի տաղը», ըստ «կերծանողական» սովորության է եղանակավորվում, - նշում է Մ.Նավոյանը, - նշանակում է, որ տաղի եղանակավորումը կատարվում է նախ՝ տեքստը ըստ բովանդակության տրուելով, ապա՝ դրանց ճիշտ առողջանությամբ (շեշտելով, «բթելով», «պարըկելով») և բովանդակությամբ թելադրված «ենթադատությանը» համապատասխան, ճիշտ եղանակի մեջ ամփոփելով մատուցել»<sup>147</sup>:

Ինչպես տեսանք, Գրիգոր Մագիստրոսի «Թղթերում» հագներգություն ժանրի անվանումը հիշտակված է թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր երգարվեստում, ինչը դարձյալ վկայում է զարգացած ավատատիրության ժամանակաշրջանում այս երկու մշակութային ոլորտների առնչակցությունների և փոխազդեցությունների մասին:

Այսպիսով, ակներև է դառնում հանդեսներում գուսանական արվեստի բազմակերպ գրամտումների և հատկապես հագներգությունների գործուն դերն ու կշիռը: Անտարակույս, Մագիստրոսի հիշտակություններում հագներգությունը լիովին ընկալելի է նաև որպես գուսանական երգարվեստում ընդունված ստեղծագործական, Հորինվածքային սկզբունք, որպիսին ակնարկվում է Գաղիկ Բագրատունուն ուղղված թղթում. «Զի տեսանեմք զքեզ ի հոմերական տաղն վերտառեալ չափարերական և ոտանաւորս հագներգական կարկատեալ» (Հ. 121):

Գրիգոր Մագիստրոսի Մեկնության առաջին դիտարկումից էլ նկատելի է հին հունական մշակութային երևոյթի և հայ մշակութում դրա

<sup>146</sup> Մ. Նավոյան, նշվ. աշխ., էջ 79-95:

<sup>147</sup> Մ. Նավոյան, նշվ. աշխ., էջ 94:

Համարժեքի գուգահեռը: Պարանցիկ երգը ենթադրում է խմբերգ, խմբապար, խմբովին պարերգ: Հստ Մագիստրոսի, գուսանական՝ անհատական երգը կատարվել է նաև խմբովին՝ իբրև չուրջպար:

Գուսանական ինչ երգեր նկատի ունի Մագիստրոսը: Կարծում ենք, դրանք հայոց վիպասանաց երգերն են, որոնք դիցավանդման տարրեր եղանակներում և հայ մասնագիտացված բանավոր արվեստում ուրույն տեղ են զբաղեցրել: Վաղմիջնադարյան հիշատակությունների համեմատությունը թույլ է տալիս զարգացած ավատափրության ժամանակաշրջանի հագներգության մեջ «լսել» նաև հայոց հինավորց պարերգի արձագանքը: Գրիգոր Մագիստրոսի թղթերում և՛ իբրև պատկերավոր խոսք, և՛ իբրև յուրահատուկ արձագանք «Հնչում են» հայոց առասպեկները և վիպերգերը: Ահա թե ինչու նա ԺԹ թղթում գրում է. «ՈՒՇ Հայկեան հանդէս և հիացուցանելի գործառնութիւն»<sup>148</sup>: Ըստ թղթում հանդիպում ենք Արտաշես Ա-ին ձոնված վիպերգից մի հատված (հ. 119):

Իսկ ահա XVIII դարի պատմիչ Աքրահամ Կրետացին Անիի քաղաքային կենցաղի նկարագրության մեջ ուղղակի հիշատակում է առասպեկների մասին. «Քանզի երկիրն էր առատարեր և պարարտ, և նոքա մեծատունք, և օր ըստ օրէի խորտկակերութիւնն ջանային ի կեր և ի խում զանազան ծաղկահոտ գինեաւ, յառասպելս, և ի խաղս, ի պարս»<sup>149</sup>:

Այսպիսով, հագներգությունը կարելի է դիտարկել նաև որպես հայոց ավանդական առասպեկաց և վիպասանաց երգերի ընդհանրացված անվանում: Գրիգոր Մագիստրոսի հիշատակությունը Վահրամ Պահապիւնուն ձոնված դյուցազներգերի մասին (թուղթ ԺԱ), հուշում է, որ միջնադարյան հանդեսներում ավանդական հագներգությունների կողքին հորինվել են նորերը՝ հենվելով մի կողմից հին ավանդույթների, մյուս կողմից՝ երաժշտամտածողության նոր սկզբունքների վրա: Այստեղից էլ հետեւում է, որ պատմիչների հիշատակած երգերը և պարերը ոչ միայն միջնադարյան մշակութիւնի արգասիք են, այլև՝ հեթանոսական անտարրանչատ արվեստի վերածնված արժեքներ:

<sup>148</sup> Նույն տեղում, Էջ 55:

<sup>149</sup> Աքրահամ կաթողիկոսի Կրետացւոյ պատմագրութիւն անցից իւրոց եւ Նատար Շահին Պարսից, Վաղարշապատ, 1870, Էջ 103:

Գր. Մագիստրոսի «Թղթեր»-ում նկարագրված հանդեսներին համահունչ են նաև այլ աղբյուրներում հիշատակված պայտական հանդեսները. Գագիկ Արծրունու պայտատում նշվում են «դասա գուսանաց և խաղս աղջկաց» (Հ. 94), «որ ի հնչմունա փողոցն» (Հ. 95), նրա թագադրության հանդեսում. «գոչմունք փողոց և հնչմունք եղջերաց, վանդիւնք սրնաց և հեշտալուր քնարացն, տաւիդք հանդերձ դրօշիւք» (Հ. 93): Սառմ Լուս իշխանի ընդունելության հանդիսության նկարագրության մեջ հիշատակվում են «բազմութիւն երաժշտաց պէսայէս նուագարանօք» (Հ. 179): Վերջինս արժեքավոր մի վկայություն է այն մասին, որ միջնադարում գուսաններին կոչել են նաև երաժիշտներ: Մեջ բերենք նաև Եղեսիայի տոնախրմբություններին վերաբերող Ներսես Շնորհալու պատկերավոր տողերը.

Դատերք քո պաճուճալի  
յերգ եւ քնար միշտ ի խաղի (Հ. 357):

### Կամ՝

Զգայս ասելով խրախճանային,  
երգս և խնձոյս յօրինէին,  
Ծակս ծակս հարկանէին,  
ոտիւք վազեալ կաքաւէին (Հ. 360):

Կատարյալ համաժողովրդական տոն է նկարագրում նաև Գր. Նարեկացին, որը տեղի է ունեցել Մոլսի Ապարանք տաճարում՝ նվիրված Սուրբ Խաչի տոնին (Հ. 96, 97): Ու, թեև տոնը եկեղեցական է, սակայն նկարագրության մեջ մեզ հետաքրքրող նյութին առնչվող մանրամանները համահունչ են այլ տոնախրմբությունների համարժեք նկարագրություններին:

Այժմ անդրագառնանք նաև գուսանական նվազարանային երաժշտությանը վերաբերող պատմագրական տվյալներին առավել հանգամանորեն: Ինչպես նկատելի է, որոշ հիշատակություններում բերվում են միայն նվազարանների անուններ: Ցցուն օրինակներից մեկը հանդիպում ենք Փավստոս Բուղանդի Պատմության 1968թ. Հրատարակված թարգմանության մեջ: Հրատարակված բնագրում նշվում են «գուսանօք և արուեստականօք» (Հ. 17, 18), իսկ թարգմանության մեջ՝ «նվազարաններով»: Ամենայն հավանականությամբ, դա ձեռագիր տարբնթերցման արդյունք է, սակայն մատենագիրներից շատերը հաճախ են դիմել սոսկ նվազարանների հիշատակմանը:

Դիտարկենք այդ վկայություններից մի քանիսը և փորձենք ընդհանուր գծերով բնորոշել միջնադարյան գուսանական նվազարանային արվեստը:

Կարևոր տեղ զբաղեցնելով գուսանական արվեստում, նվազարանային երաժշտությունը զարգացել է ինչպես մենակատարումներում, այնպես էլ անամբլային երաժշտության ոլորտում։ Մովսես Խորենացին հայոց արքունիքում կազմակերպված խնջույքներից մեկի նկարագրության մեջ հիշատակել է, ամենայն հավանականությամբ, վարձակի մասին, որին ներկայացրել է իբրև «Ճնարահար քաջամատն» (Հ. 50), այսինքն՝ հմուտ կատարող։ Խորենացու Պատմության մեջ համարժեք մեկ այլ հիշատակություն ենք գտնում Սյունյաց Բակուր նահապետի տանը կազմակերպված խնջույքի նկարագրության մեջ, որտեղ խոսվում է վարձակ նազինիկի մասին, որ «յոյժ գեղեցիկ էր և երգէր ձեռամբ» (Հ. 47):

Երգեր ձեռամբ արտահայտությունը, որը ոչ միայն Մովսես Խորենացու, այլև միջնադարյան այլ հեղինակների մոտ չի կրկնվում, ներփակված է իմաստային մի նշանակության մեջ՝ տեղի տալով մի շարք տարբերցումների։ Բառացի թարգմանությունը՝ «երգում էր ձեռքով», որոշակիորեն հաստատում է վերջինիս «միջնադարյան» ընթերցման անհրաժեշտությունը։ Սա է պատճառը, որ հիշյալ արտահայտության առաջին մեկնաբանները Խորենացու Պատմության թարգմանիչներն են։

Որոշ թարգմանություններում երգեր-ը պարզապես անտեսվել է և արտահայտությունը մեկնաբանվել է որպես ձեռքերի գեղեցկության փոխաբերություն (Վիստոն եղբայրներ, Ի.Իոսաննեսով)։ Այլ թարգմանություններում «երգեր ձեռամբ»-ը մեկնաբանվել է որպես «ձեռքերով նվազել» (Խ. Ստեփանե, Ստ. Մալխասյանց)։ Հետազոտություններից մի քանիսում հանդիպում է «պարում էր ձեռքերով» մեկնաբանությունը (Գ. Գոյան, Սրբ. Լիսիցյան, Հ. Հովհաննիսյան), որը առավել հավանական է թվում։ Հստ Գ. Աբգարյանի, Ստ. Մալխասյանցի «նվազում էր ձեռքերով» թարգմանության մեջ ենթադրվում է նաև նրա երգչուհի լինելը։ Այսինքն, նազինիկը նվազել և միենույն ժամանակ երգել է<sup>150</sup>։ Նույնպիսին է նաև Հակոբ Հովհաննիսյանի կարծիքը, քանի Մովսես Խորենացու հիշատակությունը դիտում է որպես ապացույց այն բանի, որ

<sup>150</sup> Գ. Աբգարյան, Բ. Ռուբաբյան, Մի հոդվածի առթիվ, Պատասխան ընդդիմախոսի, Գրական թերթ, Եր., 1986, N50, էջ 4:

«Հին Հայերին վաղուց ծանոթ էր Հնդկական և եգիպտական խերունոմիան - ձեռքի շարժումներով երգելու և նվազելու արվեստը»<sup>151</sup>:

Մեզ հավանական է թվում այն տեսակետը, ըստ որի վարձակ Նազինիկը՝ իբրև միջնադարյան գուսանական արվեստի ներկայացուցիչ, կարող էր հանդես գալ և՛ որպես երգչուհի, և՛ պարուհի, և՛ նաև՝ տիրապետել նվազարանային կատարողական արվեստին: Դա բխում էր վարձակների անտարրանջատ արվեստի հնարավորություններից: Այս առումով առավել համոզիչ է թվում Սրբ. Լիսիցյանի բացատրությունը: Նա առաջնորդվել է երգ բառի հնագույն իմաստային տարրերակներից մեկի դիտարկումով, որը, ըստ Երեմիայի բառարանի<sup>152</sup> մեկնաբանվում է որպես պար: Ըստ այդմ, Սրբ. Լիսիցյանը գտնում է, որ Խորենացին հիշատակել է «ձեռնապարերի», «ձեռնախաղերի» մասին և հիշատակել է «ձեռնապարերի», «ձեռնախաղերի» մասին և հիշատակել պետք է մեկնաբանել որպես պարերգ<sup>153</sup>: Բացառված չէ, որ Նազինիկը կարող էր միաժամանակ նվազել որևէ նվազարանով, ինչպես, օրինակ, X դարի անհայտ մի հեղինակի բանաստեղծության հետեւյալ հատվածում, որտեղ գովերգվում է վարձակի պարը.

«Մեղմիկ շարժելով յայս կոյս և յայն նայէր

Ծովածիկելին իւր մահաբեր աչօքն,

Կայթել կաքաւէր թմբկահարիկ աղջիկն»<sup>154</sup>:

Նշենք նաև Արտաշատում պեղումներից հայտնաբերված թրծակափե արձանիկի մասին (մ.թ.ա. I - մ.թ. I դ.), որի ձեռքին պատկերված է վին կամ սազատիպ նվազարան<sup>155</sup>:

Ի վերջո, կարծում ենք, Մովսես Խորենացու վերոնշյալ հիշատակության մեջ պատկերավոր նկարագրության հավանականությունը շատ ավելին է, քան դրան ուշադրություն է դարձվել: Պատմահայրը հիացմունքով համեմատել է վարձակի պարը «երգող ձեռքերի» հետ:

<sup>151</sup> Հակոբ Հովհաննիսյան, նշվ. աշխ., Էջ 20:

<sup>152</sup> Բարդիրք Հայոց, Վենետիկ, 1728, Էջ 127:

<sup>153</sup> Սրբ. Լիսիցյան, նշվ. աշխ., Հ.Ա., Էջ 66:

<sup>154</sup> Բազմավեպ, Վենետիկ, 1850, Էջ 52: Բերվում է ըստ՝ Հ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., Էջ 64:

<sup>155</sup> Փ. Տեր-Մարտիրօսօվ, Տերրակոտ արտաշատ (հաջոց 1970), Լրաբեր հասարակական գիտությունների, 1973, N4, Էջ 88:

Մեր դիտարկած բոլոր ուսումնասիրություններում Նազինիկի մասին հիշատակությունը վերագրվում է կամ վաղ միջնադարին, կամ էլ մ.թ. II դարին (Գ.Գոյան, Ա.Քոչարյան և այլն): Մովսես Խորենացու Պատմության այս հատվածում թույլ է տրվել ժամանակավրեպություն: Օդյումագի «Սեհենական պատմությունից» Արտաշեսի մասին քաղված դրվագները Խորենացին սխալմամբ տեղադրել է այլ ժամանակադրական միջավայրում մ.թ. I դարի վերջերին և II դարի սկզբներին<sup>156</sup>: Հիշենք պատմահոր այն կարեւոր հաղորդումը, որ Տրդատ Բագրատունին, որն առևանգել է Նազինիկին, Արտաշես Ա-ի դայակ Սմբատ Բագրատունու դատեր որդին էր: Հետևաբար եթե Արտաշես Ա-ի մասին պատմագրական աղբյուրի ճշգրտված ժամանակաշրջանը մ.թ.ա. II դարն է, գրանից, բնականաբար, հետևում է, որ Նազինիկի մասին դրվագը նույնպես այդ ժամանակաշրջանին է վերաբերում: Սա խոսում է գուսանական արվեստի զարգացած մակարդակի մասին հելլենիզմի դարաշրջանում:

Անդրադառնանք նաև այլ տվյալների: Զնարահարների մասին հիշատակել է Գրիգոր Մագիստրոսը (Հ. 126), բարբուտի մասին՝ Մատթեոս Ուռհայեցին (Հ. 134), «քաղցրաձայն տափկոս և գուշատար ջնարս»՝ Կարապետ Սասնեցին (Հ. 370):

Յուրահասոուկ նվագարանների մասին է հիշատակում Գրիգոր Մագիստրոսը: Հազներգությունների կատարման նկարագրության մեջ նա երբեմն ակնարկում է նվագարանի մասնակցության մասին: Հանդիպում է նաև այդ նվագարանի նկարագրությունը: Առասպեկտավարժության ավանդույթների հիման վրա կատարվող հազներգությունները կարող են ուղեկցվել նվագակցությամբ: Գրիգոր Մագիստրոսի բնորոշմամբ՝ կատարողները «գործարանս երաժշտականութեան առեալ մահական սարդէնի, որ է դափնի»<sup>157</sup>: Այսինքն հազներգությունը կատարվել է դափնու փայտից պատրաստված գործիքով կամ դափնու ճյուղով, օգտագործելով այն որպես պլեկտր: Հեղինակն ուղղակի ակնարկում է այն մասին, որ դափնու ճյուղը փոխարինել է պլեկտրին: Այսինքն՝ հազներգությունը որպես երաժշտաբանաստեղծական ժանր

<sup>156</sup> Հայ ժողովրդի պատմություն, Հ.Ա., Եր., 1971, էջ 527:

<sup>157</sup> Լ. Խաչերեան, նշվ. աշխ., էջ 386:

անպայմանորեն ընդգրկել է նվագակցություն։ Դա առավել ցցուն երևում է մեկ այլ հիշատակության մեջ։

ՀԶ թղթում Մագիստրոսը նկարագրել է մեկ այլ պատկեր. «Բայց ասեմ զԸստումնեան տնկոյ, զորմէ ասեն յոստոցն հատեալ գործէին զնա մանրագոյն քնարս, զորս եղեալ ի ձեռին համբակացն և առժամայն ուսեալք անաշխատաբար որպէս ի սարդենի մահակէ պար գոլով երգէին զհոմերական քերթուածն» (Հ. 127)։ Կարծում ենք «մանրագոյն քնարը» դարձալ նվագարանի մասին ուղղակի նշում է, ինչը վկայում է ինքնօրինակ նվագակցության մասին։

Ի՞նչ բույս ունի Գրիգոր Մագիստրոսը։ Մեզ մատչելի աղբյուրներում «Ծոստոմեան տունկ»-ի մեկնությունների բացակայության պատճառով փորձել ենք Հիմնվել հագներգութիւն բառի ստուգաբանության վրա, որից հնարավոր ենք համարել հիշալ տունկը իբրև բարտի թարգմանել<sup>158</sup>։

Առավել մեծ հետաքրքրություն է առաջացնում գուսանական նվագախումբը կամ նվագարանային անսամբլի արվեստը։ Վերջինս, թշում է, խնդույքի ուրախական քնարական բնույթին որոշակի հանդիսավորություն պետք է հաղորդեք։ Բնականաբար, բուն երաժշտաարտահայտչական տարրերին այստեղ անդրադառնալ հնարավոր չէ։ Ենթադրվում է, որ գուսանական արվեստի այս ոլորտին բնորոշ է եղել «բազմաձայնության» հետերոֆոնիկ տիպը, որը հանդիպում է Անդրկովկասյան ժողովուրդների երաժշտության մեջ, կամ պահպաժ հնչյունի (դամ) կիրառումը, ինչպես նաև ունիսոն հնչողությունը<sup>159</sup>։

Ճիշտ է, անսամբլային երաժշտության առանձնահատկությունները մեզ ներկայանում են լոկ հնթագրաբար, սակայն, այդ անսամբլի մասին հիշատակություններն ինքնին կարևոր ինֆորմացիա են պարունակում։ Վերջինս բազմակողմանի է հատկապես զարգացած ավատատիրության դարաշրջանի պատմագրության մեջ։ Անդրադառնանք այդ անսամբլների կազմին. «թմբկահարք և սրնգահարք, ջնարահարք և փողահարք» (Հ. 22), «գոչմունք փողոց և հնչյունք եղջերաց, վանդիւնք սրնգաց և հեշտալուր քնարացն, տաւիդք հանդերձ դրօշիւք» (Հ. 93), «փողահարքն և ջնարահարքն և

<sup>158</sup> Նոր բառգիրք, Հ.Բ, էջ 2:

<sup>159</sup> Ք. Քուչնադյան, նշվ. աշխ., էջ 109:

**տաւեղահարքն»** (Հ. 130): Հիմնվելով հիշյալ նվագարանների անվանումների ներկայումս ընդունված ստուգաբանությունների վրա, կարող ենք պատկերացում կազմել լարային, փողային և հարվածային նվագարաններից բաղկացած գուսանական անսամբլների ընդհանուր բնութագրի մասին, ինչը փաստում է այդ արվեստի զարգացման բարձր մակարդակի մասին:

Այս հիշատակությունների մեջ բացառիկ կարևոր արժեք է կրում Գրիգոր Մագիստրոսի թղթերից մեկում Արտաշես Ա-ի վիպերգից բերված այն հատվածը, որտեղ Հայոց արքան մահը վանելու նպատակով երգել է Հմայախոսք (Հ. 119): Հայագիտության մեջ գերիշխում է այն մեկնությունը, որ վիպերգի այս հատվածում հիշատակվել են թմբուկների և փողերի հնչյունների ուղեկցությամբ կատարված տոնահանդեսները, կամ էլ՝ արքայական որսերը: Այս տեսակետից միանգամայն առանձնանում է Սրբ. Լիսիցյանի տեսակետը, ըստ որի Մագիստրոսը հիշատակել է հեթանոսական հինավորց ծիսապաշտամունքային (Նավասարդ) տոնահանդեսների մասին, որոնք ընդգրկել են եղնիկների և եղջերուների տոտեմական պաշտամունքի տարրեր, այդ թվում՝ փողերի և թմբուկների սրբազն գործառնություններ<sup>160</sup>: Մագիստրոսի այս վկայությունը հավաստում է այն մասին, որ վիպերգը կատարվել է XI դարում, ամենայն հավանականությամբ այն տոնահանդեսների ժամանակ, որտեղ մարդիկ «երաժշտական պարք գումարեալք ... ոտիւք կաքաւեալք, և հնչմանց երգ արտակիտեալ և փողեալ քնարական ներդաշնակապես» (Հ. 128): Այստեղից կարող ենք եզրակացնել, որ տոտեմական պաշտամունքային-սրբազն գործառութից մինչև՝ միջնադարյան հանդեսները, նվագարանային վառ արվեստը իր ուրույն տեղն է ունեցել:

Ի վերջո, գուսանական արվեստի մասին ինքնատիպ տվյալներ ենք Հայտնաբերում նաև միջնադարյան մատենագրության մեջ հանդիպող քըննադատական բնույթի խիստ արտահայտություններում, որտեղ քըննադատնեական բարոյակիրատական գաղափարախոսության հիմքի վրա մերկացվում է այդ արվեստը՝ որպես նյութապաշտ կենսագացողության ամենախոցելի հատկանիշների կրող: Գուսանների զգայական երգն ու նվագը մերժվել են միջնադարյան մատենագրիների խստաբարո խոսքե-

<sup>160</sup> Սրբ. Լիսիցյան, նշվ. աշխ., Հ.Ա., Էջ :

բում: Իբրև փայլուն օրինակ, անդրադառնանք Հովհաննես Երզնկացու «Զարդք երկնից» երկի որոշ հատվածներին, որոնք ամբողջովին ուղղված են գուսանական արվեստի մերկացմանն ու կենսական գերի նվաստացմանը<sup>161</sup>:

Հստ Երզնկացու, Կայենի թոռների կողմից ստեղծված գուսանական արվեստը մեղքի ալբյուր է, որը պղտորում է անհատի մաքուր ու հստակ միտքը: Հեղինակը հորդորում է բոլորին Հարսանյաց հանդեսի և մկրտության արարողությունների ժամանակ գերծ մնալ գուսանների դիվական արվեստից, ինչը, անշուշտ, խոսում է այդ արվեստի կենսունակ վիճակի մասին: Ավելին, բերվում է եկեղեցական ԱՅ կանոնը, որտեղ նշվում է նաև եկեղեցու սպասավորների որոշ ներկայացուցիչների կողմից գուսանական արվեստով տարվելու և, հետևաբար, անպարկեշտ վարքի մեջ մեղադրվելու մասին: Եվ վերջապես, նա հորդորում է նաև բարձր դասի ներկայացուցիչներին հեռու մնալ գուսաններից և նրանց պարերից, քանզի դրանք մեղսաշատ են և քրիստոնյային անվայել:

Հովհաննես Երզնկացու Հիմնադրույթներն ու նկատառումները բերեցինք իբրև յուրօրինակ վկայություններ՝ զարգացած ավատատիրության ժամանակաշրջանում հասարակական բոլոր շերտերում (ընդհուպ հոգևոր դասը) գուսանական արվեստի հզոր ներգործուն գերի, զորեղ ազգեցության և կենսակայուն ավանդույթների մասին: Համարժեք հիշատակությունները եզակի չեն հայ միջնադարյան պատմագրության էջերում:

Այսպիսով, անմիջապես հելենիզմի դարաշրջանից ժառանգված և միջնադարում վերահմաստավորված Հոգեւոր արժեքների մեջ հայոց երաժշտական մշակույթի բնորոշչիններից առավել նշանակալիներն, ըստ պատմագրական աղբյուրների, երաժշտական ծիսաբաղդրիչի վերապրուկային դրսերումներից բացի, միջնադարյան մասնագիտացված երգարվեստում իբրև ժանրային, երաժշտամտածողական, երաժշտաարտահայտչական կայուն սկզբունքներ՝ զարգացման նոր ընթացք ստացան:

<sup>161</sup> Յովհաննես Երզնկացի, Էջ 74-99:

Հոգմեոր դասի կողմից խիստ քննադատության և հալածանքի ենթարկված միջնադարյան գուսանական արվեստը, այդուհանդերձ, միջնադարյան պատմագրության մեջ ներկայանում է ոչ միայն կենսակայուն դրսելորումներով, այլև պատմամշակութային զարգացումներին համաքայլ վերընթաց է արձանագրում:

Պատմական գրավոր աղբյուրների համահավաք նյութը հնարավորություն ընձեռեց առավել շոշափելի դարձնելու գուսանական արվեստի հասարակական գործառնության շրջանակները, ինչպես նաև համալրեց գուսանական նվազարանային անսամբլների ու առհասարակ կիրառված նվազարանների տեսականին:

## Գ Լ Ու Խ Գ

### ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԱՂԲՑՈՒՄՆԵՐԻ ՃԱՆԱՋՈՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅ ՄԻԶԱՎԱՐՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԵՐԱԺԵՏՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՄԵԶ

Հայ միջնադարյան մասնագիտացված երգարվեստը հիմնվել է զորեղ երաժշտական ավանդությունների վրա, որոնք իրենց կայուն պայմանաձևերի չնորհիվ լավագույնս փոխակերպվել և զարգացել են քրիստոնեական պաշտոներգության ծխապաշտամունքային համալիրում: Միջնադարյան խազավոր ձեռագրերն առայսօր անվերծանելի են, ինչն առավել կարևորում է մատենագրական այլ աղբյուրներում տեղ գտած փաստերի ճանաչողական նշանակությունը:

Ներկայացվող որորտի հիմնահարցերից հայ միջնադարյան պատմագրության մեջ տեղ են գտել նրանք, որոնք վերաբերում են հայ միջնադարյան մասնագիտացված երգարվեստի ժանրային համակարգին և զարգացման օրինաչափություններին, անհատ երաժիշտների գործունեության և ստեղծագործական ժառանգության ինդիրներին, երաժշտասական խնդիրներին առնչվող կարևոր դիտարկումներին:

Դարերի ընթացքում հայ միջնադարյան մասնագիտացված երաժշտության մեջ զարգացել է ժանրային ուրույն համակարգ, որը՝ խարսխված քրիստոնեական ծխապաշտամունքային արարողակարգի վրա, պաշտոներգության մեջ պայմանավորել է այս կամ այն երգատեսակի թե՛ գործառութը և թե՛ զարգացման կամ փոխակերպման ընթացքը:

Թեև առայսօր հայ երաժշտագիտության մեջ բացակայում է հատուկ հետազոտություն, նվիրված վերոհիշյալ համակարգի զարգացման օրինաչափություններին, այդուհանդերձ արժեքավոր դիտարկումներ դրանց մասին տեղ են գտել Կոմիտասի, Ք. Քուչնարյանի, Ռ. Աթայանի, Ն. Թահմիզյանի, Ա. Արևշատյանի, Ա. Բաղդասարյանի աշխատություններում: Մ.Նավոյանի բնորոշմամբ. «Եթե խնդիրը բարդ է (...) ժանրերի մասնագիտական տարբերակման առումով, ապա այդ ժանրերից յուրաքանչյուրն, իր հերթին, նաև իր ուսումնասիրման բարդությունները կարող է առաջադրել»<sup>162</sup>:

<sup>162</sup> Մ. Նավոյան, նշվ. աշխ., էջ 5:

Խնդիրների հիմնական մասը, ի վերջո հանգում է միջնադարյան խաղաղոր ձեռագրերի վերծանման անհրաժեշտությանը: Միևնույն ժամանակ, մատենագրական տարբեր աղբյուրներում տեղ են գտնել փաստեր, որոնք Հնարավորություն են տալիս ճշգրտել խնդիրների մի որոշակի խումբ: Մասնավորապես, այս կամ այն ժանրի անվանման, գործառույթի, կատարման եղանակի, երգերի հեղինակների մասին: Բնականաբար, այդ փաստերը շարունակ դիտարկվում են հայագիտության մեջ:

Այստեղ փորձել ենք արժեքավորել պատմագրական աղբյուրների գերը հիշալ խնդիրների լուսաբանման գործընթացում, դիտարկելով V-XVդդ. վերաբերող նյութերը: Այստեղ կան գրառումներ, որոնցում հիշատակված են Հայ Հոգևոր երգերի գրեթե բոլոր հիմնական ժանրերի անվանումները, երբեմն՝ առանձին երգերի հեղինակների անունները<sup>163</sup>, ինչպես նաև կատարման և պաշտոներգության մեջ ունեցած գործառույթի մանրամասները: Պատմագրական հիշատակությունները առավել կարևոր նշանակություն են Հանդես բերել Հայ Հոգևոր երգի զարգացման փուլերի բացահայտման և դրանց հաջորդականության պարզաբանման գործում:

Նախ անդրադառնանք հայոց քրիստոնեական պաշտոներգության վաղագույն համագրիստոնեական ժանրերին՝ սաղմոսներին և օրհնություններին:

Սաղմոսներ - Քրիստոնեական պաշտոներգության հնագույն ժանրի հիշատակումները բազմաթիվ են պատմագրության մեջ: Թե՛ եկեղեցական կարևոր արարողություններում և թե՛ հասարակական-քաղաքական այլայլ իրադարձությունների կարևոր մանրամասների նկարագրություններում սաղմոսերգությունը ամենազործուն բաղկացուցիչ տարրն է ներկայանում: Սկսած վաղ միջնադարից սաղմոսը, որպես գողտրիկ մի երգ հասարակական աղոթքի կարևորագույն մասն է կազմել:

Եղիշեն բազմաթիվ նկարագրություններում բերում է վառ օրինակներ. Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ հոներին հաղթելուց հետո Հայ զինվորներն իրենց ուրախությունն արտահայտում են

<sup>163</sup> Անք այդ տվյալներին անդրադարձել ենք հատուկ Հոդվածում: Տես՝ Հ. Ատեգիսյան (Հարությունյան), «Անհատ երաժշտաների մասին հիշատակությունները Հայ պատմագրության մեջ», ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.4, Գյումրի, 2001, էջ 122:

սաղմոսելով. «Եւ գայս սաղմոսա երգելով մինչև ի վախճան կատարեալ փառատրութիւն սուրբ Երրորդութեան մատուցանէին» (Հ. 25, 33): Տիզբոնում գտնվող Հայ ներկայացուցիչները բանակի առջև կատարում են հասարակական աղոթք և սաղմոսում են (Հ. 23): Ավարայրին Հաջորդած մթնոլորտը բնութագրվում է այսպես. «սաղմոսք էին նոցա մրմոնջք երգոց» (Հ. 28): Պատմագրական համարժեք վկայությունները բազմաթիվ են (Հ. 30, 32, 33, 107, 124): Եվ պատահական չէ, որ Հայ մշակույթի պատմության մեջ պարբերաբար տեղի ունեցող բարենորոգչական շրջափուկերում հատուկ ուշադրություն է դարձել սաղմոսերգության պատշաճ կատարմանն ու սաղմոսների մեկնությանը: Մասնավորապես, Սամուել Անեցին գրում է, որ Գրիգոր Տղան իր ուսումնառության բարձրակետում գրել է «զքննութիւն երգոց սաղմոսին» (Հ. 146):

Հայ եկեղեցու հոգևոր հայրերը մշտական հոգածություն են տածել պաշտոներգության մեջ սաղմոսների կանոնական կատարման և դրանց ձայների ու եղանակների անաղարտության պահպանման համար. «Իրահամարձակք ոմանք իմացմամբ տարագրեցին գուղիղն և զուղղորդն: Նայ և բազում անգամ վիճին, ոմանք ի նըւագելն զսաղմոսս», - գրում է XIII դարի հիշատակագիր Հովհաննես Գառնեցին (Հ. 207): Մեկ այլ հիշատակարանում ասպում է, որ բարեկարգված եկեղեցում արեղան պատշաճ ձևով «սաղմոսն երգէ իւր ընկերօքն» (Հ. 292, 334): Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական»-ում մանրամասն նկարագրվում է Հայ եկեղեցում կատարվող Ննջեցելոց կարգը և իբրև կարևոր բաղադրիչ հիշատակվում է սաղմոսների կանոնական կատարումը. «և երգեսցեն զգրեալ սաղմոսն և զպաշտամունս» (Հ. 352):

Օրհնություններ - ժանրը ստեղծվել է քրիստոնեական ծիսերգի ձևավորման հնագույն շրջանում և իր ծագումնաբանությամբ խորանում է պաշտամունքային արարողակարգերի վաղնջական շերտերի մեջ: Անցել է զարգացման տարբեր փուլեր՝ շարականերգության էվոլյուցիային Համընթաց: Հայ հոգևոր երգարվեստի արշալույսին առավել կարևոր նշանակություն են ունեցել սաղմոսները, որոնց կցվել են համապատասխան մարգարեական օրհնություններ: Որոշ հիշատակություններում դրանք այդպես էլ կոչվում են. «սաղմոսիւք և մարգարեական երգօք օրհնելով զպարգևաստուն Քրիստոս» (Հ. 30):

Դրանք կատարվել են ոչ միայն նոր ձևավորվող ժամերգության, այլև ամենաստարբեր հանդիսությունների ու արարողությունների ժամանակ, որպես Հասարակական աղոթքի մաս՝ մկրտության (Հ. 12), նավակատիքի և Հատկապես Հուղարկավորության արարողակարգում՝ սաղմոններին կից (Հ. 3, 4, 19, 20, 77, 78):

**Ըստ Մ. Աբեղյանի՝ «Եկեղեցական բանաստեղծությունն ամենից առաջ օրհներգություն է, որ ընդհանուր եկեղեցու մեջ ծնված և զարգացած է քրիստոնեական աստվածապաշտությանը հանդիսավորություն տալու համար»<sup>164</sup>:**

Օրհնության ժանրի գործառույթը սկզբից ևեթ պայմանավորել են երկու կարևոր գործոններ:

Կարեռագույնն անտարակույս նոր՝ քրիստոնեական գաղափարա-աշխարահայեցակարգն էր՝ հիմնված տիրոջն ուղղված օրհնանք-բարեմաղթանքներով: Մյուս կարևոր գործոնը, որը կենսական աղդակ է հանդիսացել օրհնության ժանրի գործառույթում՝ իմաստաբանական հատկանիշն է և առհասարակ պաշտամունքային սկզբը:

Օրհնությին, օրհնանք, օրհնել բառերի արմատը, ըստ Հ. Աճառյանի, ծագում է պահավերեն *africam* – օրհնեմ, գովեմ ձևից<sup>165</sup>: Այսինքն օրհնության համարժեքը գովաբանությունն է:

Մաղթանք բառը, որը նոյնպես շաղկապում է օրհնությանը, ստուգաբաննվում է իբրև աղոթք, աղաչանք, խնդրվածք<sup>166</sup>:

Օրհնանքների և մաղթանքների բանահյուսական նմուշների պատմաբանական քննությունը ցույց է տվել, որ անկախ որոշ ժամանակային բնորոշչներից, գրանք իրենց ծագումով շատ հին են և կրում են վաղնջական մշակութային արժեքներ: Կարծում ենք, Հնարավոր է ենթադրել, որ քրիստոնեական օրհնություն-բանաձևերի հորինվածքային սկզբունքներում հինավորց օրհնանք-մաղթանքների աղդեցությունը որոշակի գեր է կատարել: Նկատենք, որ վաղնջական ծագում ունեցող օրհնանք հմայախոսքերը անտարրանջատ միասնություն են կազմել համարժեք մեղեղի բանաձևերի հետ: Օրհնության ժանրի գործառույթի երկու կենսական գործոններն էլ հաստատում են այս միասնականության ավանդականությունը:

Թովմա Աքծրունու Պատմության մեջ ասվում է. «...պաշտոնեայքն կատարէին զտէրունական կանոնն, և երաժշտականքն երգս առեալ զհաղթութեանն

<sup>164</sup> Մ. Աբեղյան, Երկեր, Հ. Գ., Եր., 1968, էջ 527:

<sup>165</sup> Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Հ. VI, Եր., 1932, էջ 164:

<sup>166</sup> Նոր բառգիրք, Հ.Բ, էջ 1080:

Փարաւոնի...: Եւ այլք զցաւղածին օրհնութիւն հնոցին երգին, ի վերուստ կոչել զօրավիզն զհրեշտակ Աստուծոյ» (Հ. 86):

Միջնադարյան գրավոր աղբյուրները հաստատում են օրհնության ժանրի կենսունակությունը: Այսպիսով, ծագումով խորանալով վաղնջական մշակութային շերտերի մեջ, օրհնությունը վերաիմաստավորվել է քրիստոնեական պաշտոներգության համակարգում, ամենայն հավանականությամբ մինչև գրերի գյուտը՝ անցնելով բանավոր ավանդման մի կարևոր շրջափուլ և նպաստել է հայ քրիստոնեական ծիսերգի կարևոր հորինվածքային առանձնահատկությունների ձևավորմանը: Այս եզրակացությունը վերստին ամրապնդվում է Մ. Օրմանյանի այն արժեքավոր դիտարկումով, ըստ որի օրհնությունների «այն թարգմանությունները, որ նախատեսված է սաղմուներին կցել, բառացիորեն նույնը չէ Աստվածաշնչում կարդացված թարգմանության հետ: (...) Այդ տարբերությունը հաստատում է մեր այն կարծիքը, որ Մ.Գրքի աղոթական մասերը ժողովրդական կիրառության համար արդեն IV դարում թարգմանված և գործածական է եղել, և այդ թարգմանությունը պահպել է ժամանակքի սաղմուներում, մինչդեռ V դարի Աստվածաշնչի թարգմանիչները իրենց հերթին նույն մասերը նորից թարգմանեցին Աստվածաշնչի ամբողջության մեջ, բայց այս թարգմանությունը աղոթականի կիրառություն չգտավ և մնաց Աստվածաշնչի հատորներում»<sup>167</sup>:

Նույն մաքին է միտված նաև Կոմիտասի հանրահայտ դրույթն այն մասին, որ մինչդրավոր շրջանում էլ ժողովրդով երգում էր՝ հիմնվելով երաժշտական սեփական գարավոր վործի վրա<sup>168</sup>:

Իրենց ծիսական հատկանիշներով օրհնությունները կարող էին կրել նաև այն մեղեղային ուրվապատկերները, որոնք նպաստելու և կամ ազդեցու էին վաղմիջնադարյան ձայնեղանակային մտածողության և հատկապես սկսվածքների ոճական ազգային ինքնությանը: Սաղմուներին սերտաճած օրհնությունները մեղեղային հակակշիռ էին

<sup>167</sup> Մ. Օրմանյան, Ծիսական բառարան, Եր., 1992, Էջ 160:

<sup>168</sup> Կոմիտաս, Հոգվածներ և ուսումնամիություններ, Եր., 1941, Էջ 105:

ներկայացնում և, փաստորեն, կցուրդների հորինվածքային ձևավորմանը նույնպես պետք է առնչվեին<sup>169</sup>:

Քրիստոնեական պաշտոներգության համաքրիստոնեական ժանրերը հետագայում խթանեցին ազգային նոր երգատեսակների զարգացումը:

Հայագիտության մեջ միահամուռ չի եղել հայ ինքնուրույն հոգևոր երգերի ստեղծման ստույգ ժամանակաշրջանի ճշգրիտ որոշումը: Որոշ հետագոտություններում միջնադարյան գրավոր աղբյուրները, այդ թվում նաև պատմագրությունը, թերահավատորեն են գնահատվել, երբեմն՝ ամողջությամբ անտեսվել: Այդպիսի մոտեցում է ցուցաբերվել հատկապես Հայոց ինքնուրույն հոգևոր երգերի ստեղծման ժամանակաշրջանը որոշելիս: XX դարասկզբին Դ. Խաչինցը պնդում էր, որ այդ ժամանակաշրջանը VI դարն է, և իբրև փաստարկ բերում էր միայն Սահակ Պարթևի գրած Գ կանոնը (Սոփերք ԼԲ), որտեղ հիշատակվում է միայն սաղմոսերգության մասին<sup>170</sup>: Ն. Տեր-Միքայելյանը հիշյալ ժամանակաշրջանը հասցնում է մինչև IX դար<sup>171</sup>: Երկու հեղինակներն էլ մերժելով շարականների հեղինակների ցուցակները, լիովին անտեսել են պատմագրության տվյալները, կամ էլ փատահություն չեն ցուցաբերել դրանց հանդեպ:

Արդարեւ, Հայոց ինքնուրույն հոգևոր երգերի ստեղծմանը և զարգացմանն առնչվող խնդիրները հնարակոր չէ պարզաբանել՝ շրջանցելով գոյություն ունեցող աղբյուրների բաղդատական համապարփակ վերլուծությունը:

Այն աշխատությունները, որտեղ առկա է այդպիսի վերլուծությունը, ցույց են տալիս, որ դիտարկված աղբյուրների համակարգում անփոխարինելի տեղ է զբաղեցնում պատմագրությունը, որն իբրև գիտական կողմնորոշիչ, ունակ է Շարակնոցների, տարբեր մեկնությունների և այլ օժանդակ աղբյուրների տվյալները լրացնելու և ճշտելու: Հայոց ինքնուրույն հոգևոր երգերի գոյության փաստը, որը կապվում է անմիջաբար գրելի գյուտափի հետ, Հայագիտության մեջ վերագր-

<sup>169</sup> Հ. Սոփերանյան, Որոշ դիտարկումներ օրհնության ժանրի մասին, «Մանրառում» միջազգային երաժշտագիտական տարեգիրք, Հ.Ա., Եր., 2002, Էջ 148:

<sup>170</sup> Գ. Խաչինց, Հայոց կրոնական բանաստեղծությունը, Թիֆլիս, 1904, Էջ 23:

<sup>171</sup> Գ. Հակոբյան, Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ, Եր., 1980, Էջ 20:

վում է V դարի պատմիչ Ղազար Փարպեցու Պատմության Հետևյալ Հիշատակությանը. «Եւ անտի եկալ ի գովս սրբոյ հայրապետին Հայոց Սահակայ զգործ մեծ Հոգևոր վաստակոյն՝ կարգեցան վաղվարակի յայնըմհետէ դպրոցք հօտին ուսմանց. բազմացան դասք գրչաց, ելեելս առնելով զմիմեամբք. զարդարեցան պաշտամունք սուրբ եկեղեցւոյ. յորդորեցան բազմութիւնք արանց և կանանց ժողովրդոց ի տոնս Փրկչին և ի ժողովս մարտիրոսաց: Որք շահեալք լի Հոգևոր օգտիւ՝ ընթանային խնդալիցք ի հաղորդմանէ մեծի խորհրդոյն, արձակեալք յիւրաքանչիւր ի տունս, մեծամեծք և տղայք, սաղմոսելով և կցորդս ասելով ընդ ամենայն տեղիս, ի հրապարակս և ի փողոցս և առանին» (Հ. 32): Սաղմոսների հարասությամբ ստեղծված կցորդները, որոնք հանդիպում են նաև կցուրդ անվանաձևով, կոչված էին դարեր շարունակ կրելու ազգային ինքնատիպ արժեքներ:

Ժանրի անվանումի առնչությամբ կատարենք հետևյալ դիտարկումը: Պատմագրական աղբյուրներում գերակշռում է կցորդ անվանաձևը (Հ. 32, 133, 157, 205): Անտարակույս, դա բխում է ժանրի ծագումից և գործառույթից, այն է՝ սաղմոսին կից երգվող, կցողող: Այս առումով, կցորդը կարելի է համարել առավել ճշգրիտ: Առաջ անցնելով նշենք, որ չնայած հետագայում Շարակնոցում վերադասավորված կցորդները վերանվանվեցին շարականների, այդուհանդերձ, դրանց նախնական անվանաձևը պահպանեց գործառույթը՝ նույնիսկ զարգացած ավատատիրության շրջանում: Այսպես. XIV դարի պատմիչ Ստեփանոս Օքբելյանը հիշատակում է «երգեաց և կցորդս քաղցրահամս» (Հ. 173, 174, 245): Հաստ Մ. Աբեղյանի, կցորդ անվանումը վերագրելի է նաև մի քանի կից սաղմոսների կատարման կերպին: Հեղինակը դա փաստարկում է որոշ գրավոր աղբյուրներում հանդիպող կցորդ սաղմոս բառակապակցության առկայությամբ<sup>172</sup>:

Այն, որ կցորդ կամ կցուրդ անվանումը վերագրելի է նաև ինքնուրուցին հոգևոր երգերին, խոսում է այն փաստը, որ պատմագրական շատ հիշատակություններում սաղմոսների և օրհնությունների կողքին նշվում է նաև հոգևոր երգ անվանումը: Այսպես, V դարում Տիգրոսում գերեվարված հայորդիների կատարած պաշտոներգության մասին Եղիշեն գրում է. «սկըսան այնուհետև բարձր բարբառով սաղմոսիւք և երգօք

<sup>172</sup> Մ. Աբեղյան, Երկեր, Հ. 9, Եր., 1968, էջ 533:

Հոգևորօք և մեծապայծառ վարդապետութեամբ յայտ յանդիման մեծի բանակին պաշտօն ցուցանել» (Հ. 13, 23, 67):

Պատմագրական աղբյուրներում տեղ են գտել նաև այնպիսի փաստեր, որոնց չնորհիվ որոշակի պատկերացում է ստեղծվում հայ հոգևոր երգերի վաղմիջնադարյան զարգացման ընթացքի վերաբերյալ: Սկիզբն, անշուշտ, Սահակ-Մեսրոպյան դպրոցի ներկայացուցիչների գրական-երաժշտական վաստակն է, որի անզուգական նկարագիրը բերված է Կիրակոս Գանձակեցու Պատմության մեջ. «Արարին և երգս շարականաց քաղցր եղանակաւ և մեծ խորհրդով ծննդեան Քրիստոսի և քառասնօրեայ գալստեանն ի տաճարն, մկրտութեան և եկաւորութեանն ի Բեթանիա և յերուսաղէմ, մեծի շաբաթուն չարչարանացն և յարութեանն, համբարձմանն և Հոգվոյ գալստեանն, խաչի և եկեղեցւոյ, և այլ տօնից տերունականաց, և սրբոց ամենեցուն, ապաշխարութեան և ամենայն ննջեցերոց, պէսպէսս և զանազանս և անթիւս, որ մինչև զայսօր պաշտի յեկեղեցիս Հայաստանեայց» (Հ. 154): Թեև այստեղ առաջին երաժշտապետերին շատ ավելին է վերագրված, քան իրականում նրանք ստեղծել էին տվյալ ժամանակաշրջանում, սակայն, ակնհայտ է քրիստոնեական կարևոր տոններին համապատասխան ծիսերգերի գոյության անառարկելի փաստը:

Վաղմիջնադարյան պաշտոներգության բարեկարգման մասին է նաև Կիրակոս Գանձակեցու մեկ այլ արժեքավոր հիշատակությունը՝ Հովհանն Մանդակունի կաթողիկոսի գործունեության մասին. «Սա բազում կարգաւորութիւնս եմոյծ յեկեղեցի՝ կարգեաց քարոզս աղուհացիցն և զաղօթս նոցա զերրորդ ժամուն և զիեցերորդին և զիններորդին, և զեկեղեցոյ Հիմնարկեքն և ժամանակի և սկիհի և մաղղմայի, և գիրք, և կնունք, և խաչ օրհնել և պասակ» (Հ. 155):

Հայ հոգևոր երգերի զարգացման որոշակի փուլի մասին են Կիրակոս Գանձակեցու և Վարդան Արևելցու հիշատակություններն առ այն, որ արդեն VII դարում եկեղեցական տոններին նվիրված երգերի առատության չնորհիվ անհրաժեշտություն էր առաջացել դրանք մեկ միամնական ժողովածուի մեջ խմբավորելու համար, ինչը և ստեղծվում է Շիրակի Դպրեվանքում (Հ. 158, 164, 150):

Կարգ, շարք կամ կանոն - Հայ հոգևոր ենաժշտության զարգացման մյուս կարևոր հանգրգանը կարգի կամ կանոնի ժանրի ձևավորումն ու հաստատումն էր պաշտոներգության մեջ: Պատմա-բանասի-

րական և երաժշտագիտական հետազոտություններում պատմական կարևորագույն աղբյուր են դիտվել Կիրակոս Գանձակեցու և Ստեփանոս Օրբելյանի Հաղորդումներն այն մասին, որ Հայ Հոգևոր երգերի կանոնակարգումը առանձին երգաշարերի մեջ կատարել է Ստեփանոս Սյունեցին՝ VIII դարում. «բաժանեաց և զութն ձայնան և կարգեաց, շարեաց զյարութեան օրհնութիւնսն, երգեաց և կցուրդս քաղցրահամս, յարմարեաց և զստողոգին յինանց եօթն եղանակօք յոյժ խորհրդաւոր, և զպահոցն որ յաղուհացմն երգի» (Հ. 173, 160): Այսպիսով, երգերը կարգելով և շարելով, Սյունեցին ձևավորել է մի նոր ժանր: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ նա ուսանել է Աթենքում, որտեղ նույն ժամանակաշրջանում ստեղծվել է կանոնի ժանրը, ենթադրվել է, որ Սյունեցին էլ այդ ժանրը ներմուծել է Հայոց պաշտոներգության մեջ:<sup>173</sup>

Դեռևս Մ. Աբեղյանը կանոնի ժանրին անդրադառնալով, միմյանց համադրել է նաև կարգ և սարք անվանաձևերը, ինչը տակալին ակնարկված է նաև Ստեփանոս Օրբելյանի վերոհիշյալ վկայության մեջ: Այս ժանրին վերաբերող պատմագրական հիշատակությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կանոն անվանաձևը սակավ է գործածվում: Որոշ տեքստերում կանոնը մեկնաբանելի է իբրև առհասարակ քրիստոնեական պաշտոներգություն, արարողակարգ: Օրինակ. «Պաշտոնեայքն կատարէին գտէրունական կանոնն» (Հ. 86, 101, 147): Ծիսական երգաշարի գոյությունը հավաստող առավել կիրառելի անվանաձևը պատմական հիշատակություններում շարականն է:

Բաղդատելով տարբեր համատեքստերում այս անվանաձևի միմյանց համարժեք իմաստային նշանակյալները, կատարել ենք հետևյալ դիտարկումները.

ա) շարականը ներկայանում է իբրև երգերի շարք. «Սա արար բազում երգս շարականաց» (Հ. 144), «Ես նուաստ Ստեփանոս ստացագաստուածայիփառ կտակս, որ կոչի երգ շարականաց» (Հ. 223, 154, 158): Այս համատեքստերում շարական անվանաձևը շարքի, այսինքն կանոնի համարժեքն է:

բ) շարականը ներկայանում է իբրև շարքի երգ. «Երգեաց շարական հարցին» (Հ. 159, 158, 164), «գրեաց մինչև Որոտմանցն շարականն» (Հ. 229):

<sup>173</sup> Ռ. Աթայան, նշվ. աշխ., էջ 74:

Իբրև պատկերավոր անվանումներ կարելի է համարել ձեռագիր հիշատակարաններում հանդիպող հետեւյալ արտահայտությունը. «Գրեցաւ եղանակաւոր տառա, որ կոչի Շարակնոց, զի են ի շար ակունք» (Հ. 343):

Ի վերջո, մեծաքանակ հիշատակություններում շարական ժանրի անվանումը փոխարինված է երդ կամ հոգեւոր երդ անվանումներով: XV դարում գրված մի Շարակնոցի հիշատակարանում ասվում է. «Ո՞վ ընթերցողք, յորժամ երգէք զայս երդ աւրհնութեան, աստուած ողորմի մեզ՝ գծողիս և ձեզ՝ ողորմացողացդ, ամէն» (Հ. 151, 201, 313, 317, 348):

Պատմագրական փոքրաթիվ հիշատակություններում հանդիպում են նաև շարքի առանձին երգերի անվանումները. «Եթէ ծանեաք յերգս ձեր և օրհնութիւնս՝ որ է շարականքդ» (Հ. 353), «Երգեաց շարական հարցին» (Հ. 159, 158, 164), «Քանզի նորա է ... Պետրոսի և Պողոսի օրհնութիւնն, և մանկունքն և համբարձին ... և երկու շարական յարութեան ճաշոյ» (Հ. 162): Այս հիշատակությունները մի կողմից փաստում են Հայ Հոգեւոր երգի կերտման ընթացքը, մյուս կողմից խոսուն վկայում են դրանց ազգային տիպական բնորոշիչների մասին: Նմանատիպ վկայությունները լավագույնս նպաստել են երաժշտագիտության մեջ Հայ Հոգեւոր երգարվեստի թե՛ վաղմիջնադարյան և թե՛ զարգացած ավատատիրության շրջանում զարգացման փուլերի հաստակեցմանը<sup>174</sup>:

Տաղեր, գանձեր - X-XVդգ. հիշատակություններում երգերի, կրցուրդների և շարականների կողքին Հաճախ նշվում են տաղեր, մեղեղիներ, գանձեր. Ժանրեր, որոնք աստիճանաբար հոգեւոր երգաստեղծության մեջ պետք է ներմուծեին հեղինակային վառանհատական ոճական գծեր, ընդայնելով նեղ կանոնական օրինաչափությունների սահմանները. «արար երգս բազումս սուրբ եկեղեցւոյ, գանձս և տաղս և շարականս» (Հ. 190), «Եւ բազում երգս գանձուց և տաղից յիշատակ թողեալ ինքեան» (Հ. 182), «Վասն զի զարդարէր զեկեղեցիս Հայոց յայսմաւուրօք, կորուսեալ ճառիւք, գանձիւք, տաղիւք» (Հ. 183), «որպեսզի ուրախասցին սովաւ Հանապազմանկունք սուրբ եկեղեցւոյ Համեղաբան գանձիւքն և քաղցրեղանակ մեղեղաւքն և տաղիւքն» (Հ. 294):

<sup>174</sup> Ն. Թահմիպան, Գրիգոր Նարեկացին և Հայ երաժշտությունը V-XVդգ., Եր., 1985, էջ 19:

Ինչպես այս օրինակներում, այնպես էլ Հիշատակությունների Հիմնական մասում գանձերն ու տաղերը միասին են ներկայացվում: Մասնագիտացված երգարվեստի գարգացման բարձրագույն փուլում տաղերգությունն ու գանձերի արվեստը հարակից բարձրարժեք կոթողներով են ծաղկել: Գրավոր աղբյուրներում դրանք համարժեք պատկերավոր բնութագրեր ունեն. «Երգեր և գերգս տաղից քաղցրանուագ եղանակաւը յիմաստաբանի դաշնակեալի տօնս տէրունի» (Հ. 191), «գանձ ու տաղիւ բազմագունի» (Հ. 280, 294, 322, 191):

Մեղեղի - Հաճախ այս ժանրերի Հիշատակումներում միանում է նաև մեկ այլ անվանում՝ մեղեղի. «Համեղաբան գանձիւքն և քաղցրեղանակ մեղեղաւքն և տաղիւքն» (Հ. 294, 322, 303, 133):

Հասուկ ուշադրություն է գրավում Հիշատակությունների ջերմ անմիջականությամբ տողորված ժանրային բնութագրերը, որոնցից շատերը ուղղակի ակնարկում են անզուգական հոյակերտ մեղեղային հորինվածքները.

«Երգս ներածէ փառատրելի

Եղանակօք ախորժելի» (Հ. 367):

«Եւ հոգեոր երգովք և քաղցրանուագ եղանակաւը վայելչացուցանէր-Պահպանվել են նաև Հիշատակությունների ալելուների մասին: Սրանք, ինչպես և մեսեղիները միջերգեր էին, որոնք երգում էին ծանր՝ տոն օրերին և սաղմոսատիպ՝ հասարակ օրերին (Հ. 172, 224):

«Գետք» կոչված Շարակնոցում զետեղված գիշերային ժամերգության ժամանակ կատարվող ալելուները հետաքրքիր մանրամասներով է ներկայացրել Ստեփանոս գրիչը: Շարակնոցի ինքնատիպ կառուցվածքին վերաբերող նկարագրության մեջ Հիշատակված են նաև «ութ ձայնի ալէլուքն՝ իւր սարոքն»:

Ինչպես նկատելի է, հայ միջնադարյան պատմագրության մեջ կարերվել են ոչ ծավալուն տեղեկություններ հայ հոգեոր երգերի առանձին տեսակների մասին՝ մեծ մասամբ դրանց հեղինակներին

<sup>175</sup> Կարապետ Սասնեցի, Ներբողեան յաղագս վարուց սրբոյն Սեսլորայ, Արարատ, 1897, էջ 379:

Հիշատակելու հետ զուգընթաց: Ցավոք, չափազանց փոքրաթիվ են այն տպյալները, որոնք առնչվում են Հայոց պատարագամատուցի երաժշտական բաղադրիչներին: Բնականաբար, պատմագրության ժանրային բնորոշիչներից եկող Հանգամանք է սա: Որևէ նշանակալի առիթով կատարված Պատարագի արարողության առիթով Հիշատակվում են միայն սաղմոսներ և օրհնություններ: Միայն Ներսես Շնորհալու գործունեությանը վերաբերող անդրադարձներում կարևորվում է նրա վաստակը Հայոց պատարագամատուցի բարեկարգման, այդ թվում նաև երաժշտական բաղադրիչի Համալրման մեջ. «Արար գքարող սրբոյ պատարագին քաղցր եղանակաւ» (Հ. 162):

Ի վերջո, նշենք նաև այն բազմագամակ Հիշատակությունների մասին, որտեղ Հոգևոր երգարվեստի նմուշները ներկայացված են պարզապես երգ անվանումով (Հ. 102, 117, 147, 354, 361, 364): Միջնադարյան մատենագիրները Հայ Հոգևոր երգը մշտապես ընկալել, ներկայացրել և բնութագրել են իբրև աստվածային կատարյալ շնորհի արգասիք և կարևորել են Հոգևոր երգասացության պատշաճ տեղն ու դերը Հայ եկեղեցու պաշտամունքային Համալիրում:

Դիտուրկելով Հայ միջնադարյան պատմագրական աղբյուրներում երաժշտա-պատմական գործընթացին առնչվող վերոհիշյալ տվյալները, նախ կարևորում ենք այդ աղբյուրներում դրանց առկայության փաստն իսկ, այն է՝ պատմական իրադարձությունների նկարագրություններում, իբրև մշակութային հիշարժան փաստեր և կարևոր արժեքներ, նաև Հոգևոր երգարվեստին առնչվող տվյալների ընդգրկումը: Այս իրողությունը Հայ միջնադարյան մշակութում հոգևոր երգարվեստի նշանակալի դերի և այդ արվեստում ազգային անգնահատելի արժեքների գոյության լավագույն վկայությունն է: Ավելին, պատմագրական այս տվյալները բացառիկ կարևոր նշանակություն են Հանդես բերում երաժշտական միջնադարագիտության գրավոր աղբյուրների Համակարգում:

Հայ միջնադարյան մշակութային մթնոլորտում մասնագիտացված երգարվեստը զարգացել է մի կողմից խիստ կանոնակարգված օրինաչափությունների հիմքով, մյուս կողմից՝ անհատական արվեստին պատշաճ բնորոշիչներով: Միջնադարյան երաժշտը մեկ անձի մեջ Հաճախ միավորել է և հեղինակին և՝ կատարողին: «Իժբախտաբար, - գրել է Մ. Աբեղյանը, - մեր Հոգևոր երգերի հեղինակները մեծմասամբ անհայտ են. մենք չգիտենք, թե մեր որ երգն ումից և երբ է գրված: Սակավաթիվ ծանոթու-

թյուններն այդ մասին XIII դարից են գալիս, կամ երգերի ժողովածուների՝ Շարակնոցների մեջ գրված տեղեկություններն են, որոնք նույնպես շատ հին չեն, որովհետև Շարակնոցի շատ հին ձեռագիր չունեինք»<sup>176</sup>:

Ավելին, Շարակնոցներում տեղ գտած հեղինակային տարանշումները հանգեցրել են դրանց հիմքում լոկ ավանդություն դիտելու տեսակետին: Շարականագիտական մի շարք աշխատություններում մատենագրական այլ աղբյուրների օժանդակ տվյալների հիման վրա բացահայտվել են այդ ավանդությունների ճշմարտացիության կարևոր կողմեր: Այստեղ պատմագրությունը մի արժեքավոր աղբյուր է, որը նաև կողմնորոշիչ դեր ունի: Հայ պատմագիրները անդրադարձել են անհատ երաժշտների գործունեությանը, երբեմն՝ շատ հպանցիկ, սակայն կարևոր տեղեկատվությամբ: Դրանց մեջ երբեմն հիշատակվում են նաև կոնկրետ ստեղծագործությունների անվանումներ, որոնք ավելի շոշափելի են դարձնում հայ միջնադարյան երգահանների ստեղծագործական ժառանգության մասին մեր գիտանքը և ներկայանում են իբրև լուրջ կույաններ՝ գրավոր այլ աղբյուրների համալիրում:

Անդրադառնանք առաջին խմբի վկայություններին ու հիշատակություններին: Դրանց մեծ մասը վերաբերում է Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի երաժշտական գործունեությանը, որ նրանք ծավալել են գրերի ստեղծումից հետո: Ճիշտ է, պատմագրական տեղեկությունները մասնավորեցված չեն, սակայն ընդգրկում են լայն տեսագաշտ՝ ներգրավելով նաև նրանց գործունեության երաժշտական կողմը: Դրանց մի մասը վերաբերում է գրերի գյուտից հետո Մաշտոցի ու Սահակի թարգմանչական աշխատանքներին, մյուս մասը՝ նրանց մանկավարժական գործունեությանը: Անշուշտ, վկայությունների առաջին խումբը պետք է բնութագրել ավելի լայն իմաստով, քանի որ թարգմանչական աշխատանքը վերաբերել է քրիստոնեական ողջ ծիսակարգի հայացմանը: Կորյունի վկայությամբ, Աստվածաշունչը թարգմանվել է Մաշտոցի ու Սահակի համատեղ աշխատանքով՝ «ի ձեռն

<sup>176</sup> Մ. Աբեղյան, Երկեր, Հ.9, Եր., 1969, էջ 527-528:

երկուց հաւասարելոց»<sup>177</sup> կամ ավելի ստույգ նրանց դեկավարությամբ<sup>178</sup>:

Այս վկայությունները հաստատում են, որ երկու նշանավոր գործիչները անմիջականորեն մասնակցել են նաև հայոց եկեղեցու բարենորոգչական աշխատանքներին: Ղազար Փարափեղին Սահակ Պարթևի գործունեության արգասիքն է համարել զարդարված եկեղեցական արարողությունները (Հ. 32): Այլ արժեքավոր վկայություններով էլ հավաստվում է Մեսրոպ Մաշտոցի ու Սահակ Պարթևի մանկավարժական գործունեությունը: Հատ Կորյունի՝ «Անդ էր այնուհետև չարբենալ գինւով, այլ առաւելով հոգով և պատրաստել զսիրտս երգովք հոգեւորօք, ի փառս ի գովութիւն Աստուծոյ» (Հ. 2):

Այստեղից ակներև է դառնում երգ-երաժշտության ունեցած արժանի տեղը ժամանակի կրթական համալիրում: Մաշտոցի ու Սահակի ջանքերով հիմնադրվել են հայոց այն վարդապետարանները, որոնք ավելի ուշ՝ հատկապես զարգացած ավատատիրության դարաշրջանում լի են եղել փիլիսոփա երաժիշտներով, և որտեղ, սկսած VI դարից, դասավանդվել են եռյակ և քայլակ գիտությունները (Հ. 111, 118):

Պատմագրական վկայությունները լիովին հավաստում են, որ V դարի սկզբում հայոց քրիստոնեական ծիսակարգի բարեկարգումը դեկավարել են Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը: Մասնակցել են արդյոք երկու մեծ գործիչները ծիսակարգի երաժշտության բարեկարգմանը: Այս մասին ուղղակի հիշատակություններ կան, ինչպես, օրինակ, «Մաշտոց» ծիսարանին կցվող օրհնություններ ցուցակը, որի մեջ վավերագրորեն հիշատակված են թե որ տարում, ում հանձնարարությամբ և ում կողմից են Հայաստան բերվել ու թարգմանվել եկեղեցու հայրերի կազմած ծիսական կանոնները<sup>179</sup>:

Այդ տեսակետից բացառիկ արժեք է ներկայացնում նաև Ղազար Փարափեցու այն տեղեկությունը, որ Սահակ Պարթևը «եղեալ կատարելապես հմուտ երգողական տառիցն» (Հ. 31): Հայագիտության մեջ որոշ ժամանակ երգողական տառից արտահայտությունը դիտվել է երաժշտա-

<sup>177</sup> Կորյուն, Վարք Մաշտոցի, Եր., 1941, էջ 27-29:

<sup>178</sup> Ղազարայ Փարափեցու Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան (այսուհետ՝ Ղազար Փարափեղի), Տիգիս, 1904, էջ 28-29:

<sup>179</sup> Այդ մասին մանրամասն տես Ա. Արևշատյան, «Մաշտոց» ժողովածուն որպես Հայ միջնադարյան երաժշտական մշակույթի հուշարձան, Եր., 1991, էջ 19-21:

կան տառերի իմաստով։ Հստ Մ.Աբեղյանի՝ «որ Սահակ Պարթևը կատարելապես հմուտ է եղել «երգողական տառիցն» կնշանակի՝ իրական հիմք ունի շարակնոցի հաղորդումը, թե «նախ սուրբ Սահակ և Մեսրոպ ասացին եղանակավոր ձայնն», հավանորեն և այն, որ նրանք հեղինակ են եղել կցուրդների»<sup>180</sup>։

Շարակնոցի և մատենագրական այլ աղբյուրների տեղեկություններին դեռևս կանդրադառնանք։ Այժմ նշենք, որ Հետագայում երգողական տառերի համակողմանի քննությունը բերել է այն եղբահանգմանը, որ խոսքը վերաբերել է ձայնավոր տառերի քերականական ուսմունքին, որին կատարյալ տիրապետել է Սահակ Պարթևը, ինչպես նաև, ըստ Ն. Թահմիզյանի՝ ընդհանրապես երաժշտարվեստի Հարցերին<sup>181</sup>։ Այս առումով «խոսուն է նաև Ղազար Փարպեցու «տեղեկացեալ փիլիսոփայական արուեստիցն» արտահայտությունը։ Հայտնի է, որ միջնադարում փիլիսոփանն նաև երաժիշտ-երգահանի կոչումն է եղել։ Հիշենք Ներսես Շնորհալու այն արտահայտությունը, թե «ունիմք սովորաբար փիլիսոփայ ասել որք յերաժշտական արհեստ կատարեալք են»<sup>182</sup>։ Ղազար Փարպեցու հիշատակությունը թույլ է տվել Սահակ Պարթևին դիտելու որպես ժամանակի նշանավոր երաժիշտ գիտնականներից մեկը։

Այժմ անդրադառնանք Մեսրոպ Մաշտոցի երաժշտական գործունեությանը նվիրված հիշատակություններին։ Նշենք, որ դրանք վերաբերում են ավելի ուշ շրջանի։ XIII դարի մատենագիր Կարապետ Սասնեցին Մաշտոցին բնութագրում է գուտ երաժշտական բնորոշչներով (Հ. 370, 371)։ Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի երաժիշտ լինելը առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում այն դիտական կարծիքի հիմնավորման համար, որի համաձայն՝ երկու մեծերի գործունեության արգասիքն է համարվում ձայնեղանակների ՈՒթձայնի համակարգումը։ Այս տեսակետից հետաքրքիր աղբյուրներ են Հանդիսանում Առաքել Այունեցու (XV դար), Ստեփանոս Զիք-

<sup>180</sup> Մ. Աբեղյան, Երկեր, Հ.9, Եր., 1969, էջ 531։

<sup>181</sup> Ն. Թահմիզյան, Սահակ Պարթև և Հայ եկեղեցական երգարվեստը, Եցմիածին, 1973, N1, էջ 10։

<sup>182</sup> Սրբոյ Հօրն մերոյ Ներսեսի Շնորհալոյ, Մեկնութիւն «Բարձրացուցէք», ճափի Դավթի Անյաղթ փիլիսոփայի ի սուրբ խաչի, Ճոպաքաղ, Հ, Գ, Մոսկվա, 1862, էջ 39։ Բերգում է ըստ՝ Ն. Թահմիզյան, Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, Եր., 1973, էջ 16։

Ջուղայեցու (XVII դար) և Հակոբ Սսեցու (XII դար) չափածո ստեղծագործությունները.

«Նոցա գըլուխըն ամենին

Մեսրոպ, Սահակ էր պարթևին,

Բուն թարգմանիչք հայոց ազգին,

Սուրբ երաժշտք աստուածային

Այնք որ ութեակ ձայնս կարգեցին,

Եւ կըրկնակի Ստեղի եղին»<sup>183</sup>:

«Նախ մեծ Մեսրոպ տարօնեցին

Հզկարգ Աղցիցն ամենին»<sup>184</sup>:

«Նախ աղցաց կարգն է Մեսրոպայ»<sup>185</sup>:

Համադրելով այս քերթվածքները պատմագրական նախորդ հիշատակությունների հետ, Ն. Թահմիզյանը եկել է այն եղրակացության, որ առաջինները երկրորդների մասնավորեցումն են. «Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը ձայնեղանակների վերանայման ու վերակարգավորման գործը նույնպես պետք է գլուխ բերած լինեին, - Համոզված է Ն. Թահմիզյանը, - որովհետև նրանք V դարի մշակութային խոչոր շարժման ռահվիրաներն էին և, որպես այդպիսիք, կարևոր շատ գործերի նախաձեռնողը: Այնուհետև նրանք իրենց շրջապատի ամենազարգացած գործիչներն էին, և, հետևաբար, երաժշտության տեսության ու գործնականին էլ քաջատեղյակ մարդիկ: Նրանք պատասխանատու էին ծեսի և արարողության նաև երաժշտական մասի բարեկարգման համար: Առաջինը՝ իր պաշտոնի բերումով, իսկ երկրորդը՝ վարդապետի և ուսուցչի իր հասարակական մեծ դիրքությունում է V դարի նշանավոր կաթողիկոսի մեծ:

Մերոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի գործի շարունակողներից մեկը Հովհան Մանդակունին է, որը, համաձայն Հովհաննես Դրասիսանակերտցու հիշատակության, ողջ ժամակարգության բարեկարգողն էր (Հ. 75): Այս կարծիքին է նաև Կիրակոս Գանձակեցին (Հ. 155): Այս և այլ մատենագրական արժեքավոր տեղեկությունների վրա հիմնվելով, Ն. Թահմիզյանը ամբողջացրել է V դարի նշանավոր կաթողիկոսի մեծ

<sup>183</sup> Առաքել Սյունեցին և իր քերթուածքները, Վենետիկ, 1914, էջ 322:

<sup>184</sup> Բերգումը է լսո՞ւ՞ն. Թահմիզյանի «Մեսրոպ Մաշտոցն ու հայոց հոգիոր երաժշտականը» հոդվածի, Բանքեր Մատենադարանի, Եր., 1964, հ.7, էջ 175:

<sup>185</sup> Նույնիւն:

<sup>186</sup> Ն. Թահմիզյան, Մեսրոպ Մաշտոցն ու հայոց հոգւոր երգարվեստը, Բանքեր Մատենադարանի, 1964, N7, էջ 177:

վաստակը՝ գրելով. «Նա նոր նյութերով հարատացրել և խմբագրել է Հայկական առաջին կանոնացված երգարանը - Հինավուրց Աղոթարան-Ժամագիրքը, Թարգմանել է (Հունարենից) մի քանի Պատարագամատուցյը: Իր տաղանդավոր ստեղծագործություններով Մանդակունին նպաստել է Հայոց ինքնուրույն նորաստեղծ երգի հետագա զարդացմանը»<sup>187</sup>:

Այլոց մասին նմանատիպ հիշատակությունները որոշ դեպքերում սուր վիճաբանությունների առիթ են Հանդիսացել, հատկապես, երբ բացակայել կամ չատ սակավ են եղել Համարնությ օժանդակ աղբյուրները: Օրինակ, ժամանակին Հակամետ կարծիքների տեղիք է տվել Շիրակի Դղպրեվանքի առաջնորդ Բարսեղ ձոնի երաժշտական գործունեությունը վկայող Վարդան Արևելցու Հաղորդումը (Հ. 164):

Մ. Աբեղյանը ենթադրել է, որ նկարագրված դեպքը «երեկ XII դարից Ներսես Շնորհալու և իր ժամանակակից՝ «ամենագովելի» և «աստուածաշնորհ» Բարսեղ վարդապետից» (1162թ.) փոխադրված է VII դարը՝ Ներսես Շինողի ժամանակը<sup>188</sup>: Սակայն, ինչպես ցույց է տվել Ն. Թահմիզյանը, XII դարում ապրած Բարսեղ Քեառնցու (որը ձոն մականունը չի կրել) կենդանության օրոք «Ներսես Շնորհալին կաթողիկոս չէր տակապին»<sup>189</sup>: Բարսեղ ձոնին վերագրվում են «Յարութեան» կոչող մեծացուցեների ԱԶ-ԴԿ առանձին շարքի Հիմնական մասը<sup>190</sup> և, այն, որ նա հայ հոգևոր ինքնուրույն երգերի անդրանիկ ժողովածուի՝ «Ճոնընտիր»-ի կազմողն է:

Վարդան Արևելցու հիշատակության պատմաճանաչողական արժեքը բարձրանում է նաև այն իրողությամբ, որ նրա բովանդակությունը կրկնվում է Միհիթար Այրիվանեցու Պատմության մեջ (Հ. 150):

Պատմագրական որոշ վկայությունների աղբյուրագիտական արժեքը բացառիկ է նրանով, որ դրանք ընդգրկում են տեղեկություններ

<sup>187</sup> **Н. Тагмизян**, Ован Манգакуни и армянское духовное профессиональное песнопение. В республиканская научная конференция по проблемам культуры и искусства Армении, тезисы, Ер., 1982, стр. 405.

<sup>188</sup> **Մ. Աբեղյան**, Աշվ. աշխ., էջ 530:

<sup>189</sup> **Ն. Թահմիզյան**, Բարսեղ ձոնը և մասնագիտացված երգաստեղծության ձաղկումը Հայաստանում VII դարում, Բանքեր Երևանի Համալսարանի, 1973, N1, էջ 214-215:

<sup>190</sup> **Տեղական Ն. Թահմիզյան**, Ներսես Շնորհալին երգահան ..., էջ 19:

երաժիշտների մասին, որոնց ստեղծագործական ժառանգությանը վերաբերող այլ աղյօնուրները շատ սակավաթիվ են կամ էլ բոլորովին չեն պահպանվել: Անդրադառնանք Անանիա Նարեկացու երաժշտական գործունեության մասին Ուխտանես եպիսկոպոսի և Ստեփանոս Տարոնեցու վկայություններին: Ուխտանեսի, որի Պատմության պատվիրատուն հենց ինքը՝ Անանիա Նարեկացին էր, պատկերավոր նկարագրության մեջ Նարեկացին «բանիբուն Պուետիկոս» և «Հռչակավոր Հռետոր» էր և «Հոգևորական երգով գեղգեղմամբ գեր ի վերոյ քան զամեննեսեան» էր (Հ. 98): Պուետիկոս, Հռետոր անվանումներից ակներև է, որ Անանիա Նարեկացին իր ժամանակի նշանավոր երաժիշտներից պետք է լիներ: Այդ նրա օրոք էր, որ Հիմնադրվեց Հռչակավոր Նարեկա վանքը, որի բարձրարժեք նկարագրի մեջ Ստեփանոս Տարոնեցին կարևորել է նաև նշանավոր երաժիշտների գործունեության փաստը (Հ. 103): Քննելով Անանիա Նարեկացու մասին վկայությունները՝ Ն. Թահմիպյանը Հայտնել է այն միտքը, որ գեռևս կարող են Հայտնաբերվել Նարեկացու գրչին պատկանող երաժշտաբանաստեղծական հորինումներ<sup>191</sup>:

Պատմագրական հիշատակությունների մեջ բացառիկ արժեք է ներկայացնում XII դարի Հայ մշակութի նշանավոր գործիչ Խաչատուր Տարոնեցու երաժշտագիտական գործունեության մասին Կիրակոս Գանձակեցու հաղորդումը (Հ. 163): Թեև Գանձակեցին լրում է նրա ստեղծագործական ժառանգության մասին, սակայն պատմագրի արժեքավոր Հիշատակությունը վճռորոշ գեր է կատարել Տարոնեցու ստեղծագործական ժառանգության իրթին Հարցերի պարզաբանման գործում: Միակ ստեղծագործությունը, որը հավաստիորեն համարվել է Խաչատուր Տարոնեցունը, քահանայի զգեստավորման «Խորհուրդ խորին» շարականի պահպանված երեք տարբերակներից մեկն է<sup>192</sup>:

Որոշ հեղինակներ Խաչատուր Տարոնեցուն են վերագրել գանձերի ու տաղերի զգալի մաս (Հ. Տաշյան, Գ. Զարպհանալյան), ոմանք էլ, Հակառակը, դրանք դնում են Խաչատուր Կեչառեցու ժառանգության

<sup>191</sup> Ն. Թահմիպյան, Անանիա Նարեկացու և Նարեկ վանքի երաժշտական ավանդույթների մասին, «Էջմիածին», 1976, N9, էջ 32: Տես նաև՝ Հ. Թամրապյան, Անանիա Նարեկացի, Եր., 1985, էջ 309:

<sup>192</sup> Զայնապիեալ երգեցողութիւնք Մըրոյ պատարագի, Վաղարշապատ, 1878, էջ 192:

մեջ (Ձր. Կոնիքիր, Գ. Հովհաննիսյան): Այնուհանդերձ պետք է հուսալ, որ նոր աղբյուրների հայտնաբերման շնորհիվ ի վերջո լույս կափումի մեծ երաժշտագետի՝ Խաչատրու Տարոնեցու ստեղծագործական ժառանգության դեռևս մութ էջերի վրա: Ավելացնենք նաև, որ այդ կարևոր խնդրի մասին արժեքավոր դիտողություն ունի Ն. Թահմիզյանը, որ մի շարք գանձերի գրական տեքստերի համեմատության հիման վրա ենթադրել է, թե «Տարոնեցին սույն և նման գանձերի հորինումով գրիչը կոփերուց հետո է կերտել զգեստավորման երգը»<sup>193</sup>:

Անհատ երաժշտների մասին հիշատակությունների քննության մեջ անչափ կարևոր է անդրադառնալ նաև երաժիշտ բառի միջնադարում ընդունված այլ նշանակություններին: Վերևում հիշատակեցինք փիլիսոփան, որը միջնադարյան երաժշտի բազմիմաստ բնութագրերից մեկն է և երաժշտության ու հարակից դիտություններից մեկի սերտ հարաբերակցության խոսուն վկան:

Ընդհանուր առմամբ, միջնադարում երաժշտի իմաստային համալիրը թեև ամփոփվում էր եկեղեցական երաժշտության թե՛ գիտական և թե՛ գործնական ոլորտներում, այդուհանդերձ, կոչումների այդ «համաստեղության» մեջ արժեքավորվում է ազգային մասնագիտացված երաժշտությունը զարգացնող անհատը: Պատմական աղբյուրներում և հատկապես ձեռագրերի հիշատակարաններում ընդգրկված հարուստ նյութը հնարավորություն է տալիս բացահայտելու միջնադարյան երաժշտի գործունեության կարևոր կողմերը:

Անդրադառնանք դրանց. Հովհաննես Դրասխանակերտցին, խոսելով Ներսես Մեծ կաթողիկոսի ծավալած բարենորոգչական գործունեության մասին, կարեռում է վերծանողների և սաղմուսերգուների խմբերի կանոնակարգումը եկեղեցիներում (Հ. 74): Դրանց մասին տեղեկություններ կան նաև XV դարում գրված հիշատակարաններից մեկում (Հ. 324): Ստեփանոս Օրբելյանը առավել հստակ է ներկայացնում եկեղեցական IX դասը. «փասադտուք որք են սաղմուսերգություն» (Հ. 172), Դրազարկում գրված հիշատակարաններից մեկում ասվում է. «Յիշեսջիք ի Քրիստոս զընթշանուր եղբայրութիւնս զեպիսկոպոս, զբարեունի, զերաժիշտն» (Հ. 218):

<sup>193</sup> Ն. Թահմիզյան, Հաղարձնի Վանքը և Խաչատրու Տարոնեցի երաժիշտ վարդապետը, Գիտական աշխատությունների միջըուհական ժողովածու, Եր., 1975, էջ 193:

Սաղմոսերգուների և, առհասարակ, երգող դասի  
ներկայացուցիչների՝ երգեցողների մասին պահպանված բազմաթիվ  
Հիշատակությունները վկայում են երգիչ-կատարող երաժշտի մասին (Հ.  
124, 223, 244, 251, 263, 264): Վերջինիս գործունեությունը, անշուշտ  
պայմանավորված էր պաշտոներգության մեջ մասնագետ երգիչների ներ-  
գրավման կարևոր անհրաժեշտությամբ: Ծնորհալին Հիշեցնում է.

Ու՞ր քաղցրաձայն երաժշտի

կամ գեղգեղումն եղանակի (Հ. 356):

Առավել մեծածավալ գործունեությամբ են աչքի ընկել երաժիշտ-  
գիտնականները, որոնց կոչել են նաև երաժշտապետեր: Միջնադարյան  
գրիչներն հաճախ պատկերավոր բնորոշիչներով են հարստացրել նրանց  
անունները՝ արժեքավորելով նրանց գործի մեծությունն ու նշանակու-  
թյունը: Հատկապես ձեռագրերի հիշատակարաններում ենք հանդիպում  
բազմաթիվ անուններ: Հաճախ նշվում է միայն երաժշտապետի անունը և  
ապա՝ ծննդավայրը կամ էլ գործունեության վայրը. «Տէր Թորոսն ...  
զմեծ երաժիշտն ձայնաւորաց» (Հ. 140), «Խաչկայ՝ որ էր երաժիշտ ի  
վերայ ձայնաւոր եղանակաց» (Հ. 141), «Սամուէլ, որ էր բազմաշնորհ ի  
գիտութիւն գրոց և երգս և երաժշտութիւնս» (Հ. 186), «Գիմաստուն  
երաժիշտն զՄանուէլ» (Հ. 187), «յիշեսջիք ... զՍամուէլ երաժշտապետն»  
(Հ. 194), «Խաչատուր Տարօնացին ... գիտութեամբ հռչակեալ՝  
մանավանդ երաժշտական արուեստիւ» (Հ. 141) և այլն:

Երբեմն գրիչները սահմանափակվում են հնարավորին չափ սեղմ  
բնորոշմամբ: Նշվում է միայն երաժիշտ անունը (Հ. 295, 221, 246): Եր-  
բեմն էլ տողերի հեղինակը չի հրաժարվում քրիստոնյա-ճկնակեցական  
բարոյական նկարագրում հաճախ հանդիպող փծուն, ախմար  
(անուառում), նվաստ, սուսանուն մակդիրներից (Հ. 192, 202, 220):

XII-XV դդ. թվագրված այս հիշատակությունները ծանրակշիռ  
փաստեր են, որոնք խոսում են տվյալ ժամանակաշրջանի երաժիշտ-  
գիտնականների գործունեության մասին հատկապես Կիլիկյան  
Հայաստանում, թեև Հիշատակությունները ասկավ չեն նաև բուն Հայաս-  
տանում գործող երաժիշտների մասին: Այդ փաստերն առավել շոշափելի  
են դարձնում այս ժամանակաշրջանում վերելք ապող մասնագիտացված  
երգարիվեստում անհատ ստեղծագործողի և հմուտ երաժշտի գործուն  
գերը և հատկապես խաղագրության արվեստի ծաղկմանը նպաստող  
գիտնականի ստեղծագործական գործոնի նշանակությունը:

Հմուտ երաժշտապետերի գործունեությունը խթանել է գրչական կենսարուների և հատկապես վարդապետանոցների ու կրթական այլ հաստատությունների մասնագիտական պատշաճ մակարդակն ու առաջընթացը: Այդ են վկայում հիշատակարաններում հանդիպող ուսուցիչներաժշտների աշխատանքը բնութագրող տողերը. «...մղտեաի տէր Սարգի Տիգրիկեցի հեզահոգի քաղցրեղանակ դասավարի» (Հ. 295), «զքաղցրածյան Հնչողն գտէր Թագէոս դասավարն» (Հ. 331): Նշենք նաև Սանահինի, Նարեկի, Տաթևի և այլ բարձրագույն դպրոցներին վերաբերող արժեքավոր նկարագրությունները (Հ. 103, 124):

Այժմ անդրագառնանք վկայությունների այն խմբին, որտեղ որևէ հեղինակի (կամ հեղինակների) գործունեության ընդհանուր և համառոտ բնութագրից հետո հիշատակվում է կոնկրետ ստեղծագործություն: Այս տվյալները վճռորոշ դեր են կատարել տվյալ հեղինակի ստեղծագործական ժառանգության ճշգրտման և ամբողջական բնութագրի համարման գործում: Այսպիսին են, մասնագորապես Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի ստեղծագործությունների մասին Կիրակոս Գանձակեցու և Կարապետ Սասնեցու հիշատակությունները: Կիրակոս Գանձակեցին երկու նշանավոր գործիչների և նրանց աշակերտների գործերի ընդհանուր ցուցակում հիշատակել է ապաշխարության շարականների մասին, որոնք հետագայում վերագրվել են Մաշտոցին (Հ. 370):

Եթե Գանձակեցու վկայությունը ընդհանուր բնույթի է, ապա Կարապետ Սասնեցին ուղարկի նշել է, որ Մեսրոպ Մաշտոցը երգել է «եղանակ ապաշխարութեան» (Հ. 154): Որոշ հիշատակություններում Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի ստեղծագործությունը տրվում է նրանց ավագ աշակերտների հետ համատեղ (Հ. 147, 195, 215): «Կէսք զեղանակաց երգս կարգեցին» արտահայտությունը ուղղակի ակնարկում է նաև V դարում ձայնեղանակների Ութձայն համակարգի ձևավորման և հոգեւոր երգերի ծիսական կանոնակարգմանը միտված աշխատանքների մասին:

Պատմագրական համաբնույթ արժեքավոր հիշատակություններ են մեզ հասել երեք նշանավոր կաթողիկոսների՝ Կոմիտաս Աղցեցու, Հովհանն Օձնեցու և Ներսես Շնորհալու, ինչպես նաև Հովհաննես սարկավագ Իմաստասերի գործունեության և ստեղծագործությունների մասին: Այսպես, Կիրակոս Գանձակեցին կարեւոր մի վկայություն ունի

Կոմիտաս Աղցեցու նշանավոր «Անձինք նուիրեալք» շարականի մասին (Հ. 156):

Բացառիկ կարևոր արժեք է ներկայացնում Գանձակեցու Հիշատակությունը՝ նվիրված Հովհան Օձնեցու երաժշտաբանաստեղծական ժառանգությանը: Մասնավորապես, անդրադառնալով Եզր կաթողիկոսի քաղկեդոնասեր գործունեության շնորհիվ Հայոց եկեղեցում տիրող «անկարգության» բարեկարգմանը ու ծխակարգի «Հայացմանը» ուղղված Օձնեցու ջանքերին, պատմիչը Հիշատակել է նաև Դավիթ մարգարեի և Հակոբ առաքյալի տոներին նվիրված կանոնի Հարցի շարականը (Հ. 159): Նշենք, որ Հովհան Օձնեցուն շարականագիրների տարրեր ցուցակներում վերագրվել է ոչ միայն Հիշյալ Հարցը, այլև ամբողջ կանոնի երգերի մեծ մասը (օրէնություն՝ երկու պատկերով, Հարց, Գործք, Ողորմյա, Տեր Հերկնից և Մանկունք և այլ կանոնների երգեր)՝<sup>194</sup>:

Ինչպես և պետք էր սպասել, ամենածավալում և փաստառատ Հիշատակությունները վերաբերում են Ներսես Շնորհալու երաժշտական գործունեությանն ու թողած ժառանգությանը: Դրանց մեջ իր տարրունակ բովանդակությամբ աչքի է ընկնում Կիրակոս Գանձակեցու Հիշատակությունը (Հ. 162): Ի գեպ, XIII դարից ի վեր վարքագրական աղբյուրների մեջ Գանձակեցու Պատմությունը Ներսես Շնորհալու ստեղծագործական ժառանգությունն առավել մանրամասն նկարագրող աղբյուրներից է: Ավելին, Կիրակոս Գանձակեցու Հիշատակությունը իրավամբ Համարվել է այլ աղբյուրների ճշգրտման կարևոր միջոց: Հատկապես կարևորում ենք պատմիչի այն հաղորդումը, թե «արար նա գքարող սրբոյ պատարագին»:

Եթե նկատի ունենանք, որ Պատարագամատույցի բարեկարգման մասին այլ Հիշատակություններ չեն պահպանվել, ապա Գանձակեցու վերօբերյալ Հաղորդումը, իրոք, շատ խոսուն ու ծանրակիոր փաստի արժեք է ստանում: Հաստ Ն. Թահմիզյանի, Հնարավոր է ենթագրել, որ Կիրակոս Գանձակեցին տվյալ դեպքում նկատի ունի մի Հայտնի, ծավալուն ու ամբողջական միավոր, ինչպիսին է Հայոց Պատարագում սարկավագի քարոզներից «Եւ եւս խաղաղութեան»-ը՝<sup>195</sup>: Միաժամանակ

<sup>194</sup> Ն. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին և Հայ երաժշտությունը V-XVդդ., Եր.,

1985, Էջ 188:

<sup>195</sup> Ն. Թահմիզյան, Ներսես Շնորհալին երաժիշտ և երգահան, Եր., 1973, Էջ 42:

նա նաև այն կարծիքին է, որ «Զայնագրյալ պատարագում սարկավագի քարոզների այլ եղանակներ ևս (իսկ որոշ դեպքերում՝ գուցե և խոսքերի վերախմբագրումը) պատկանում է Շնորհալու գրչին»<sup>196</sup>:

Կիրակոս Գանձակեցին առավել որոշակի է խոսել Ներսես Շնորհալու, այսպես կոչված, արտապաշտամունքային<sup>197</sup> ստեղծագործությունների մասին («Յիշեսցուք ի գիշերի», «Զարթիք փառք իմ»), ուշագրավ հանելուկները, որոնք «ասասցեն ի գինարբուս և ի հարսնիս» (Հ. 162):

Ներսես Շնորհալու երաժշտական ստեղծագործությանը պատկերավոր մի բնութագիր է տրված XII դարի ձեռագրերից մեկի հիշատակարանում, որը կոչվում է «Պատմութիւն սուլր Հարանց» (Հ. 191): Հեղինակը Ատոմ արեղան է: Մեծ երգահանի ժառանգությանը հպանցիկ անդրադառնալուց հետո, գրիչը բարձրագույն արժեք է համարում հատկապես Շնորհալու մեղեղային-եղանակային հարուստ մտածողությունը: Միջնադարյան հեղինակները Ներսես Շնորհալու երաժշտական վաստակը արժելորել են նաև այլ գրվածքներում, մասնավորապես՝ ներբողներում (Հ. 315, 364-369):

Միջնադարյան ոչ բոլոր երգահաններին են ձոնվել հասուլկ գրվածքներ և քչերի մասին են պահպանվել մանրամասն կենսագրական և այլ բնույթի տվյալներ: Վերագրանալով Կիրակոս Գանձակեցու Պատմությանը, նշենք, որ այստեղ ենք գտնում եզակի կարևոր բովանդակությամբ մի հիշատակություն, որը նվիրված է Հովհաննես սարկավագ Իմաստասերի երաժշտական գործունեությանը և նրա երաժշտաբանաստեղծական ժառանգությունը վկայող բացառիկ աղյուսը է (Հ. 161): Հետաքրքիր է այն փաստը, որ հեղինակի ստեղծագործությունների՝ շարականների ու տաղերի շարքից Կիրակոս Գանձակեցին առանձնացրել է Ղևոնդյանց շարականը, առանձնահատուկ արժենորելով այն:

Մինչ այժմ նշված պատմագրական հիշատակությունները երաժշտագիտական ուսումնասիրություններում ընդունվել են անվերապահորեն: Մինչդեռ կան նաև այնպիսիները, որոնք առայսօր տարակարծություններ են առաջացնում: Այդպիսին է Վարդան

<sup>196</sup> Նույնը:

<sup>197</sup> Օգտագործել ենք ն. Թահմիպյանի բառեզրը, որով նշվել են բնույթով կրոնական, սակայն պաշտոներգությունից դուրս կատարվող երգեցողությունները:

Արևելցու հիշատակությունը VII դարում Աշոտ Պատրիկ Բագրատունու՝ Դարույնքի Ամենափրկիչ եկեղեցու նավակատիքի առիթով հորինած և կատարած «Զորս ըստ պատկերին քում» շարականի մասին (Հ. 165): Այն, որ Հայոց պաշտոներգության մեջ կարող էր ընդգրկվել աշխարհիկ Հեղինակի ստեղծագործություն, եզակի երևույթ չէ միջնադարում<sup>198</sup>: Վիճահարուցյ մեկնությունների առիթ է հանդիսացել պատմիչի Հիշատակած Հեղինակի և շարականագիրների միջնադարյան մի շարք արժեքավոր ցուցակների տվյալների անհամապատասխանությունը<sup>199</sup>: Դրանցում իբրև Հեղինակ նշված է Գրիգոր Մագիստրոսը, որը նույնպես Հայոց բարձրաշխարհիկ տոհմի ներկայացուցիչ էր և նաև բազմաշնորհ արվեստագետ:

Ուշագրավն այն է, որ փաստերի այս հակագրության մեջ այնուամենայիվ ավանդաբար նախընտրելի<sup>200</sup> է համարվում Արևելցու հիշատակությունը: Թեև ինդիի համակողմանի քննությունը, որ վերջերս կատարվել է Ա. Արևշատյանի կողմից<sup>201</sup> աղբյուրագիտական և տեքստաբանական մանրագնին վերլուծությամբ Հիմնավորում է Գրիգոր Մագիստրոսի հեղինակման փաստը՝ XI դարում Հավուց Թառի վանական համալիրի վերակառուցման մեծածավալ աշխատանքի շրջանակներում: Այս պարագայում ամենայն հավանականությամբ կասկածելի է դառնում այն աղբյուրի հարցը, որից օգտվել է Արևելցին: Կարելի է ենթադրել, որ իր ժամանակին Աշոտ Պատրիկ Բագրատունին ևս հորինել է, և այդ մասին ինչ-ինչ հիշատակումներ պատճառ են հանդիսացել, որ Վարդան Արևելցին նույնացներ այդ ստեղծագործությունները:

Հայագիտության մեջ իրարամերժ մեկնություններ են առաջացրել են նաև Ստեփանոս Սյունեցի նույնանուն երկու երաժիշտների մասին հիշատակությունները, որոնք հանդիպում են Կիրակոս Գանձակեցու, Ստեփանոս Օրբելյանի և Թովմա Մեծովեցու աշխատություններում: Նշենք, որ կասկածի տակ է առնվել Հեղինակների տարբերության փաստն իսկ: Երկու տարբեր հեղինակների գոյությունը հավաստող հիշատակություններ են դիտվել Գանձակեցու արժեքավոր

<sup>198</sup> Հիշենք Խոսրովիդուխտ Գողթնեցուն:

<sup>199</sup> Տե՛ս Ա. Արևշատյան, Ո՞վ է «Զորս պատկերին քում» շարականի հեղինակը, «Էջմիածին», 1997, Դ-Ե:

<sup>200</sup> Նշենք, որ այսօր էլ այդ ավանդոյթը պահպանում է իր գործառույթը

Հոգևոր երգերի որոշ ժողովածուներում:

<sup>201</sup> Ա. Արևշատյան, Ո՞վ է «Զորս պատկերին քում» ..., էջ 54:

վկայությունները, որոնք առաջին անգամ մանրազնին քննել է Մ. Զամշյանը: Ստեփանոս Այունեցի Բ-ի մասին նշել է Մ.Աբեղյանը, որը, սակայն չի անդրադարձել Այունեցի Ա-ի ժառանգության խնդրին<sup>202</sup>: Ն.Թահմիպյանը ևս, հենվելով Մ.Զամշյանի տեսակետի վրա, Կիրակոս Գանձակեցու տվյալներից բխեցրել է երկու տարբեր հեղինակների գոյությունը<sup>203</sup>:

Անդրադանանք դրանց: Գանձակեցին նախ Ստեփանոս Այունեցի եպիսկոպոսի մասին հիշատակել է V դարի թարգմանիչների թվում, այնուհետև նույնանուն հեղինակ է նշվել նաև հաջորդ էջում քերականների և թարգմանիչների շարքում (Հ. 160): Հատ Ն. Թահմիպյանի՝ Ստեփանոս Այունեցի առաջինը V դարի հեղինակ է, մինչդեռ երկրորդը՝ VIII: Որոշ աղբյուրներում, օրինակ՝ Հայսմապուրքներում Ստեփանոս Այունեցի Ա-ն հիշատակվել է նաև Ստեփանոս Ասողիկ մականունով<sup>204</sup>: Այդպես է նրան անվանել նաև Թովմա Մեծոփեցին<sup>205</sup>: Արժեքավոր մանրամասներ ունի նաև Ստեփանոս Օրբելյանը (Հ. 173): Թվում է, որ Օրբելյանի հաղորդումը հավաստում է Հարության ավագ Օրհնությունների VIII դարի հեղինակ Ստեփանոս Այունեցունը լինելը (Ս. Ամատունի, Մ. Օրմանյան և ուղիշներ): Մինչդեռ Մ. Աբեղյանը, ապա նաև Ն. Թահմիպյանը այն հակառակ մտքին են, որ հիշյալ օրհնությունները կարող էին ստեղծվել ավելի վաղ<sup>206</sup>: Հետևաբար, ըստ վերջինի, մարգարեական օրհնությունների հարասությամբ հորինված կցուրդները վերաբրելի են Ստեփանոս Այունեցի Ա-ին<sup>207</sup>:

Ստեփանոս Այունեցի եպիսկոպոսի անձի և ստեղծագործական ժառանգության հանդեպ հետաքրքրությունը առավելագույնս պայմանավորված է Ավագ Օրհնությունների լեզվագոճական առանձնահատկությունների և հատկապես հայ հոգևոր երգի զարգացման ընթացքում դրանց գրաված դերի արժենորմամբ: Մասնավորապես, ժամանակակից շարականագիտությունը, հիմնվելով բանագիտական ուսումնասիրությունների վրա, հանգել է այն կարծի-

<sup>202</sup> Մ. Աբեղյան, Երկեր, Հ.9, Եր., 1969, էջ 539:

<sup>203</sup> Ն. Թահմիպյան, Այունեցի համանուն երկու երաժիշտներ և Հարության ավագ օրհնությունները, «Էջմիածին», 1973, N2, էջ 32:

<sup>204</sup> Ն. Թահմիպյան, Այունեցի համանուն..., էջ 32:

<sup>205</sup> Թովմա Մեծոփեցի, էջ 38:

<sup>206</sup> Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 340:

<sup>207</sup> Ն. Թահմիպյան, Այունեցի համանուն..., էջ 35:

քին, որ իրենց լեզվառնական բնորոշչների առումով հիշալ օրէնությունները չէին կարող ստեղծվել վաղ միջնադարում և, հետևաբար դրանց հեղինակը VIII դարի հեղինակ Ստեփանոս Սյունեցին<sup>208</sup>: Վերջինիս անձի շուրջ ծավալված ենթադրություններին, իր համոգիչ փաստարկներով նորովի մոտեցում է հանդես բերել միջնադարագետ Ա. Արեշատյանը: Շարականագիրների ցուցակների մանրազնին ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այն աղբյուրը, որը հիմք է ծառայել նույնանուն երկու հեղինակներին տարբերելու համար, իրականում մատնանշել է այլ մականուններով շարականագիրների. «Իրականում, - եղրահանգել է Ա. Արեշատյանը, - խոսքն այստեղ ոչ թե V և VIII դդ. հեղինակների մասին է, այլ VIII և X դդ., այսինքն՝ Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոսի և Ստեփանոս Ապարանցու՝ Մոկաց եպիսկոպոսի մասին»<sup>209</sup>:

Անդրադառնանք նաև պատմագրական այն հիշատակություններին, որոնք այս կամ այն ստեղծագործության գոյության փաստող միակ աղբյուրն են: Այդպիսիններից է VII դարում աղվանից իշխան Ջավանշիրի մահվան առիթով Դավթակ Քերթողի Հորինած Ողբի մասին Մովսես Կաղանկատավացու հիշատակությունը (Հ. 71): VIII դարի կին երաժիշտ Սահակաղուկստ Սյունեցու Հորինած շարականի մասին է հիշատակել Ստեփանոս Օրբելյանը (Հ. 174): IX դարում Արծրունյաց իշխան Մուշեղի Հորինած երգի մասին հիշատակել է Թովմա Արծրունին (Հ. 90):

Պատմագրական աղբյուրները հարուստ նյութեր են ներկայացնում XV դարի նշանավոր երաժիշտ-դիմանականներից մեկի՝ Գրիգոր Խլաթեցու մասին: Թովմա Մեծոփեցու բավական համառոտ բնութագրին (Հ. 183) կարող ենք համարել ձեռագիր հիշատակարանների ամփոփած մանրամասները, որտեղ բացի հեղինակի ստեղծագործական ժառանգությունից, բարձր է գնահատվում նաև նրա երաժշտամանկավարժական և խմբագրական գործունեությունը: Գրիչները Գրիգոր Խլաթեցու կատարած գործը գնահատում են նաև որպես բարենորոգչական, «զարդարէր զեկեղեցիս Հայոց կորուսեալ ձառիւք, գանձիւք տաղիւք» (Հ. 183), իսկ XV դարի գրիչ Մինասենց

<sup>208</sup>Տե՛ս Զայնագրեալ Շարական հոգևոր երգոց, Եր., 1997, Առաջաբան, էջ XVIII:

<sup>209</sup>Ա. Արեշատյան, Ստեփանոս Սյունեցի. իրական անձը և փաստակը (Սյունեցի համանուն երկու երաժիշտների գոյության հարցի շուրջ), «Հայ արվեստի հարցեր» գիտական Հոդվածների ժողովածու, Հ. 2, Եր., 2009, էջ 21-24:

Թուման նրան համարում է «Հանճարեղ և բանիբուն և առատամիտ», որն արգեն երգվող տաղերին ու գանձերին «յաւել յինքենէ բազում գանձս և տաղս համեղաբանս» (Հ. 294):

Համառուս, սակայն չափազանց արժեքավոր տվյալներ ենք հանդիպում նաև Գրիգոր Պահապունու մասին՝ Ներսես Շնորհալու չափածո մաղթանքում, որտեղ նշվում է, որ Պահապունին հորինել է «եղանակ Շարականիս, Առ ի պատիւ մեծի տաւնիս» (Հ. 196), որն, անշուշտ, Զրօրհների տոնն է: Նույնպիսին է նաև Առաքել Բաղիշեցու ստեղծագործությունը վկայող հիշատակությունը (Հ. 281): Խոսքը թեոդորոս վկային ձռնված գանձի մասին է: Բացի այս տվյալից, հիշատակության մեջ ստեղծագործությունը շատ բարձր է գնահատված՝ բարդ ու կատարյալ հորինվածքային հատկանիշների շնորհիվ: Նշվում է, որը ստեղծագործությունը կատարելուց առաջ անհրաժեշտ է տիրապետել հատուկ ոճական կատարողական արտահայտչամիջոցների, որը հայ մասնագիտացված երգարվեստի բարձրագույն փուլի դրսերումներից մեկի արձանագրման լուրջ փաստարկն է:

Բացառիկ ճանաչողական արժեք է կրում նաև Գրիգոր Անավարգեցի կաթողիկոսի ստեղծագործկան ժառանգությանն անդրադարձող հիշատակությունը, որտեղ նա ներկայացվում է որպես Հմուտ շարականագիր (Հ. 144): Նկատի առնելով Անավարգեցու ժառանգության պարականուն մնալու հանգամանքը, հիշատակարանում բերված վկայությունը դիտվում է որպես հեղինակի ժառանգության փաստը վավերացնող լուրջ կովան:

Բերված բոլոր հիշատակությունները եզակի բնույթի են և լավագույնս հարստացնում են հայ միջնադարյան երգարվեստի աղբյուրագիտական ընտրանին: Վերջինս համարում են նաև այնպիսի նյութեր, որոնք առավել քիչ ակնկալելի են պատմագրական աղբյուրների համատեքստում: Դրանք վերաբերում այնպիսի ինքնօրինակ ոլորտի, ինչպիսին միջնադարյան երաժշտության տեսությունն է:

Հայ միջնադարյան երաժշտատեսական խնդիրների համալիր քննության մեջ ընդունված է տարանջատել գործնական և գիտական ոլորտներ: Ընդհանուր հիմնադրույթների համակարգի մեջ այդ տարանջատումը, իհարկե արհեստական բնույթ է կրում: Մինչդեռ երաժշտության գործնական տեսությունը իմի է բերում հոգեստ երգեցողության «կիրառական» որոշակի հասկացությունների, եղբերի և

գործնական ցուցումների ամբողջովություն։ Այս առանձնահատուկ բնորոշիչների շնորհիվ միջնադարյան աղբյուրներում տեղ են գտել այնպիսի փաստեր, որոնք առնչվում են երաժշտության գործնական տեսությանը։ Դրանք հատկապես մեծ թիվ են կազմում ձեռագրերի հիշատակարաններում։ Այստեղ հայտնաբերում ենք արժեքավոր փաստեր հայ միջնադարյան մասնագիտացված երաժշտության՝ որպես գիտության և գիտական դասընթացի տեղի ու նշանակության, մասնագիտացված երգեցողությանն առնչվող հասկացությունների ու եզրերի, ձայնեղանակների համակարգի, երաժշտական խազագրության արվեստի, խազագոր մատյանների և խազագրության նշանավոր կենտրոնների մասին։ Անդրադառնանք դրանց առավել հանդամանորեն։

Միջնադարյան մատենագրության մեջ մշտապես կարևորվել է քառյակ գիտությունների շարքում երաժշտության գրաված ուրույն տեղը։ XVդ. Հովհաննես Գրիչը ուղղակի հիշատակում է. «գերաժշտական գիտություն» (Հ. 300): Գրիչը Մագիստրոսն իր թղթերում մշտապես հիշեցրել է գեռևս Արիստոտելի ժամանակաշրջանում համակարգված քառյակ գիտությունների շարքը, որտեղ մշտապես ընդգրկված է եղել նաև երաժշտությունը՝ թվաբանության, երկրաչափության և աստեղաբաշխության կողքին (Հ. 118, 122, 320):

Հայ միջնադարյան երաժշտության տեսության կնճռու հարցերից մեկը V-VIIդդ. ձայնագրության որևէ համակարգի գրյությունն ու կիրառության հնարավորությունն է։ Խնդրի լուսաբանման հիմնական խոչընդուռը երաժշտական ձեռագիր աղբյուրների բացակայությունն է, որի պատճառով այլ գրավոր աղբյուրներում ընդգրկված տեղեկությունները առանձնահատուկ կարենություն են ձեռք բերում։ Դրանց մեջ իր բացառիկ տեղն ունի Ղազար Փարպեցու Պատմության այն հատվածը, որտեղ պատմիչը նկարագրում է, թե ինչպես V դարում գրերի գյուտից հետո թարգմանչական աշխատանքների ժամանակ մեծածավալ աշխատանք է կատարել Սահակ Պարթևը, «որ յոյժ առցեալ զբագում գիտովին Յունաց, եղեալ կատարելապէս հմուտ երգողական տառիցն» (Հ. 15-16):

Նշենք, որ Ղազար Փարպեցու Պատմության ձեռագրերից մեկում երգողական տառիցն արտահայտության փոխարեն նշված է՝ քերթողա-

կան տառիցն։<sup>210</sup> Այս ձեռագիրը թույլ է տվել վերջնահաստատելու երգողական տառերի՝ ձայնավոր տառեր մեկնությունը։ Մասնավորապես, իր ուսումնասիրության մեջ, Հիմք ընդունելով Համատեքստի մանրակրկիտ վերլուծությունը, որի Համաձայն Փարագեցու վկայության մեջ նկարագրված թարգմանչական աշխատանքի մանրամասները և Հատկապես «Հայերենի վանկերը հունականին Համապատասխանեցնելու» խնդրի մատնանշումը, Ն. Թահմիզյանը եղբակացրել է, որ երգողական կամ քերթողական տառերը հունական ձայնավոր տառերն են, այսինքն Սահակ Պարթևը քաջատեղյակ է եղել հունական ձայնավորների քերականական ուսմունքին։<sup>211</sup>

Այսպիսով, բացահայտվում է երգողական տառերի քերականական նշանակությունը։ Միևնույն ժամանակ նշված ուսումնասիրության մեջ երգողական տառերի մեկնաբանության շրջանակների սահմաններում ներկայացված է հունական ձայնավոր տառերի թե՛ տեսական, և թե՛ գործնական մեկնություններում կրած երաժշտական իմաստը՝ հիմնված յոթ հնչյունների խորհրդապաշտական ըմբռնումների վրա, որով էլ պայմանավորված է ընդհանրապես հունական ձայնավորների երաժշտաքերականական ուսմունքի էությունը։ Այստեղից, բնականաբար ենթադրելի է այն տեսակետը, որ քաջատեղյակ լինելով հիշյալ ուսմունքին Սահակ Պարթևը տիրապետել է երգողական տառերի երաժշտատեսական և գործնական կիրառությանը, որից էլ հետևում է, որ նա ընդհանրապես քաջատեղյակ է եղել երաժշտության հարցերում։

Փարագեցու հիշյալ վկայությունը, միևնույն ժամանակ մղում է այնպիսի հարցադրման մնհրաժեշտությանը, ինչպիսին հունական ձայնավոր տառերի երաժշտական գործառության Համաբնույթ կիրառումն է Հայկական ձայնավորների օգտագործման սկզբունքներում։ Այլ կերպ ասած, հնարավոր է ենթադրել Հայոց գրերի գյուտից Հետո Հայոց մեջ Այբբենական նոտագրության Համակարգի գոյության մասին։ Նշենք, որ երաժշտագիտության մեջ այս մասին արժեքավոր ենթադրություններ են արվել։ Որոշ երաժշտագիտներ պարզապես ընդունել են, որ Համաձայն

<sup>210</sup> Ա. Հակոբյանց վանքի մատենադարանի 1419թ. ձառնտիր։

<sup>211</sup> Ն. Թահմիզյան, Դիտողություններ Փարագեցու պատմության մեջ Սահակ Պարթևին վերաբերող մի արտահայտության մասին։ «Բանքեր Երևանի Համապարանի», 1970, N 3, էջ 178-179։

Փարավեցու Հիշատակության, Հայկական առաջին նոտագրության Համակարգը եղել է այբուբենը (Վագներ, Ռիգ)՝<sup>212</sup>

Երգողական տառերը այլ կերպ է մեկնաբանել Հակոբ Հովհաննիսյանը: Ենթադրելով, որ դրանք կարող էին առողանության նշաններ լինել, նա հավանական է Համարել, թե Ղազար Փարավեցու հիշատակությունը կարող էր վերաբերվել «Հին Հունական նոտագրության (վոկալ և գործիքային) սիստեմին»՝<sup>213</sup> Հայտնի է, որ Հունական վաղ ձայնագրության երկու Համակարգերը, ինչպես նաև ձայնագրության Համապատասխան եղանակները Հիմնականում ենթարկվել են նվազարանային երաժշտության օրինաչափություններին՝<sup>214</sup> Ղազար Փարավեցու Հիշատակության Համատեքստում երգողական տառերը ավելի շուրջ ենթադրում են հոգևոր երգեցողության ոլորտ: Այդուհանդերձ, Հիշալ տեսակետը այսօր էլ կարելի դիտել իրբև արժեքավոր ենթադրություն և պնդել, որ խազային նոտագրությունից առաջ մի նախնական Համակարգ, այնուամենայնիվ գոյություն է ունեցել և անցումը մի Համակարգից մյուսը տեղի է ունեցել օրինաչափ ընթացքով: Հիշատակության Համատեքստը, տվյալ դեպքում, երբ մեկնաբանվում է իր կերպի մեջ եղակի մի արտահայտություն, բավական ծանրակշիռ դեր ունի:

Երգողական տառերի ավելի հեռուն տանող մեկնաբանություն է տվել Սպ. Մելիքյանը՝ դրանք Համարելով Հունական առողանության խազեր, որոնք կիրառվել են Հայկական թվերգության մեջ և Հիմք են ծառայել երաժշտական խազերի ստեղծման Համար՝<sup>215</sup> Այս տեսակետը, Հերքվում է Ու.Աթայանի Հետազոտության մեջ, որտեղ ձեռագրահամեմատական վերլուծության միջոցով ապացուցվում է, որ Հայկական առողանության խազերի Համակարգը ձևավորվել է VIII դարում՝<sup>216</sup>:

<sup>212</sup> Ու. Աթայան, նշվ. աշխ., էջ 116: Ն.Թահմիպյան, Դիտողություններ Փարավեցու պատմության մեջ Սահակ Պարթևին վերաբերող մի արտահայտության մասին: «Բանբեր Երևանի Համալսարանի», 1970, N 3, էջ 137:

<sup>213</sup> Հակոբ Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 64:

<sup>214</sup> Музыкальная культура древнего мира, под редакцией Р. Грубера, Ленинград, 1937, стр. 169.

<sup>215</sup> Սպ. Մելիքյան, Հունական աղղեցությունը Հայ երաժշտության տեսականի վրա, Թիֆլիս, 1914, էջ 17:

<sup>216</sup> Ու. Աթայան, նշվ. աշխ., էջ 19-38:

Այսպիսով, Ղազար Փարպեցու արժեքավոր հիշատակությունը վերաբերելով հունական ձայնավոր տառերի երաժշտաքերականական ուսմունքին, միևնույն ժամանակ, ինչպես նշել է Ռ. Աթայանը, թույլ է տալիս ենթադրելու, որ «երգողական տառերը՝ լինեին դրանք զուտ երաժշտական, թե առողջանական նշաններ, ժամանակին որոշ դեր են խաղացել Հայկական երաժշտական կուտուրայի զարգացման գործում: Բայց այդ վաղագույն նոտագրությունը (...) հետագայում չի պահպանվել և իր տեղը զիջել է խագերի նոր առաջ եկած սիստեմին»<sup>217</sup>:

Եթե Ղազար Փարպեցու հիշատակության մեջ նոտագրության համակարգի գոյությունը լոկ ենթադրելի է, ապա Կիրակոս Գանձակեցու գրչին պատկանող բացառիկ արժեքավոր մի հիշատակության մեջ ստույգ խոսվում է XII դարում Հայկական խազագրության վիճակի մասին (Հ. 163): XII դարում թուրք-սելջուկյան բռնակալության լուծը թոթափելուց հետո, Հայ մշակույթի բարենորոգչական շարժումների մի կարևոր բնագավառը, անշուշտ, Հայ մասնագիտացված երգարվեստի վերականգնումն ու Հետագա զարգացումն էր: Անհրաժեշտ է նշել, որ իբրև կարևոր միտում նկատելի էր առավել մեծ չափով տուժած Հայոց հյուսիս-արևելյան շրջաններում Կիլիկյան Հայաստանի մշակույթի հետ սերտ Հաղորդակցությունը: Կիրակոս Գանձակեցու վկայության համաձայն, Հաղպարծնի վանքի առաջնորդ Խաչատուր Տարոնեցին Հայոց Արևելքի կողմերն է բերել խագերը և «զանմարմին եղանակն ի մարմին ածել»:

Ակնհայտ է, որ պատմագրական շատ հիշատակությունների ու վկայությունների մեկնության ծզգրտության դրավականը, դրանց սեղմ մտքերի բոլոր մանրամասների ու տարրերի մանրախույզ քննումն ու համագրումն է: Դրանցից ամենագործի անտեսումն անդամ բնագրի իմաստի խեղաթյուրման տեղիք է տալիս: Ահա Կիրակոս Գանձակեցու այս հիշատակության մեջ այն միտքը, որ խագերը «ցայն ժամանակս չե էր սփռեալ ընդ աշխարհս» հիմք ընդունելով, մի շարք գիտնականներ (Վագներ, Տիրո, Սպ. Մելիքյան, Մ. Պոտոլյան) եկել են այն եղրակացության, որ Խաչատուր Տարոնեցին առաջինն է ներմուծել

<sup>217</sup> Նույն տեղում, էջ 70-79:

խազագրությունը հայ իրականության մեջ<sup>218</sup>: Մինչեռ Կիրակոս Գանձակեցին նշել է այն մասին, թե ինչպես է Տարոնեցին «զանմարմին եղանակն ի մարմին ածել»:

Միանգամայն իրավացի է Հակոբ Հովհաննիսյանը, երբ նշում է, որ խոսքը ավելի շուտ պատմական անբարենպաստ պայմանների չնորհիվ մոռացության տրված համակարգի մասին է<sup>219</sup>: Իսկ Ղ. Ալիշանը Խաչատուր Տարոնեցուն ներկայացնում է իբրև «եղանակող խազից նորոգողն»<sup>220</sup>: Այսպիսով, Խաչատուր Տարոնեցին բարենորոգել և վերստին եղանակավորել է անմարմին եղանակները: Այս տեսակետից, Կիրակոս Գանձակեցու հիշատակությունը մի արժեքավոր փաստ է Հայկական խազային նոտագրության զարգացման գործընթացի ուսումնասիրման մեջ:

Ապացուցելով, որ խազերի համակարգը ձեավորվել է VIII դարում, Ռ. Աթայանը ցույց է տվել, որ խազային ձայնագրության համակարգը մինչև Խաչատուր Տարոնեցու ժամանակաշրջանը արդեն զարգացման որոշակի ընթացք էր ապրել: «Ուստի, - նշում է նա, - պետք է ընդունել, որ Տարոնեցին եղավ մանրուսման երգերի ու ժողովածուների կիլիկայից Հայաստան բերող, դրանց հիման վրա այսոել նոր գրվող (կամ արտագրվող) երգերի խազավորողը և մանրուսման արվեստը տարածողն ու սովորեցնողը»<sup>221</sup>: Այսպիսով, Կիրակոս Գանձակեցու արժեքավոր հիշատակությունը հավաստում է Հայկական խազային նոտագրության զարգացման նոր՝ բարձրագույն փուլի նշանավորման մասին:

Այժմ ամփրադաւանք խազագրության արվեստին առնչվող հարցերից մեկին ևս, որը հնարավոր է քննել նաև պատմական աղբյուրների շրջանակներում: Խոսքը խազ՝ ձայնանիշ անվանումի և դրա տարբերակների մասին է: Նշենք, որ մեր դիտարկած աղբյուրներում խազ անվանումը առավել սակավ գործածվողն է (Հ. 266, 267, 278, 288): Հանդիպում են եղակի պատկերավոր անվանումներ. մարգարտաշար

<sup>218</sup> Ն. Թահմիզյան, Հաղարձնի վանքը և Խաչատուր Տարոնեցի երաժիշտ վարդապետը, Գիտական աշխատությունների միջազգական ժողովածու,

Արվեստագիտություն, Եր., 1975, Էջ 285: Ռ. Աթայան, նշվ. աշխ., Էջ 63:

<sup>219</sup> Հակոբ Հովհաննիսյան, նշվ. աշխ., Էջ 100:

<sup>220</sup> Ղ. Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873, Էջ 90:

<sup>221</sup> Ռ. Աթայան, նշվ. աշխ., Էջ 65:

**տառ** (Հ. 293), **շնորհալի** **տառ** (Հ. 200), **երաժշտական** **տառ** (Հ. 211), **եղանակաւեսս** **տառիկ** (Հ. 212) և, **նույնիսկ՝ գծագիր** (Հ. 309):

Առավել գերակշռող անվանումն է **եղանակաւոր** **տառ-ը**, որը հիմնականում հանդիպում է ձեռագրերի հիշատակարաններում՝ բավական կայուն, բանաձևային ձևակերպումներում, ինչպես, օրինակ. «Գրեցաւ եղանակաւոր տառս թուականիս...» (Հ. 225): Խազագրության արվեստի հարցերին նվիրված իր հետազոտության մեջ Ն.Թահմիզյանն անդրադառնալով այս բանաձևին նշել է, որ այն վերաբերել է Մանրուսումն մատյանին, որի մեջ ամփոփվել է խազագրքերում պարունակվող երգերի ամբողջությունը<sup>222</sup>:

Հիշատակարաններում հանդիպող վերոհիշյալ բանաձևի համեմատական քննությունը ցույց է տալիս, որ այդ բանաձևը նույնությամբ հիշատակվում է նաև խազավոր այլ մատյաններում: Անդրադառնանք դրանց:

Մանրուսումն խազագրքերի հիշատակարաններում մեծ մասամբ հանդիպում է «Գրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի Մանրուսմունք» բանաձևը (Հ. 232, 239, 245, 257, 259, 261, 263) և հազվադեպ բացակայում է որ կոչի ձևակերպումը, ուղղակի հիշատակելով եղանակավոր տառերի մասին (Հ. 235, 335, 336): Զեռագրերից մեկում բերվում է **եղանակաւոր գիր ձևակերպումը**:

Նույն բանաձևը, երեսն աննշան խմբագրմամբ հանդիպում են Շարակնոցների հիշատակարաններում. «Գրեցաւ եղանակաւոր տառս թուականիս» (Հ. 225, 228, 240, 243, 258, 273, 275) կամ «Գրեցաւ եղանակաւոր տառս շարականաց» (Հ. 233) նաև՝ «...որ կոչի Շարակնոց» (Հ. 318, 333, 343, 346, 347): Երեսն, պարզապես նշվում է եղանակաւոր տառը այլ համատեքսում (Հ. 274, 321, 325, 330, 342):

Վերոնշյալ բանաձևը անփոփոխ հիշատակվում է նաև Գանձարանների հիշատակարաններում (Հ. 306, 310, 316, 326, 349):

Զարգացած ավատատիրության ժամանակաշրջանին վերաբերող խազավոր ձեռագրերը խազագրության արվեստի բարձրագույն փուլում համապատասխան համակարգերի ձևակորման և ըստ մատյանների՝ եղանակավոր տառերի համապատասխան գրառման համակարգերի (Շարակնոցի և Մանրուսման խազեր) զարգացման խոսուն վկաներն են:

<sup>222</sup> Ն. Թահմիզյան, Կոմիտասը և Հայոց Հոգևոր երգարվեստի ուսումնասիրության հարցերը, Կոմիտասական, Հ. 1, Եր., 1969, էջ 195:

Անդրադառնանք խազավոր մատյանների բնութագրերին առնչվող որոշ հարցերին: Նշենք, որ բոլոր երգվող ծիսամատյանները միջնադարում կոչվել են նաև երգարաններ, երբեմն պատկերավոր լրացումներով, ինչպես օրինակ՝ լուսազարդ (Հ. 258) հոգևոր և այլն (Հ. 247, 250, 268, 291, 296): Հիշարժան են նաև Ավետարանի (Հ. 210), Աղոթարանի (Հ. 274) և, հատկապես Միհիթար Գոշի Դատաստանագրքի, որպես եղանակաւոր մատյանի (Հ. 250) բնութագրությունները: Ի նկատի ունենք այն, որ նշված ձեռագիր մատյաններում կարող էին ընդգրկվել միայն առողջանության խազեր:

Ծիսամատյանների բնութագրերում իբրև արժեքավոր տվյալներ պետք է դիտել զրանց խմբագիրների անունների նշումը և ըստ այդմ Հիշատակագրի կողմից մատյանի արժեքագրումը: Դրանք ճշգրիտ վկայություններ են, որոնք խոսում են ծիսամատյանի պատմական զարգացման, խազագրության արվեստի ծաղկման և ծիսամատյանի առավել կայուն ու ճական գծերի մասին: Այդ վկայությունները հնարավորություն են տալիս առանձնակի արժեքավորելու այս կամ այն խմբագրին վերագրվող մատյանի առանձնահատկությունները, քանի որ ծիսամատյանների նոր խմբագրությունները հետևանք էին մի կողմից խազային արվեստի ծաղկման չնորհիվ նորանոր եղանակների ընդգրկման, մյուս կողմից էլ այդ եղանակների և գրանց խազագրման բարդություններով պայմանավորված զուտ գործնական-կիրառական բնույթի դժվարությունների հաղթահարման: Շարակնոցների հիշատակարաններում առանձնահատուկ տեղ են գրավում Գրիգոր Խաթեցու և Գրիգոր Խովի խմբի խմբագրած մատյանների արժեքավորումն ու հատուկ կարելումը: Գրեթե յուրաքանչյուր ձեռագրում խմբագրի անունը յուրահատուկ հիշատակում ունի. «յընտիր աւրինակէ Գրիգորի դպրի, որ մականուն Խով կոչիւր» (Հ. 243, 294, 333, 345):

Անդրադառնանք Շարակնոցին առնչվող մեկ մասնավոր հարցի ևս: Խոպքը Զայնքաղ կոչվող Շարակնոցի մասին է, որն, ըստ Մ. Օրմանյանի ստեղծվել է XVII դարում Մովսես Գ Տաթևացի կաթողիկոսի օրոք<sup>223</sup>: Այստեղ զետեղված էին գիշերային ժամերգության ընթացքում

<sup>223</sup> Մ. Օրմանյան, Ծիսական բառարան, Եր., 1992, Էջ 97:

երգվող օրհնության տաս պատկեր շարականները<sup>224</sup>: Նշենք, որ XV դարում գրված ձեռագրերի հիշատակարաններում համդիպում է Զայնքաղ անվանումը (Հ. 301, 332): Կարծում ենք, Զայնքաղ Շարակնոցներին վերաբերող հատուկ ուսումնասիրության մեջ հիշատակարանների հաղորդած տվյալները կարևոր դեր կկատարեն:

Վերադառնալով Շարակնոցի խմբագրության հարցերին նկատենք, որ այս գործընթացը մեծապես կապված էր նաև Մանրուսման խազերի որոշակի ազդեցության և արդեն XII դարում գարգացման բարձրագույն փուլ թևակոյսած տաղերի և գանձերի որոշակի ներգործության հետ: Պահպանվել է Գրիգոր Խլաթեցու գրչին պատկանող Գանձարանի 1408թ. հիշատակարանը (Հ. 260), որտեղ նա հանգամանորեն հիմնավորում է իր խմբագրական աշխատանքի նպատակը և, որ անչափ կարևոր է, ընդգծում է իր հավաքած գանձերի ոճական հարատության, կանոնակարգված եղանակների բազմազանության մասին: Նշենք, որ Գրիգոր Խլաթեցու խմբագրած Գանձարանը հետագայում նույնպես չափանմուշի դեր է կատարել և ընդօրինակվել է որպես ընտիր ժողովածու:

Ձեռագրերի հիշատակարանները ընդգրկում են նաև արժեքավոր տվյալներ Մանրուսումն խազգրքի լավագույնս խմբագրված նմուշների մասին: Հատուկ հետաքրքրություն են առաջացնում վկայություններն այն մասին, որ Մանրուսման արժեքավոր նմուշները գրվել են Արքակաղնի առաջին երաժշտապետերի ձեռքով (Հ. 257), որոնք մեծ տքնանքով մշակել են խազագրության արվեստը գարգացնող այս կարևոր մատյանը (Հ. 259): Խազագրության կարևոր կնտրուններին կանդրագառնանք ստորև: Այժմ նշենք նաև Մանրուսման այլ խմբագրիների մասին, որոնց անունները միջնադարյան գրիչներն ընդգծել են. Առաքելցի (Հ. 285, 286), Կարապետցի (Հ. 261), Կոստանդէ (Հ. 230): Անտարակույս, հիշատակված են խազագրության հմուտ գիտակների անուններ, որոնց խմբագրած խազգրքերը ճանաչվել են որպես չափանմուշ<sup>225</sup>:

<sup>224</sup> Այս մասին առավել մանրամասն տես՝ Հ. Ստեփանյան, Կանոնի ընդլայնման սկզբունքները հայոց ուշմիջնադարյան պաշտոներգության մեջ: Եղանակարգությունների մասին «Գիտական աշխատություններ», հ.5, Գյումրի, 2002, էջ 173:

<sup>225</sup> Խմբագրիների այս շարքը լրացրել է Ն. Թահճմիջանլ՝ անտիպ ձեռագիր հիշատակարաններից մեջում հանդիպող Վաւելնցի անունով: Տե՛ս Ն. Թահճմիջան, Արդի խազարանութիւն, Փաստականական աշխատություններ, 2003, էջ 49:

XIII-XVդր. ձեռագրերի հիշատակարաններում հանդիպող դիտարկումները ցույց են տալիս, որ գրիչները որոշակի բարդությունների և խոչընդունների են հանդիպել խազագրության արվեստին տիրապետելու գործընթացում և նույնիսկ ընդօրինակվող լավագույն օրինակը ձեռքբերելուց հետո էլ հմուտ խազագետի խորհրդատվության անհրաժեշտությունն են զգացել (Հ. 205, 207, 234, 278): Այստեղ անհրաժեշտ է նշել նաև այն մասին, որ խազագոր ձեռագրերի գրիչները և հատկապես ընդօրինակողները մեծ մասամբ հասարակ եկեղեցականներ էին, որոնց հասու չէր խազագրության արվեստի ողջ համայնքը: Դրանց թվում կային երեցներ (Հ. 343), աբեղաներ (Հ. 301, 318), ավելի մեծ թիվ էին կազմում քահանաները (Հ. 265, 271, 311): Անշուշտ, գրիչների մեջ կարեռ տեղ էին զբաղեցնում նաև հմուտ երաժշտապետերը (Հ. 205, 206, 207, 208):

Իբրև կարևորագույն բնորոշիչ ձեռագիր հիշատակարաններում երբեմն հատուկ ընդգծվում է ձեռագրի ստեղծման վայրը, որը, որպես կանոն աչքի ընկնող գրչակենտրոն է մատնանշել: Բնականաբար, նշանափոր գրչակենտրոններում խազգրքերը գրվում էին հմուտ խազագետների ձեռքով, իսկ հեռավոր գյուղական շրջաններում՝ սոսկ ընդօրինակողների կողմից: Նշենք, որ հիշատակարաններում խազագիր կարեռ մատյանների գրչակենտրոն վայրերն ընդգրկում են ինչպես բուն Հայաստանի (Վան, Անի, Սամսահին), այնպես էլ Կիլիկյան վանքերը: Սակայն առավել գերակշռող թիվ են կազմում կիլիկյան կենտրոնների ձեռագրերը. Դրազարկ (Հ. 204, 205, 218), Ակներ (Հ. 208), Սկևոս (Հ. 211), Սիս (Հ. 214, 227):

Այսպիսով, ձեռագիր հիշատակարաններում ակնառու է Մանրուման, որպես մասնագիտացված երգարվեստի կարևորագույն խազգրքի գործառութին և գործնական մի շարք խնդիրներին առնչվող փաստերի ճանաչողական արժեքը:

Հայ միջնադարյան մասնագիտացված երաժշտության տեսության հիմնախնդիրներից մեկը ձայնեղանակների համակարգի զարգացման փուլերի ու կարեռը հանգրվանների ժամանակաշրջանների ճշգրտումն է: Փաստագրական նյութի սակագության պատճառով ժամանակի ընթացքում առաջ են եկել մի շարք դրույթներ, շարունակ լրացվել ու հերքվել են, կամ էլ՝ համալրվել արժեքագոր փաստարկներով:

Աղքյուրագիտական նյութերի ընտրանիի մեջ կարևորագույն տեղ է զբաղեցնում Ստեփանոս Օրբելյանի Հաղորդումն այն մասին, որ VIII դարի նշանավոր գիտնական, երաժշտութեաբան և երգահան Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոսը «բաժանեաց և զութ ձայնն» (Հ. 173): Նկատի ունենալով այն իրողությունը, որ գրավոր աղքյուրներում հայ մասնագիտացված երաժշտության մեջ Ութձայնի կիրառման հիշատակությունները սակավ են, ինքնին պարզ կդառնա վերջինիս նկատմամբ երաժշտագիտական մտքի ցուցաբերած մեծ հետաքրքրությունը: Օրինաչափորեն դրվել է այն հարցը, թե արդյո՞ք Ստեփանոս Սյունեցին է հայ մասնագիտացված երաժշտության մեջ առաջնը համակարգել ութ ձայնեղանակները:

Մատենագրական մի շարք աղքյուրների հավաստումով Ութձայնի կարգավորումը վերաբերում է V դարին, իբրև Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի գործունեության արգամիք: Այս մասին բազմիցս նշվում է հատկապես զարգացած ավատատիրության ժամանակաշրջանին վերաբերող ձեռագիր հիշատակարաններում և ընկալվում է որպես բոլորին հայտնի փաստ: Խոսքն այսուեղ, անշուշտ, Շարակնոցի ձևակիրման և ըստ ձայնեղանակների կանոնակարգման մասին է (Հ. 299), ինչը բնութագրվում է երբեմն նաև՝ «քաջոլորակ բաժանմամբ ձայնից» (Հ. 299): Քաջոլորակ բնորոշումը, ինչպես նշեցինք վերևում, վերաբերել է տեքստի եղանակակիրման կամ կատարման սկզբունքին: Երգվող տաղերին (աշխարհիկ և հոգևոր) վերաբերող այս բնորոշչիչ հատկուումը Ութձայն համակարգին, կարծում ենք, դարձյալ լավագույն ապացույցն է այն երևոյթի, որը դիտարկեցինք իբրև արդյունք աշխարհիկ երաժշտական մշակույթի կենսունակ ավանդույթների և միջնադարյան նոր արժեքների փոխներգործության: Ձայնեղանակը որպես որոշակի ձայնակարգում կամ ձայնակարգերում ծավալվող թեմատիկ մոդել, եղանակակիրման ուրույն սկզբունքներով էր առաջնորդվում: Վերոհիշյալ հիշատակությունը հնարավորություն է տալիս վերծանության արվեստի կատարողական առանձնահատկությունները փնտրել նաև ձայնեղանակային համակարգի բնորոշչիների մեջ:

Անդրադարձ կա նաև սաղմուների ձայնեղանակային համակարգ-մանը, ինչպես նաև՝ ութձայն ալելուներին<sup>226</sup> «իւր սարօքն»:

Անդրադառնանք երևոյթի գիտական քննության հարցերին: Մասնավորապես իր ուսումնասիրության մեջ Ն.Թաշմիզյանը հնագույն ձեռագիր ժամագիրք-Սաղմոսարանների համեմատական վերլուծության արդյունքում եկել է այն եղբակացության, որ *V* դարում ստեղծված այդ ծիսամատյանում առաջին անգամ համակարգվել են ութձայնեղանակները<sup>227</sup>: Հեղինակի հավաստմամբ, Ութձայնի բարեկարգությունը կարող էր զբաղվել նաև Բարսեղ Ճոնը՝ ելնելով հոգեսոր երգերի զարգացման, ինչպես նաև դրանց խմբավորման առանձնահատկություններից: Այստեղից տրամաբանորեն հետևում է, որ *Սյունեցին VIII* դարում տեսական նոր ձեւավորում է կատարել արդեն գոյություն ունեցող համակարգում:

Ընդունված է Ստեփանոս Սյունեցու բարենորոգչական գործունեությունը դիտել որպես այդ ժամանակաշրջանի համաքրիստոնեական մշակութային զգալի տեղաշարժերի համապատասխան դրսեորումը հայկական մշակույթում: Իբրև կարեսոր փաստ նշվում է Ստեփանոս Օրբելյանի այն տեղեկությունը, որ *Սյունեցին* որպես գիտնական կատարելագործվել է Կոստանդնուպոլսում, Աթենքում և Հռոմում (Հ. 173): Ավելին, վերոհիշյալ հիշատակությունը թույլ է տվել Ռ.Աթայանին հիմնավորելու այն արժեքավոր ենթադրությունը, որ, ըստ ամենայնի «Սյունեցին, իրագործելով հայկական հոգևոր երաժշտության տեսական հիմունքների մշակումը, զենց ինքն էլ հայկական երաժշտության մեջ մտցրել է իսպային նոտագրության մեջ ծանոթ նախնական սիստեմը, որն *IX* դարում արդեն տարածվել էր տարբեր վայրերում»<sup>228</sup>:

Հայ միջնադարյան մասնագիտական երաժշտության մեջ Ութձայն համակարգը զարգացել է մի կողմից շարականերգության ծաղկման, մյուս կողմից ազատ մեղեղիական մտածողության աստիճանական գերակայության պայմաններում: Զայնեղանակային մտածողության ճգնաժամը հայ երաժշտական միջնադարագիտության մեջ արժենորդվում է

<sup>226</sup> Ն. Թաշմիզյան, Արդի խաղաքանութիւն, Էջ 140:

<sup>227</sup> Н. Гагмизян, Теория музыки в древней Армении, Ер., 1977, стр. 163-

<sup>228</sup> 164.

<sup>228</sup> Ռ. Աթայան, նշվ. աշխ., Էջ 76-77:

որպես զարգացած ավատատիրության ժամանակաշրջանի մշակութային միջնորդական բխող օրինաչափ երևույթ:

Այս առումով բացառիկ հետաքրքրություն է առաջացնում ձեռագիր հիշատակարաններից մեկում արտահայտված «Նոր ձայն ասեմ ի յատենի» (Հ. 280) միտքը, որը, կարծում ենք լավագույնս արտացոլում է այնպիսի մի երևույթ, ինչպիսին մասնագիտացված երգարվեստում ազատ մեղեղիական հորինվածքների ստեղծման միջոցով ձայնեղանակային մտածողության հաղթահարումն էր: Միևնույն ժամանակ, ազատ հորինումներն ընկալվում էին իբրև նոր ձայն կամ դրանք առհասարակ կտրված չէին ավանդական երաժշտամտածողության էական սկզբունքներից:

Հայ միջնադարյան պատմագրական աղբյուրներում հաճութապում են բազմաթիվ հիշատակություններ, որոնք վերաբերում են Հայ հոգևոր երգի կատարման առանձնահատկություններին: Դրանք գողտրիկ դրվագներ են, որոնց մեջ մեկ հիացմունքով ու բուռն ոգեշնչումով, մեկ խիստ հորդորով խոսվում է այս կամ այն երգի կատարման մասին: Գրիչներն օգտագործում են տարբեր արտահայտություններ ու բնորոշումներ, որոնք հասուլ են եղել տվյալ ժամանակաշրջանին և դիտարժան են երաժշտության գործնական տեսության շրջանակներում:

Գործնական մեծ կիրառում ունի երգը կամ երգեցողությունը, որպես ստեղծագործության կատարման կերպի անվանում: «իւր իսկ բաղձանս ունելով երգել սովաւ» (Հ. 214), «երգեմք սովորաբար» (Հ. 219), «երգել քեզ փառք» (Հ. 222), «երգ աւրհնութեան» (Հ. 241, 242, 251):

Թվերգությունը կամ թիւ ասելը հոգևոր երգեցողության մեջ, ինչպես արդեն նկատել ենք, ասերգի իմաստ է կրել: Կատարման այս կերպը միջնադարում հանդիպում է նաև սաղմոսել համարժեքով: Թեև՝ ծորուն սաղմոսները երգային կերտվածք ունեն: Այսպես, Դավթյան սաղմոսների ժողովածուի հիշատակարանում կարդում ենք. «երգել սովաւ և սաղմոսել և խաւել ընդ Աստուծոյ» (Հ. 214):

Հիշատակարաններում հաճախ երգելը փոխարինված է եղանակել համարժեքով: Օրինակ՝ «որք կարդայք կամ եղանակէք» (Հ. 203), «որք տեսանէք կամ եղանակէք» (Հ. 312):

Սակայն, որոշ գրառումներում դրանք հանդես են գալիս որպես միմյանց հաջորդող բաղադրիչներ: Օրինակ՝ «զուարծացին սովաւ՝

երգելով և եղանակելով»: Թվում է, որ եղանակելը առավել առնչվում է մեղեղային զարգացած նկարագիր ունեցող երգերին:

Մեծ հետաքրքրություն է առաջացնում կատարման կերպի նվագել կամ նվագարանել բնորոշումը, որը, թվում է հիմնականում առնչվում է նվագարանային երաժշտության ոլորտին: Այստեղ, սակայն ակնհայտ է նաև հոգեոր երգեցողության մեջ երգելուն համարժեք նրա գործառույթի առկայությունը. «Քաղցրաբարբառ ձայնիւ պուասխումէ նուգարանէք» (Հ. 226), Սաղմոսարանի հիշատակարանում նշվում է. «Ի նրւագելն զսազմոս» և «Նրւագեն մանկունք եկեղեցոյ» (Հ. 207): Հաջորդ հիշատակությունում կատարման հիշյալ կերպը կարծես մատնանշում է ծորուն մեղեղային նկարագիր ունեցող երգեցողություն. «Որք նուագէք աստուածային անուշածայն եղանակաւ» (Հ. 265):

Հոգեոր երգեցողության կատարման վերոնշյալ բոլոր բնորոշումները կամ եղանակման կերպերը, ընդհանուր առմամբ ընկալվում են որպես համարժեքներ, սակայն, նկատի ունենալով միջնադարյան մատենագրության մեջ հաճախ հանդիպող նույնիմաստ բառերի և հասկացությունների ինչինչ իմաստային տարբերանիշեր, հնարավոր ենք համարում դրանք դիտել իրու միջնադարյան մասնագիտացված երգարվեստում կատարողական որոշ յուրահաստուկ գծեր շոշափող նշանակյալներ: Բնորոշումների նմանօրինակ բազմազանության մեջ հնարավոր է նկատել նաև Սուրբ Գրքից ոճավորված տիպական դարձվածքների որոշակի ազդեցությունը:

Ընդհանրացնելով՝ կարող ենք նշել հետեւյալը: Մեր դիտարկումները ցույց տվեցին, որ հայ միջնադարյան մասնագիտացված երգարվեստի երաժշտապատմական խնդիրների պարզաբանումներում անչափ կարեոր նշանակությամբ են հանդես եկել պատմագրական բազմազան նյութերը, որտեղ ներկայացվել են հստակ և խոսուն փաստագրական տվյալներ:

Հոգեոր երգարվեստի ժամաները այստեղ ներկայացվել են գործառույթի ոլորտների լայն ընդգրկմամբ, վերստին արժեքավորելով դրանց տեղն ու գերը միջնադարյան մշակութային համալիրում: Պատմագրական նյութերում կան նաև առանձին ժամաների անվանումների ճշգրտման և ժամանակին համակարգի ուղղուն պատկերը համալրելու արժեքավոր փաստեր:

Հայ Հոգևոր երգը մեզ ներկայացավ տվյալ ժամանակի հասարակական հաշեղության և քրիստոնեական աշխարհընկալման կայուն բնորոշիչներով։ Հոգևոր մոնողիան ընկալվեց որպես մշակութային կայուն տարր։ Աշխարհիկ անհաստների ստեղծագործությունների եզակի կանոնացումը եկեղեցու կողմից փաստեց այն իրողությունը, որ միջնադարյան մասնագիտացված երգարվեստում օրդանապես տարրալուծվեցին ազգային երաժշտամտածողության ավանդական սկզբունքները և նորովի կերպավորվեցին ժամանակի գեղագիտական արտահայտչական համայնքում։

## Ա ՄՓ Ո Փ ՈՒ Մ

V-XVդդ. Հայ միջնադարյան մատենագրությունը ներկա աշխատանքում դիտվեց որպես կարևոր երաժշտապատմական աղբյուր: Համապատասխան նյութերի համակարգումն ու ամփոփումը, ապա՝ դրանց ճանաչողական արժեքի բացահայտումը աշխատանքի հիմնական նպատակն էր: Ուսումնասիրվող նյութի բովանդակային բազմազանությունը մեզ հնարավորություն տվեց անդրադառնալ երաժշտական միջնադարագիտության այնպիսի ոլորտների, ինչպիսիք են աղբյուրագիտությունը, երաժտության տեսությունը, խաղաբանությունը և այլն: Պատմագրական համահավաք նյութի ճանաչողական լայն սահմանները թույլ տվեցին երբեմն միևնույն հիշատակությունն ընդգրկելու մի քանի ոլորտների մեջ:

Տարողունակ էր հավաքված նյութի ժամանակային «տեսադաշտը»: Ակսած հնագույն ծիսահավատալիքային համակարգից մինչև՝ զարգացած ավատատիրության ժամանակաշրջանին վերաբերող երաժտամշակութային շերտերի բնորոշչիներին առնչվող տարբեր դիտարկումները հնարավորություն տվեցին նորովի արժեքավորել հայ երաժտության պատմության զարգացման գործընթացը լուսաբանող կարևոր դրույթներ:

Պատմագրական նյութի բովանդակային շրջանակները ներառում են Հայ երաժշտության պատմամշակութային հիմնական՝ աշխարհիկ և Հոգեվոր ոլորտներին առնչվող կարևորագույն փաստեր: Հոգեվոր կամ մասնագիտացված երգարվեստը ներկայանում է որպես քրիստոնեական պաշտօներգությունը զարգացնող ուրույն մի ասպարեզ, մինչդեռ աշխարհիկ երաժշտարվեստը իր բազմաբնույթն նկարագրով, թվում է, որ սոսկ ժամանակային առումով է համապատասխանում միջնադարին: Հիմնական բնորոշչիներով այն ընդամենը շարունակում է ինքնամդիչ դիմամիկ զարգացումը պատմամշակութային արժեքների գեղագիտական-արտահայտչական համակարգի, որը ձևավորվել էր նախաքրիստոնեական տարբեր շրջափուկերում, սկսած բնապաշտական թովչության հմայախոսքերից, մինչև վաղ ավատատիրության շրջանի շքեղ պալատական իրախճանքները:

Ծիսական խորհրդանիշների համակարգում երաժշտական բաղադրատարրը ներկայացված էր երգի, պարի և նվագարանային երաժտու-

թյան ներդաշնակ միասնությամբ, որը հատկապես հուղարկավորության ծիսակարգում խիստ կայուն նկարագրով էր աչքի լնկնում: Ուշագրավ էր անսամբլային նվագարանային երաժշտության առկայության փաստը, որը, թերևս երաժշտարտահայտչական այս տիպի վաղագույն ավանդույթների մասին եղակի վկայություն է: Զարգացած ավատատիրության շրջանի նյութերում պահպանված հիմնական բաղկացուցիչների ամբողջությունը միանշանակ խոսում է երաժշտարտահայտչական բանաձևային մտածողության լավագույն ավանդույթների մասին:

Մեկ այլ՝ վիպասառապելական մշակութային շերտի ընդերքում են ձևավորվել ազգային երաժշտամտածողության արքետիպային այն ձևերը, որոնք հետագայում տարրալուծվեցին ինչպես վիպական բանահյուսության, այնպես էլ ժողովրդապրոֆեսիոնալ արվեստի բազմակերպ արտահայտչաձևերում՝ պահպանվելով ուշմիջնադարյան աշուղական արվեստի «զինանոցում»: Առաջին խորենացու հիշատակությունները վիպասանաց երգերի մասին, այսօր էլ արդիական են իրենց արժեքավոր նրբերանգներով և շարունակ ներկայանում են պատմաքննական տարբեր դիտարկումների և հարցադրումների կիզակետում: Դրանք հատկապես արժելորեկի են երգեցողության մեջ տեքստի և եղանակի տարբեր հարաբերակցությունների ու կերպերի ձևավորման և, ի վերջո, միջնադարյան մասնագիտացված երգարվեստում նորովի զարգացման օրինաչափություններն արձարծող դիտարկումներում:

Հայ միջնադարյան մատենագրությունը ներկայանում է որպես աշխարհիկ ծաղկուն կյանքի փաստերն արձանագրող կարևորագույն մի աղբյուր: Երաժշտության գործուն դերն այստեղ թեև միանշանակ չի արժեքավորվում, սակայն ակնհայտ է, որ մեծ մասամբ քրիստոնեական սուր քննադատական տողերում անգամ վկայվում է բարձր մշակույթ կամ վարպետ կատարում: Նախ՝ նշենք ժանրային բազմազանության մասին, ընդ որում ժանրերից շատերի անվանումները հանդիպում են միայն այս աղբյուրներում և սահմանափակվում են միջնադարի մշակութային միջնորդություն, տոփին, չէլ: Հատկապես հագներգություն-ը որպես երգային ժանրի անվանում, ինչպես վկայված էր Գրիգոր Մագիստրոսի մոտ, աչքի է լնկնում այն հանդամանքով, որ միաժամանակ վերաբերում է և՝ աշխարհիկ և՝ հոգեոր երգարվեստների ոլորտներին:

Աշխարհիկ երաժշտությունը պատմագրական նյութերում հանդես էր եկել նաև նվազարանային արվեստի բազմազանությամբ և հատկապես՝ կիրառական ոլորտների տարրորչմամբ։ Ոլորտներից մեկը վերաբերում էր միջնադարյան գուսանական արվեստին, մյուսը՝ ռազմական իրադարձությունների ժամանակ կատարվող նվազարանային կոչ-ազդանշաններին։ Հնդհանուր բնորոշիչն այն է, որ երկու ոլորտներն էլ աչքի են ընկնում Հիշատակված նվազարանների բազմազանությամբ և, որ դարձալ կարեորում ենք, դրանցից շատերը եղակի տեղեկատվություն են կրում։ Հատկապես ռազմի նվազարանների տեսականին ներկայացված է երբեմն նաև նվազարանագիտական հստակ տվյալներով, ինչը լավագույնս կարող է համարվել նվազարանագիտական այլ աղբյուրների հետ և նպաստել տվյալ նվազարանի կառուցվածքային և հնչերանգային հատկանիշների պարզաբանմանը։ Իբրև ցայտուն օրինակներ նշենք պղնձե փողերը, գլարափողերը, եղջերափողերը, չորեքձայնյա և այլն։

Եթե նվազախմբային կատարումներն այստեղ Հիշատակված էին միայն հարևան ժողովուրդներին վերաբերող նկարագրություններում, ապա բազմապիսի նվազարաններից կազմված անսամբլներով են ներկայացված գուսանների վարպետ կատարումները։ Դրանց կազմերը նույնպես տարբեր են. սկսած զույգ նվազարաններից, մինչեւ գուսանների մեծ խմբերը։ Ու թեև այդ նվազարաններից մեծ մասի անվանումները հանդիպում են Սուլք Գրքում, սակայն մանրամասն նկարագրությունները խոսում են ականատես և իրական փաստերի մասին և, հետևաբար տվյալ ժամանակաշրջանին բնորոշ նվազարանային և նվազախմբային երաժշտության մասին։

Դիտարկված նյութերում առկա էին նաև նվազարանային անվանումների տարրներցումներ, ինչպես նաև դրանց կառուցվածքային առանձնահատկությունները լուսաբանող իրարամերժ մեկնություններ։ Իբրև կարեոր կողմնորոշիչ այս հարցում դիտարկվեց այնպիսի երևույթ, ինչպիսին միևնույն անվանումն ունեցող տարածամանակյա և տարակերպ նվազարանների գոյության հավանականությունն է։

Կենսունակ ավանդույթներով ներկայացավ միջնադարյան ժողովրդապրոֆեսիոնալ՝ գուսանական արվեստը։ Հայ միջնադարյան պատմագրությունը լավագույն աղբյուրն է այդ արվեստի՝ որպես միջնադարյան մշակութային ակտիվ գործոնի պատմաճանաչողական

արժեքի բացահայտման համար։ Այստեղ ուրվագծվեցին կարևոր այն ոլորտները, որոնք բնորոշ են գուսանական արվեստին և ներկայացնում են մեծածագալ այն ասպարեզը, որը խթանում էր այդ արվեստի զարգացումը։ Դրանք պալատական և իշխանական տներում կատարվող խնջույքներն ու քաղաքային հրապարակային տոնահանդեսներն էին, զվարճանքի ամենատարրեր առիթներն ու անդամ հարսանիքի ու սպորադությունները։ Այստեղ էին Հղկվում գուսանական արվեստի ժանրային կատարողական բազմազանությունն ու պրոֆեսիոնալ բարձր վարպետությունը։

Հասարակական բոլոր շերտերում գործուն մասնակցությունը, ի վերջո հանգում է գուսանական երաժշտարվեստի օրինաչափորեն աճող ազդեցությունների շրջանակի մեծացմանը, որը դիտելի է նաև միջնադարյան մասնագիտացված արվեստում։ Պատմագրական աղյուրներում քիչ չեն հիշատակումներն այն մասին, թե ինչպես են գուսանների կատարումներով տարրվել Հոգևոր դասի ներկայացուցիչները, կամ Հուղարկավորության ու Հարսանյաց արարողությունների ժամանակ նշվել է գուսանների անցանկալի ներկայության մասին։ Մեկնողական գրականության մեջ առավել շոշափելի արդյունքներ են արձանագրվել հիշյալ երևույթի վերաբերյալ, որն էլ թույլ է տալիս նշելու որոշակի օրինաչափ երևույթի մասին։ Անտարակույս, գուսանական բազմակերպ արվեստում ծշակվել են երաժշտամտածողության ուրույն սկզբունքներ, որոնք յուրովի փոխակերպվել են Հոգևոր մոնողիայի զարգացման փուլերում։

Ինչպես ցույց տվեցին մեր դիտարկումները, մատենագրական նյութերում հատուկ Հոգևոր կումբը և երբեմն առանձնահատուկ շեշտագրումով են ներկայացված Հոգևոր երաժշտության ոլորտին առնչվող ամենատարբեր փաստերը։ Պատմական կարևորագույն իրադարձությունների քննությանը նվիրված մատյաններում Հայ պատմիչները կարևորել են Հոգևոր երգի հասարակական դերի նշանակության բացահայտումը, այս կամ այն երգի հեղինակի հիշատակումը և նույնիսկ խազագրության արվեստի զարգացման անհրաժեշտության արժեքավորումը։ Այստեղ իրենց գործուն մասնակցությամբ են նկարագրված Հոգևոր երգարվեստի ժանրերը։ Այդ նկարագրությունները հնարավորություն են տալիս ոչ միայն ճշգրտելու ժանրային անվանումներն ու դրանց բնորոշ տարբերակները, այլև բացա-

Հայտելու մի կողմից միջնադարյան մշակութային մթնոլորտում այդ ժանրերի համապատասխան գործառույթը, մյուս կողմից՝ համալրելու հայ հոգևոր երգարվեստի ժանրային համակարգի զարգացման գործընթացը լուսաբանող կարևորագույն փաստերը: Մասնավորապես, նշենք հայ հոգևոր ինքնուրույն երգի ստեղծման ժամանակաշրջանի ճգրտման փաստերի և հատկապես կցուրդի ժանրի անդրանիկ հիշատակությունը Ղազար Փարավեցու Պատմության մեջ:

Աշխատանքում դիտարկվեց նաև միջնադարյան անհատ երաժշտների ու երաժշտապետների գործունեությանը վերաբերող կարեւոր մեծածավալ նյութ, որը թույլ տվեց նախ՝ համալրելու այդ երաժշտների անվանացանկը և ապա՝ առավել շոշափելի դարձնելու նրանց գործունեության ոլորտները:

Հատկապես ձեռագիր հիշատակարաններում դիտարկվեցին բազմաթիվ փաստեր, որոնք առնչվում էին միջնադարյան երաժշտության գործնական տեսության խնդիրներին. եղանակաւոր տառերով՝ խազերով գրառված ծիսամատյանների գրիչներին ու խմբագիրներին, գրչական կարեւոր կենտրոններին, Շարակնոցների ու Գանձարանների ոճական որոշ առանձնահատկություններին: Դրանք արժեքավոր լրացումներ են հայ միջնադարյան երաժշտության տեսության ոլորտում:

Այսպիսով, հայ երաժշտության պատմության ուսումնասիրության մեջ պատմագրական մասյանները արժելորդվում են ինչպես փաստագրական նյութերի ընդգրկման, այնպես էլ դրանց պատմաճանաչողական սահմանների ընդլայնման հնարավորությամբ:

Շուրջ 27 հեղինակների աշխատությունների և V-XVդդ. հայերեն ձեռագրերի հիշատակարանների և գրական այլ ստեղծագործությունների համապատասխան նյութերը ներկայացված են 388 հիշատակություններից բաղկացած բնագրային հավելվածում: Վերջինս մեր արժեքավորմամբ կարող է դիտվել որպես հայ ազգային երաժշտապատմական գործընթացը լուսաբանող վավերագիր մի «մատյան», որի մեջ ամփոփված փաստառատ նյութը ծանրակշոր գեր կարող է կատարել ցանկացած պատմահամեմատական հետազոտության մեջ: Այդպիսով կարևորվում է ներկա աշխատանքի գործնական նշանակությունը հայ երաժշտության պատմության ուսումնասիրության և դասընթացային ուսումնական ծրագրերի մեջ, ինչպես նաև պատմահամեմատական և աղբյուրագիտական այլ հետազոտություններում: Համոզված ենք, որ ներկայացված

**Նյութը կարող է կարևոր նշանակություն ունենալ նաև հարևան ժողովուրդների երաժշտապատմական անցյալը ուսումնասիրելու համար:**

## **MUSIC IN THE V-XV CENTURIES' ARMENIAN LITERATURE**

### Summary

In the context of medieval musical study Armenian medieval historiography of V-XV centuries was considered as a significant musical and historical source. The main purpose of this research is generalization and systemization of corresponding material and thereupon revelation of their cognitive value. The content variety of studied material gave a chance to touch upon such spheres of medieval musical study as the study of origin, musical theory, khaz (a sign in old Armenian system of musical notation) study and etc. The wide cognitive range of collected historical material sometimes made it possible to include the same record into several spheres.

The most striking was time “horizon” granted by historiographical material. The various observations of musical and cultural layer characteristic features concerning different epochs since ancient ceremonial system up to advanced feudalism afforded an opportunity to evaluate in a new way fundamental tenets treating Armenian musical history development.

Thus, the content range of historiographical material includes essential datum, which have relation to the main secular and spiritual spheres of Armenian music. The church or professional art of singing presents itself as a rare field developing medieval Christian singing, whereas secular music with its multiform portrayal seems to correspond the Middle Ages only in the sense of time. With its main characteristic features it only continues self-inducing, dynamic development of a musical and cultural complex, the main aesthetic and expressive system of which was formed in different pre-Christian periods beginning with pantheist bewitchments up to luxurious palace celebrations of early feudalism.

In the system of special ritual symbols the musical component was represented as a harmonious unification of song, dance and instrumental music,

the stable description of which was especially striking at funeral procession. Remarkable is the fact of existence of orchestral music, which, perhaps, is a unique illustration of ancient musical and expressive traditions of this type. The entity of main components preserved in materials of advanced feudalism period unequivocally points to the best traditions of musical and expressive formula thinking.

In the depth of another mythological cultural layer were formed those archaic types of national musical thinking, which later on decomposed into multiform expressive means of epic folklore and professional art being also maintained in the “arsenal” of late medieval bard art. Movses Khorenatsy’s records about epic-writers’ songs are urgent today with their valuable nuances and continuously appear in the centre of various historical observations and interrogations. They are especially valuable in the observations concerning formation of different correlations and manners between the text and melody in singing and, finally in research about development regularities of medieval professional singing.

Armenian medieval historiography presents itself as a significant source recording facts of prospering worldly life. Though the active role of music isn’t evaluated unequivocally, but it’s obvious that high art and masterly performance are mentioned even in the lines of Christian sharp criticism.

The secular music appeared in historiographical materials with variety of instrumental art and especially with diversity of applied spheres. One of the spheres concerned medieval goosan (Armenian national songster) art, the other concerned instrumental appeal-signals performed during military events. The general characteristic feature is that the both spheres arrest one’s attention with variety of mentioned musical instruments, and we must stress once again, that many of them carry unique information. Especially, the assortment of military musical instruments is sometimes presented with distinct datum of instrumental study, which can be best compared with other sources of instrumental study and contribute to the interpretation of structural and timbre features of the following musical instrument. As eminent examples we can mention horns, brass horns, bended horns, four-part horns as well as polyphonic horns.

As it is generally characteristic of written sources, in our research we fixed different interpretations of musical instrument names, as well as incompatible commentaries of their structural peculiarities. As an important orientation in this problem we observed such phenomenon, as the probability of existence of different musical instruments at different periods of time having the same name.

Medieval goosan (Armenian national songster) art presents itself with vital traditions. Armenian medieval historiography is the best source to reveal the historical and cognitive value of this art as an active factor of medieval culture. Here we outline those significant spheres, which are characteristic of goosan art and present the voluminous field contributing to the development of this art. Those were palace feasts and town public festive performances, different entertainments, even wedding ceremonies and funeral rites. They improved goosan art genre variety and performance mastery peculiar to oral traditions of musical art.

As our observations show, various facts concerning the sphere of spiritual music are presented in Armenian medieval historiographical materials with special care and sometimes with peculiar stress. In manuscripts devoted to examination of the most important historical events Armenian historiographers attached importance to the revelation of spiritual song public role significance, mentioning of this or that song's author and even evaluation of khaz system development. The genres of spiritual art of singing are described with their active participation. These descriptions afford an opportunity not only to define more exactly genre names and their characteristic variants, but also to reveal on the one hand the application of these genres in medieval cultural atmosphere, on the other hand to complete the most important facts treating genre system development process of Armenian spiritual art of singing.

We also clarified such an important phenomenon, as statement of decisive role and genetic high value of historiographical materials in the process of detecting Armenian spiritual song individual authors, when the mentioned information is generally unique in medieval literature. In other cases we marked the active role of these materials in the context of other literary sources.

We also examined very important voluminous material concerning the activity of medieval musicians and music masters, which made it possible to complete the list of those musicians and outline their activity spheres. The records particularly attach importance to musical and pedagogical activity spheres of individuals and testify about the specific significance of these spheres in medieval educational system. At the same time, it is mentioned that many of the individuals were skillful connoisseurs of musical theory and Khaz art.

Thus, in the context of medieval musicology Armenian medieval historiographical manuscripts are evaluated for including documentary materials, as well as for possibility of historical and cognitive border expanding.

The corresponding materials from works of about 37 authors and V-XV centuries Armenian manuscripts were presented in an original appendix consisting of 375 records. According to our estimation the latter can be considered as a documentary “register” treating the Armenian national musical and historical development process and its content full of facts can play weighty role in any historical and comparative research. Thus, we attach importance to the significance of the following research in the study of Armenian music history and in drawing up course curriculums, as well as in other historical and comparative researches. We are sure that the presented material can be of importance for the study of the musical and historical past of neighbouring nations as well.

# ԲՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾ

## ԿՈՐՅՈՒԽՆ Վ դար

1. Գրերի գյուտից հետո Մեսրոպ Մաշտոցի հայրենիք վերադարձի մասին:

Եվ արդ, երբ Հիշելին եկավ, մոտեցավ թագավորական քաղաքին, իմաց տվին թագավորին և սուրբ եպիսկոպոսին: Նրանք նախարարագունդ ավագանու բազմությունն առնելով քաղաքից դուրս եկան, Ռահ (Քասախ) գետի ափին դիմավորեցին երանելիին: Եվ ցանկալի ողջույնը միմյանց տալուց հետո՝ այնտեղից ցնծության ձայներով և հոգեւոր երգերով ու բարձրածայյն օրհնություններով ետ դարձան քաղաքը, և տոնական ուրախությամբ անցկացրին օրերը:<sup>229</sup> (Էջ 55)

2. Մեսրոպ Մաշտոցի և նրա աշակերտների մասին:

Այնտեղ այնուհետև չէին հարբում գինով, այլ լցվում էին հոգով և սրբաերը հոգեւոր երգերով պատրաստում ի փառս և ի գովություն աստծու:

(Էջ 83)

3. Սահակ Պարթևի հուղարկավորության նկարագրությունից:

Վերցրին սրբին սաղմոսներով և օրհնությամբ և հոգեւոր երգերով, օր ու գիշեր գնալով քիչ օրերից հետո հասցրին Տարոն, մինչև բուն իսկ Աշտիշատ գյուղը:(Էջ 89)

4. Մեսրոպ Մաշտոցի հուղարկավորության նկարագրությունից:

Վահանն ու Հմայակը, աշխարհական բազմության հետ, վերցրին նրան վախճանվածի պատրաստությամբ, սաղմոսներով ու օրհնությամբ, և հոգեւոր ցնծություններով, վառած կանթեղներով ու բորբոքյալ ջահերով և բուրող խնկերով, և ամբողջ լուսաճածանչ աշտանակով, և այն լուսավոր առաջախաղաց խաչանշանով, բարձրացան Օշական: (Էջ 95)

<sup>229</sup> Կորյուն, Վարք Մաշտոցի, բնագիրը ձեռագրական այլ ընթերցվածներով, թարգմանու-թյամբ, առաջաբանով և ծանոթագրություններով ի ձեռն պրոֆ. Մ. Աբեղյանի, Եր., 1941:

## ԱԳԱԹԱՆԴԵՂՈՍ

### Վ դար

**5. Հայոց Տրդատ թագավորի առաջնորդությամբ, գլոթերի գեմ ճակատա մարտում հունական զորքի տարած հաղթանակի մասին:** III դար

Իսկ մյուս օրը առավոտյան Հրամայեց (կայսրը) ծիրանի պատմուճանը Տրդատի վրա նետել, և զարդարեցին կայսերական զարդով, ցցերով նրա վրա թագավորական նշանը, և ոչ ոք չգիտեր նրա մասին: Հրաման ելավ ամենքին, թե սա ինքն իսկ կայսրն է: Եվ առնելով զորքերի համակ բազմությունը, փողի ձայնով արագ մոտեցավ, մինչև որ կանգնեց թշնամիների գեմ հանդիման:<sup>230</sup> (Էջ 37)

**6. Տրդատ թագավորի հարսանիքի նախապատրաստության մասին:** III դար

Արդ՝ մինչեռ սուրբ Հռիփսիմեն այս ամեն աղոթքները Աստծուն էր մատուցում, եկավ Տրդատ թագավորը մտավ սենյակից ներս, ուղ նրան արգելափակել էին: Երբ նա մտավ, բոլոր մարդիկ, ոմանք ապարանքից դուրս, մի մասը փողոցներում, սկսեցին միասին երգել պարերով, վեր-վեր թռչելով, վազելով: Կեսը բերդի մեջ, մյուս կեսը քաղաքում լցվեցին խնջույքի, առևսասրակ պատրաստվում էին Հարսանեկան պարեր պա-րելու և կաքավելու: (Էջ 107)

**7. Աստծո տված պատվիրանները Մովսեսին:**

Դրանից հետո Նա (Աստվածը) երևաց քահանաներին ծերերով հան-դերձ և ամբողջ ժողովրդին եկավ, երևաց, բորբոքյալ կրակի տեսիլքով և մի ձայն շեփորի նման դրեց նրանց պատվիրանների պատգամներ, որոնք գրված էին Աստծո ձեռքով քարեղին տախտակների վրա: (Էջ 175)

**8. Աստվածաշնչում նկարագրված իրադարձությունների մասին:**

... բայց քանի որ նա փառքի կարու չէ, իր կամքը կատարելուց հետո Համբերատար իշխանությամբ բարձրացավ ոչ արտաքին որևէ (օգնությամբ), այլ իր բնական փառքով բարձրանալով ճանաչվեց երկնալոր զորքի կողմից, ըստ այն խոսքի, թէ «Աստված Համբարձակ օրհնությամբ և Տերը մեր ձայնի փողով»:

Իսկ փողը մի՞թե եղջյուղի նման չի հնչելու շնչով ուռած այտերով (լնդով) թուշը օդով լի բերանից փչվելով, որպեսզի աստվածասքանչ ավետիսներով գոչեն և լցնեն ամբողջ (տիեզերքը): (Էջ 225)

**9. Մարդարեների մասին:**

<sup>230</sup> Առաթանգեղոս, Հայոց պատմություն, թարգմանություն, Ա.Տեր-Ղևոնյանի, Եր., 1983, սկզբնաղբյուր՝ Արաթանգեղոյ Պատմութիւն Հայոց: Աշխատութեամբ Գ.Տէր-Մլուշեան եւ Ստ.Կանայեանց, Տիգիս, 1909:

Նրանք հնոցի հալոցից հանվեցին և եղան կռածո փողեր՝ ի սպաս դրված Տիրոջ Հրամաններին։ Նրանք գոչեցին և լցրին տիեզերքը։  
(Էջ 357)

**10. Աստվածաշնչում նկարագրված իրադարձությունների մասին։**

Ծովի մեջ այդ բաժակը նա (Մովսեսը) խմեցրեց Խորայելին, քանզի նրանք խմեցին Հոգին և երգում էին ծովի մեջ, որին Մարիամը (գինի) էր մատույակում իր քնարով և նրանք հաղթական անցան ծովը և օրհնեցին։

(Էջ 303)

**11. Քրիստոսի երկրորդ գալստյան մասին։**

Թռչունները երկրագրործության, հողագործության փողեր են առաքի-նության Հորդորող, ինչպես մեղուն կամ մրջունը վատերի ուսուցիչ ու նախատող են, այնպես էլ նույն ձևով թռչունները մեծածայն, մեծագոչ փողով Տիրոջ գալուստն են ազդարարում ամենքին՝ մեռելների Հարության միջոցով։ (Էջ 369)

**12. Եփրատ գետի ափին Գրիգոր Լուսավորչի կատարած մկրտության արարողության նկարագրությունից։ IV դար**

Օծության յուղը, որ Գրիգորը մարդկանց վրա էր թափում, գետի (Եփրատ) մեջ շրջան կատարելով՝ մարդկանց շուրջն էր պտտվում։ ... Ելան այնտեղից մեծ ցնծությամբ, սպիտակ Հանդերձներով, սաղմուններով և օրհնություններով։ (Էջ 465)

## ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ

*V դար*

**13. Վրթանես կաթողիկոսի Հուղարկավորության նկարագրությունից։**

*IV դար*

Նրանից (Խոսրով թագավորից) հետո մեռավ նաև Վրթանեսը՝ մեծ քահանայապետը։ Ամբողջ Հայոց աշխարհը հավաքվեց և մեծ արարողությամբ, սաղմուններով և հոգևոր երգերով, կանթեղներով, մոմերով, անուշահոտ ինկուլ՝ արքունական կառքերով փոխազդեցին սուրբ Վրթանեսին, մեծ վշտով, որ որբ մնացին իրենց բնիկ տիրոջից և հոգևոր վարդապետից, և մեծ լացով ու կոծով և տրտմությամբ Հուղարկավորեցին Դարանաղաց գավառի Թողուման գյուղը ...<sup>231</sup> (Էջ 87)

<sup>231</sup> **Փակստոս Բուզանդ,** Պատմություն Հայոց, թարգմանությունը՝ Ստ. Մալքսայանցի, Ել., 1968, սկզբնաղյուր՝ Փաւաստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1914։

**14. Հուսիկ կաթողիկոսի մահից հետո Հայաստանում հեթանոսական սովորությունների վերականգնման մասին:**

Իսկ որոնք գրագիտության արվեստից գուրկ էին, այսինքն ժողովրդի՝ նախարարների ու շինականների խառնիճաղանձ բազմությունը ... սիրում էին իրենց երգերը, առասպելները, վիպասանությունները, նրանց հանդեպ փութեռանդ էին, նրանց հավատում էին, նրանց մեջ հարատեռում: (Էջ 91)

**15. Հուսիկ կաթողիկոսի որդիների մասին:**

Նրանք Տարոնի երկրումն էին, եկեղեցու ավան Աշտիշատում, որտեղ նրանց պատ Գրիգորը շինեց առաջին եկեղեցին: Երկու եղայրները՝ Պապըն ու Աթանագինները, գնացին հասան այն գյուղը: Սաստիկ հարբեղով՝ նրանք ծաղրում էին աստծու տաճարը, երկուսով գնում մտնում էին այնտեղ գտնվող եպիսկոպոսանոցը, այնտեղ գինի էին խմում բողերի, վարձկանների, գուսանների և կատակարանների հետ, սուրբ ու նվիրական տեղերը արհամարհելով ոտնակոխ էին անում: (Էջ 105)

**16. Գնել իշխանի հուղարկավորության նկարագրությունից:**

Երբ ամենքին հայտնի դարձավ Գնելի սպանության իրողությունը, ձայնարկունները ևս լսեցին, (Փառանձեմը) ողբի մայր դարձավ, բոլոր ձայնարկունները սկսեցին ողքաձայն խաղի նման երգել<sup>232</sup> Տիրիթի սիրահարությունը, աչք տնկելը, մատնությունը, մահվան հնարք գտնելը, սպանությունը: Սպանվածի վրա կոծ անելով՝ աղիողորմ ձայնով երգում էին այս բաները: (Էջ 173)

**17. Դրաստամատի խնդրանքը Շապոհ արքային՝ տեսակցելու Արշակ թագավորին Անհուշ բերդում:**

Նա ասում է. «Եվ միայն մի օրվա համար, երբ ես նրա մոտ գնամ, հրաման տուր նրան կապանքներից ազատել, և ես իրավունք ունենամ լվանալ նրա գլուխը, օծել, ազնիվ զգեստ հազցնել, նրա համար սեղան պատրաստել, նրա առաջ խորտիկներ գնել, գինի տալ և ուրախացնել նվազարաններով<sup>233</sup> ճիշտ մի օր»: (Էջ 249)

**18. Դրաստամատի տեսակցությունը Արշակ թագավորին Անհուշ բերդում:**

Նրան ազնիվ զգեստներ հազցրեց, սեղան սարքեց նրա համար, նրան բագմեցրեց, նրա առաջ թագավորավայել բնթրիք դրեց ... նրան զվարթացրեց, միխթարեց և նվազարաններով<sup>234</sup> ուրախացրեց: (Էջ 249)

**19. Ներսես Մեծի հուղարկավորության նկարագրությունից:**

<sup>232</sup> Հնարավոր ենք համարում նաև «բողոք ձայնարկունները սկսեցին երգել ողբի ձայներում», «մրմունջների ձայներով» թարգմանությունը:

<sup>233</sup> Հրամարակված բնագրին համարժեք է «գուսաններով» թարգմանությունը:

<sup>234</sup> Նույնը:

Եվ աստծու մարդու՝ սուրբ Ներսեսի մարմինը վերցրին եկեղեցու սպասավորները և Փավստոս եպիսկոպոսը, պաշտոնյաների գլխավոր Տրդատը և Հայոց Մուշեղ սպարապետը և Հայր մարդպետը և արքունական բանակի ամբողջ ազգականների գումարը։ Մարմինը վերցրին Խախ ավանից, որտեղ սպանությունը կատարվեց, և տարան իր գյուղը՝ Թիլ ավանը։ Սրբին հուղարկավորեցին սաղմոսներով, օրհնություններով, վառված կանթեղներով, հանդիսավոր պաշտամունքով և շատ հիշատակություններով։ (Էջ 259)

20. Հուղարկավորության ծեսի նկարագրությունը Ներսես Մեծի օրոք։  
Եթե հանկարծ մեկը մեռնում էր, ոչ ոք չէր համարձակվում եկեղեցու կանոնից դուրս անհուսությամբ մեռելի վրա լալ, կոծ ու սուր անել, ողբեր ասել մեռելի վրա, այլ լոկ արտասուրքով, պատշաճ սաղմոսներով ու օրհնություններով, կանթեղներով ու վառած մոմերով հուղարկավորում էին մեռելը։ (Էջ 268)

21. Հուղարկավորության ծեսի նկարագրությունը Ներսես Մեծի մահից հետո։

Ներսեսի մահից հետո, երբ մեռելներին ողբում էին, փողերով, փանդիռներով և վիներով կոծի պարեր էին բռնում, մորուքները կտրած, երեսները պատառուտած, կին և տղամարդ դեմառղեմ ճիշդաղական պարեր խաղալով, ծափ զարկելով հուղարկավորում էին մեռելներին։ (Էջ 268)

22. Պապ թագավորի սպանության նկարագրությունից։

Երբ սկսեցին խմել, ուրախության առաջին բաժակը մատուցեցին Պապավորին, և իսկույն Հնչեցին թմբուկներն ու սրինգները, քնարներն ու փողերը իրենց ներդաշնակ ձայներով։ Վահանավոր զորքին հրաման տվին, և մինչ Պապավորը ուրախության գինին բռնած էր մատներով և նայում էր գուսանների խմբին, մինչ ծախ ձեռքը արմունկին հենած՝ մատներում բռնած ուներ ուսկե թասը, իսկ աջ ձեռքը դրել էր նրանի կոթին, որ կպած ուներ աջ ազդին, մինչ բաժակը բերանն էր տարել, որ խմեր, իսկ աչքերով հառած նայում էր գուսանների զանազան խմբերին, հունաց զորքերին ակնարկով նշան է տրվում։ (Էջ 272)

## ԵՂԵՇԵ Վ դար

23. Պարսից Հազկերտ արքայի հրամանով Տիգրոնում հավաքված հայազգին

Ներկայացուցիչների կատարած պաշտոններության մասին։

Այնուհետև սկսեցին բարձրածայն, սաղմոսներով ու Հոգևոր երգերով և մեծապայծառ վարդապետությամբ (իրենց) պաշտամունքը

կատարել մեծ բանակի դեմ հանդիման, և աներկուող ու անվախ Հոժարությամբ սովորեցնում էին իրենց մոտ եկող մարդկանց:<sup>235</sup> (Էջ 29)

24. Հայերի մարզպան Սեբուխսի կատարած գործերի մասին: V դար  
Մշտապես շատացրեց սեղանատան մժերքները և երկարացնում էր ուրախության ժամերը, գիշերների երկարատևությունը մաշերով արբեցողության երգերով ու լիտի պարերով. ոմանց համար սիրելի էր դարձնում երաժշտական կարգերն ու հեթանոսական երգերը: (Էջ 68)

25. Աղվանքում Հոներին ու պարսիկներին հաղթելուց հետո Վարդան Մամիկոնյանի վերադարձը Հայաստան: V դար  
Հայոց գորքը խիստ շտապով չվեց այնտեղից՝ մեծ ավարով և անչափ հարստությամբ նորից Հայոց աշխարհը վերադառնալու համար, և անտրում ուրախությամբ բարձր ձայնով երգում էին և ասում. «Գոհություն մատուցեք Տիրոջը, որովհետև նա բարի է, որովհետև նրա ողորմությունը Հավիտենական է» (Սաղմոս Ճշե): Եվ այս սաղմուսը մինչև վերջ երգելով կատարյալ աղոթքով ձայն էին տալիս Սուրբ Երրորդությանը: (Էջ 81)

26. Ավարայրի ճակատամարտի նախօրեին Սյունյաց իշխան Վասակը տեղեկացնում է պարսից զորավար Միհրներսեհին Հայոց զորքի բոլոր մանրամասներին:

(Միհրներսեհը Վասակից հարցնում էր, թե) Հայոց զորքը քանի գնդի են բաժանելու և նրանցից ովքեր պետք է պատերազմի մեջ մտնի, և ինչ են յուրաքանչյուր համհարգների անունները, և քանի փողհար պետք է ձայն արձակեն գնդի մեջ: (Էջ 95)

27. Ավարայրի ճակատամարտի նկարագրությունից:

(Պարսից զորավարը) Նշաններ բաշխեց, գրոշներ արձակեց և հրամայեց, որ մեծ փողի ձայնին պատրաստ լինեն: ... Երբ այս բանը տեսալ Մուշկան Նյուսալավուրտը, սպասում էր Արտաշրի գաղաններին, որը նրանց վրա նստած էր բարձր գիտանոցում, ինչպես նաև միջնաբերդում և գալարափողերի բարձր ձայնով շտապեցրեց իր գնդերին և առաջամարտիկ զորքերին և զորքերով շրջապատեց նրան (Վարդանին):

(Էջ 111-113)

28. Ավարայրի ճակատամարտին հաջորդող ժամանակաշրջանի նկարագրությունից:

<sup>235</sup> Եղիշէ, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, թարգմանությունը՝ Ե.Տեր-Մինասյանի, Եր., 1971, սկզբնաղյուր՝ Սրբոյ Հօրն մերոյ Եղիշէի վարդապետի մատենագրութիւնք, Վենետիկ, 1859:

(Հայ ժողովրդի) մըմունջներն ու երգերը սաղմոսներն էին, իսկ կատարյալ ուրախությունը՝ Սուլրը Գրքի ընթերցումը։ Ամեն մարդ ինքն իր մեջ եկեղեցի էր և նույն ինքը՝ քահանա։ (Էջ 97)

29. Պարսիկներից գերեվարյած հայ նախարարներն ու եպիսկոպոսները ողբում են Վասակ Մամիկոնյանի դավաճանությունը։

Այս ասում էին և շատ արտասուզ թափում կորուսյալի վրա. և միաժամանակ Հոգեոր երգեր էին երգում և ասում. «Լավ է տիրոջ վրա Հույս դնել քան մարդկանց» (Մաղմոս ձժլ): Որովհետև թեպետև նրանց ուսման ժամանակներն անցել էին, սակայն բազմաթիվ սաղմուներ բերան անելով՝ Հոգեոր երգակից էին դառնում մանուկների մատաղերամ բազմությանը։ Եվ այնպես էին պայծառացնում սրբության պաշտամունքը, մինչև որ դաժան դահիճներից ոմանք հրապուրվում էին՝ լսելով նրանց երգերի քաղցրությունը, որքան ձեռքից գալիս էր, թագավորի հրամանից գուրա զյուրություններ էին տալիս նրանց, սեր ու խնամք էին ցույց տալիս բոլորին և շատ անդամ Հոգում նրանց մարմնավոր կարիքները։ (Էջ 177)

## ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ

V դար

30. Հայաստանի նկարագրությունը, Արշակունյաց թագավորությունը երկու մասի բաժանվելուց առաջ։ IV դար

Դրանցով ուրախացած խնդում էին ձկնասեր ու մսակեր մարդիկ, բայց անուշ խորտիկներից առավել ուրախանում էին Հոգեոր կերակուրներով, սաղմոսներով ու մարգարեական երգերով օրհնում էին պարզմատու, ամեն բարիքներով աշխարհը լցնող Քրիստոսին։<sup>236</sup> (Էջ 25)

31. Մելրոպ Մաշտոցի և Սահակ Պարթեի թարգմանչական գործունեության մասին։

Որոց օգնելով զօրէր երանելին Մաշտոց, Հանդիպեցուցանէր զհայերեն աթութայսն ըստ կարգման սիլովքայիցն Յունաց, ստէպ հարցմամբ և ուսանելով ի սուլրը կաթողիկոսէն Սահակայ զաթութայիցն գաղափար, ըստ անսայթաքութեան յունին։ Վասն ոչ լինին բաւական ի վճարել անսիսալ ուղղակի, առանց առաջնորդելոյ նոցա սրբոյ հայրապետին Սահակայ, որ յոյժ առցեալ անցուցանէր վարժիւք զբագում գիտնովքն Յունաց, եղեալ կատարելապէս հմուտ երդողական տառիցն և Հոետորական յորդասաց յայտնաբանութեան,

<sup>236</sup> Կազար Փարպեցի, Հայոց պատմություն, թարգմանություն՝ Բ. Ուլուբաբյանի, Եր., Պետ. Համալսարանի հրատ., 1982:

ևս առաւել տեղեկացեալ փիլիսոփայական արուեստիցն ցուցանիւր: (Էջ 15-16)

Նրանց (ավագ թարգմանիչների) օգնությամբ երանելի Մաշտոցը կարողացալ հայերեն այլուրենը կարգավորել դասավորել լսատ հունարենի Հնչյունային վանկական անսայթաք դասավորության՝ հաճախ հարցնելով ու սուրբ Սահակ կաթողիկոսից իմանալով հունարեն տառերի օրինակները: Պարզ է, որ նրանք ուղղակի չեն կարող անսխալ կատարել գործը, առանց առաջնորդվելու սուրբ հայրապետ Սահակի կողմից, որը վարժվածությամբ առկեցուն՝ բարձր էր հունաց շատ գիտնականներից՝ լինելով կատարելապես հմուտ հունարեն տառերի Հնչյունաբանությանը և հոետորական հորդասաց մեկնություններին, առավել ևս՝ ցույց էր տալիս իր տեղյակությունը փիլիսոփայական արվեստին: (Էջ 36-37)

Նրանց օգնութեամբ երանելի Մեսրովը կարողացաւ հայերէն վանկեր թունաց վանկերի և Հնչյունների դասաւորութեան համաձայն, յունականի նման ուղիղ կարգաւորել՝ յաճախ հարցնելով ու սովորելով սուրբ Սահակից տառերի օրինակը: Որովհետև նրանք ուղղակի անսխալ չեն կարող կատարել՝ առանց սուրբ Սահակ հայրապետի առաջնորդութեան, որ իրա կատարեալ գիտութեամբ թունաց շատ գիտնականներից բարձր էր, նա կատարելապես հմուտ էր ձայնավոր տառերին և հոետորական հարուատ գիտությանը. մանավանդ տեղեակ էր և փիլիսոփայական արուեստին:<sup>237</sup> (Էջ 28-29)

### 32. Գրերի գյուտաից հետո Սահակ Պարթևի գործունեության մասին:

Եվ երբ Հայոց սուրբ հայրապետ Սահակն ավարտեց հոգևոր մեծ վաստակի գործը, նրանից հետո շուտով դպրոցներ բացեցին ուսումնական խմբերի համար: Բազմացան գրիչների դասերը, որոնք գերազանցում էին միմյանց: Սուրբ եկեղեցիների արարողությունները զարգարվեցին: Կանանց ու տղամարդկանց բազմությունները ճոխացան փրկչի տոների ժամանակ և մարտիրոսացածների վկայարաններում: Գոհանապով հոգևոր միսիթալրության շահերով, մեծ խորհրդի Հաղորդությունից երջանկացած նրանք իրենց տներն էին գնում մեծամեծներն ու տղաները սաղմոսելով և կցորդներն ասելով ամենայն տեղ՝ Հրապարակներում, փողոցներում և տներում: (Էջ 39-41)

### 33. Հայ առանուտերերի ու նախարարների վերադարձը Տիղբենից: Վդար

Արդ, Հայոց տանուտերերը, իրենց հետ եղած սեպուհների հետ միասին, հասան Հայոց աշխարհը: ... Եվ նրանց ընդառաջ ենելով, Քրիստոսի պաշտոնյաների դասն իր հետ բերել էր կենսատու խաչի

<sup>237</sup> Լազար Փարաֆեու Հայոց Պատմությունը եւ Վահան Մամիկոնեանին գրած թուղթը, Ալէքսանդրապոլ, 1895, (թարգմանությունը մերն է, խմբագիր՝ Ռոզա Հովհաննիսյան):

նշանը և առաքելանման նահատակ սուրբ Գրիգորի նշխարները, սաղմուների ձայնը, որ Դավիթ մարգարեն երգեց սուրբ Հոգու չնորհիվ, որոնց երբեմն իրենք էլ ձայնակցելով, Հոգմորականներից առավել լավ նվազում էին երգերը երկնավոր ցնծալից ուրախությամբ։ (Էջ 129)

## ՍՊՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ

### Վ դար

#### 34. Նոյի առասպելի մասին։

Բայց ավելի հաճախ արամյան ազգի ծերունիները փանդիռների նվազակցությամբ ցուցքերի և պարերի երգերում հիշատակում էին այս բաները։<sup>238</sup> (Էջ 33)

#### 35. Արամի առասպելի մասին։

Բայց թեպետ և (սրանք) բուն մատյաններում չկան, սակայն, ինչպես Մար Աբաս Կատինան պատմում է, փոքր և աննշան մարդկանց ձեռքով գուանական (երգերից) ժողովված են արքունի դիվանում։ (Էջ 59)

#### 36. Տիգրան Երվանդյանի մասին։

Երվանդյան Տիգրանը, ... որի մասին մեր հները փանդիռներով երգում էին, ասում էին, որ նա լի է եղել բոլոր (Հատկություններով), որոնք պիտանի են մարդուն։ (Էջ 87)

#### 37. Տիգրան Երվանդյանի մասին։

Ահա այժմ ես զվարճանում եմ՝ որ փոքր ուրախություն զգալով, որ Համուռ եմ այն տեղը, երբ մեր բնիկ նախնի սերունդները թագավորության աստիճանի են հասնում։ Ուստի վայել է մեզ այստեղ մեծ գործ կատարել և շատ պատմական ճառեր գրել, որոնց հիմունքը մենք ինքներս արժանացանք կարգալու իմաստուն, իմաստունների մեջ իմաստնային և բազմարդյուն հեղինակի չորս հագներգությունների մեջ։ (Էջ 128-129)

#### 38. Տիգրանի կողմից Աժդակակի սերունդներին գերեվարելու և Մասիսի ստորոտները բնակեցնելու մասին։

Այս բանը ճշմարտապես պատմում են և Թվելյաց երգերը, որ, ինչպես լսում եմ, ախորժեկով պահել են գինեվետ Գողթն գավառի կողմի մարդիկ, այդ երգերում շարժվում են պատմությունները Արտաշեսի և նրա որդիների մասին, այլաբանաբար հիշելով և Աժդակակի սերունդները, նրանց վիշապագուններ կոչելով։ (Էջ 99)

#### 39. Տիգրան առաջինի որդիների մասին։

<sup>238</sup> Սովոր Խորենացի, Հայոց պատմություն, թարգմանությունը՝ Ստ. Մալիսասյանցի, Երևան, 1981, սկզբանաղյուր՝ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Քննական բնագիրը՝ Մ. Աբեղյանի և Ա. Հարությունյանի, Տիգրան, 1913:

Արա որդիներն են Բաբ, Տիրան և Վահագն, որի մասին մեր աշխարհի առասպելներն ասում են.

«Երկնում էր երկինք, երկնում էր երկիր,

Երկնում էր և ծովը ծիրանի.

Երկունքը բռնել էր ծովում

Նաև կարմիր եղեգնիկին:

Եղեգնի փողովը ծուխս էր ելնում,

Եղեգնի փողովը բոց էր ելնում.

Եվ բոցիցը դուզս էր վազում

Մի պատանեկիկ.

Վազում էր խարսյաշ մի պատանեկիկ,

Նա հուր մազեր ուներ, (ապա թե՝)

Բոց մորուք ուներ,

Եվ աչքերն էին արեգակներ»:

Սենք մեր ականջով լացինք, ինչպես այս ումանք երգում էին  
փանոփոներով: Դրանից հետո երգում էին, թե կուկել է վիշապների  
հետ ու հաղթել, և Հերակլեսի քաջագրծություններին շատ նման  
բաներ էին երգում նրա մասին: (Էջ 103)

#### 40. Տորք Անգեղի առասպելի մասին:

Տորքի մասին՝ նրա ուժեղության և սրտոտ լինելու պատճառով եր-  
գերը պատմում էին չափազանց անհարմար բաներ, որոնք ոչ Սամսո-  
նին են հարմարում, ոչ Հերակլեսին և ոչ Սագդիկին: (Էջ 129)

#### 41. Սանատրով թագավորի մասին:

Սրա մասին առասպելաբանում են, թե մի ինչ-որ նորահրաշ  
սպիտակ կենդանի աստվածներից ուղարկվեց և նա պատահում էր  
երեսային: (Էջ 189)

#### 42. Արտաշես առաջինի և Սմբատ Բագրատունու պատերազմը Երվանդ թագավորի դեմ: Մ.թ.ա. II դար

Իսկ Սմբատը հրամայեց պղնձե փողերը հնչեցնել և իր գորքի  
ճակատն առաջ շարժելով սլանում էր, ինչպես արծիվը կաքալների  
երամի վրա: (Էջ 191)

#### 43. Վիպասանների երգերը Արտաշես առաջինի մասին:

Արտաշես վերջինի գործերից շատ բան հայտնի է այն վիպասանք-  
ներից, որ պատմվում են Գողթնում, ինչպես քաղաք շինելը, խնամու-  
թյունն Ալանների հետ և Սաթենիկի իբր թե սիրահարությունը  
առասպելական վիշապազուններին, այսինքն Աժդահակի սերունդնե-  
րին, որ գրաված ունեն Սամիսի ամբողջ ստորոտը: ... Այս բոլորը,  
ինչպես ասացինք, քեզ հայտնի են վիպասանների երգերից: (Էջ 209)

#### 44. Արտաշեսի և Սաթենիկի առասպելի մասին:

Վիպասաններն երգելիս այս տեղն առասպելաբանում են ասելով.

«Հեծավ արի Արտաշես արքան գեղեցիկ ու ձին,  
 Եվ հանելով ոսկեօղ շիկափոկ պարանը,  
 Եվ անցնելով գետն իբրև սրաթև արծիվ,  
 Եվ նետելով ոսկեօղ շիկափոկ պարանը,  
 Զգեց մեջքը Ալանաց օրիորդի.  
 Եվ շատ ցավեցրեց փափուկ օրիորդի մեջքը,  
 Արտաքար իր բանալը հայցնելով»:  
... Նույնակես Հարսանիքի մասին երգում են առասպելաբանելով: ...  
(Էջ 213-215)

**45. Արտաշես թագավորի հուղարկավորության նկարագրությունից:**  
 Մթ.ա. մոտ 160թ.

... Գահը շրջապատում էին որդիներն ու ազգականների  
 բազմությունը, և սրանց մոտ զինվորական պաշտոնյաները,  
 նահապետները, նախարարական գնդերը ...: Առջևից պղնձեած փողեր  
 էին հնչեցնում, իսկ հետեւից սևազգեատ ձայնարկու կույսեր և լալիկան  
 կանայք, բոլորից վերջը՝ ուսմիկների բազմությունը: (Էջ 231)

**46. Արտավազդի առասպեկիլ մասին:**

Արտավազդի մասին Գողթնի երգիչներն այսպես են առասպելաբա-  
 նում. Արտաշեսի մահվան ժամանակ, հեթանոսական սովորությամբ,  
 շատ կոտրածներ էին լինում, սրա վրա ասում են, Արտավազդը նեղա-  
 նում է և ասում է Հորը.

«Երբ դու գնացիր,  
 Ոհ բոլոր երկիրը քեզ հետ տարար,  
 Ես այս ավերակների վրա  
 Ի՞նչպես թագավորեմ»: (Էջ 231)

**47. Նազինիկի մասին: Մթ. II դար**

Մի օր Սյունյաց Բակուր նահապետը նրան ընթրիքի հրավիրեց:  
 Երբ զինով ուրախություն էին անում, Տրդատը տեսալ մի կին, որ  
 շատ գեղեցիկ էր և նվագում էր ձեռներով՝ անունը Նազինիկ<sup>239</sup>: (Էջ  
 257)

**48. Հայոց նկարագրից:**

Բայց ինձ թվում է, որ ինչպես այժմ, այնպես էլ Հին Հայերը չեն  
 ունեցել սեր դեպի գիտությունը և իմաստալից երգարանները: (Էջ  
 215)

**49. Պալատական խնջույքներից մեկի նկարագրությունից: IV դար**

Իսկ Արշակը նույնիսկ չպատսխանեց (Վաղենտիանոս կայսեր)  
 թղթին, այլ ինքնահավաքանությամբ պարծենում էր միշտ  
 կերուխումների ժամանակ և վարձկան երգիչների բերանով, իբրև թե

<sup>239</sup> Բնադրի «Երգէր ձեռամբ» արտահայտության առավել ստույգ թարգմանությունն է՝ «պարում էր ձեռքերով»:

Աքիլլեսից էլ ավելի քաջ ու արի է, բայց իրոք նմանվելով կաղ ու սրագուխ թերսիտեսին: (Էջ 335)

50. Շապուհի թագավորության ժամանակ Հայոց արքունիքում կազմակերպված խնջույքի նկարագրությունից: V դար

Մի ուրիշ անգամ էլ ուրախության խնջույքի ժամանակ Խոսրով Գարդմանացին գինով Հարբած՝ հետամուտ էր լինում մի կնոջ, որը վարժ մատներով ջնար էր ածում: (Էջ 411)

51. Մեսրոպ Մաշտոցի գործունեության մասին:

Այս ժամանակներն եկավ Մեսրոպը, բերելով մեր լեզվի նշանագրերը: Նա Վռամշապուհի և մեծն Սահակի հրամանով ընտրությամբ երեխաներ ժողովեց, ուշիմ, առողջակազմ, լավ ձայնով և երկար չնչառությամբ և բոլոր գավառներում դպրոցներ հիմնեց: (Էջ 407)

52. Հայրենիքի նկարագիրը Ակեքսանդրիայից վերադառնալուց հետո:

Եվ մինչ նրանք (Հայրերս) սպասում էին մեր գարձին, որ փառավորվեն իմ ամենիմաստ արվեստով և լիակատար պատրաստությամբ, և մենք էլ Բյուզանդիայից շտապ շտապ դիմերով, հույս ունեինք հարսանիքներում պարել խիզախ և արագ շարժումներով, և առագաստի երգեր երգել, այժմ այդ ուրախության փոխարեն, գերեզմանի վրա ողբեր եմ ասում, ողորմելի հառաչերով. նույնիսկ չհասա տեսնելու նրանց աչքերի փակվելը, լսելու նրանց վերջին ձայնն ու օրհնությունը: (Էջ 449)

## ՀՐՎԱՅԻ ՄԱՍԻԿՈՒՑԱՆ

VII դար

53. Քրմերի դեմ Հակամարտության նկարագրությունից:

Իսկ սուլբ Գրիգորը իր հետ առնելով Արծրունյաց, Անձևացյաց և Անգեղ տան իշխաններին և 300 մարդ (ունեցող) մի փոքր գորքով, երրորդ ժամին շարժվեց գեպի բլուրը՝ որտեղ Արձանն էր (գլխավոր քուրմը): ... Եվ երբ մոտեցան գեպի բարձունք տանող ճանապարհին, Արձանն ու Դեմետրը առաջ անցնելով Հնչեցրին պատերազմի փողերը և հանդինաբար հարձակվեցին միմյանց վրա: <sup>240</sup>(Էջ 36-37)

54. Նույնի մասին:

Աչա, երբ եկան և երկու կողմն գուպար կազմեցին, քրմական զորքը վեց Հազար ինը Հարյուր քառասունվեց հոգի եղավ, իսկ Հայոց իշխանները՝ յոթ Հազար ութանասուն հոգի: Այնժամ Հնչեցին պատերազմի փողերը և բոլոր կողմերից միմյանց վրա հարձակվեցին: (Էջ 40)

<sup>240</sup>Հռվիշան Մամիկոնյան, Տարոնի պատմություն: Թարգմանությունը Վ.Վարդանյանի, Եր., 1989:

**55. Տրդատ թագավորի պայքարը հույների դեմ:**

... զյուղի առաջակողմբ հետիւսներն էին շրջափակել, հետևակողմն էլ հեծյալներն էին պաշարել: Ապա սկսեցին պատերազմական փողերը Հնչեցնել. շուրջ բոլորը սաստիկ որոտում էր, և (ամեն կողմից) ձիերի վրնջյունն էր լավում: (Էջ 54)

**56. Տրդատ թագավորի պայքարը հույների դեմ:**

Եվ ապա ետ դարձավ թագավորը այդ փոքրիկ կոտորածից. Հնչեցրեց ազդարար փողերը և սպասեց մինչև զորքերը բոլոր հավաքվեցին մի տեղ: (Էջ 55)

**57. Արծրունյաց իշխան Վարդ պատրիկի կոտջ՝ Մարիամի ողբը:**

-«Վայ ինձ, մեղավորիս, որ զրկված եմ աստվածային բարուց: Ողբացե՛ք ինձ, ամենայն կանայք, մասնակից եղեք իմ արցունքներին ամենայն ձայնարկուներ»: (Էջ 61)

**58. Կնոջ մահից հետո իշխան Վարդ պատրիկը վերադարձնում է Կվառու և Պարեխ ավանները:**

Սա նաև Կվառսն ու Պարեխը ետ վերադարձրեց սուրբ Կարապետին, որովհետև անորեն իշխաններից մեկը վերցրել էր երկուսն էլ ու նվիրել մի գուսանի: (Էջ 63-64)

**59. Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ պարսից զորքի տարած Հաղթանակը հույների դեմ ճակատամարտում:**

Ահա, երբ բավական մոտեցել էին քաղաքի դռանը, Վահանը պարսիկներից խած ասպազենն ու հանդերձանքը տալով քաղաքացիներին՝ ներսից գուրս կանչեց նրանց: Ապա խրատ տվեց, թե երբ պարախկները տեսնեն ձեզ, դուք միահամուռ դեպի քաղաքը արշավեք և ներս մտնելով հաղթանակի փողեր Հնչեցրեք: (Էջ 74)

**60. Հայ-պարսկական ռազմական ընդհարումներից մեկի նկարագրությունից:**

Երբ գնացին հասան Մեղադի գետի եզերքը, նրանց թողեց գետի այս կողմը, որ քնին [Հանգստանան], իսկ ինքը դարձնակալներին պատրաստ պահելով, սպասավորներին հրամայեց անջատել ձիերի երամակը՝ արոտի տանելու պատրիվակով: Այսպես բոլորին անհոգ անելով, հանկարծակի երկու կողմերից Հնչեցրին փողերը և բոլորին մեջտեղ առնելով կտրեցին նրանց գլուխներն ու գետը նետեցին: (Էջ 76)

**61. Հայ-պարսկական ռազմական ընդհարումներից մեկի նկարագրությունից:**

Եվ այնպես խտացավ ու բորբոքվեց ճակատամարտը, որ նույնիսկ իրար ճանաչելով անհնարին դարձավ. միայն փողերի ձայնից և դրոշների տեսքից էին տարբերում միմյանց: (Էջ 88)

**62. Հայ-պարսկական ռազմական ընդհարումներից մեկի նկարագրությունից:**

Եվ երբ սրերով կատաղեցրած ջորիներին բաց թողեցին (թշնամու) բանակի մեջ, և իրենք հետամուռ լինելով Հնչեցրին պատերազմի փողը, և առձեռն սկսեցին կոտորել:

**63. Վահան և Սմբատ Մամիկոնյանների և Վարազ Պալունու զոլքերը**  
պարսիկներին հաղթելուց հետո վերադառնում են՝ Կենաց Վայրք:<sup>241</sup>  
Զեռագիր տարբերակ Ա.

Նրանք գալով իջևանում են գյուղում. միմյանց ընդառաջ եկան նրանք երգելով, որից հետո նեխված դիակների մասին շէր էին Հորինում.

Կերան գագանք զմարմին դիակացն և գիրացան  
կուզ կերեալ ուռեաւ իբրև զարչ.  
Եւ աղուէս հպարտ եղև քան զառեւծ.  
Գայլք քանզի շատակեր էր՝ պայթեաց.  
Եւ արջ, զի զոր ուտէն՝  
Զմանայ առ ինքն, ի սովոյ մեռաւ.  
Անգեղք, զի ագահ էին, նստան  
Եւ այլ ոչ կարացին վերանալ.  
Մկունք զի շատ տանէին ի ծակս իւրեանց՝  
Մաշեցան ոտք նոյցա: (Էջ 246-247)

Զեռագիր տարբերակ Բ.

Նրանց ընդառաջ եկան պարողները (կամ խմբածները) և երգելով  
բազմից գովաբանում էին: (Էջ 246)

Զեռագիր տարբերակ Գ.

Երբ մտան գյուղը, բնակիչները երգով ու պարով ընդառաջ եկան  
նրանց: Բայց հետո, երբ դիակներն սկսեցին նեխվել, նրանք դրա  
վրա երգ Հորինեցին (շեր կապեցին), ու ասում էին... : (Էջ 246)

## ՍԵՐԵՆՈՒ VII դար

**64. Վահան Մամիկոնյանի ապատամբությունը պարսից արքա Պերողի դեմ: V դար**

Սրա դեմ աճապարեց Վահան սպարապետը 30000 ընտիր սպառագեններով, դասավորեցին գոմնդ առ գունդ և ճակատ առ ճակատ և Գերանի դաշտում փողի ձայնով փութով հարձակվեցին միմյանց վրա:<sup>242</sup>(Էջ 66)

<sup>241</sup> Թարգմանություն՝ Ռ. Հովհաննիսյանի:

<sup>242</sup> Սերենս, Պատմություն, թարգմանություն՝ Գ.Խաչաղյանի և Վ.Եղիազարյանի, Եր., 2004, սկզբնաղյուր՝ Պատմութիւն Սերենսի, աշխատասիրությամբ Գ.Աբգալյանի, Եր., ՀՍՍՀ ԳԱ, հրատ., 1979:

- 65.** Պարսից Խոսրով արքայի նվիրատվությունը Սմբատ  
Բագրատունուն՝ վաչկատուն ցեղերի գեմ պայքարը գլխավորելու  
նախօրյակին: 607թ.
- Այնժամ արքան նրան տվեց տանուաերսությունը, որ անվանվում  
է Խոսրով-Շում: ... Տվեց նրան քառաձայն փողեր և արքունի Հե-  
տևակներից: (Էջ 101)

## ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑԻ

### VII դար

- 66.** Գյուտ կաթողիկոսի նամակը՝ ուղղված Աղվանից թագավոր Վաչեին՝  
քրիստոնեական հավատին հաստատուն մնալու պատվիրանով: 462  
թ.
- Այս ասացին և համատարած ծովը շարժեցին քո վրա: Մրրկաբեր  
քամիներ իջան նրա վրա, շարժեցին և փոթորկեցին նրա բազմաթիվ  
ալիքները: Ահավոր գագաններով, զանազանակերպ դրոշակներով,  
բազմաձայն փողերով, գալարափողերի գոյզուններով, անտառացած  
նիզակներով ... եկան և միահամուռ քեզ վրա հարձակվեցին բազմա-  
թիվ հեթանոս ցեղեր: <sup>243</sup> (Էջ 15)
- 67.** Աղվանքի Ցրի քաղաքում գտնվող սուրբ նահատակների մասունք-  
ները հայտնաբերելուց հետո բերվում են Վաչագան թագավորի  
պալատը: V դար
- Եկ երբ սրբերը ժամանում էին, ընդառաջ է ելնում ինքը՝ թագա-  
վորը, թագուհու հետ միասին հետիւոն, բազմաթիվ  
սպասավորներով, տերունական պայծառ խաչով, խունկերով, գույն-  
ըզգույն ծաղիկներով ու ծողովրդի անթիվ բազմությամբ՝ հոգեսոր  
երգերով Քրիստոսի առաքինասեր նահատակների առվիվ օրհնելու  
և փառավորելու Հիսուս Քրիստոսին՝ ճշմարիտ աստծուն: (Էջ 45)
- 68.** Վաչագան թագավորի օրոք ընդունված կանոնադրության XII  
կետը: V-VI դդ.
- Նրանց, որոնք լացուկոծում են տան գլխավորին, գուսանների  
հետ պետք է կապել, տանել թագավորի դուռը և պատժել, իսկ հա-  
րազատները չպետք է համարձակվեն նրանց հետևից լաց լինել: (Էջ  
67)
- 69.** Ջվանշիր իշխանի աղոթքը: VII դար
- Իսկ երբ համընդհանուր հարության օրը կգա, երբ  
աներևույթները կփոխանորդեն երևացողներին, փողային

<sup>243</sup> Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմանությունը՝  
Վ. Առաքելյանի, Եր., 1969, մկրմաղբյուր՝ Մովսեսի Կաղանկատացւոյ,  
Պատմութիւն Աղվանից Աշխարհի իրաւ ընծայեաց Մ. Էմին, Մովսես, 1860:

**բարձրագույն Հնչյունները ննջեցյալներին կարթնացնեն քնից:** (էջ 147)

**70. Զվանշիր իշխանի մասին:**

Այսպես պատահեց, որ այդ ժամանակ մեծ իշխան Զվանշիրը մեկնեց լեռնականների կողմերը զբոսանքի, որպեսզի տարսվա տոնական օրերը ուրախ անցկացնի՝ երկրներ շրջելով: Խանդավառ գուսաններով ներբռդված սիրառատ Զվանշիրը՝ պարթևահասակ զորավարը, որ գերազանց խոհականությամբ բռորին ենթարկում էր իր իշխանությունը, ... Հպարտանում էր իր իմաստուն քաջությամբ: (էջ 173)

**71. Զվանշիր իշխանի մահվան առիթով Դավթակ Քերթողի հորինած ողբի մասին:**

Այդ ժամանակ Դավթակ անունով ճարտասանի մեկը, որ ծանոթ էր տաղաչափական արվեստին, ստեղծագործելու մեջ վարժ ու հաջողակ, քերթողական ընթերցման մեջ առաջադեմ, մեջտեղ եկավ: Սա առատ խոսքերի պաճուճանքներով ճարտար կերպով երգում է և շատ լավ գովարձնում ունենալով այնպիսի լեզու, ինչպիսին ունենում է արագագիր գրողը: Սա շարունակ գալիս և երկար ժամանակ մնում էր պալատում: Իսկ երբ մեծ զորավարի հանկարծահաս սպանության առթիվ օրհասական շշուկը տարածվեց արևելյան երկրի (Աղվանքի) վրա, այդ ժամանակ նա սկսեց երգել այբբենական կարգով դասավորված այս ողբը բարյացպարտ Զվանշիրի վրա: (էջ 176)

**72. Աստվածաշնչում նկարագրված իրադարձությունների մասին:**

Այդպես էլ ասում է Ծննդոց գրքում, թե Ղամեքը իր համար երկու կին առավ, թե Ղամեքի որդի Հոբաղը ստեղծեց երգերն ու քնարները, մանավանդ փողերն ու տափիղները, թմբուկներն ու բոլոր երաժշտական ձայները, որոնք ստեղծում են կուսապաշտություն և հորդորում իգամոլ ախտերը, ինչպես նաբուգործնոսորը այն ձայներով հրավիրելով 11 խելահեղ կաճառները՝ կուսպաշտության էր կանչում: (էջ 190)

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴՐԱՍԻԱՆԱԿԵՐՏՑԻ X դար

**73. Վահագնի առասպելի մասին:**

Տիգրանը ծնեց Բաբ, Տիրան, Վահագն որդիներին, որի (Վահագնի) մասին լարերը կտնտոցով բախելով պատմում էին, թե նա կուվել է

վիշապների դեմ և հաղթել (նրանց) և համեմատում էին նրան քաջ Հերակլեսի Հերսոսով յունների հետ: <sup>244</sup> (Էջ 22)

74. Ներսես Մեծի բարենորոգչական գործունեության մասին: IV դար  
Իսկ եպիսկոպոսները, ըստ որոշակի կարգի հաստատում էին յուրաքանչյուրին. և՝ քահանաներին, և՝ սարկավագներին, և՝ կեսսարկավագներին, և՝ վերծանողներին, և՝ սաղմոսերգուներին: Արանք ցրմեռով վայելչապես հարդարում էին Հայաստանի բոլոր եկեղեցիները՝ ի փառ Աստծո: (Էջ 46)

75. Հովհանն Մանդակունու մասին: V դար  
Եւ նրանից հետո հայրապետական աթոռություն է Հովհանն Մանդակունին, որ առկեցուն էր ամեն (տեսակի) հոգևոր համարներով, և ծիսակարգը բարեկարգելով պայծառապես ճոխացրեց սուրբ եկեղեցիների ամբողջ աղոթական ժամակարգությունը, և կարգավորում է արթնական կենցաղին (վերաբերող) զգուշացուցիչ ճառերը, որ բերում են Հոգու փրկություն: (Էջ 60)

76. Բագավանի նկարագրությունը արաք ոստիկան եղիստի  
արշավանքից հետո: IX դար  
Շատերից մնացած քչերը ծերպերից փախատական լինելով, գալով գտան երկաթից սրախովանող ընկած սրբերի դիակիները և Քրիստոսի եկեղեցու բնմը բարեզարդությունից անշքացած, աղիողորմ ողբեր էին Հորինում խրախճանքի երգերի փոխարեն: (Էջ 110)
77. Սպարապետ Սմբատ Բագրատունու հուղարկավորության նկարագրությունից: 855թ.

Որի մարմինն էլ հենց Հոգևորական դասի (մարդիկ) սաղմոսներով, օրհնութեամբ և Հոգևոր երգերով տարան դրին Սուրբ Դանիել մարգարեի վկայարանում, որը նույնպես նետվել էր առյօնների փոսը:

(Էջ 130)

78. Աշոտ Ա Բագրատունու հուղարկավորության նկարագրությունից:  
890թ.  
... զորքերի խումբը զենքերով և ընտանեկան զարդերով, և մեծ կաթողիկոպ՝ շրջապատված նշանակիրներով և եկեղեցու ուրիշ կղերականներ, որոնք նրա առջևից գնալով սաղմոսերգություններ և օրհնություններ էին երգում: ... Եվ այսպես տեղ Հասան: Պետք էր այնտեղ տեսնել ողբերգակ կոյսերին և կանանց արտասվաթոր կականումն ու ողբերը: (Էջ 143)

79. Դվինի երկարչի մասին: 893թ.  
Ինձ թույլ եմ տալիս պատմել ազգակիցների և կարեկիցների և մարդկանց մերձավոր հարապատների մասին, որոնց կականումն ու

<sup>244</sup> Յովհաննու կաթողիկոսի Դրասիանակերտություն, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, (Ժարգմաննությունը մերն է, խմբագիր՝ Ռուզա Հովհաննիսյան):

**ողբումը** և գուժկան ճիշերով ու կանչերով և գոյցուններով **աշխարհը** և **երգեցիկ կույսերի** և **սևազգեստ կանանց**, և տղամարդկանց վշտահար Հեծեծանքով սպացող աղիողորմ ձայները բարձրանալով հասնում էին մինչև երկինք: (Էջ 162)

80. **Սմբատ Բագրատունին Ատրպատականի ամիրա Ափշինին տալիս է պատանդներ իր ազգակիցներից:** IX դար

Սմբատը հարկադրված կատարում էր նրա կամքը՝ տալով իր որդի Աշոտին և եղբորորդի Սմբատին պատանդների պայմանով, ինչպես նաև իր կրտսեր եղբոր՝ Շաարուհի գուտարը տվեց նրան կնության: Երբ վերցրեց և հարսանյաց պարերը և կաքավները պարեցին, չկամեցավ գնալ դառնաշոնչ ժամանակ: (Էջ 181)

81. **Աշոտ երկաթի ամուսնության մասին:** X դար

Իսկ արքայորդին՝ թագավորը, գնալով իրեն կնության է առնում Սևադա կոչվող մեծ իշխան Սահակի գուտարը և այնտեղ պարեր պարելով և կաքավներ հորինելով Յուսուփի ոստիկանը նրան տալիս է արքայական թագ, զգեստներ ... և իսմայելյան հեծյալների օգնական մի գունդ: (Էջ 300)

## **ԹՈՎԱՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ ԵՎ ԱՆԱՆՈՒՆ IX-X դարեր**

82. **Սմբատ Բագրատունու հաղթանակը՝ Մերուժան Արծրունու դեմ ճակատամարտում:** IV դար

(Մերուժան Արծրունու) դեմ զորքը շարժեց Հայոց սպարապետ Սմբատը՝ Բագրատ Բագրատունու որդին, իր հետ ունենալով նաև բյուզանդացիների բազմաթիվ վահանավորների, փողփողացող գրոշներ, կայսեր Հրամաններն ազդարարող փողեր ու զինավառված բազում զորագնդեր: Շրջապատեցին Մերուժանի զորքը, որպեսզի նա չաճապարի ճողովպել:<sup>245</sup> (Էջ 86)

83. **Հայոց իշխան Բագրատի և Մուսեի պատերազմի մասին:** 851թ.

Մինչեւ նրանց զորքերը կովում էին միմյանց դեմ, հնչում էին փողերը, ծածանվում էին դրոշները: (Էջ 127)

<sup>245</sup> **Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան,**  
**թարդմանությունը՝**

**Վ.Վարդանյանի, Եր., 1978, սկզբանդըուր՝ Թովմայի վարդապետի Արծրունու Պատմութիւնն Տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917:**

- 84. Արաբ թագավորի Զափրի նախապատրաստությունը Հայերի դեմ ճակատամարտին:** IX դար  
 Արաբների (թագավորը կովից առաջ) Հարցրեց նաև թե քանի՛ դրոշներ, և կամ քանի մասերի են բաժանելու, քանի փող են փչելու կամ քանի թմբուկ են զարկելու: (Էջ 142)
- 85. Արաբ զորավետ Բուղազի կողմից Աշոտ իշխանի ամրոցի պաշարման տեսարանը:** IX դար  
 (Արաբների զորքում) բարձրացվել էին դրոշները, ճնշում էին փողերը, քնարները ու դոփում էին թմբուկները: (Էջ 148)
- 86. Գուրգեն Արծրունի Ապուպեճի զորքի նախապատրաստությունը արաբների դեմ ճակատամարտին:** IX դար  
 ... եկեղեցու սպասավորները կատարեցին Տերունական կանոնը. իսկ երաժիշտները երգեցին Փարավոնին Հաղթելու երգը, գոչելով «Տերը կայորտակի պատերազմները, Տեր է նրա անունը»: Մյուսները տրվածածայն երգեցին Հնոցի օրհնությունը, ի վերուստ զորավիրակ կանչեցին աստծո հրեշտակին: (Էջ 162)
- 87. Գուրգեն Արծրունու այցը Բուղազարին:** IX դար  
 Սուրբ կապեցին մեջքին, նստեցրին մեծազարդ ջորու վրա և նը-ժույգներ կանգնեցրին առջեկց և ետևից՝ սպառազինված զենքով ու զարդարանքով: Փողերի ձայնը, թմբուկների դոփունը և երաժշտական այլ գործիքների ձայնները Հնչեցին չորս կողմը: (Էջ 164-165)
- 88. Արաբ զորքի նախապատրաստությունը աղվանների դեմ ճակատամարտին:** IX դար  
 (Աղվանների Հարձակման մասին լսելուց հետո) Հրաման տվեցին ամբողջ (արաբ) զորքին ենել պատերազմի: Եվ ահա աղաղակ, փողեր, քնարներ, ջնարներ, անհամար զորքը սպառազինված զենքով: (Էջ 194)
- 89. Արաբ զորքի նախապատրաստությունը աղվանների դեմ ճակատամարտին:** IX դար  
 Իսկ երբ Աղվանից զորավետն ընթերցեց արաբ թագավորի թուղթը, փութաց իջնել լեռան վրայից և եկավ Բուղայի մոտ: Եվ մինչև կհասներ զորավետի մոտ, նրան ընդառաջ Հանեցին զինավառված զորագնդեր՝ ընտրովի երիվարներով: Նրան ընդառաջ տարան մեծազարդ ու աչքի ընկնող նժոյգներ, երգասացներ, գովասացներ և առջեկց և ետևից՝ երաժշտական բազում գործիքներ, մինչև որ մտավ բանակը: (Էջ 197)
- 90. Աղվանների դեմ ճակատամարտի նախօրյակին Մուշեղ Արծրունին մտորում է Քրիստոսի երկրորդ գալուստի մասին:** IX դար  
 (Սմբատ) սպարապետի որդի Մուշեղ իշխանը նստել էր այնտեղ կեռվում, մի բլրի վրա և ապշում ու զարմանում էր մեծապես:

Մտքով նա վերացավ դեպի Քրիստոսի երկրորդ գալուստը: Եվ որովհետև վարժվել էր Աստուածաշունչ զրքին, ընտելացել ու ծանոթ էր ճարտասանական արվեստին, նույն ժամին Հորինեց մի խոհական երգ, որի սկիզբն է. «Իմ անձը սրտի անզբաղ աշքով նայում է կրկին անդամվա գալուստին» Հինգ տուն՝ ութ (Երաժշտական) խաղից:

(Էջ 195)

91. Արաբների կողմից Դերենիկ Արծրունու սպանության մասին: IX դար

Շատ եմ փափագում միատեղ հավաքված իմաստասերների, որպեսզի ողբով ճոխացնեմ ամելիքս, քանզի վրա հասած այսքան աղեաների վրա ուժ չունեմ դամբանական ողբեր երգելու: (Էջ 235)

92. Վասպուրականի իշխանապետ Դերենիկ Արծրունու հուղարկավորության նկարագրությունը: 885թ.

(Արփիագեղ տիկին մեծն Սոփին) դեն զցեց իր պատվական մարդագաղուս զարդաքողը, հագավ սև զգեստ և պատրաստեց թիսակերպ ծածկոց իր գլխի համար: Առաջ կանչեց սուգ ու ողբ անող կանանց, խմբեր կազմեց, դաս-դաս արեց, կարգավորեց և բոլորել տալով, երգեցրեց երգայեցիների և Խրայելի թագավորների ողբերը: (Էջ 272)

93. Գագիկ Արծրունու թագավորության նկարագրությունը: X դար

(Մըբատ թագավորը) նրա գլխին դրեց թագ, որը զուտ ոսկա էր, հույժ վարպետ հորինվածքով, հյուսված մարգարիտներով և մեծագին ու պատվական ակներով, որոնց չեմ կարող նկարագրել: Հազցրեց ոսկեզրդ պատմուճան, ինչպես նաև սուսերով գոտի, ոսկեհուռ ու փայլուն զարդով հանդերձ, ինչը վեր է պատմողների մտքից ու խոսքից: Այսա Գագիկը նստեց ձիուն, հյոյակերտ ու ուկեհյուս զարդերի մեջ փայլերով ինչպես արեգակն աստղերի մեջ: Աջից ու ձախից սպառազինված զորականների բազմություն էր: Թնդում էին ձայները, փայլատակում սրերը, հնչում եղջերափողերը, սրինգներն ու հեշտալուր քնարները, տափիղները հանդերձ դրոշներով առջևից ու ետևից: (Էջ 289)

94. Գագիկ Արծրունու պալատի նկարագրությունը:

Քանի որ նրանում (նկարված է) ոսկեզրդ գահույք, որի վրա երեվում է պատվական ճոխությամբ բազմած արքան, շրջապատված լույսի նման պատամիներով, ուրախարար սպասավորներով: Այնտեղ են նաև գուսանների խումբը և աղջիկների հիացքի արժանի խմբապարը, ... ինչպես նաև սուսերամարտիկների խմբերը, ըմբշամարտիկների կովմիներ, առյուծների ու այլ գազանների խմբեր, տեսակ-տեսակ պաճուճանքներով զարդարված թռչունների երամներ: (Էջ 298)

**95. Տերունական տոնների ժամանակ առագաստից Գագիկ Արծրունու դուրս գալու տեսարանը:**

Այլև նրա առջեկից նետվող կրակահոսքեր էին, թնդյունի ձայներ, փողերի հնչուններ և առհասարակ բյուրավոր մարդկանց գոչուններ: (Էջ 306)

### ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ

*X դար*

**96. 983թ. Մոկսի Ապարանք տաճարի նկարագրությունից**

Եվ երբ տաճարը կառուցվեց կենդանացած քաղաքում ... (լցվեց) ընտրյալ առագաստասպասավորների խմբերգերով:<sup>246</sup> (Էջ 381)

**97. 983թ. Մոկսի Ապարանք տաճարում Սուրբ Խաչին նվիրված տոնաշանդեսի նկարագրությունից:**

Եվ աղաղակեցին բերկրալիր բերանով, օրհնառաք բարբառով, ընտիր շուրթերով, օրհնությունների տավիղներով, աղեցիկ բացականչություններով, ցնծության ձայններով, չնչավոր քնարներով, անձնավորված փողերով, Հոգևոր խնջույքներով, մարմնեղեն ծնծղաներով, կաքավման կայթերի տրոփով, ասելով Հոգեպարզեւ և աստվածաշունչ սաղմոս: (Էջ 387-388)

### ՈՒԽՏԱՆԵՍ

*X դար*

**98. Անանիա Նարեկացու մասին:**

Արդ, այս գրելով քեզ տեսնում ենք կատարյալ, և աստվածային շնորհով պայծառացած, և ս. Հոգու լեցուն գիտությամբ, և հոգևորական երգի գեղգեղումներով առավել ամենքից, և Աստծո պատվիրանները ստացած և զորացած (ավելի) քան բազումները:<sup>247</sup> (Էջ 81)

**99. Տիգրան Ա-ի որդիների մասին:**

Իսկ սրա (Տիգրան Երվանդյան) ավագ որդին՝ Բարսիրանը, որի քաջությունը երգիչները գովաբանում էին խաղերի պարերում, ասում են աստվածացվել է Վրաց աշխարհում, (որտեղ) նրա հասակի չափով

<sup>246</sup> Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրութիւն, Ցիասարակութիւն պատմութիւն ամենայօր նշանի ասսուածեան Խաչին,

Վենետիկ, 1840, (թարգմանությունը մերն է, խմբագիր՝ Ռողա Հովհաննիսյան):  
<sup>247</sup> Ուխտանես եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Էջմիածին, 1871, (թարգմանությունը մերն է, խմբագիր՝ Ռողա Հովհաննիսյան):

արձան կանգնեցնելով պատվում էին զոհերով, ինչպես Հավաստում է պատճառիքը: (Էջ 37)

**100. Արտավագդի առասպելի մասին:**

Եվ թեպետ իմ այս խոսքից հետո Արտաշեսի մասին պատմվում է այլ կերպ և այլաբանաբար, սակայն ես ժամանակով և տարիներով հետ զնալով ու լսողներին զարմացնելով ասում եմ, թե իրեն՝ Արտաշեսի թագավորելու ժամանակ ինչ եղավ, թեև հեթանոսներին ու անհավատներին խնայելն ու չխնայելն Աստծո գործն է: Որովհետև այսպիսի հրաշքների ներումը նրան է տրված, ինչպես նաև բոլոր նման բաներին ներելը, ինչ որ կա խաղերի և երգերի և առասպելների և գրուցների և մարդկանց վիպասանությունների մեջ, տարիներ անց լսողներին զարմանքի մեջ գցելով, թե ի՞նչ է եղել Արտավագդի թագավորության շրջանում: (Էջ 59)

## ՍՏԵՓԱՆՈՍ ՏԱՐՈՆԵՑԻ

### XI դար

**101. Անանիա կաթողիկոսի կատարած բարեկարգությունների մասին:**

X դար

Այս ժամանակ ծաղկելով պայծառանում էր Հայաստան աշխարհի կրոնական Հանդեսների կարգերը:<sup>248</sup> (Էջ 173)

**102. Կամրջաձորի վանքի առաջնորդ Պողիկարպոսից հետո նրան**

Հաջորդում է Սամվելը: X դար

Եվ նրանից հետո (Հաջորդեց) իմաստուն Սամվելը, (որ) բազմաշնորհ էր սուրբ գրերի գիտություններից և երաժշտական երգերից: (Էջ 174)

**103. Անանիա կաթողիկոսի կարգադրությամբ կառուցված Նարեկա վանքի մասին: X դար**

Այսպես և այս ժամանակ, նույն կարգադրությամբ կառուցվեց Նարեկա վանքը Ռշտունյաց գավառում՝ իր բազմազարդ պաշտոնապայծառ երգողներով և գիտնականներով: (Էջ 174)

**104. Արաբների և բյուզանդացիների ճակատամարտերից մեկի նկարագրությունից: X դար**

Եվ ինքը՝ թագավորը (բյուզանդացիների) գալով ցամաքով մոտենում էր բանակին ... և հրամայում էր Հնչեցնել պատերազմական փողերը: (Էջ 249)

<sup>248</sup> Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմություն Տիեզերական, Պետերբուրգ, 1885, (թարգմանությունը մերն է, խմբագիր՝ Խոզա Հովհաննիսյան):

## ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՅԻ

### XI դար

**105.** Հայաստանի նկարագրությունը թուրք-սելջուկյան արշավանքից  
Հետո: XI դար

Արևելքից սուր, արևմուտքից մահ,  
Հյուսիաց սպանդ և հարավից հուր.  
ՈՒրախությունը երկրից վերացավ.  
Ամենուր լոեց ձայնը քնարի,  
Լոեց թմբուկի բռմբյունը զվարթ,  
Բարձրացան ողբի աղաղակները:<sup>249</sup> (Էջ 2)

**106.** Բյուզանդացի կայսր Վասիլ Բ-ի պայքարը ապստամբ Նիկեփոր  
Փոկասի դեմ: 1022թ.

(Հունաց) Թագավորը միայն 4000 մարդով գիշերը ծովն անցնելով՝  
Հարձակվեց ապստամբի բյուրավոր գորգերի վրա, բայց այդքան  
բազմության մեջ ոչ ոք չմեռավ, բացի հենց նույն ապստամբ  
Փոկասից, որի գլուխը կտրելով՝ հրամայեց խաղաղության փող  
Հնեցնել: (Էջ 11)

**107.** Հայոց նկարագիրը: 1044 թ.

Իսկ երեք տարուց հետո հասավ Հայոց աշխարհի կյանքի վերջը,  
որովհետև մի տարվա ընթացքում վախճանվեցին մեր աշխարհի  
երկու թագավորներն էլ՝ Հարազատ եղբայրներ Աշոտն ու  
Հովհաննեար: ... Ավագակների բույն դարձան վանքերի  
Հանդիսավոր տեղերն ու նրանց մեջ եղած եկեղեցիները: ... Իսկ  
նրանց մեջ ընակվողներին որ՝ իսուսքը կորի ներկայացնել. նրանց  
երգերի քաղցրածայնությունը, անդադար սաղմոսերգությունը,  
աստվածային գրքերի ընթեցումները, Տերունական տոների  
հանդեսներն ու նահատակների պատիվը: (Էջ 30-31)

**108.** Հայաստանի (մասնավորապես Անիի) նկարագրությունը բյուզան-  
դացիների արշավանքից Հետո: 1045 թ.

Կար ժամանակ, որ այս երկիրը ճանապարհորդների գեմ  
բացվում էր իրեւ տնկախիտ, կանաչազարդ, տերևալից, պտղաբեր,  
գեղեցկաշուք ու երջանիկ մի դրախտ, քանզի իշխանները  
զվարթատես գեմքով բազմում էին գահին, իսկ նրանց առջև, գար-  
նանաբեր երինակառ ծաղկանոցների նման, երգ ու զրոյցների  
Հանդեսներ էին միայն լինում, ուր փողերի ու ծնծղաների և այլ  
երգարվեստների ձայները մարդկանց սիրտն ու Հոգին համակում  
էին ուրախությամբ ու բերկրանքով: (Էջ 33)

**109.** Արծնի կոտորածի մասին: 1048թ.

<sup>249</sup> Արքատակես Լաստիվերտցի, Պատմություն, թարգմանությունը՝ Կ. Յուղացյանի, Եր., 1971:

Այժմ կաշխատեմ ուժերս ներածին չափ ընդարձակ գրել մեր պատմությունը, որպեսզի բոլորին ստիպեմ արտասվել: Կկանչեմ նաև Երեմիայի հետ ձայնարկու կանանց, որ ինձ հետ ողբեր Հորինեն: (Էջ 46)

110. Հայկական Մորմբյանս գյուղի մոտ պարսից գորքի պատրաստությունը բյուզանդացիների հետ ճակատամարտում: 1058 թ.

Հետեւից Հոռոմների գորքն էր գայիս, որոնք իսկուն փողեր Հնչեցրին. անօրեններն այդ լսելով՝ փախան: (Էջ 85)

## ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ XI դար

111. Պետրոս Գետաղարձ կաթողիկոսի խաչանշան գավազանին նվիրված չափածո տաղի (Հագներգության) մասին: XI դար

Այս Հագներգությունը նման չէ բանաստեղծական ստորոգությամբ Հորինվածքի, ինչպես Հագներգություն, որը կազմված է կարկատված խոսքերից և կամ դափնե ճյուղով երգվող Հոմերական (չափածո) մի քերթվածքի, այլ մի տաղ է Հոմերական՝ քաջ որորված (Հմտորեն չափված): Սա դյուցազներգական մի տաղ է, Հորինված Հելլենացիների չափով:

Իսկ եթէ շարակցությունները դիտենք բանաստեղծական արվեստի տեսանկյունից, ապա կդտնենք քառասուն ոտք ... քանզի թվաբանությունից, երաժշտությունից, երկրաչափությունից և աստղաբաշխությունից է շարաբարձյալ:<sup>250</sup> (Էջ 33)

112. Վահրամ Պահլավունու մահվան առիթով:

Եկ ինչ է այդ, միթե՛ դրա վրա այդպիսի ողբ կասեն, քանզի արժանապես արձակելու են գամբանական և ողբերգական ձայներ, կամ հատկապես ներողական գերեզմանական բանաստեղծություն: (Էջ 36)

113. Վահրամ Պահլավունուն նվիրված Հանդիսությունների նկարագրությունից: XI դար

... որ և քո Հանդեսների մրցությունների ժամանակ տաղեր և սովորներ Հորինելով ազատների խմբերն էին պարում և քաղաքների հրապարակներում ու փողոցներում իրու դյուցազներգություն էին երգում: (Էջ 41)

<sup>250</sup> Գրիգոր Մագիստրոս, Թղթեր, բնագիրն առաջաբանով և ծանոթագրություններով, լույս բնածայեց Կ. Կոստանդնյանց, Արքսանդրապոլ, 1910, (թարգմանությունը մերն է, խմբագիր՝ Ռոզա Հովհաննիսյան):

**114. Վահրամ Պահլավունու մասին:**

Քեզ վայելում էր թագավորի նման այսպիսի պալատում ձեմել, ...  
այսպիսի փողհարներով և թմբուկներով ճոխանալ: (Էջ 41)

**115. Վահրամ Պահլավունու մահվան մասին:** XI դար

Եւ պատշաճ չէր քո արիությանն ու զորությանը քաջության  
թըշվառ ապավինություն և կանանց ողբերգություններ ոգել, մեր  
խակ արական և բնական իմաստափրական երգով քեզ (Համար)  
ներբողական և գերեզմանական ողբեր խմբապարել և որդիական և  
(Հոգելոր) սննդի պարտքերը հատուցել: (Էջ 41)

**116. ՈՒղերձ եալիսկոպոսին:**

Ավաշի բախտին, այն էլ Հենց այս՝ սեփական վայրում: Բայց  
կանցնի Քրիստոսի խաչի թշնամիների, գերեզմանը թղապատողների  
շվայտ շոայլությունը: Ինչ է նշանակում զմայլական պարերի մեջ  
կաքավողների խնջուքը, սովորները, ոտքերի դոփյունը և դաստակ-  
ների անարվեստ բախրախումները, քղանցքների քարշումների  
մրրկացած պլոտույտներից առաջացած փոշին, որ թափիում էր  
գերեզմանին, ինչը քրիստոնեական կրոնի օրենքներին անհարիր է:  
(Էջ 47)

**117. Սարգիս վարդապետին ուղղված թղթում՝ քրիստոնեության մասին:**

Արդ, ասվածը բավարար է մինչև մարդու վախճանի, նրա տիրոջ  
և արքայի մասին խոսելիս. սակայն ինձ սպասեցին արդարները,  
մինչ վերադարձ: Այդ խոսքերն ինձ թեթևացնում են և մշտապես  
զորացնում է աստվածային երգերի կատարումը, ինչպես անապատ  
և անջուր երկիր, կամ ինչպես եղջերու, որ փափագում է աղբյուրի  
ջրին, քանզի իմ հայրն ու մայրը լքեցին ինձ և տերն ինձ  
հասկացավ: (Էջ 54)

**118. Նույն թղթում:**

Իսկ եթե կամենում ես՝ հոժարությամբ քեզ կրացատրեմ /դասա-  
վանդվող/ առարկայի բովանդակությունը, թե ինչպիսին են նրա  
չորս բաղադրամաերի՝ թվաբանության, երաժշտության, երկրա-  
չափության, աստղաբաշխության և իր կիրառության հարաբերու-  
թյունները: (Էջ 72)

**119. Դանիել երաժշտին գրած թղթում Մագիստրոսը մեջբերում է մահա-  
մերձ Արտաշես Ա-ի հմայախոսոքը:**

Այնժամ թորգոմյաններից տարեցը գրեց երեք յոթանկյունիներ  
միմյանց վրա, որոնց մեջ Արտաշես Պարթևը կախարդում էր ծխով,  
որը մոլից քուշ-քուշ բարձրանում էր և մշուշով էր պատում շենքի  
ներսն ու քաղաքը:

«Ո՛ տայր ինձ՝ ասէր գծուի ծխանի

Եւ զառաւօտն նաւասարդի,

Հզվագելն եղանց

Եւ զվարգելն եղջերուաց.

Մեք փող հարուաք

Եւ թըմբկի հարկանէաք,

Որպէս օրէն է թագաւորաց»:

... Եվ այս, ասում են, նա ասել է իր վախճանի պահին, ինչը գտանք  
Հասարակ մարդկանցից ավանդված: (Էջ 86-87)

120. Բյուզանդացի գորավար Կոռնոսի մասին: XI դար

Իսկ Կոռնոսն ամբողջ բանակով մնաց Հյուսիսային վրաններով և  
սպիտակափառ վահաններով և ահեղագոչ փողերով և  
թմբուկներով, հեծներով հրաշալի, ճաճանչածերմակ երիվարին: (Էջ 87)

121. Խորհուրդներ Գագիկ Բագրատունուն:

Շտապում եմ քեզ պատմել Պտղոմեսոսի մասին ...: Որպեսզի քեզ  
տեսնենք Հռմերական տաղերով չափաթիրված վերտառելով և հագ-  
ներգական ոտանավորը կարկատելով: (Էջ 97)

122. Բարսեղ և Եղիսե աշակերտներին՝ Արիստոտելի

աշխատությունների որոշ հարցերի շուրջ:

Քանզի ցանկացած իմաստասեր խստովանում է գիտությամբ և  
ուրանում է անգիտությամբ, մանավանդ չորս արվեստների՝  
թվաբանական, երաժշտական, երկրաչափական, աստղաբաշխական  
կարողությամբ: (Էջ 105)

123. Դանիել երաժշտի մասին:

Սրանք են առակների մտքերը, որ իմաստասիրեցինք  
Հռետորական (արվեստով) Դանիել երաժշտի համար՝ գրելով  
Անանիային՝ Գրիգորից: (Էջ 124)

124. Հատված Սանահինի սուրբ ուխտի միաբաններին ուղղված  
նամակից:

(Այս ամենի հետո) Հիշում եմ նաև ձեր՝ մեծամեծ ծերերիդ  
ինամքները (մեր մասին) և խրատներն ու ողորմածությամբ  
բարեկարգությունները, (Հիշում եմ նաև) երիտասարդներին, որոնք  
վարժարաններում հռետորական և երաժշտական մտքով անցած  
հանդես ու մըրցություն և գեղեցիկ մոլություններ էին  
կազմակերպում, մանուկների քաղցրաձայնությամբ Հնչող սաղմոս-  
երգությունները, որոնք հրեժտակներին և բոլոր երկնային դասերին  
և ուժերին գրեթե գերազանցող եմ գտնում, իսկ ոմանց՝ զանազան  
և պեսպես առաքինություններով և ճգնությամբ (Համարում եմ)  
սքանչելի ու զարմանալի երևացող, որ ոչ սկզբաների մոտ և ոչ  
թերեռում երբեմէ չեն երևացել: (Էջ 136-137)

125. Թուղթ Կէ, Հատված աղանդավորներին ուղղված խոսքից:

Գրել են, թե նախանձից են արտաքսել մեզ: Ո՛ ստությունդ, մա-  
նավանդ, որ արժանի է զարմացման և սքանչացման: Եթե մեզանից

են և մեր դավանությամբ, արդյոք ի՞նչ պետք է նախանձել, ո՞ր ճեմարանի կամ վարդապետության փոխարեն, ո՞ր մայրաքաղաքացիների և եպիսկոպոսների և Հայրերի... և խաչակրոն կրօնավորների փոխարեն, թէ՝ քրիստոնազգյաց միայնավորների և ճգնազգյաց մարդկանց, որոնք բնակված են լեռների այրերում և կիրճերում, թէ՝ երաժշտական Հագմերգություններում և քաղցրաձայնություններում, թէ՝ լուսափայլ տոնախմբություններում ... : (Էջ 155-156)

### 126. Հատուքած Գագիկ Բ-ին ուղղված թղթից:

Ապա եթե քո ծայրագույն վարդապետը, Ծարում ծարավից պապակած, քեզանով ջերմացած, խմբված լալկան ջնարահարներդ քաջի գովքն էին բորբոքում, ինչու՝ ինձ ես վերագրում այս վնասակար վարանելի վտանգը՝ վտարելով զրահների նետերից հասցրած վերքերով : (Էջ 209-210)

### 127. Անիի հանդեսներից մեկի նկարագրությունից:

Բայց (նկատի ունեմ) Ուսուոյան տունկը, որի մասին ասում են, թե ճյուղերը կտրելով գործում էին մանրագույն քնարներ, որոնք տալով համբակների և այդ պահին անաշխատաբար (նվազել տափածների ձեռքը), որոնք գափինե ճյուղով պար գալով երգում էին տաղաչափական քերթվածքներ : (Էջ 221)

### 128. Անիի հանդեսներից մեկի նկարագրությունից:

Քաջ գիտենք, որ (կան) հանդեսներում հզորների, փառավորների ու փարթամների խումբը, և փիճակավորների ոսկեհյուս զարդերով ծածկված դասը, դաստակերտներում անօրինաբար սպիտակափառ և երաժշտական պարեր գումարած (մարդկանց խումբը), և ոտքով կաքավողները, և դրսում հնչեցվող երգերը, և շեփորվող ներդաշնակ մեղեգիները, որովհետև սրանք ինքնին սեփականված են, (կարծում ենք), թրակացիներից, հատկապես (զա) ցածր դասի մարդկանց է պատկանելիս եղել, որոնք մաքրագույն և վծիտ (երգը) քթի տակ (կատարվող) բացականչությունների ձևով կամ հարմարեցված ձայնով են կատարել : (Էջ 222- 223)

## ՇԱՊՈՒՀ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ (ԿԱՐՄԵՑՅԱԼ) XI-XII դարեր

- 129. Արաբների արշավանքներից մեկի մասին: VIII դար  
Հնչեցրին եղջերափողը անօրենների բանակում :<sup>251</sup> (Էջ 23)**
- 130. Վասպուրականի իշխան Գրիգոր Դերենի մասին: IX դար**

<sup>251</sup> Պատմութիւն Շապէոյ Բագրատունոյ, Էջմիածին, 1921, (թարգմանությունը մերն է, իմբագիր՝ Ռուս Հովհաննիսյան) :

Եվ ապա նրա Գագիկ եղբայրն եկավ և ետ առավ նրա ճոխս Հա-  
գուստները և ձիերը և ջորիները և գնեց Վան քաղաքը և ոչինչ  
չթողեց նրան իր ապարանքից, որի մոտ նստում էր նա և երբ  
առավոտ էր լինում, գալիս էրն սովորականի նման փողհարներն ու  
Ճնարահարները և տավղահարները և պարողները կաքավում էին նրա  
առջեւ: (Էջ 40)

**131. Դերեն Արծրունու մասին, որն իր վրանում զվարճացնում էր արար  
Հյուրին: IX դար**

Դրեց նրա առաջ սեղանն ու բաժակը և շատ մեծարեց նրան, մինչև  
զարմացավ Հյուրը նրա բարեմտության վրա, որովհետև Դերենը դրեց  
բաժակը նրա ձեռքին և իր ձեռքն առավ քնարը և ուրախացրեց  
նրան: Եվ անչափ սիրեց նրան, քանզի Դերենը զվարժ այր էր և  
սիրուն և բարեխորհ և գեղեցկատես: (Էջ 42)

**132. Մոտու քաղաքի բնակիչները պատմում են Գրիգոր Դերենի մասին:  
IX դար**

... գալիս են մեր վաճառականները և պատմում են, թե այն  
Դերենը սովորություն ունի իր վրանը դնել ճանապարհի վրա, որ  
քաղաքի պողոտան է և այնտեղ բացում է իր սեղանը առավոտյան և  
նստեցնում է բոլոր ճանապարհորդներին՝ լավ թե վատ, և քաղաքի  
բնակիչները և բազում երգիչներ ու գուաաններ ամեն օր հնչեցնում  
են իրենց ձայները մինչև երեկո, և մարդիկ հնար չունեն տուն  
գնալու, և այսպես է նրա սովորությունը: (Էջ 44)

## ՄԱՏԹԵՌՍ ՈՒԽՀԱՑԵՑԻ XII դար

**133. Հովհաննես Կողեռնը 1030 թվականին տեղի ունեցած երկրաշարժի  
մասին:**

... այսօր լրացավ 1000 տարին, ինչ մեր տեր Հիսուս Քրիստոսը  
իր սուրբ խաչով, մանավանդ Հորդանան գետում իր սուրբ  
մկրտությամբ կապեց սատանային: Այժմ սատանան արձակվեց իր  
կապանքներից՝ Համաձայն Հովհաննես ավետարանչի տեսիլքի վկա-  
յության... զանականները թողնելու են անապատները,  
մենաստանները և զբաղվելու են աշխարհիկ գործերով... որոճալով  
պիտի որոճան դիվական երգերը և, իրենց ընկերների դեմ  
ամբարտավանելով պիտի ասեն, թե ես կցուրդ գիտեմ և մեղեղի, իսկ

դու՝ ոչ, և այդպիսով պիտի աղավաղեն ժամակարգությունը:<sup>252</sup> (Էջ 36):

134. Աշոտ Դ Բագրատունու մահից հետո տեղի ունեցած իրադարձությունների մասին: 1040թ.

Աշոտի մահից հետո հայոց զինվորները դարձան թուղամորթ, աստեղին պատերազմական արվեստը, ընդունեցին հոռոմների ծառայության լուծը, տարիվեցին հարբեցողությամբ, և բարբուռն ու գուանների երգեցը սիրեցին: (Էջ 53)

135. Գագիկ Բագրատունու երկու որդիների՝ Աշոտի ու Հովհաննեսի թշնամության մասին: XI դար

Երբ Հովհաննեսը լսեց իր եղբոր՝ Աշոտի գալստյան մասին, հրամայեց պատերազմական շեփորը Հնչեցնել: (Էջ 6)

136. Տուղրիլ սուլթանի հարձակման մասին: 1055թ.

Եվ նա իր Հսկայական գորբով եղավ Հասասվ Մանագկերտ քաղաքը: ... Երբ լույսը բացվեց նա հրամայեց Հնչեցնել պատերազմական փողերը:... Պատերազմական փողերի ձայնն ու աղմուկը, ասպա կռվող զինվորների աղաղակը սասանում էին բովանդակ պարիսապը: (Էջ 78)

137. Հայերի և թուրք-սերծուկների ռազմական ընդհարումները Տարրում: 1059թ.

Այլազգիների զինվորները Հնչեցրին պատերազմական շեփորները և բոլորը միասին եղան մարտի: (Էջ 86)

138. Ոխոհայի բնակիչների նախապատրաստությունը Աբասլան սուլթանի դեմ ճակատամարտին: 1070թ.

Սուլթանը տեսնելով դա, շատ բարկացավ, նա հրամայեց Հնչեցնել պատերազմական շեփորը և գագանի պես նետվեց պատերազմի: (Էջ 129)

139. Մանագկերտի ճակատամարտի նկարագրությունից: 1071թ.

Տիոյենը, լսելով, որ պարաից գորբն իր վրա է հարձակվել, հրամայեց Հնչեցնել պատերազմական շեփորը և հոռոմոց ամբողջ զորքը գունդ առ գունդ շարքի դրեց: (Էջ 133)

140. Թեղորոս երաժշտի մասին: XI դար

1077 թվականին վախճանվեց հայոց ամենագովելի հայրապետ տեր Սարգիսը՝ Հայոց կաթողիկոս տեր Պետրոսի քեռորդին: Նրա հրամանով Զահան գավառի Հոնի քաղաքում Հայոց կաթողիկոսական աթոռին նստեցրին տեր Թեղորոսին, Հայոց կաթողիկոս տեր Սարգսի Հայրապետանոցի եպիսկոպոսին, Ճայնավորաց մեծ երաժշտին, որի մականունը Ալախոսիլ էր: (Էջ 141)

<sup>252</sup> Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակաբրություն, թարգմանությունը՝ Հ. Բարթիկյանի, Եր., 1973, (աղբանազբյուռը Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակաբրութիւն, Վաղարշապատ, 1898):

... Այս տարի (1096) մեռավ Հայոց կաթողիկոս տեր Թեոդորոսը, մեծ երաժիշտն ու սուրբ եկեղեցու պատմը, նա թաղվեց Հոնիում՝ տեր Սարգսի գերեզմանի մոտ: (Էջ 165)

**141. Խաչիկ երաժշտի մասին:** XII դար

(1094 թ.) վախճանվեց և Հայոց վարդապետ Գևորգ Ոհոնձեցին: ... Նա սքանչելի կյանք վարեց և վախճանվեց Հարյուր տարեկան հասակում: Թաղվեց նա Կամբջաձորի մեծ անապատում, Սամվել վարդապետի և Խաչիկի (որը երաժիշտ էր և Հմուտ՝ ձայնեղանակների մեջ) գերեզմանների մոտ: (Էջ 160)

**142. Անտիոքի գրափումը Փրանկների կողմից:** 1099թ.

... բացելով անագապատ դուռը, նա Փրանկների ողջ բանակը մտցրեց Անտիոք քաղաքը: Առափոյան բոլոր զինվորները միասին հնչեցրին եղջերափողերը: (Էջ 173)

**143. Ֆրանկների ռազմական ընդհարումները պարսիկների հետ:** 1126թ.

(Պարսիկների հետ մարտում) Փրանկների թագավորը հրաման տվեց Հնչեցնել պատերազմական շեփորը և քրիստոնյա զինվորները մեկ մարդու պիս հարձակվեցին այլազգիների վրա: (Էջ 244)

## ՍԱՄՈՒԵԼ ԱՆԵՑԻ

### XII դար

**144. Գրիգոր Անավարդեցու մասին:**

Տեր Գրիգորը (աթոռակալեց) տասներեք տարի: Սա տեր Գրիգոր Անավարդեցին էր՝ Տուրքերից անց մականունով, գիտնական մի այր, որ քաջատեղակ էր հին և նոր կտակարաններին: Նա ստեղծեց բազմաթիվ շարականների երգեր և պայծառացրեց կարգով՝ Հայոց եկեղեցին, մասնաւով 13 տարի: <sup>253</sup> (Էջ 153)

**145. Ռուբինյանների իշխանության մասին:**

Եվ պետք է գիտենալ Ռուբինյան իշխանների մասին, որոնք հետո թագավորեցին Սիսում, քանի որ տարբեր կերպով են պատմում վիպասանները նրանց ժամանակաշրջանի և տարեթվերի մասին: (Էջ 135)

**146. Գրիգոր Տղայի մասին:** XII դար

Իսկ իր Հոգեւոր հայր և դաստիարակ Հովհաննեսը նրա մոտ երբեմն քննում էր սաղմոսաների բովանդակությունը և բացատրելուց հետո խնդրում էր արտագրել միայն այն, ինչը կենսականորեն անհրաժեշտ էր: Այսժամ աստծո կամքով և խորհույի հնագանդությամբ նա (Գրիգորը) սկսեց գրել սաղմոսի երգերի մեկնությունը, 26 տարեկան հասակում, 627 թվականին (11782.): (Էջ 229)

<sup>253</sup> Սամուել Անեցի, Հավաքումն ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, (թարգմանությունը մերն է, խմբագիր՝ Խորա Հովհաննիսյան):

**147. Սահմանական պարզության մասին:**

Եվ սուրբ Սահմանական Հայրապետը աստվածային գիտելիքների չնորհիվ դրելով և թարգմանություններով ուրախացրեց եկեղեցու քաղաքը: Դրանք ընդունելով որպես բարիք հիմք, ոմանք փիլիսոփայական գիտելիքներն ավելացրին, այլոք մեկնության մտքերի շավիղը մաքրեցին, նրանց կեսը երգերի եղանակները կարգեցին, մյուսները՝ կանոնների չափը սահմանեցին: (Էջ 236)

## ԱԲՈՒՄԱՀԼ ՀԱՅ

XIII դար

**148. Երուսաղեմում Հայոց պատրիարքի ընդունելության**

**արարողության նկարագրությունից:** XIII դար

Երբ Հասավ լուրը, թե պատրիարքը անվտանգ Հասել է Երուսաղէմ, բոլոր քրիստոնյաները ընդառաջ գնացին նրան ուրախությամբ և ինդությամբ, սաղմոսերգության ուղեկցությամբ, առջևից խաչեր և ջահեր տանելով և բուրգառներ ինկելով:<sup>254</sup> (Էջ 25)

**149. Հայ վզուրկ Պատր Ամիր ալ-Ճյույուշի Կահիրեում ծավալած գործունեության մասին:** XII դար

Վզուրկ Ամիր ալ Ճյույուշ մարդ ուղարկեց և նրան բերեց Կահիրե: Եվ երբ Հասավ քաղաքի դռան մոտ, ընդունեց նրան մեծ Հանդիսությամբ, պատիվսներով և երաժիշտների խմբով: (Էջ 39-40):

**ՄոհիթԱՐ ԱՅՐԻՎԱՆԵՑԻ**

XIII դար

**150. Բարսեղ Ճոնի մասին:**

Բարսեղ Ճոնը, (որը ապրում էր) Ներսես շինողի օրոք, սրբագրեց Շարակնոցը, որը կոչվեց Ճոնընտիր: <sup>255</sup>(Էջ 48)

## ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆԶԱԿԵՑԻ

XIII դար

**151. Հուսիկ կաթողիկոսի որդիների՝ Պապի ու Աթանագինեսի մասին:**

IV դար

<sup>254</sup> Աբուսահլ Հայ, Պատմութիւն եկեղեցեաց եւ վանորից Եգիպտոսի, Վենետիկ, 1895, (թարգմանությունը մերն է, խմբագիր՝ Ռոզա Հովհաննիսյան):

<sup>255</sup> Միկթարայ Այրիվանեցւոյ պատմութիւն Հայոց, լոյս ընծայեց Մկրտիչ էմին, Սոսկվա, 1860, (թարգմանությունը մերն է, խմբագիր՝ Ռոզա Հովհաննիսյան):

Մինչդեռ Հուափկը կենդանի էր, նրանցից ոչ ոքի չձեռնադրեց եկեղեցական գործի համար, որովհետև արժանի չէին: Նրա մահից հետո նրանց բռնի կերպով սարկավագ են ձեռնադրում: Իսկ նրանք եկեղեցական գործը թողնելով իրենց տվել էին ուտելիսելուն. և սաղմուների ու Հոգմարդ երգերի փոխարեն, գուսաններով, հարճերով ու բողերով էին բավականանում:<sup>256</sup> (Էջ 31)

152. Գրերի գյուտից հետո Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի ծավալած գործունեության մասին:

Եվ այնուհետև հավաքում են բազմաթիվ մանուկների և ուսուցանում մեր ամբողջ երկրին, իսկ մատաղատի, լավ սովորող, փափկաձայն և երկարաշումն մանուկներին բաժանում են երկու խմբի և Հիմնում են ասորերեն և Հունարեն լեզվով դպրոցներ: (Էջ 35)

153. Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի աշակերտների մասին:

Սրանք ճռվողող ծիծեռներ էին, քաղցրախոս տատրակներ և ողջախոհ մարդիկ, սրբությունը սիրողներ և աղտեղության անարգիչներ: (Էջ 36)

154. Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի և նրանց աշակերտների գործունեության մասին:

Ստեղծեցին Քրիստոսի Ծննդյան տաճար քառասունօրյա գալստի, Մկրտության, Բեթանիա ու Երուսաղեմ գալու, Զարչարանքների ու Հարության, Համբարձման ու Հոգու Գալստյան, Խաչի ու Եկեղեցու, այլ Տերունական տոնների, բոլոր սրբերի, ապաշխարության և բոլոր Ննջեցյալների քաղցր ու գեղեցիկ եղանակով, մեծիմաստ պեսակես, զանազանաձև և անթիվ շարականներ, որ մինչև այսօր երգվում են Հայաստանի եկեղեցիներում: (Էջ 37-38)

155. Հովհանն Մանդակունու մասին:

Ասպա Հովհանն Մանդակունին գահակալեց տասներկու տարի: Սա բազմաթիվ կարգավորություններով օժտեց եկեղեցին՝ կարգավորեց Աղուհացի քարոզները, սրա աղոթքները, երրորդ, վեցերորդ, իններորդ ժամերի աղոթքները, եկեղեցու հիմնարկեքը, ժամանակարությունը, սկիհը և մաղղման, գրքերն ու կնունքը, խաչօրհնեքը, պսակը. այս ամենը նա կարգավորեց: (Էջ 41)

156. Կոմիտաս կաթողիկոսի մասին: VII դար

Տեր Հովհաննեսից հետո կաթողիկոսությունը ստանձնում է տեր Կոմիտասը՝ ութ տարի: Սա կառուցեց սուրբ տիկին Հոփիսիմեի պայծառատես ու Հրաշալի վկայարանը, որովհետև առաջին կառուցը անշուք էր: Սրա մեջ (Հին շնոքի) գտնում է (Կոմիտասը) սրբի ուկորների մասունքները, որ կնքված էին սուրբ Գրիգորի ու սուրբ

<sup>256</sup> Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, թարգմանություն՝ Կ. Մելիք-Օչանշանյանի, Եր., 1982:

Սահմակի մատանիներով. չհամարձակվեց բանալ, այլ իր մատանիով կնքեց ու ամփոփեց այնտեղ. սրբերի համար շարականի երգ ստեղծագործեց Հայերեն այրուգենով, որի սկիզբն է այս՝ «Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի»: (Էջ 51-52)

157. Ներսես Գ կաթողիկոսի օրոք կատարված իրադարձությունների մասին: VII դար

Ներսեսի մոտ եկան ուղղափառ ասորիներ և եպիսկոպոս խնդրեցին: Սա նրանցից գրավոր հավատի խոստովանություն տահաճանեց, իսկ նրանք տվին հետևյալ խոսքը. «Հավատում ենք Հորը, որդուն ու սուրբ Հոգուն. Հորը, որի Հայրությունն անհասանելի է, որդուն, որի ծնելությունը անբաժանելի է, ու սուրբ Հոգուն, որ Հորից է ելնում և Հոր ու որդու Հետ երկպագվում ու փառավորվում է»: Սա կցորդ են անում և մինչև այսօր կարդացվում է Հայոց եկեղեցիներում տիրոջ Հայտնության ճռագլուխցի օրը: (Էջ 56)

158. Ներսես Գ կաթողիկոսի օրոք կատարված իրադարձությունների մասին:

Այնպես պատահեց, որ սա Վարդավառի տոնին մեծ հանդիսախմբով եղալ Բագվանում: Շարականների երգերը բազմացել էին Հայոց եկեղեցիներում այնքան, որ մի գավառի երգեցողը չէր իմանում մյուս գավառի երգերը: Երբ երգեցին Վարդավառի Հարցի շարականը, մյուս դասը չկարողացավ փոխն ասել, փոխեցին շատ շարականներ, բայց դրանք ևս չգիտեին: Ապա Ներսես Հայրապետը ամբողջ ժողովի հավանությամբ ընտրեց կարևորն ու պիտանին, որպեսզի բոլոր եկեղեցիներում ամեն օր օրվա նշանակության համապատասխան միևնույն ժամերգությունը կատարվի: Ընտրեցին իմաստում մարդիկ, որ շրջեն ամբողջ Հայաստան աշխարհում և նույն կարգը հաստատեն, որ մինչև այսօր գոյություն ունի: (Էջ 56)

159. Հովհան Օձնեցու մասին: VIII դար

Կանոնական օրենադրությամբ բարեկարգում է եկեղեցին՝ մերժելով Քաղկեդոնի դավանությունը, որ Հերակլ կայսեր և Եղի կաթողիկոսի օրերից անկարգության մեջ էր պահում մեր Հայոց աշխարհը: Կարգեց սուրբ Հակոբի և Կյուրեղի ընթերցվածները, բոլոր տոնները, ինչպես որ կարգել էր սուրբ Գրիգորը: Դեկտեմբեր ամսի 25-ին տոննեցին Դավիթ մարգարեի և Հակոբ առաքյալի (տոնները), որ այլ ազգերը Տիրոջ ծննդյանն են տոնում. Երգեց «Հարցի» շարականը. «Ամեն բանում մեղանչեցինք և քո պատվիրանները չպահեցինք. արդ խոստովանում ենք քեզ», որ մինչև այսօր ժամերգում է Հայոց եկեղեցիներում սկսած 175 (726) թվականից, մինչև 690 (1241) թվականը, որ այժմ մեր ժամանակն է: (Էջ 61)

160. Ստեփանոս Մյունեցու մասին: VIII դար

**Սեծ իմաստասեր Ստեփանոս Սյունեցին՝ վերևում Հիշատակված Մովսեսի աշակերտը, որ հունարենից հայերենի թարգմանիչ եղավ, թարգմանության հետ ստեղծագործեց նաև քաղցր եղանակով հոգելոր երգեր, շարականներ, կցուրդներ ու այլ երգեր: Գրեց ավետարանների, քերականության, Հոբի և «Տէր, եթե շրթանցն գիշերոյ» Համառոտ մեկնությունները: (էջ 63)**

**161. Հովհաննես Իմաստասերի մասին: XII դար**

Այսպես և գիտությամբ շատերից մեծիմասս ու ամեն ինչում հանձարեղ՝ Սարկավագ կոչված Հարստամիտ Հովհաննեսը Հալբատում: Սա շատ բան ուսումնասիրեց գրքերով ու բարի հիշատակ թողեց: Սա, շատ ամենունհամերի կողմից փափառվածը՝ հայոց հաստատում ու անշարժ տոմարը հաստատեց շարժական և ոչ հաստատում տոմարի փոխարեն: Նաև բոլոր ազգերի տոմարները Հայոց տոմարի հետ համապատասխան դարձրեց: Որովհետեւ չափազանց իմաստում էր այդ մարդը ու աստվածային չնորհներով լցված. նրա բոլոր խոսքերը իմաստասիրական ոճով էին, ինչպես Գրիգոր Աստվածաբանինը, և ոչ թե գեղջկական: Սա գրեց ներբողական ճառեր Հայոց մեծագոր արքա Տրդատի, սուրբ Հայրապետ Ներսեսի և սքանչելի Սահակի ու Մեսրոպի մասին: Գրեց նաև Ղետոնյանց շարականը քաղցր եղանակով ու ներդաշնակ խոսքով, որի սկիզբը այս է. «Պայծառացան այսօր սուրբ եկեղեցիները»: Գրեց նաև նրանց Համար ներբողական ճառեր, աղոթագրքեր ու գրքերի ստույգ օրինակներ: (էջ 88-89)

**162. Ներսես Շնորհալու մասին:**

Եվ որովհետեւ նա հանճարեղ մարդ էր, շատ բան կարգավորեց եկեղեցիներում քաղցր եղանակով. (օրինակ) խոսրովային ոճի շարականներ, մեղեղիներ, տաղեր ու ոտանավորներ. նրան են պատկանում Հարության Օրհնությունը, երրորդ կողմը, Աստվածածնի փոխման երրորդ օրվանը, Պետրոսի և Պողոսի օրհնությունը, Մանկունքը, Համբարձին, որի սկիզբն այս է. «Ճնծա այսօր, աստծո եկեղեցի, սուրբ առաքյալների հիշատակով», Որոտման որդիների օրհնությունը. «Նա որ կա էության մեջ միշտ էի որդին է»: Անտոնի մի շարականը, Թեղողոսի երկուար, Քառասանիցի մեկը, առաքյալների մեկը, Ավագ շաբաթի երեք օրվա օրհնությունը՝ երկուչարբթին, երեքշարբթին, չորեքշարբթին, Հարության ճաշի երկու շարականը, նինվեացիներինը, հրեշտակապետներինը, սուրբ Վարդանանցը և այլ բաղմաթիւվ շարականներ:

Նա քաղցր եղանակով գրեց սուրբ պատարագի քարոզը, նույն խոհականությամբ շարականների տները, իր անվան տառերով երկու Գանձեր՝ մեկը «Վարդակառի», մյուսը «Աստվածածնի փոխման», ինչպես Գրիգոր Նարեկացին գրեց «Հոգու Գալստյանը», «Եկեղեցունը» և «Սուրբ Խաչինը»: ... Եվ այսպիսի բարի վայելչությամբ

փոխադրվեց ամենքի հույս Քրիստոսի մոտ ցանկալի ու երանելի մաշով, որովհետև սրբի կամքը այսպես էր, եթե հնարավոր լինի, ոչ ոք չպետք է աշխարհաբար լեզվով խոսի, այլ միայն գրաբար, ոչ գինարբուքների և ոչ էլ այլ ուրախությունների ժամանակ: Այդ պատճառով նա երգեր գրեց ու սովորեցրեց նրանց, որոնք բերդապահներ էին, որպեսզի դատարկահունչ ձայների փոխարեն այն ասեն, որին իբրև սկիզբ Դավիթի սաղմոսն է. «Գիշերը հիշեցի քո անունը, Տեր» (Սաղմոս Ճ՛ԸՆ, 55) և այդպես իմաստում կերպով ըստ կարգի «Զարթիր փառք իմ» (սաղմոս Ճ՛Զ, 9, Ճ՛Է, 3), որ այժմ եկեղեցում ասվում է գիշերային արարողության ժամանակ: ... Եվ քանի որ ներսեսը ամեն բանի մեջ հանձարեղ էր, գրեց նաև խորիմաստ առակներ գրքերից ու հանկուկներ, որպեսզի սուս զրոյցների փոխարեն ասեն գինարբուքներում ու հարսանիքներում: (Էջ 92-93, 113)

**163. Տանձուտի ձորում կառուցված Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու նավակատիքին Խաչատուր Տարոնեցու մասնակցության մասին: XII դար**

Եկեղեցու տոնախմբության ժամանակ ներկա էր նաև սուրբ Վարդապետ Խաչատուր Տարոնեցին՝ Հաղարծին կոչված սուրբ միաբանության առաջնորդը, սուրբ ու առաքինի, գիտությամբ, մանավանդ երաժշտական արվեստով Հոչակված մարդ:... Սա (Տարոնեցին) խազերը՝ իմաստունների ստեղծածները, որ մինչև այն ժամանակ դեռևս տարածված չէին աշխարհում, բերեց արևելքի կողմերը, անմարմին եղանակները մարմնավորեց (ձայնագրեց): Սա եկավ գրեց ու սովորեցրեց շատերին. (Էջ 154)

## ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՑԻ XIII դար

**164. Ներսես Գ կաթողիկոսի օրոք կատարված իրադարձությունների մասին: VII դար**

Սա մեծ բազմությամբ կատարում էր Վարդավառի տոնը, և ուժ հարց փոխեցին և չկարողացան պատասխանել միմյանց: Ապա պատվիրեց (Ներսես Գ կաթողիկոսը) լնտրել կարեորը և այն միայն ուսանել, որը և կատարվեց սուրբ Բարսեղի ձեռքով, Ճնն կոչվող մականունով, որ Անի գավառի Դպրավանք կոչվող սուրբ վանքի առաջնորդն էր: Նրա մասին ասում են, թե յոթն անդամ սքանչելի համարձակությամբ տեսել է Քրիստոսին: Մը շնորհիվ Ճոնընտիր են

**Կոչվում շարականները, որ այժմ կատարվում է մեր ժամերգության մեջ:**<sup>257</sup> (Էջ 69)

**165. Աշոտ Պատրիկ Բագրատունու կառուցած եկեղեցու նավակատիքի մասին:** VII դար

(Աշոտը) կառուցեց Դարոնից եկեղեցին փրկչական պատկերի անունով, որ մասունքների հետ բերել էր նրա որդին արևմուտքից. և նավակատիքին երգեց «Զօրս ըստ պատկերին» շարականը: (Էջ 71)

**166. 1104թ. Երկրաշարժի մասին:**

Երկիրը ցնցվեց աղիողորմ ձայներով հանդերձ, որ գալիս էին լեռներից և գարափուլ վիմերից, և օրն էր կիրակի և օրվա ձայնը՝ վառ: (Էջ 117)

## ՍՄԹԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ

XIII դար

**167. Աշոտ Դ Բագրատունու մահից Հետո կատարված իրադարձությունների մասին: 1040թ.**

Աշոտի մահից Հետո Հայոց իշխանները թուղացան, ատեցին պատերազմները և սիրեցին գինարբուղքներ ու գլուխաններ և մտան ծառայության հունաց ազգի մոտ և միմյանց մատնում էին նրանց:<sup>258</sup> (Էջ 33)

**168. Աբասլան սուլթանի արշավանքը դեպի ՈՒռՀա: 1070թ.**

Եւ Վասիլը, որ քաղաքի կառավարիչն էր, քաջ և պատերազմող մի մարդ, սկսեց զորացնել ողջ քաղաքը (ՈՒռՀա): Այս տեսներով սուլթանը շատ զայրացավ և հրամայեց Հնչեցնել պատերազմի փողը: (Էջ 73)

**169. Հունաց թագավոր Մանուկիլի մուտքը Անտիոք: 1159թ.**

Անտիոքի իշխանները զարդարեցին քաղաքի դռները և ամբողջ պարիսպը, և ուղարկեցին թագավորական դրոշները և կանգնեցին դըղակի վերևում...իսկ Հետո Հնչեցնում էին ձայնատու փողերը: (Էջ 180)

**170. Ներսես Շնորհալու մասին**

Սա ստեղծեց բազում աստվածային եկեղեցական երգեր և վարում էր Հայրապետության աթոռը Աստծոն կամքով, և սուրբ մարդ էր և օժտված էր ամենայն բարեձևությամբ և կարգավորությամբ և

<sup>257</sup> Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի, Վենետիկ, 1862,

(Թարգմանությունը մերն է, խմբագիր՝ Ծովականիսյան):

<sup>258</sup> Սմբատ Սպարապետ, Տարեղիրք, Վենետիկ, 1956, (թարգմանությունը մերն է, խմբագիր՝ Ծովականիսյան):

առաքինությամբ, և ամբողջովին լցված էր գիտությամբ և սուրբ հոգու շնորհներով: (Էջ 188)

## ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ XIII-XIV դարեր

- 171.** Երամք կանանց ճչոց ջայից  
Շուրջանակի զնա պարէին.  
Դասք երգողաց կանգնեալ կային,  
Զդամբանական փողս ածէին.  
Աւաղական ողբովք լային,  
Զգալարափողսն հնչէին.  
Կէսքն շիւան մեծ քարշէին.  
Կէսքն զվարսիցն փետէին: <sup>259</sup> (Էջ 26)
- 172.** Հայոց եկեղեցու դասերից իններորդի մասին: XIV դ.  
Իններորդ դասը փաստները, այսինքն՝ սաղմոսերգուներն են, որոնց զգեստն ու հագնելաձևն էլ նույնն են: Նրանց գործն է սաղմոսերգել ու երգասացությամբ սպասավորել եկեղեցուն, ձայնական արվեստով երգել ալերուիա, միջներդ և նման ուրիշները: <sup>260</sup> (Էջ 134)
- 173.** Ստեփանոս Սյունեցու մասին  
Ուժ (ձայն) եղանակները բաժանեց, կարգեց, շարեց Հարության օրհնությունները, երգեց և քաղցրալուր կցուրդներ. Հարմարեցրեց «Յինանց»-ի տաղաչափությունը յոթ եղանակներով՝ հույժ խորհրդավոր, ինչպես և պասերինը, որ երգվում են աղ ու հացի վրա. պարզաբանեց նաև գիշերային արարողության իմաստը: (Էջ 152)
- 174.** Սահակաղուկատ Սյունեցու մասին: VIII դար  
Սա (Ստեփանոս Սյունեցին) մի քույր ուներ, որը մանկությունից ընդունել էր կոյսի վարքը, առանձնացել էր Գառնու ձորի մի քարայրում և կյանքն անցկացնում էր անտանելի ճգնակեցությամբ. Նրա անունը Սահակաղուկատ էր: Նա շատ հմուտ էր երաժշտության արվեստին, որը և ստվորեցնում էր շատերին՝ վարագույրի տակ նտած, նաև ստեղծեց բազմաթիվ քաղցրեղանակ կցուրդներ ու մեղեդիներ, որոնցից մեկը (նվիրված) սուրբ Մարիամին, որն իր անունով հորինեց: (Էջ 152-153)
- 175.** Սյունյաց Վասակ իշխանի հուղարկավորության նկարագրությունից: IX դար

<sup>259</sup> Ստեփանոս Օրբելեան, Ողբի տարբ կաթուղիկեն, Թիֆլիս, 1885:

<sup>260</sup> Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի, Օրբելէան Արքեպիսկոպոսի Սիսնեց, Թիֆլիս, 1910, (թարգմանությունը մերն է, խմբագիր՝ Ռուզ Հովհաննիսյան):

Այնուհետև երանելի Մարիամ տիկինը, նրա դին զարդարելով թագավորական զարդերով, շատ մեծ թափորով, անչափ աղաղակներով ու ողբերգական շարժ ու ձևով, փողհարներով ու քնարահարներով, Զաքարիա կաթողիկոսի հետ տարավ, թաղեց գերեզմանոցում, իր նախնիների մոտ: (Էջ 175)

176. Այունյաց Աշոտ իշխանի հուղարկավորության նկարագրությունից:  
X դար

Իսկ նրա կինը՝ բարեպաշտուհի, կանանց մեջ անհամեմատելի Շուշանը, նրա դին զարդարեց արքունական ձևով. և աշխարհաժողով բազմությամբ, դամբանական փողերով, ողբերգու քնարահարներով տարան, թաղեցին Տաթև եպիսկոպոսարանում, այն եկեղեցու բակում, որն իր հրամանով կառուցել էր Տեր-Հովհաննեաբ: (Էջ 182-183)

177. Տաթեկի Պողոս-Պետրոս վանքի և Տեր-Հովհաննեսի եպիսկոպոսի գործունեության մասին: 896թ.

(Վանքը) լի էր ծովամատուց փիլիսոփաներով, երաժիշտ-երգիչ-ներով: Ճոխ էր վարժարանը՝ վարդապետական կրթումով: Կային նաև անհամեմատելի արվեստավոր նկարիչներ ու գրիչներ: (Էջ 208)

Այս բազմերջանիկ եպիսկոպոսը եպիսկոպոսարանը՝ Սյունյաց Տաթև մեծ նախաթռո տունը, զարդարեաց զանազան զարդերով, մեծամեծ պարագաներով և աստվածային գեղեցիկ կարգերով ու լցորեց բազմաթիվ կրոնավորներով, անհաղթ փիլիսոփաներով, աննման երաժիշտներով, բանիբուն վարդապետներով, աստվածակիր ճնշավորներով, այլև շատ ու շատ արհեստավորներով: (Էջ 264)

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴԱՐԴԵԼ XIV-XV դարեր

178. Հայոց Լեռն Գ. թագավորի դեմ եպիսկոպոսական մամլուքների կազմակերպած գալագության մասին: XIII դար

Բիլարդուի զորքին հանձնարարված էր՝ լսելով թմբուկի ձայնը կոտրել արկղները, սրերով կոտրել ամբողջ զորքը և գրավել բերդը: Իսկ արքան անտեղյակ Բիլարդուի չարհնար նենգությանը, թույլատրեց ամրոց ներս բերել արկղները, որտեղ թաքնված էր Հարյուր զինվոր: Եվ երբ Բիլարդուն հրամայեց հնչեցնել թմբուկը, այրերը կոտրեցին արկղները և սուսերով խոցեցին Լեռն արքային և նրա միակ Հորեղբորորդուն՝ Հեթումին: <sup>261</sup> (Էջ 24-25)

<sup>261</sup> Հովհաննու Դարձելի ժամանակագրութիւն Հայոց, ի Հայրապետութեան 88. Մակարայ վեհափառ կաթողիկոսի Հայոց, Ս. Պետերուրդ, 1891, (թարգմանությունը մերն է, խմբագիր՝ Խորա Հովհաննիսյան):

**179.** Սիս քաղաքում Հայոց Լևոն իշխանի Հանդիսավոր ընդունելության նկարագրությունից: 1370թ.

Հայերը մեծագույն խնդրությամբ լեցուն կատարեցին մեծ տոռնակատարություն, իրենց բնիկ տիրոջ՝ Լևոն իշխանի այցելության առթիվ: Ելան քաղաքից, ոմանք զինված, ոմանք անզեն, կեսը ձիեր հեծած, մյուսները՝ հետիոտն, այրեր և կանայք, մեծամեծներ և հասարակ մարդիկ: Նրանց հետ էր նաև իրենց կաթողիկոսը, որին երկրի պապն էին Համարում, ինչպես նաև՝ բոլոր եպիսկոպոսներն և վարդապետները: Խմբվել էր մեծահանդես թափոր, որտեղ էր նաև երաժիշտների մեծ խումբ՝ բազմապիսի նվազարաններով: (Էջ 99)

**180.** Հայոց զորքի անցումը Աղանա գետով: 1370թ.

Եվ երեկոյան պահին Հնչեցրին փողերը և ձիով ասպատակեցին: (Էջ 102)

**181.** Սիսում Հայ իշխանների տիկնանց Հանդիսավոր ընդունելության նկարագրությունից: 1370թ.

Քանի գեռ նրանք հեռու էին Սիս քաղաքից մեկ փարսախով, տիկնայք ուղարկեցին զեկուցել Լևոն իշխանին: Նա Հնչեցրեց զինվորական փողը, զինվեց, սպառազինեց գալերից և Հայերից կազմավորված իր զորքը և շտապեց ընդառաջ: (Էջ 103-104)

## ԹՈՎՄԱՆ ՍԵԾՈՓԵՑԻ

### XV դար

**182.** Քաջերունիքի Յիպնա վանքում Գրիգոր Խլաթեցու գործունեության մասին: 1406թ.

Եվ 50 տարի զրեր զրեց ցերեկ և գիշեր անհանգիստ տքնությամբ, որպես գլուխության գաղտնիքների գիտակ: Եվ բազում երգեր, գանձեր և տաղեր հիշատակ թողնելով, ինքը՝ Հովհեց տոռնասեր էր և սրբերին պատվող, որպիսին ոչ եղել է և ոչ կինի:<sup>262</sup> (Էջ 61-62)

**183.** Քրդական ասպատակություններից մեկի ժամանակ սպանվում է Գրիգոր Խլաթեցին (1425թ), որի մասին Սեծոփեցին գրում է.

Եվ սպաց ամբողջ Հայկացյան ազգը քանի որ (Խլաթեցին) զարդարում էր Հայոց եկեղեցիները Հայսմավուրբներով, կորաված ճառերով, գանձերով, տաղերով: (Էջ 143)

**184.** 1441թ. Հայոց Հայրապետական աթոռոփ փոխադրումը Էջմիածին:

Եվ ապա Հանդիպեցինք մեր մեծ վարդապետին և միասին եկանք երևան գյուղաքաղաքը: Այստեղ պետք էր տեսնել մեր ողջ ազգի ուրախությունն ու ցնծությունը. զանգակների փողերը գոչում էր (Կամ զանգակներն ու փողերը գոչում էին), երիտասարդները գոչում

<sup>262</sup> Թովման Սեծոփեցի, Պատմագրություն, Պատմություն Լանկ-Թամուրայ յաջորդաց իւրոց, աշխատասիրությամբ Լևոն Խաչիկյանի, Եր., 1999, (թարգմանությունը մերն է, խմբագիր՝ Խողա Հովհաննիսյան):

Էին ...: Եվ սիրով ընդունեցին մեր բազմությանը: Մեր եղբայրներին ողջունում էին ինչպես աստծո Հրեշտակների՝ մեծերը և փոքրերը, հոգևորականներն ու աշխարհականները: Իսկ մյուս օրը եկավ բանակալ Աղուալ բեկի հրամանը: Հասանք նրան և նա՝ որպես քրիստոնյաների թագավոր սիրով հավաքեց իր զորքը և մենք բոլորս փողով և թմբուկով, բարձրագոյն կանչերով մտանք սուրբ քաղաք Վաղարշապատ:<sup>263</sup> (էջ 68-69):

## ՀԱՅԵՐԵՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ V-XIIIդարեր

- 185. Ճառընտիր Երուսաղեմ 1419** Գրիչներ՝ Մանուէլ եւ Յովհան  
Ատացող՝ Պօղոս արք. Երուսաղէմի  
(Հոփիսիմյան կույսերի մասին)
- Իսկ բարերարն Աստված, տեսնելով նրանց գայթակղությունը,  
Երկրնքից ուղարկեց ամպի սյուն և լեռը լցվեց անուշահոտությամբ  
և լսելի դարձավ սաղմոս երգողների բազմության ձայնը՝ քաղցրու-  
թյամբ լեցուն: <sup>264</sup> (էջ 11)
- 186. XI դար:** Պատմութիւն Ս. կենսաբերին եւ Անշանին, թէ որպէս բե-  
րաւ յաշխարչն Արշարունեաց ի Կամրջաձորոյ:
- Ալիշան, «Այրարատ», եր. 547-9  
(Սամուել Կամրջաձորեցու մասին)
- Սամուելը բազմաշնորհ էր գրերի գիտության և երաժշտության մեջ: (էջ 174)
- 187. XI-XII դար:** Յիշատակարան Ճառիս  
Ա.արք. Սիւրմէն, Երուսաղէմ, Զեռագրաց մայր ցուց., եր. 218  
...ով սերովբեների լուսերամ խմբեր, ձեր աղոթքներում հիշեցեք նաև  
իմաստուն երաժիշտ Մանուելին, որն իր ուսով վանք բերեց այս  
ճառը: (էջ 278)
- 188. 1169թ. Վարք Հարանց**  
Երուսաղեմ, հ. 725  
Յիշատակարան Սուրբ Ավետարանին Սասնոյ  
(Հայոց իշխան Զորդվանելի հուղարկավորության նկարագրու-  
թյունից)

<sup>263</sup> Թումա Մեծովեցի, Յիշատակարան, Թիֆլիս, 1892, (թարգմանությունը մերն է, խմբագիր՝ Ռուզա Հովհաննիսյան):

<sup>264</sup> Յիշատակարանք ձեռագրաց, հասոր Ա. (Ե-ԺԳ դր.), Անթիլիսա, 1951, (թարգմանությունը մերն է, խմբագիր՝ Խողա Հովհաննիսյան):

Նա փոխադրվեց Քրիստոսի մոտ, սակայն տարակարծ դիպվածով աղեար և աննկարագրեալի կոծը, որ կատարվեց այնժամ՝ հայակույտ բազմության, ազատների, ծառաների, աղախինների, ազատների և գավառացիների տիկնանց և խառը բազմության կողմից, այն է՝ լացերի կոծը, նրա հոր, մոր և ամուսնու ողբը հնարավոր չէ գրիչով նկարագրել։ Սակայն նույն ժամին հավաքվեց քահանաների, կրոնավորների և գարդապետների բազմությունը, նրան պատեցին պայծառ և պատվական հագուստներով և վերցնելով նրան տարան իրենց հայրենի տապանատունը ...և ուղեկցելով սաղմոսներով և հոգեսր երգերով, և փառք տալով՝ ժողովրդին բաց թողեցին։ (էջ 402)

**189. Նույն տեղում:** Իշխանուհի Կատայնի հուղարկավորության նկարագրությունից։

Պետք էր այստեղ տեսնել անհատակ ողբը, պատվական և ազատ կանանց կականը, տղաների աղիողորմ արտասուրքը...։ Ապա առնելով պատվական մարմինը՝ պայծառ հագուստներով զարդարված, դրեցին տապանի մեջ, քահանաների խմբով և մեծ բազմությամբ տարան իր սեփական վանքը, որ կոչվում է Սուրբ Փրկիչ։ Ուղեկցեցին նրան աղմոսներով, օրհնությամբ և հոգեսր երգերով։ Փակելով գերեզմանը և մեծարելով նրա հանգստի օրը, ժողովուրդը հեռացավ։ (էջ 402)

**190. XII դար:** Հնդհանրական Ներսէս Շնորհալու

Էջմիածին, Հ.545/505

Գրիչ՝ Վարդան  
Տեղ՝

Պետերբուրգ

Շնորհագարդ սուրբ և հոգեից տեր Ներսէաը Հաջորդեց Հայրապետական աթոռին իր եղբոր՝ տեր Գրիգորիս կաթողիկոսից հետո։ ... Նա հորինեց սուրբ եկեղեցու բազում երգերը՝ գանձեր, տաղեր և շարականներ։ (էջ 415)

**191. XII դար:** Պատմութիւն սուրբ Հարանց,

Էջմիածին, Հ. 46

Գրիչ՝ Ալոոմ աբեղայ  
Ստացող՝ Թորոս Եպիսկոպոս Մշեցի

(Ներսէս Շնորհալու մասին)

Սկսում էր երգել հոգեսր պաշտօամունքի երգը, որը պակաս և թերի էր գտնում։ Սուրբ ձեռքի գրով ուսուցանում էր եկեղեցու մանուկներին, որ հավաքվում էին այստեղ բոլոր գավառներից՝ սուրբ աթոռի սպասավորության համար, իմաստուն այրեր, շնորհաշատ եպիսկոպոսներ, վարդապետներ, քահանաներ և սարկավագներ։ ... Նորոգում էր եկեղեցու առաջին հայրերի կարգը և Հայոց եկեղեցին զարդարում էր անմերի լուսումներով։ Հոգեսր երգերով և քաղցրանվագ եղանակներով վայելչացնում էր սուրբ Պատարագի

**խորհրդի երգը:** ... Երգում էր նաև Տերունական տոների, առաքյալների հշատակի, մարտիրոսների և մարգարեների տաղերի երգեր՝ քաղցրանվագ եղանակներով: Եվ թեև հրաշալի էին նրա երգերի խոսքերի իմաստը, սակայն առավել զարմանալի էին տարբեր եղանակների վարպետությունը, որով հորինում էր անման մեղեղիներ, ինչպես անսպառ և առատապույն գանձարանից՝ ճոխ և հարուստ մտքերից արտաքերելով: (Էջ 423)

**192. 1228թ., Սկզբնագիր**

Աւետարան

Ամասիայ Ս.Սարգիս եկեղեցի

Գրիչ՝ Գրիգորիս

Ստացող՝

Գրիգոր

**վարդապետ**

Կատարեցաւ տառ մատենի  
քրիստոսական պատուիրանի  
Աւետարանս հոչակելի,  
ձեռամբ իմով Գրիգորիսի՝  
թարմատար գրչաւորի  
և սուտանուն երգեցողի,  
ի հրամանէ պատուաւորի  
սիրեցելոց վարդապետի  
եղբակը մերոյ Գրիգորի...: (Էջ 859)

**193. 1239թ., սկզբնագիր**

Ճաշոց

Վիեննա, Հ.53, Տաշ.Ցուց. Եր. 250

Գրիչ՝ Կիրակոս

Տեղ՝ Դրազարկ

Ստացող՝ Գրիգոր

Գրվեց աստվածային մատյանս Դրազարկի սուրբ ուխտում, որտեղ և գրվեց այս ձեռագիրս, որպեսզի սրանով մեր նազելի մայր Սիոնի մանուկները երգերով և եղանակներով խրախուսվեն Քրիստոս Տիրոջ Հարության հիսնօրյակին: (Էջ 937)

**194. 1250թ. Սկզբնագիր**

Սնեկնութիւն Կաթողիկեայց

Կիպրոս, Մակարավանք, Հ.44

Գրիչ՝ Ստեփանոս

Ստացող՝ Ստեփանոս քահանայ

Եվ արդ, աղաչում եմ ... հիշեցեք իմ հոգևոր հայր և բարի վարդապետ Սամուել երաժշտապետին և թողություն չնորհեցեք ձեռագրիս ստացողին: (Էջ 1009)

**195. 627թ. (1300թ.) Սրբոյ վարդապետաց Հայոց Մովսիսի և Դաւթի**

Հարցմունք ընդ երկարնակ չարափառն  
Եղւան 2607

Ստացող՝ Գուրգէն քարտուղար Հայոց Մեծաց

Եվ իսնդրեցին Մովսեսին, որպեսզի նա գրի հայոց պատմությունը: Իսկ նա սկսեց գրել Հայոց Պատմությունը և նաև բազմաթիվ այլ գրքածքներ՝ ճառելով Փրկչի տնօրինությունների և այլ բաների մասին: Գրեց նաև Քերականության մեկնությունը և նրանց մասին, ովքեր հորինեցին բազում եկեղեցական ձայնավոր եղանակներ, եկեղեցու կարիքների համար:<sup>265</sup> (Էջ 13)

- 196. 1162թ. Տեառն Ներախի ասացեալ մաղթանք առ Հրեշտակապետին Գաբրիել եւ Միքայել եւ ամենայն Զօրսն երկնաւորաց Երևան 4477**

**Հեղինակ՝ Ներսէս Շնորհալի**

Զանձին բարեաց ծնող բանիս  
Մի մոռանայք տաւնող վեհիցս,  
Զներսէս եղբայր Հայրապետիս,  
Որոյ անուն տեառն Գրիգորիս,  
Յորմէ իսնդրոյ իջեալ ըստ իս.  
Յարմարեցաւ շինուած ճառիս,  
Եւ եղանակ Շարականիս,  
Առ ի պատիւ մեծի տաւնիս: (Էջ 188)

- 197. 1198թ. Մեկնութիւն կաթողիկեայց թղթոյ Սարգսի Շնորհալոյ**

Գրիչ՝ Ցակովք  
Վայր՝ Հռոմիլա

Եվ ինձ՝ տառապյալ և սակավ աշխատող Հակոբիս, իմ ամենաբարի հարազատ, ընտիր բեմական և անհաղթ երաժիշտ Հովհաննեսին ... արժանին հասուցեք՝ Քրիստոսով Հիշելով և գուք կհշվեք ողորմությամբ: (Էջ 294)

- 198. XII դար. Մարգարէութիւնն Եսայեայ եվ գործք Առաքելոց Ն. Ձուղա 13, Տեր-Ավետիսյան, Յուցակ, Էջ 22**

Գրիչ՝ Աւետիս

Բարեհամբավ քահանաներ, երաժիշտներ և կուսակրոններ Միմեռնին և Սիոնին հիշեցեք Հիսուսով, սուրբ գրերս ստացողներ: (Էջ 315)

## ՀԱՅԵՐԵՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

### XIII դար

49 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, V-XII դր., Եր., 1988, (թարգմանությունը մերն է, խմբագիր՝ Խողա Հովհաննիսյան):

**199. 1205թ. Աւետարան**

Վենետիկ 88, Սարգսյան, Յուցակ Ա, Էջ 899-400

Գրիչ՝ Կողմա  
Վայր՝

Խարբերդ

Տիրոջ շնորհով և նրա ողորմությամբ սկսեցի կազմել աստվածախոս սուրբ Ավետարանս՝ Խարբերդ քաղաքում, Սուրբ Կարապետի և Սուրբ Հակոբի Հովանավորությամբ, 1205 թվականին, մեղավոր և անարժան գրիչ Կողմայի ձեռքով, աստվածահաճո Հայր և ընտրյալ Երաժիշտ Թորոսի հրամանով։ Լույսի որդիներ, Տեր Քրիստոսվ Հիշեք սուրբ տառիս ստացող Թորոս Երաժշտին։<sup>266</sup> (Էջ 53-54)

**200. 1217թ. Սաղմոսարան**

Երևան 1813 և 1797 պահպանակներ

Գրիչ՝

Մարգարէ

(Աւրհնութիւն երից մանկանց)

Մարգարեական նվազների շնորհալի տառերը գրվեցին, իբրև տերունական տոների գարդ, մեր եղբայր Գրիգորի հրամանով և Հոգար փափագով։ (Էջ 108)

**201. 1229թ. Ճաշոց**

Հովակիմյան, Յուցակ Նիկոմեդիայի, Էջ 76

Գրիչ՝ Յուսիկ  
Վայր՝ Յիսուանց

անապատ

Պաղբաս աստվածապահ դյուակի, Անտիոք քաղաքի սահմանի մոտ, Ծամրնդավ լեռան սոսորոտին մերձ բնակվում են աստվածահաճո Հայրեր և կուսակրոն ճգնավորներ, որոնք սաղմոսով և օրհնությամբ անդադար թե՛ ցերեկը և թե՛ գիշերը Հոգևոր երգերով և քաղցր ձայներով փառաբանում են ամենաստվբ Երրորդությանը, որ հավիայան օրհնյալ է։ (Էջ 158)

**202. 1238թ. Աւետարան**

Հովսեփյան, Յիշատակարանք, Էջ 859-862, 929-930

Գրիչ՝ Գրիգոր Սսեցի  
Վայր՝ Սանդուկ

անապատ

Քրիստոսով Հիշեցեք գրիչներից անպիտան և թարմատար երգեցող Գրիգորիս վարդապետին։ Հիսուսին Հիշողներիդ և Հիշողներին՝ ողորմյա։ Ամեն։  
Կատարեցաւ տառ մատենի,

<sup>266</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, Եր., 1984, (թարգմանությունը մերն է, խմբագիր՝ Ռոզա Հովհաննիսյան)։

Քրիստոսական պատուիրանի

Աւետարանս հռչակելի,

Զեռամբ իմով Գրիգորիսի

Թարմատար գրչաւորի

Եւ սուտանուն երգեցողի: (Էջ 204)

203. 1238թ. Գիրք դատաստանաց Միսիթարայ Գոշի

Հովսեփյան, Ցիշատակարանք, Էջ 929-932

Գրիչ՝ Բարսեղ

Վայր՝

Հոռոմլլայ

Եվ արդ, ես՝ ձեր մեղապարտ ծառան, մոխրածավալ երեսով և արտասվագոչ սրտով աղաջում եմ բոլորին, ովքեր կարդում կամ եղանակում են, հիշեցեք տեր Մարկոս եպիսկոպոսին: (Էջ 206)

204. 1239թ. Ճաշոց

Վիեննա 53, Տաշլան, Յուցակ, Էջ 251

Գրիչ՝ Կիրակոս

Վայր՝

Դրազարկ

Աստվածային այս մատյանը գրվեց տեր Գրիգոր սրբամյալ եպիսկոպոսի խնդրանքով, Դրազարկի սուրբ ուխտում, և սույնը գծվեց, որպեսզի սրանով խրախուսակեն մեր նազելի մոր՝ Սիոնի զավակները, երգերով և եղանակներով՝ մեր տեր Հիսուս Քրիստոսի Հարության հիսնօրյա օրերին: Երգարանս հնչեցնողներ, աղոթքներով հիշեցեք եղանակները ստացող Գրիգորին: (Էջ 214)

205. 1241թ. Գանձարան, Տաղարան

Փարիզ, 79/50/, Երևան, մանրաժապակեն 453

Գրիչ՝

Յոհաննէս

Վայր՝

Դրազարկ

Տաղերի այս երգարանը կազմվել է Հետնյալ և բազմամեղ Հովհաննեսի ձեռքով...: Եվ ես՝ հանձն առնելով և հետևելով երաժշտական արվեստին, առանց պատշաճ լրիթության, բազում ջանքերի և աշխատափրության շնորհիվ Հասնելով գրիս ավարտին, կցորդների հույժ դժվար եղանակներին և տառապանքներով այլ գրվածքներին, կապակցեցի՝ քանի որ նախ՝ գրեցի ուսանելով, ապա՝ գրելով: Եվ ապա ժամանելով իմ ծննդավայրը, տեղ չգտա և նաև՝ արհեստավարժություն, քանի որ կարողություն ունեցող մարդիկ Հետին մնացել ուսումնառությունից և աստվածայիրությունից և տարբել էին երկրային անցավոր իրերի նկատմամբ սիրով, ինչն, ըստ Տիրոջ խոսքի, ցեցն է ուսում և ստիճն է ապականում: Տեսնելով այս, և խորապես վշտանալով իմ աշխատանքների համար, քանի որ տեղն

այդ անարգ էր և հոռի, ես չգտա պարարտ հող, քանի որ վայրն այդ ապառաժուտ էր: Եվ վերստին եկա իմաստասերների և ուսումնասերների երկիր կիլիկիա, որին պահապան է Քրիստոսը՝ պատսպարելով իր աջոկ, ինչպես ժամանակին Իսրայելին, և ինչպես ինքը եղավ իր մարտակիցը՝ ընդգեմ Հակառակորդների: Պատահեց այնպես, որ ճանապարհին, չար ուժերի ազդեցությամբ գողացան իմ դրերը: Ես չհապալեցի և նորից սկսեցի գրել: Եվ երբ գործս ավարտեցի, ծնվեցին նոր հոգմեր, քանի որ չունեի ոչ Գանձարան, ոչ Տաղարան, և առաջացավ Հոետորական օրինակի որոնման խնդիրը, որը չգտնվեց: Ալս գտնվեց հույժ գեղեցիկ, հոյակապ մի օրինակ՝ Հուսեփի անունով մի երաժշտապետից, որը լավագույնս տիրապետում էր երաժշտության մինչ այժմ քչերին հայտնի բովանդակությանը: Տիրոջով հիշեցեք նաև Հուսեփի երաժշտապետին, որ այս օրինակն անձանձիր շնորհեց մեզ:

(Էջ 221-222)

**206. 1250թ. Մեկնութիւն Կաթողիկեայց թղթոց Սարգսի Շնորհալւոյ Հովսեփյան, Յիշատակարանք, էջ 1007-1010**

Գրիչ՝ Ստեփանոս  
Վայր՝ Չորոյերդ

Եվ արդ, աղաչում եմ Հողացած բերանովս նոր Սիրնի որդիներին, արժանի Հիշատակի արժանացրեք մեղապարտ գրողիս և թողություն շնորհեք իմ ծնողներին: Հիշեցեք անսապատիս առաջադեմ վերակացուներին և իմ Հոգմեր հայրի բարի վարդապետ Սամուել երաժշտապետին և թողություն շնորհեցեք ձեռագիրս ստացողին, որին Հիշատակեցինք, և Քրիստոսը ձեզ կհատուցի բազմապատիկ պարգևներով:

(Էջ 255-256)

**207. 1251թ. Սաղմոսարան  
Երևան 4037 /ԺԵ դ./**

Սրբագրող՝ Յովհաննէս

Գառնեցի

Դավթի սաղմոսները, հատկապես Սուրբ Հոգու այլեայլ երգերը երգում են եկեղեցու սպասավորները ոչ ճիշտը սովորելով և ոչ ճշգրիտը իմանալով: Սրա պատճառը ոմանց անհոգությունն էր և գրիչների մխալ գրառումները: Իրազեկներից ոմանք տարորոշեցին ուղիղը և ուղղորդը: Ոմանք բազմիցս վիճեցին՝ Սաղմոսները երգելիս: Ոմանք էլ ծայրաքաղ առնելով բարբաջում են չգոջացող սրտերով և անիմաստ բայերով, և չեն հիշում Դավթի ասածներից, Սաղմոսներից ու մտքերից: Եվ Պողոսի հրամանով ասվում է, թե մտքում Սաղմոս ասել, նշանակում է Սաղմոս ասել հոգով:

Բոլոր ազգերը Սաղմոսները երգում են գրավոր տեքստերից և հայերն են, որ երգում են անգիր՝ վայրապար, և քահանաները և ռամիկները և մանուկները և կողեռնները և Հավատացյալ կանայք։ Երանիթե ամեն ոք հրճանքով երգեր ճշգրիտն ու ստույգը։ Եվ երբ եւ՝ ձեր և Հիսուս Քրիստոսի նվաստ ծառա Հովհաննես Գառնեցիս տեսնում էի այս, տարակուսանքով վշտանում էի։ Եվ ապա ելք որոնելով գնացի Հաղպատ մայրաքաղաքի մենաստանը և որոնելով գտա թարգմանչաց գրած մի մաղաղաթ՝ Սաղմոսարան, որը պատկանում էր սուրբ վարդապետ Սարկավագին, որը բացահայտեց հին հայոց տոմարը, և նա ճշգրտեց այս սաղմոսները։ Եվ եթե ոմանց ինչ-ինչ պատճառներով սա այլ կերպ երևա, դու՛ ով սիրելի կատարող, ընդունիր այն իբրև բազում աշխատանքներով ստուգված։ (Էջ 260)

## 208. 1257թ. Աւետարան

Սանջան, Ցուցակ Ամերիկայի, Էջ 675-677

Գրիչ՝  
Յոհաննես

Վայր՝ Ակներ

Գրվեցին ժամագրքերը ճանապարհի և անձարակության համար, կիրկեցիների աշխարհում, Յախուտ գավառում, Հոչակավոր և սուրբ Ակներ մենաստանում, ...տեր Կոստանդի Հայրապետության և սուրբ ուխտիս Հոգելից ծերումու՛ ճգնակեց և քրիստոսակա անձնավորության՝ Հայր Միսիթարի և նրա Հարազատի՝ բարեշնորհ երաժիշտ Վարդանի օրոք։ (Էջ 292)

## 209. 1259թ. Առակը Սողոմոնի

Սուրայյան, Ցուցակ Մշո Առաքելոց վանքի, Էջ 8

Գրիչ՝ Յովաչի

Հիշեցեք Տիրոջով, այս ձեռագիրը ստացող և գրող եղկելի Հովսեփին։ Հիշեցեք նաև իմ Հոգեւոր Հայր և ուսուցիչ Փիլիպպոս երաժշտին և ներեցեք սիալների համար։ Հիշեցեք նաև այս օրինակը տվող Պետրոս միայնակեցին... : (Էջ 299)

## 210. 1271թ. Աւետարան

Երևան 2814

Գրիչ՝ Միսիթարիչ  
Վայր՝ Գետկա

## վանք

Սուրբ և պատվական Ավետարանիս ստացողն է սրբազն քահանա Գրիգորը, եւ՝ անարժան Միսիթարս՝ գրիչը, որ արտագրեց կատարյալ մի օրինակից, որը ճշգրիտ էր և լի արվեստով, խոսքով և գրով, տնով և ստորով, դարձագրով և եղանակով, վանկով և առողջանությամբ։ Այն կոչում են Գրիգոր Սուլնեցու անունով, որ շատերից է վկայված և որը մեզ հաջողվեց Աստծո կամոք։

Այս սուրբ Ավետարանը վկան է իմ պահեցողության և պանդուխտի գրության, քանզի գրավորի մեջ աշակերտ էի: Մաքերս կենտրոնացրի ճշմարտության համար, որովհետև վարդապետները տեսնում էին և հավանում: (Էջ 399)

211. 1272թ. Խազիկիրք

Երուսաղէմ 1654, Պողարյան, Ցուցակ Ե, Էջ 485  
Գրիչ՝

Ստեփանոս

Քահանա

Վայր՝ Սկեռռա

Գրվեց Երաժշտական տառա Ստեփանոս քահանայի ձեռքով, մեր պատվելի եղբոր՝ Գրիգոր քահանայի ինդրանքով, ի վայելումն իր անձի և ի հիշատակ իր ծնողների: (Էջ 399)

212. 1276թ. Քաղուած ժամագրոց

Ն. Զուղա 264, Տէր-Ավետիսյան, Ցուցակ, Էջ 471

Գրիչ՝ Վասիլ

Փառք ամենասուրբ Երրորդությանը Հավիտյանս Հավիտենից,  
ամեն: Արդ, գրվեց եղանակավետ տառիկը, կեղծ գրիչ Վասիլի ձեռ-  
քով: (Էջ 468)

213. 1278թ. Մանրուսմունք

Երևան 751

Գրիչ՝ Յոհան

Վայր՝ Բայրերդ դղեակ

Փառք ... եռակի և եռափափագ փառափորփած սուրբ Երրորդու-  
թյանը, որ գորացրեց ինձ՝ անարժանիս, Հասնելու վերջին գծին: ...  
Գրվեց մանրուսման Երգարանա վանքերի անարժան երեց Յոհանի  
ձեռքով, Խաղոյաց գալառում: (Էջ 481)

214. 1281թ. Ժողովածու

Սաղմոսարան Լեւոն Գ թագաւորի

Գրիչ՝ Յոհան

Վայր՝ Սիս

Այս ամենունակ բարիքների գանձարանը սիրողը եղավ Հայոց  
բարեպաշտ և աստվածասեր արքան՝ Լևոն թագավորը, Հայկացյան  
զարմի թագավորության պայազատն ու ժառանգորդը: Մագումով  
սերելով Ծուռեն իշխանից, որը ազգական է Բագրատունիներին,  
Արծրունի տնից ու տոհմից է: Նրա Հրամանով գրվեց Դավթի  
Սաղմոսների Երգերը, որպես եկեղեցու զարդ և Նոր Սիոնի մանկանց  
ուսման վարժանք: Ինքը նույնպես բաղձանքով էր Երգում: (Էջ 415)

215. 1285թ. Ներսիսի Լամբրոնացւոյ Մեկնութիւն Սաղմոսաց  
Երևան 1526 (1294թ.)

Յիշատակարան թագաւորին Հայոց Լեւոնի ընծայաւղի զաւրինակ  
սուրբ գրոցս Հաղբատա:

Եվ սուրբ Սահակ Հայրապետը գրերով ու թարգմանություններով,  
Աստծո գիտելիքների շնորհիվ եկեղեցու քաղաքը ուրախացրեց,  
որոնց վրա հուսալի հիմք դնելով ումանք փիլիսոփայական գիտե-  
լիքները զարգացրին, այլոք մեկնության մաքի շավիղը մաքրեցին, մի  
մասը եղանակների երգերը կարգավորեցին և այլք կանոնի չափը  
սահմանեցին ... : (Էջ 568)

**216. 1287թ. Աւետարան  
Երևան 5247**

Ստացող՝ Միսիթար  
Վայր՝ Մանեա այր

Այս աստվածաշունչ երգերիս և հոգմոր գանձերիս,  
աստվածատուր սուրբ Ավետարանիս փափառող եկեղեցու կրտսեր  
որդին և կրոնավորներից Հետնյալ Միսիթարն է: (Էջ 602)

**217. 1289թ. Մեկնութիւն Կաթողիկէից թղթոց Սարգիս Շնորհալույ  
Երևան 1530**

Գրիչ՝ Ոմեկ  
Վայր՝ Եզնկա

(Առաքյալների մասին)

Նրանք ուսուցանում էին Քրիստոսի երկրպագությունն ու  
ճշմարիտ Հավատը, վկայելով Հին ու Նոր կտակարաններից,  
Հավատարիմ՝ սուրբ կենսաբեր ավետարանիչներին: Ամենուրեք  
հոգեհնչող նվագերգություններով մշտապես օրհնում էին Հայր  
Աստծուն՝ իբրև առաքիչ և Որդի Աստծուն՝ որպես առաքյալ և  
Աստծո Սուրբ Հոգուն՝ իբրև ամեն ինչի զարդարիչ, ուղղիչ և  
կարգավորիչ, Հոր և Որդու կամքով զուգորդված: (Էջ 626)

**218. 1290թ. Աւետարան  
Երևան 5736**

Գրիչ՝ Թորոս  
Վայր՝ Դրազարկ

Քրիստոսով Հիշեցեք ընդհանուր եղբայրությունս՝ եպիսկոպոսին,  
բարունիին, երաժշտին, ... (Էջ 658)

**219. 1292թ. Աւետարան  
Երևան 6292**

Գրիչ՝ Մաթէոս վարդապետ  
Վայր՝ Վայոց ձոր, Աղաւ անսապատ

Ապա այժմ գովելի են այն դպիրները, որոնք թեև հասու չեն,  
չնայած թիկնոց ունեն, սակայն ընթերցում են: ... Եվ  
սաղմոսերգության փոխարեն հնչեցնում են տգեղ, դատարկ ու ոչ  
աստվածահաճո խոռքեր, որոնք սովորաբար երգում ենք: Եվ  
ինչպես ասում էր, թե միտքն անպտուղ է, և սա ավելի, քան այն,  
ըստ որի մեկը Հազարին է Հալածում, քանզի ճառելիս մեկին Հիշելով  
Հազար Հազարին է սուզում: (Էջ 674)

**220. 1294թ. Ժողովածու**

Երևան 2588

Գրիչ՝ Բարսեղ երաժիշտ

Վայր՝ Դրազարկ

Արդ, աղաչում եմ ամենքիդ, Հանուն Քրիստոսի սիրույն, որ օգտվում եք սրանից կամ ընդօրինակում եք, Քրիստոսով Հիշեցեք սրա աշխատափրող, նվաստ երաժիշտ Բարսեղին, նրա ծնողներին և աղքատուհին: Խոշորության և սիսայների Համար մի՛ մեղադրեք, քանզի տխմար էի և պակասամիտ: Գրեցի իմ կամքով, սիրով և բազում աշխատափրությամբ: Քրիստոս Աստված, մաքրի՛ր մեղքերից գրերիս ստացող Բարսեղ երաժշտին և նրա ծնողներին, եղբայրներին և բոլոր հավատացյալներին և փառքիդ անխոնչ:

(Էջ 729-732)

**221. 1295թ. Աւետարան**

Երևան 6290

Ստացող՝ Յուսէփի

Վայր՝ Դրազարկ

Հիշեցեք Տիրոջով և այժմ կենդանիներին և մեր առաջնորդ Կոստանդին, Բարսեղ երաժշտին և մյուս Բարսեղին և ձեռագրիս կազմող Մանիլ փիլիսոփիային: (Էջ 759)

**222. 1296թ. Աստուածաշունչ**

Երևան 177

Գրիչ՝ Մովսէս

Վայր՝ Կիլիկիա

Յորժամ յաւետ եզր կալցի  
Բանք մատենիս զոր աստ գրեցի,  
Յիշեա զգծող այսմ տառի  
Տէր իմ Յիսուս Դաւթեան որդի,  
Անեղ բանիւ Հօրն մեծի  
Եւ դասեցո յաշեաց դասի,  
Ծնողօք զարմիւք մեր Համայնի,  
Երգել քեզ փառք անլռելի  
Անձայն երգով, որ ոչ լսի,  
Այլ իմանալ միշտ ճանաչի: (Էջ 775)

**223. XIII դար: Մանրուամունք**

Երուսաղեմ 2492, Պողարյան, Ցուցակ Լ, Էջ 168

Գրիչ՝ Սողոմոն

Վայր՝ Եղնկա

Արդ, աղաչում եմ ամենքիդ, ով սպասավորներ երկնավոր փեսայի, ձեր մաքրափայլ աղոթքներում Հիշեցեք Ստեփանոս կրոնավորին, որը իմաստուն, հեզ և դյուրահավան և Հանդարտ է, հմուտ է Հոգու և մարմնի իմաստությամբ, վերահասու է փիլիսոփայական արվեստից, քննությամբ և քաղցր ձայնով: Ես՝

նվաստ Ստեփանոսս, ստացա աստվածավայլ կտակս, որ կոչվում է շարականների երգ, սուլ ու դժվար օրերում, որոնց մեջ լցված է ամբողջ աշխարհով մեկ սիոված իսմայելական ազգի դառնությունը: (Էջ 930)

## ՀԱՅԵՐԵՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

### XIVդար

224. 1304թ. Աւետարան, Երևան 3722

Գրիչ՝ Յակովը

Այս ժամանակ բարձրավիզ և հպարտապարանոց, խայտաբղետ և գոռող իսմայելյան ազգը վլուխը կորցնելով ընկրկեց և բարձրացավ եկեղեցու ձայնը, աճեցին սալմոսների ձայները և ալելուների երգերը, պայծառացավ քրիստոնյաների հավատքը:<sup>267</sup> (Էջ 24)

225. 1305թ. Շարակնոց

Վիեն. 212, Տաշ. Ցուց. Էջ 585

Գրիչ՝ Գրիգոր

Գրվեցին եղանակավոր տառերը հայոց 854թ., հայոց Հեթում թագավորի օրոք և տեր Գրիգորի Հայրապետության ժամանակ, սուտանուն Գրիգորի ձեռքով, պատվարժան սարկավագ Ստեփանոսի խնդրանքով, ի վայելումն իր անձի, ծնողների հոգու հիշատակի համար: ... Արդ ես՝ նվաստ սարկավագ Ստեփանոսս բաղձալի սիրով ցանկացա այս եղանակավոր տառերը: (Էջ 36-37)

226. 1306թ. Աւետարան

Երևան 4806, նաև՝ Վասպ. 80, Լալ. Ցուց. Սյուն 148-150

Գրիչ՝ Յովսիան

Աղաչում եմ ձեզ, ով սուրբ քահանաներ և աստվածային խորհրդի բաշխողներ, երբ կարկառելով ձեր ձեռքերը վեր եք բարձրացնում և տրվում աստծուն, երգեցեք պուսխումե՝ քաղցրաբարբառ ձայնով և հաշտեցրեք արարչին արարածների հետ: (Էջ 43)

227. 1308թ. Շարակնոց

Երևան 1590

Գրիչ՝ Գրիգոր

Վայր՝ Սիս

Գրվեցին եղանակավոր տառերը հայոց 857 թվականին: (Էջ 56)

228. 1310թ. Շարակնոց

Երևան 7034

Գրիչ՝ Իգնատիոս

<sup>267</sup> ԺԴ դարի հիշատակաբաններ, Եր., 1950, (թարգմանությունը մերն է, իսմայիկի՝ Ռուսա Հովհաննիսյան):

Վայր՝ Կիլիկիա, Զորոյ

վանք

Գրվեցին եղանակավոր տառերը 859թ., անպիտան և անարժան քահանա իգնատիոսի ձեռքով: (էջ 74)

229. 1312թ, Շարակնոց

Բրիտ. Թանգ. 46 /18,603/, Կոնիբիր, Յուց. էջ 95-96

Գրիչ՝ Ներսես

Վայր՝ Ականց անապատ

Տեր Հիսուս, ողորմյա Գրիգոր քահանային, որ այժմ Ականց անապատի հայրն է, որ գրիս սկիզբը դրեց և գրեց մինչև Որոտման շարականը: Ով եղայրներ, աղաչում եմ ձեզ, հիշեք Գրիգոր դպիրիս, որ գիրը խաղեցի և զարդարեցի ոսկով և ծաղկով: (էջ 88)

230. 1312թ. Մանրուսմունք

Երևան 8623

Գրիչ՝ Գրիգոր

Վայր՝ Սիս

Գրվեց այս տետրակը Գրիգոր քահանայի ձեռքով, Սիս մայրաքաղաքում, սուրբ Նշանի Հովանավորությամբ, Կոստանդի՝ լավ և ընտիր օրինակից, դեռատի սարկավագ Սիմեոնի և իր ծնողների համար: (էջ 88)

231. 1314թ. Շարակնոց

Հալէպ. Անթիլ. և մասն. 51, Սիւրմ. Բ 146

Հայոց 763 թվականին, Կոստանդ Զրողի կաթողիկոսության և հայոց Օժին թագավորի իշխանության օրոք շարականների տառերով գրվեցին հին և նոր շարականներ՝ կատարյալ և անթերի, թարմատար գրիչ Կարապետ Ճիշողի ձեռքով, կրոնավորի մայրաքաղաքում, իր որդի Մարտիրոսի համար: (էջ 111)

232. 1314թ. Մանրուսմունք

Երևան 752

Հայոց 763թ. գրվեց եղանակավոր տառս, որ կոչվում են մանրուսմունք ...:(էջ 112)

233. 1316թ. Շարակնոց

Երևան 5658 (Տես նաև՝ 1472թ.

Գրիչ՝ Կարապետ

Գրվեց շարականների եղանակավոր տառը, հետնյալ և փծուն գրիչ Կարապետի ձեռքով, սրբասեր քահանայի խնդրանքով, իրենց, ծնողների և ազգականների հիշատակի համար: (էջ 126)

234. 1324թ. Ճաշոց

Երևան 4553

Գրիչ՝ Ստեփանոս

Վայր՝ Խտալիս, Պաւալիսի

Կարիք չկա նշելու օրինակներիս դժվարագրության, եղանակների և ժամերի դժնդակության մասին, քանի որ դա շատերին է հայտնի: Բայց այնուամենայնիվ իմ հույսը Քրիստոսի և աստծո գոհությունն է, այժմ և հավիտյանս, հավիտենից, ամեն: (Էջ 190)

**235. 1325թ. Մանրուամունք**

Երևան 2388 (տես նաև՝ 1440թ.)

Գրիչ՝ Սիմէոն

Վայր՝ Գալու անապատ

Գրվեց եղանակավոր տառա մանրուաման, աստվածաբնակ անապատում, որ կոչվում է Գալու, Սուրբ Աստվածածնի և այլ սրբերի հովանավորությամբ, մեղապարտ և անարժան Սիմեոն քահանայի ձեռքով: (Էջ 197-198)

**236. 1325թ. Շարակնոց**

Ալիշան, Սիսուան, Էջ 153

Գրիչ՝ Կոստանդին

Վայր՝ Ի ձորս խորին անապատի ի վանք՝ Փերձեր

Գրվեց այս շարականների երգը խորին անապատի ձորում, Փերձեր վանքում, սուրբ Սիոնի և Քրիստոսի սուրբ նշանների հովանավորությամբ, Կոստանդ քահանայի սպիտակ ձեռքով, սրբասեր և աղավնատիպ ծերունի Հայր Թուխանի խնդրանքով, նրա քեռորդու՝ դեռատի պատանի Պողոսի Համար: (Էջ 199)

**237. 1328թ. Մանրուամունք**

Բրիտ.Թանգ. 41 (2337) Կոնիք. Յուց. Էջ 87

Գրիչ՝ Յովհաննէս

Հայոց 777թ. գրվեց եղանակավոր գիրս անիմաստ գրիչ Հովհաննեսի ձեռքով, իմ քեռորդու՝ սուրբ Կուսակրոն քահանա Ներսեսի խնդրանքով, իր անձի և մեր ծնողների հիշատակի Համար: (Էջ 213)

**238. 1328թ. Թիսուա որդի Ներսիսի Ծնորհալոյ**

Երևան 5972

Ի յեւթհարիւր Հայոց թվի,

Եւթանասուն և Եւթնեկի,

Ի քսան և վեց ամտ Հոռի,

Եւ ի քսան և ինն յունվարի,

Վճարեցաւ երգ սրբալի,

Զոր ասացեալ տէր Ներսէսի

Կլայեցու և Տարսոնի,

Ի յիշատակ Ամիր Սարգսի

Եւ ծնողաց իւրոց բարի ...: (Էջ 213)

**239. 1330թ. Մանրուամունք**

Երևան 7125

Գրիչ՝ Սարգիս

Գրվեց եղանակավոր տառա, որ կոչվում է մանրուաման, Հայոց 779թ., նվաստ և անարժան Սարգիս քահանայի ձեռքով, պատվարժան և երջանիկ կուսակրոն Տիրացու քահանայի

լսնդրանքով, իր և իր բոլոր ազգականների հիշատակի համար, հայոց Լևոն թագավորի օրոք, որը որդին էր հայոց Օջին արքայի, և տեր Հակոբի հայրապետության ժամանակ: (Էջ 228-229)

**240. 1331թ. Շարակնոց**

Երևան 1601

Գրիչ՝ Մարգիս

Գրվեց եղանակավոր տառս, բազմամեղ և անարժան, սուստանուն Սարգիս քահանայի ձեռքով, հայոց 780թ.: (Էջ 243)

**241. 1335թ. Շարակնոց**

Թորոս Աղբար, Բ. Էջ 449-450

Գրիչ՝ Մանուէլ

Վայր՝

Թիւրքթի

անսապատ

Արդ, ավարտվեց այս աշխատանքը, երբ թագավորում էր հայոց Լևոն չորրորդը, որը պահպանում էր Աստծո օրերի պարագաները երկար ժամանակ, տեր Հակոբի հայրապետության օրոք, Թյուքթի կոչվող մեծ և հռչակավոր անապատում, որտեղ աշխարհի կատարելիությանը համահունչ, չէին պակասում օրհնության երգերը, սաղմոսների ձայները, լապտերների լույսը, խունկերի անուշ բուժմունքը: (Էջ 277)

**242. 1335թ. Նւաստ Յոհանիսի արարեալ երգս ոտանաւոր, ի դեկտեմբեր ամսոյն եղեւ բան խաւաել ընդդէմ երկարնակեցն, դաւանութիւն ուղղափառ, ըստ խնդրոյ Հոգեւոր մերոյ Ասլանի եւ այլ քոհստոնէից թավրիթի, զոր սիրով խնդրեալ:**

Երևան 2776

Հեղինակ՝

Թովհ.

**Կարբերունի**

Վայր՝ Թավրեժ

Ես Յովաննէս Տարբերունի,

Որ զաակալ բանքս երգեցի,

Ոչ զօրաւոր, այլ ըստ կարի,

Դէմ հոռոմոց և ֆռանկի.

ԶՔրիստոս աստուած դաւանեցի

Յերկուց բնութեանց լինելով մի, ...: (Էջ 278-279)

**243. 1336թ. Շարակնոց**

Երևան 1622

Գրիչ՝ Թորոս

Վայր՝ Ավագ անապատ

Գրվեց եղանակավոր տառս հայոց 785թ., հայոց Լևոն թագավորի օրոք, ... մեղանակ և անարժան քահանա թորոսի ձեռքով, Խուզականունով Գրիգոր դպիրի լավ և ընտիր օրինակից: (Էջ 290)

**244. 1338թ. Աստուածաշունչ**

Երևան 4429

Գրիչ՝ Միսիթար Անեցի

Վայր՝ Սուլթանիա

Եւ այլ ընդրեալ քահանայիցն  
Սուլթանիու յեկեղեցին,  
Ստեփաննոսն՝ Բաբերգյին՝  
Սիրով զմեզ ընդունողին,  
Նայ և Բարսէղ կրօնաւորին՝  
Քաղցրաբարբառ երգեցողին,  
Եւ Յովհաննէս փակակալին,  
Եւ Հայրապետ քահանային։ (Էջ 309-310)

245. 1338թ. Մանրուսմունք

Երևան 8570

Գրիչ՝ Առաքել  
Վայր՝ Զորավանիք

Գրվեց եղանակավոր տառս, որ կոչվում է Մանրուսումն և առընթեր՝ Աստվածածնի փոխման կցուրդը, 787թ., Հայոց Լևոն թագավորի օրոք ...։ (Էջ 314)

246. 1344թ. Աւետարան

Երևան 7637

Գրիչ՝ Նատեր

Այս Յովհանեսն էր իմ որդի.  
Յաւուրս հասեալ քսան ամի,  
Էր ամենայն չորհիւ ի լի  
Զարթ և պարծանք մերոյ սեռի,  
Շասդուն մտաւք և Հոգելի,  
Կարդացողոց էր ցանկալի,  
Ոինէր ճաշակ եղանակի  
Ղորդի յարուեատ երաժշտի։ (Էջ 339)

247. 1351թ. Մանրուսմունք

Երևան 758

Գրիչ՝ Գրիգոր

Գրեցաւ տեսրս և աւր։

Արդ, աղաչում եմ ամենքիդ, որ կհանդիպեք այս երգարանին, Հիշեցիք ձեր աղոթքներում ինձ՝ անարժան գծող Գրիգորիս և իմ ծնողներին ...։ (Էջ 392-393)

248. 1357թ. Աւետարան

Երևան 5332

Գրիչ՝ Կարապետ

Եվ արդ, ես՝ Խնդու մահդասիս, որ ըստ աստվածային հաջողության սուրբ Գևորգի ուխտի առաջնորդն եմ, շինեցի վանքս և գնեցի ավետարանս, տարեգիրքս, առաքյալների գործը և ճառընտիրը և երկու Մաշտոց և Շարակնոցը, նաև խազտետը և բազում զարդերով զարդարեցի անապատս՝ ըստ իմ կարողության։ (Էջ 425)

249. 1359թ. Ժողովածու աղօթից

Երևան 3933

Գրիչ՝ Կոստանդին

Սևաստիոսի որդում ձեր սուրբ սենյակների աղոթքներում ու մտքերում անմոռաց պահեցեք։ Արարջնակալի աստվածաբնակի սեղանի հանդեպ, նրա հետ նաև խոսքիս ստացող պատվական Սիմեոն քահանայի մեղքերի և ծնողների համար թողովթյուն խնդրեցեք Հիսուս Քրիստոսից։ (Էջ 445)

250. 1385թ. Կարգաւորութիւն Հասարակաց աղօթից

Երևան 592

Գրիչ՝ Ղազար

Վայր՝ Գողթան երկիր,

Մինչական անապատ

Աղոթական երգարանը իր ցանկությամբ գծագրեց անարժան կրոնավոր Կարապետը իմ և իմ եղբոր համար։ Ում որ Հետապայում կշանդիպեն այս տառերը ուսանելու կամ գաղափարելու համար, թող հիշեն դրա վերոհիշալ ստացողին և գծողին՝ ծնողներով հանդիրձ։

(Էջ 553)

251. 1386թ. Ժողովածու բանից Գրիգորի Նարեկացւոյ, Գրիգորի Տղայի եւ այլոց.

Երևան 5707

Գրիչ՝ Յակոբ

Դուք, որ իմ անունը լսում եք, Հոժարակամ Աստված ողորմին կրկնեցեք, նույնպես և դուք, որ Հոժարակամ կարեկցեցիք մեզ և շատերին՝ երաժշտական երգերում և Հոգևոր խոսքերում։ ...

Մինք կարող ենք կարդալ ու գրել համալսարանում, որի զեկավարն է սուրբ, տիեզերահամբավ և երանաշնորհ րաբունապետ Հովհանն Որոտնեցին, որի անունը իբրև արեգակ փայլում էր այս անցուկ և խավար ժամանակում, քանզի բժշկում էր բոլոր խոցերն ու կարիք կար իշխանի ու ազատի, կաթողիկոսի ու իմաստասերի, քանզի Հայկացյան ազգը մյուս ազգերի մոտ պարծենում էր նրանով։ Նա հավաքում էր Հեռավորներին և մերձավորներին, որբերին և ընտանիքավորներին, Հորինում էր և ուսուցանում, Հացնում փառավոր մի աստիճանի, ոմանց՝ րաբունիի և քահանայի, ոմանց՝ երաժտի և փիփսոփիայի, այլոց էլ՝ ծաղկողի ու քարտուղարի։ Ծույլերին արհամարհում էր, արիներին փառաբանում, բոլորին կերակուր ու հագուստ էր տալիս, գիրք և մեկնություն, անխորով խաղաղություն և այս ամենը աստծո սիրո և իր Հոգևոր շահի համար։ (Էջ 560)

252. 1386թ. Ժողովածու

Երևան 557

Գրիչ՝ Գրիգորիս

Վայր՝ Եղնկայ

Խնդրում եմ աստծուց, որ պահպանի այս սուրբ տաճարը Հաստատ և անխախտելի՝ մինչև Քրիստոսի գալուստը ... : Նաև այստեղից

թող չպակասի սաղմոսների երգերը, պաշտոնյաների ձայները,  
խունկի բուլմունքը թող չպակասի սրա դռնից: (Էջ 561)

**253. 1393թ. Աւետարան**

Ազգ.Հանդէս, Բ գիրք, 1897թ.  
(Ողբ ի գծողչս բանի ի Գրիգորէ Խաթեցւոյ)      Գրիչ Գրիգոր Խլաթեցի  
Տէր Զաքարիա, բարի նահատակ եղեր Քրիստոսի,  
Տէր Զաքարիա, արի խաչակից եղեր Քրիստոսի,  
Տէր Զաքարիա, ընտրել քաջ Հովիւ նման Քրիստոսի,  
Վասն մեր բարեխօսեա առ Քրիստոս տէրն ամենայնի  
Շնորհել մեզ Հովիւ բարի՝ գհարազատն քո սիրելի,  
Զտէր Դաւիթ Հոգուովն արի, լի շնորհաւք, յաջորդ աթոռի,  
Պահել անսասան յերկրի յամերամս ժամանակի,  
Այլ և երգաւղիս տաղիս Գրիգորի անձին եղկելի՝  
Մասն ընդ քեզ պարզեցնցի յաննախանձ մեր տէառնէն ձըրի:  
(Էջ 601)

**254. 1394թ. Գանձարան**

Երևան 3503      Գրիչ Եսայի  
Վայր՝ Սիւ

Գրվեց եղանակավոր տաղարանս Հին և նոր երգերի, որ գրել են  
առաջին սուրբ Հայոցերը, 851թ., տեր Կարապետի  
Հայրապետության օրոք: (Էջ 607)

**ՀԱՅԵՐԵՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ  
ԽՎԴԱՐ**

**255. 1401թ. Աղամզիրք Առաքելի Սիւնեցւոյ**

«Աղամզիրք» Էջ 321-327

Հեղինակ՝ Առաքել Սիւնեցի  
Սիրողք բանից և ընթերցողք  
Զերգողս յիշէք իմով նախնեօք  
ի սուրբ յաղօթս ձեր արտասոօք,  
Որում և դուք յիշէք փառօք:<sup>268</sup> (Էջ 11)  
(Գրիգոր Լուսավորչի մասին)  
Բամեալ ծընունդս Հայաստանեաց,

<sup>268</sup> ԺԵ գարի հիշասակարաններ, Մասն առաջին (1401-1450թթ.), Եր., 1955, (թարգմանությունը մերն է, խմբագիր՝ Խողա Հովհաննիսյան):

Որք ինձ օգտին ի քոյդ չնորհաց,  
Քեզ օրհնութիւն տան երգ վանաց,  
Քև ազգակիցք և նախնեաց: (էջ 13)

256. 1401թ. Ալբա Յովհաննու սանդուխը աստուածային ելից  
Երևան 1925 Գրիչ՝ Մարկոս

Վայր՝ Ղրիմ, Տաշքաւբրու դղեակ  
Զեր սրբերի հետ բարությամբ Հիշեցեք թարմատար և կարգընկեց  
Մարկոս գրիչիս, սիսալաշատ և խառնաշփոթ գրիս համար մի մեղա-  
դրեք, որովհետեւ քարտեզ փառանդի էր և օրինակը՝ դժվար, և այդ-  
քան էր մեր կարողությունը և կարիքը: Կորկոտը և թանը մեզ հա-  
մար՝ գուասն, այսինքն՝ ծաղրական: Իսկ ձեր չնորհներով ընթրեցեք  
ի փառա աստծո: (էջ 19)

257. 1405թ. Մանրուսմունք  
Երևան 753 Գրիչ՝ Ռիստակիս  
Վայր՝ Ավագ վանք

Գրվեց եղանակավոր տառա, որ կոչվում են Մանրուսում, լավ և ըն-  
տիր օրինակից, որը գրված է առաջին երաժշտապետերի կողմից,  
Արքակաղնի սուրբ ուխտում՝ անիմաստ գրիչ և հույժ մեղապարտ  
Որսոտակեսի ձեռքով: (էջ 53-54)

258. 1406թ. Շարակնոց  
Երևան 2418 Գրիչ՝ Գալուստ  
Վայր՝ Տաթեւ

Արդ, գրվեց եղանակավոր տառա և լուսազարդ երգարանս, հայոց  
851թ., Սիսական տանը, սյունյաց երկրում, Տաթեւի մեծ և  
հոչակավոր ուխտում, ...: Ձեռագիրը գրվել է բազմամեղ և ապիկար  
սպասավոր Գալուստ գրչի ձեռքով, Սաեցու լավ և ընտիր մի օրի-  
նակից, որ գրված էր Խոլ մականունով բազմարվեստ դպիր Գրիգոր  
գրչի ձեռքով:  
(էջ 60)

259. 1408թ. Մանրուսմունք  
Երևան 763 Գրիչ՝ Արիստակես  
Վայր՝ Աւագ վայր

Գրվեց եղանակավոր տառա, որ կոչվում են Մանրուսամունք, լավ և  
ընտիր օրինակից, գրված՝ Արքակաղնում, առաջին երաժշտապետե-  
րի կազմածից, որտեղ յուրաքանչյուր օրիվա համապատասխան դասը  
գրված էր մեծ տքնանքով, լի՝ բարձր արվեստով: (էջ 88)

260. 1408թ. Գանձարան  
Երևան 5328 Գրիչ՝ Գրիգոր Ծերենց  
Խլաթեցի  
Վայր՝ Ցիպնայ վանք

Նրանք, ովքեր ցանկանում են գյուտից խմաստից ստանալ մարմ-նական կամ հոգևոր մասունքներ, իրենց անձը ենթարկում են միայն տանջանքների, հասնելով բաղձալիք տեխնանքների, որպիսին տեսել էին մեր աստվածային առաջնորդները, որոնք մերժելով մարմնական կարիքները ընդառաջ գնացին վերին կոչմանը, հասնելու նրան, ինչին երկար ժամանակ ցանկանում էին, ինչին բոլոր ժամանակներում հառնել էին իրենց մտքերի ուշագրությունը՝ հայցելով նրա սերը: Կարգավորելով Հաստատեցին նոր Սիոնի պայ-ձառության ժամերի և աղոթքների տոնը և կանոնադրությունը՝ ձգտելով աստվածային սիրո պաշտման: Եւ քանի որ ներբողական գովասանությամբ զարդարեցին մեր մայր սուրբ եկեղեցին, երբեմն ձայներով երգում էին աստվածային երգը և ուսուցանում էին Հայրերը՝ որդիներին և վարդապետները՝ աշակերտներին, որպեսզի մեր արարիչ աստծո պարգևները մոռացության չտրվեն: Այս փափագով և ես՝ տրուպս կարգավորներից և Հետնյալս բա-նասերներից, Գրիգոր անունով, մեղքերի տիղմի մեջ ծովությամբ թմրած և անհոգ մրափած, տաժանակիր աշխատանքով Հավաքեցի արժեքագոր գանձերը և զիեցի մեկ սուրբի մեջ: Դրանք ստեղծագոր-ծություններն են առաջին և Հաջորդ Հոգեկիր այրերի, որոնք արժա-նացել են Հոգու պարգևներին: Նրանք երգել են զանազան ոճով և ձայնի գոյշով, կարգով ու շարքով խոսքը՝ գանազան եղանակնե-րով, սուրբ եկեղեցու պայծառության և նոր Սիոնի մանկանց զվար-ճութան համար, որ օրստօրե գեղգեղալով փոփոխվում են ի փառ-աստծո և ի պատիվ նրա սրբերի: (Էջ 90-91)

## 261. 1411թ. Մանրուսմունք

Եվրոպայի մասնավոր Հավաքածուներ հ.24, Էջ 44-45

Գրիչ՝ Յովհաննէս Սանահնեցի  
Վայր՝ Երուսաղեմ

Արդ, գրվեց եղանակավոր տառս, որ կոչվում է Մանրուսում, Երու-սաղեմ սուրբ քաղաքում, տիեզերաժողով, Հոյակապ, Հրաշափառ մեծ Հարության Հոչակավոր տաճարում ... Կարապետու լավ և ընտիր օրինակից: (Էջ 130)

## 262. 1412թ. Մանրուսմունք

ՍՅՀ հ. Ա.73, Էջ 153

Գրիչ՝ Ստեփանոս Ավաքերիցանց  
Վայր՝ Սիս

Գրվեցին շարականներս, որ կոչվում են գետք և դրանց հաջորդող գիշերային ալելուները, Հայոց 861թ., Սիս մայրաքաղաքում, սուրբ Մկրտիչ Կարապետի և Հակոբ Հայրապետի Հովանավորությամբ, մե-դավոր և ախմար Ավաքերիցանց անունով Ստեփանոսի ձեռքով, սորբասեր քահանա Կոստանդնի պատվերով՝ գիշերային ժամերգու-թյան համար, քանի որ բոլոր շարականներն այստեղ են Հավաքված,

Հարցերին՝ զարդ, որը ծայրաքաղ է, սկզբում է և՝ կատարյալ։ Այստեղ ընդգրկված են նաև Ութձայնի ալելումները՝ իրենց սարքով։ Զեռագիրը մնալու է ի հիշատակ նրա, նրա ծնողների, զուգակից իթլիշահի, նրա դեռատի զավակներ՝ Լևնի և Հովհաննես դպիրի և այլ ազգականների։ ... Ով սուրբ քահանաներ, այստեղ զետեղված շարականները գրված են վերջից՝ առաջ, և եթե ցանկանում եք ուղղորդ քաղել, որ ճայնեղանակից էլ սկսելու լինեք, սկսեք ճայնից և քաղեք, ապա թղթերը շրջեք, դրանք ձեզ կուղղորդեն, ըստ ձեր կամքի։ Միսալների համար հանդուրժող եղեք, քանի որ մեր կարողությունն այսքան էր։ (Էջ 139-140)

263. 1415թ. Յաճախապատում ճառք

Երևան 1775

Ովքեր ընթերցելու և կրկնօրինակելու եք ճեռագիրս, Հիշեցեք Քրիստոսի հետ մեր սուրբ հորը՝ մեծանուն բարունապետին, երկրորդ աստվածաբանին, բազմերջանիկ, աղքատասեր, Հեղահոգի և քաղցր եղանակով երգողին, ինչպես նաև աստվածային շնորհներով լի Գրիգոր վարդապետին, որ Հաճախապատումը տվեց ինձ սուրբ քաղաք Երուսաղեմում, որին Քրիստոսը երկնքի արքայությունն է շնորհում։

(Էջ 178)

264. 1416թ. Ժողովածու մեկնութեանց

Երևան 5869

Գրիչ՝ Աւետիք

Դարձյալ աղաչում եմ տիրոջ հետ հիշել իմ հոգևոր հայր և հույժ երախտավոր ուսուցիչ տեր Մահակին, որը աստծո խոսքի սպասափորն է և քաղցրածայն երաժիշտ։ (Էջ 188)

265. 1416թ. Գանձարան

Փիրդ. Նոտ. 49

Գրիչ՝ Յովհաննէս

Դուք, որ նվազում եք աստվածային անուշաձայն եղանակով սուրբ Աստվածածնի և սուրբ Սարգիս գորավարի տաճարում, Հիշեցեք Հովհաննես քահանային, իմ հորը՝ Մկրտիչ քահանային։ (Էջ 192)

266. 1419թ. Աւետարան

Գրիչ և ծաղկող՝

Աստուածատուր

Վայր՝ Ոստան

Քրիստոսով Հիշեցեք նաև իմ Հակոբ վարդապետին, որ ինձ հետ երկար աշխատեց և սովորեցրեց սաղմոս, շարական, խազկար, գծագրություն և բարեձեռություն ամեն ինչում, ինչը չեմ ընդունում։ (Էջ 227)

267. 1419թ. Ճառընտիր

«Միաբանք և այցելուք Երուսաղէմի» Էջ 247

Գրիչ՝ Մանուէլ

Վայր՝ Երուսաղէմ

Հիշեցեք նաև Հոգևոր եղբայրներիս՝ Մկրտիչին, որն իմ օգնականն էր Հաղորդելու և ուղղելու գործում, Հակոբ արեղային, որ պատրաստում էր տեսոր, նաև՝ խազում էր ...:(Էջ 233)

**268. 1421թ. Մանրուամունք**

Վիեն. 419, Տաշ.Ցուց., Էջ 873

Գրիչ՝ Յոհանէս

Վայր՝ Սանահին

Կատարվեց երաժշտական ձայնավորների ցանկայի երգարանը Հայկապյան տոմարի 870թ.: Ով լուսերամների խմբեր և քաղցրանվագ երաժշտապետեր, որ օգտվում եք սրանից և վայելում եք այն, Քրիստոսով հիշեցեք մեղավոր գծողիս: (Էջ 257)

**269. 1421թ. Գանձարան և Տաղարան**

Սեբաստիա, Ա.Նշան, 136

Գրիչ՝ Աստուածատուր

Վայր՝ Պառուագրակ

Արդ, աղաչում ենք բոլորին, ովքեր կհանդիպեք այս եղանակավոր տառիս, ձեր մաքրափայլ աղոթքներում հիշեցեք ձեռագրի ստացողին՝ պատփարժան, կուսակրոն ճգնավոր Հակոբ արեղային, որը մեծ փափագով ցանկացավ գնել աստվածազարդ այս գիրքը, որտեղ Հավաքված է գանձ ու տաղ, բլողը տեսակի տոների գարզն ու պայծառությունը, ի հիշատակ իր և իր ծնողների, և արյունակից մերձավորների ...: (Էջ 267)

**270. 1421թ. Գիրք Հարցմանց Գրիգորի Տաթևացւոյ**

Երևան 918

Ով քահանաներ սուրբ Սիոնի և ընթերցողների խմբեր, որ Հանդիպելու եք այս ձեռագրին՝ կարդալու կամ արտագրելու, Քրիստոսով հիշեցեք պրասանունդ և արժանապատիվ, ալեազարդ ծերունի, գահագլուխ քահանա Վահրամին, որը պանծալի երաժշտապետ էր: (Էջ 270)

**271. 1422թ. Մաշտոց**

Երևան 9248

Գրիչ՝ Արմէոն

Վայր՝ Երգնկա

Արդ, գրվեց աստվածախոս քնարս, որ կոչվում է Հայր Մաշտոց, Հոգնամեղ և անարհեստ գրիչ, սուտանուն քահանա Սիմեոնի ձեռքով ...:(Էջ 289)

**272. 1422թ. Գովասանութիւն Սրբոյ Առաքելի Բաղիշեցւոյ**

Երևան 7363

Հեղինակ՝ Առաքել

Վայր՝ Ղազարու վանք

Արդ, ես՝ մեղքերով տարտամոզս և կեղտերով գառանցողս, մտքով Հիմարացած և Հոգով ցնորված և մարմնով անսուրբ, իմաստությամբ անվարժ և եկեղեցուն ոչ պիտանի, Հնչող պղինձ և զողանջող ծնծղա, պատրանքներով ժանգուված և նսեմացած՝ խավար գործերում, պարտավորությունների մեջ անկարդ և

բանասերներից ոչ հմուտ, պլիտականուն վարդապետ Առաքյալն եմ:  
(Էջ 294)

**273. 1423թ. Շարակնոց**

Երևան 1587

Գրիչ՝ Յովհաննէս Անեցի

Գրվեց եղանակավոր տառա Հայոց 872թ., Անիի անուսում և  
փծուն գրիչ Հովհաննեսի ձեռքով, նշանավոր բարունի Ղազարի  
բազմաշնորհ և Հոգելից աշակերտի և իր ճգնակեց Հարազատի՝  
Հովհան երաժշտապետի խնդրանքով: (Էջ 302)

**274. 1423թ. Շարակնոց**

Երևան 1588

Գրիչ՝ Քրիստափոր

Վայր՝ Կաֆայ

Եվ այժմ գալով աստվածապահ Կաֆա քաղաքը, Հանդիպեցի մեծ-  
իմաստ արքեպիսկոպոս տեր Մատթեոսին՝ նշանավոր Հոեւսոր Գրի-  
գորի աշակերտին, որի օժանդակությամբ գտա առաքինի աբեղա  
Քրիստոսասուլին, որը գրիչ, ծաղկող և կազմող էր: Նրան  
Հանձնեցի իմ աշխատանքը՝ այս եղանակավոր տառը, իմ և իմ  
նախնիների հիշատակի համար: (Էջ 312)

**275. 1424թ. Շարակնոց**

Շուշի Մ.Տ.Մ.

Գրիչ՝ Յակոբ

Վայր՝ Բերկի,

Եղեկանք

Արդ, գրվեց եղանակավոր տառա Մեծ Հայքի 873թ., ախմար և  
սիսալագիր, խելահեղ, անպիտան գրող՝ սուտանուն կրօնավոր  
Հակոբի ձեռքով, պատվարժան և սրբաներ կրօնավոր Հովհաննեսի  
խնդրանքով: (Էջ 321)

**276. 1424թ. Գանձարան**

Երևան 8188

Գրիչ՝ Ղազար

Վայր՝ Սըղգայ գիւղ

Ով եղբայրներ, աստված վկա է, որ ես եմ այն գրիչը, որ սկսել եմ  
գրել այս ձեռագիրը, գանձ ու տաղ և խաղը մեկ գրչի գործ է: (Էջ  
323)

**277. 1424թ. Գանձարան**

Լվովի համալսարան, 52, ՀԱ. 1937, սյուն. 121-122

Գրիչ՝ Յովհաննէս

Վայր՝ Ամասիա

Արդ, Հետո ավարտվեց սուրբ երգարանս, որ հորինված է սուրբ  
վարդապետների կողմից, և կոչվում է գանձարան և տաղարան: (Էջ  
323)

**278. 1424թ. Մեկնութիւն Կաթուղիկէից թղթոց Սարգսի Շնորհալոյ**

«Միաբանք և այցելուք երուսաղէմի» Էջ 351-352

Գրիչ՝ Յովհաննէս

Վայր՝ Երուսաղէմ

Նաև աղաչում եմ ինձ չմեղադրել ձեռագրիս խոշորության, սիսալ-ների և անարհեասոության համար, քանի որ ուժերս ներածին չափ չատ աշխատեցի սրա վրա և գրեցի ստուգված և ընտիր օրինակից: Եթե օգտվեք կամ կարդաք սրանից, Հիշեցեք սոսկ անունով աբեղա, փծուն գրիչ Հովհաննեսին, իմ ծնողներին և Հանգույցյալ բոլոր Հարազատներին, նրանց հետ նաև՝ մեր բարունի վարդապետներին՝ Հեղահոգի Արիստակեսին, Սելքիսեթին, ճգնավոր աբեղա Հակոբին և Հովհաննես վարդապետ աբեղային, որոնք օգնեցին Հորդորելիս և խաղելիս ...:

(Էջ 325)

279. 1425թ. Աւետարան

Երևան 5542

Գրիչ՝ Թումայ

Մինասենց

Վայր՝ Աղթամար

Ավաղ վրա հասավ դառնության ժամանակը, քանզի մեր աշխարհը դարձավ ավերակ, մեր եկեղեցիների սեղաններն ու դռները տապալ-վեցին, սրբությունները գերեվարվեցին, աստծո օրհներ-գությունները լուցին ամբողջ երկրում, միայն սուրբ Խաչն է մնացել որպես Հզոր թագավոր՝ անսասան և անպարտելի, աստծո Հրեղեն պարիսպ՝ բոլոր քրիստոնյաներին պահելով անփորձանք: (Էջ 326)

280. 1425թ. Յայսմաւուրք

Երևան 4876

Գրիչ՝ Յակոբ

Վայր՝ Խառարաստի վանք

Տանըս Հայոց՝ գերեալ ազգի,

Էած կըսկիծ անբերելի

Ամենազով Հայրն բարի

Գրիգորիոսն Բգնունի: ...

Նման նախնոյն այն Ներսէսի՝

Եղօր մեծին տէր Գրիգորի,

Նոր զարդարաց զեկեղեցի

Գանձ և տաղիւ բազմագունի: ...

Էհաս ինձ սուգ անբուժելի,

Լալով գոչեմ անլրուելի

Զի խրատատուն իմ ըղձալի

Այսօր թողեալ զիս ամայի:

Նոր ձայն երգեմ ի յատենի,

Ներբողական ի չափ տաղի,

Առ քեզ խոսիմ Հայր բարունի,

Միթէ Հովհիս միսիթարի: ...

Եւ երգարանդ հոգոյն մեծի,

Որ միշտ հընչէր յեկեղեցի,  
Խըցեալ սրով անօրինի,  
Որ խօսակից էր աղքատի: (Էջ 331-333)

**281. 1425թ. Գանձ Թորոս Վկայի  
Երևան 8908**

Գանձ գրեցաւ ըստ պատշաճին  
Թէոդորոս քաջ վկային.  
Երգեաց ըզսայ քաջ ըաբումին  
Տէր Առաքել Բաղիշեցին  
Վասն ինդրոյ իւր վարպետին՝  
Ծերենց Գրիգոր վարդապետին:  
Ասա թէ ձայն ունիս յոճին  
Հանց, որ ժողովքոդ հաւանին.  
Եթէ հըմուտ չես դու սըմին՝  
Նա մի ձըգտիր յանհասելին,  
Որ չի լրսիս բանս դըժուարին,  
Հանց, որ դըժար գայ քո սըրտին: (Էջ 334)

**282. 1425թ. Շարակնոց**

Երևան 5955

Գրիչ՝ Վարդան  
Վայր՝ Մոկաց Երկիր, Ծպատ

ուխտ

Ավարտվեց վարդափիթիթ, անուշածայն և սուրբ Երգարան Շարակնոց Հոգնամեղ և անարհեստ գրիչի՝ ունայն արեղա Վարդանի ձեռքով, սրբասեր և ժրածան Յոհանես քահանայի ձեռքով, Հայոց 874թ.:  
Երգարանող սուրբ Շարակնոց գրվեց Մոկաց աշխարհում: (Էջ 340)

**283. 1425թ. Աստուածաշունչ**

Փիրդ. Նօտ. 79-80, Վան

Հետ. ստացող՝ Աւետիք

Վայր՝ Դարանապեաց գաւառ, Կապոսի

վանք

Ես՝ տարտամս և հոգով տառապյալս՝ խոսքի աշակերտ Ավետիքս, Դարանապյաց գավառից եմ: Վաղուց փափագում էի ունենալ Աստվածաշնչի Հին և Նոր Կտակարանները: Իմ հոգելից և տիեզերահռչակ բարունապես և վարժապես Գեորգի վախճանից հետո ձեռագիրը ժառանգեց նրա եղբորորդի Եղեկին սարկավագը և ցանկացակ վաճառել այն: Քանի որ ես անձեռնչաս ու անարժան էի, այս ձեռագիրը ձեռք բերեցի բազմերախտ հոգեսոր Հորս՝ կորովամիտ բանասեր և երաժշտապետ Սահակի կամակցությամբ և օժանդակությամբ: (Էջ 343)

**284. 1428թ. Յիսուս Որդի Ներսիսի Ծնորհալույ**

Երևան 5972

Ի յութ հարիւր Հայոց թվի

Եւթանասուն և եւթնեկի  
 ի քսանվեց ամսո հոռի,  
 ի տասնկինն յունվարի  
 Վճարեցաւ երդ սըրբալի,  
 Զոր ասացեալ տէր Ներսէսի  
 Կըլայեցու և Տարսոնի: (էջ 388)

285. 1428թ. Մանրուամունք

Ալիշան, Հայկարան (*Փարիզ*)      Գրիչ՝ Քրիստոսասուր  
 Վայր՝ Կաֆա

Գրվեց խազտեարս Հայոց 877թ., տեր Կոստանդի  
 Հայրապետության օրոք, Կաֆա մայրաքաղաքում, Անտոն  
 Անապատականի Հովանավորությամբ և ներկայությամբ, Հովսեփ  
 Գաղատացու եախսկոպոսության, Սարգիս վարդապետի օրոք, որը  
 մեր սուրբ ուխտի առաջնորդն ու մեր ուսուցիչն է: Զեռագիրս գրվեց  
 մեղապարտ կրոնավոր Քրիստոսասուրի ձեռքով: Արդ, այս եղա-  
 նակալոր տառը փափագել է ձեռք բերել Ավետիք կուսակրոն  
 արեղան, խնդրելով ինձ՝ Քրիստոսասուր անարժան գրչիս՝  
 կրկնօրինակելու լավ և ընտիր օրինակից, որ կոչվում է Առաքելցի, ի  
 հիշատակ իր Հոգու: (էջ 390)

286. 1432թ. Մանրուամունք

Երևան 2387      Գրիչ՝ Քրիստոսասուր  
 Վայր՝ առնթեր Կաֆայի

Գրվեց խազտեարս Հայոց 881թ., ապիկար և ախմար գրիչ Քրիս-  
 տոսասուր մեղապարտ կրոնավորի ձեռքով, չնորհազարդ Սարգիս  
 սարկավագի Համար, որ երկար ժամանակ փափագելուց հետո  
 ստացավ սա որպես ազնիվ արդյունք, ի հիշատակ իր և իր  
 ծնողների: Արդ, խազտեարս գրվեց լավ և ընտիր օրինակից, որ  
 կոչվում է Առաքելցի, հոնաց աշխարհի մի վանքից, որ կրում է  
 սուրբ Անտոնի անունը ...:

(էջ 428)

287. 1434թ. Պատմութիւն Յովասափու եւ Բարաղամու, Առաքելի

Բաղրշեցւոյ  
 Երևան 3081      Հեղինակ՝ Առաքել

Բաղրշեցի

Ի թվականիս Հայոց, որ ութհարիւր էր,  
 ՈՒԹՍՈՒՆ եւ երեք ի նոյն յարաբարդեալ էր,  
 Ոտնաչափ շինեցաւ յայս Առաքելէ՝  
 Վարդապետ կոչեցեալ բանիս ինդրողէ:  
 Արդ, աղաչեմ ըգձեզ, որք եղանակէք  
 Եւ քաղցրածայն լեզուաւ սիրով զայս երգեք: ...  
 Ես Առաքել նուաստ ողի

Մեղաւք լրցեալ Բաղրշեցի,  
 Զբանս պատութեան նախնեաց մեծի՝  
 Հընլատանայ թագաւորի՝  
 Աբեներայ եւ Յովասափի,  
 Կամիմ շինել ի չափ տաղի,  
 Դիւրահաւան երգեցողի  
 Եւ բարեմիտ վերծանողի,  
 Զի իմանան սիրով սըրտի  
 Եւ փառս տան տեառն արարչի,  
 Որ ի քարանց անբեր սլրտղի  
 Ծնանի որդի Աբրահամի: (էջ 439-440)

**288. 1435թ. Խմբագիր Մեկնութիւն Զորեքտասան Թղթոցն Պաւլոսի Երևան 1380**

Խմբագիր՝ Թովմա Սեծոփեցի  
 Վայր՝ Մեծոփա վանք

Հիշեցեք պիտականուն վարդապետին և մեր հոգևոր եղբայր Զաքարե վարդապետին, որ աշխատում է խազելով, նաև՝ մեր որդի և երախտավոր ընտրյալ կրոնավոր ու գրության աշակերտ Հերապետին . . . : (էջ 454)

**289. 1436թ. Գանձարան**

Երևան 4117

Տփղեաց,

Գրիչ՝ Յոհանէս  
 Վայր՝ Ի մայրաքաղաքիս

մերձակա գեղս  
 Կրծանիս

Արդ, գրվեց սա ընտիր օրինակից գանձատեարի, տաղատեարի, մեղեղի և մնացյալի, ինչպես նաև պայծառ տոների և ուսումնասիրությունների սուրբ գանձարանից: Արդ, աղաչում եմ ձեզ, որ գրիս խոշորության և սխալների համար ներողամիտ լինեք, քանզի մեր կարողությունն այսքան էր, ունենալով սեր, չունեինք արվեստ: (էջ 462)

**290. 1438թ. Ճաշոց**

Փիրդ. Նօտ. 115-116, Ալիշան, Հայապատում, Բ, էջ 557-558

Գրիչ՝ Յովհան  
 Վայր՝ Հաղբաստ

(Լանկ-Թամուրի որդու՝ Շահուուի արշավանքների նկարագրությունից)

Եվ ամբողջովին անմարդաբնակ մնաց և ավերվեց մեր աշխարհը, երկնանման դռները փակվեցին, լույսերն ու կանթեղները հանդան և խավարեցին, խունկերն ու նվերները պակասեցին, աղոթքներն ու երգերը դադարեցին, պատարագամատուցյն ու եկեղեցու բոլոր սրբությունները՝ խաչն ու ավետարանը, ամբողջ հանդերձանքը,

**Եկեղեցու սպասքները գերվեցին այլազդիներից։ Մեծ սուգ ու ողբ և տրամություն ու կակիծ հասալ հայոց եկեղեցիներին։ (Էջ 485)**

**291. 1441թ. Շարակնոց եւ Տօնացոյց**

**Երևան 5667**

**Գրիչ՝ Թումայ**

**Վայր՝ Մեծոփայ վանք**

**Փառք արարչին, որ տվեց ինձ կարողություն և հասցրեց ավարտին աստվածային երգարանս, որ կոչվում է տեսր և տոնացոյց։ (Էջ 522)**

**292. 1444թ. Ցայսմաւուրք**

**«Հայապատում», Բ, Էջ 569-570 Վայր՝ Ալբիկաննք**

**Այսօր ևս աղաչում ենք բոլորին, որ պահպանելու են սուրբ տառս, հիշեցեք այս օրինակը ստացողին՝ հայոց աստվածահաճու և մեծ վարդապետ Սիմեոնին, որ այն ժամանակ փայլում էր եկեղեցու մեջ իբրև արեգակ, և մեծ հույսով և եռափափագ սիրով սկսեց նորոգել վանքերը Արարատյան նահանգին, որ վնասվել էին առաջին Հայրերի ասհմանած կրոնից։ Եվ մնաց որոշ ժամանակ և ապա եկավ Զագավան սուրբ ուխտը և վերստին բարեկարգեց կոտյաց երկրի հոգևորականների և ազատ աշխարհականների օրենքը, քանզի շատ անկարգությունն և անօրենությունն էր մտել եկեղեցի։ Առաջինը՝ ազգակցությունը, կնունքը և ինսամիությունը ախտավոր, անխրաստ էին գործում, անսամիթաբար շփոթված և Դավթի սաղմոսը եկեղեցում պակասում էր և բազմացել էին չոր շարականները։ ... Նա կանոն և օրենք հաստատեց՝ քանզի արեղաները վանքում ընակվեցին, իրենց հանդերձանքով՝ բրդեղեն, կաշվեղեն կամ գործվածքեղեն, ինչպես առաջ էր։ Եկ աշխարհի մեծերը պահքի ժամանակ գինի չէին խմում, ձեթ չէին ուտում և կապույտ էին փաթաթում իրենց գլխին, սաղմոս էին երգում եկեղեցում իրենց ընկերների հետ և երեք հիսուսնական պահք էին պահում շաբաթ և կիրակի օրերին զղացողները, միայնակացները և ապաշխարողները։ (Էջ 561-562)**

**293. 1444թ. Գանձարան**

**Երևան 8058**

**Գրիչ՝ Կարապետ**

**Վայր՝ Ռատան մայրաքաղաք**

**Այս մարգարտաշաբ տառիս փափառղն են աստվածասեր տանուտաեր Ատոմն ու իր ընկեր Դովլաթը։ Մտացան այս ձեռագիրը իբրև բարի հիշատակ և տվեցին սա գերամաքուր Աստվածածնի և սուրբ Գևորգ գրավարի եկեղեցուն, որպեսզի եկեղեցու սպասավորները զվարճանան սրանով՝ երգելով և եղանակելով։ (Էջ 579)**

**294. 1445թ. Գանձարան**

**Երևան 5521**

**Գրիչ՝ Մինասենց Թումայ**

Նվիրեցի այս ձեռագիրը ընծա և նվեր նույն գերահոչակ և երկ-  
 նանման տաճարին՝ Աղթամարի սուրբ Խաչին, որը երկնքի դուռն է  
 և արքայության ճանապարհը, որպեսզի սրանով ուրախանան սուրբ  
 Խաչ տաճարի մասունքներն ու սպասավորները՝ քաղցրախոսք  
 գանձերով և քաղցրեղանակ մեղեղիներով և տավիղներով, որ գծա-  
 գրված կա սրա մեջ՝ Տերունական տոների և բոլոր սրբերի  
 հիշատակի մասին: Սրանից են երգել եկեղեցու սուրբ աստվածարան  
 վարդապետները և Հավատի ախտյանները՝ սուրբ Գրիգոր Նարե-  
 կացին, տեր Ներսես Կայեցին, տեր Միհիթար Այրիվանեցին և  
 Խաչատուր Կեչառեցին, բարի տեսուչ Մկրտիչը, Մատթեոս Գանձա-  
 սարեցին և շատերը, որոնց անունները գրված են վերնագրերում և  
 ստորագրերում և գանձերի և տաղերի տներից առաջ: Նրանց  
 անունները գրվեցին նաև կյանքի դպրոցում, ամեն: Սրանց մեջ եղել  
 է ոմն վարդապետ՝ Գրիգոր Ղամեցի անունով, ըստ նախնիների՝  
 Ծերենց կոչված, հույժ Հանճարեղ, բանիմաց և առատամիտ, որը ոչ  
 միայն չէր զիջում նախորդ վարդապետներին, այլ նույնիսկ  
 գերազանցում էր նրանց: Սա վերցրեց նախկինում երգված գան-  
 ձարանն ու իմի Հավաքեց Համեղարան և քաղցրեղանակ երգերը,  
 սրբագրեց մեծ աշխատասիրությամբ և վերականգնեց: Եթե  
 վանկերը թերի էին, նա ավելացնում էր իր կողմից և եթե ավելորդ  
 վանկեր կային, նա ճշում էր դրանք՝ հեռացնելով ավելորդը:  
 Այսպես նա Հավելեց՝ Հորինելով բազում գանձեր, Համեղարան  
 տաղեր՝ քաղցրեղանակ տերունական տոների Համար, բոլոր սրբերի  
 մասին՝ իր անվանատառերը գրելով գանձերի տների մկրտում,  
 անջնջելի հիշատակ թողեց եկեղեցուն և Հետո մարտիրոսական մա-  
 հով Հեռացավ կյանքից՝ սպանվելով անօրեններից: Դրանք տրված  
 են բոլոր աստվածազում այլերին, ովքեր երգում են Գանձարանիս  
 խոսքերը՝ սկզբում և վերջում, իրու երկնքի արքայության լուսեղեն  
 պըսակ, ամեն: Դրանց լուսազարդ և ուրախարար խոսքերի ցանկա-  
 ցողն էի ես՝ եկեղեցու վերջին ծնունդն ու մեղավորներից առաջնը՝  
 լոկ անունով աբեղա՝ Մինասենց Թումաս: Այս ձեռագիրը, որն իմ  
 աշխատանքի արդյունքն է, գրեցի իմ մեղամած մատներով:  
 Գանձարանը, որտեղ Հավաքված են 923 գանձեր՝ մեղեղիներով, և  
 տավիղներով բազմած՝ իբրև ճոխ զարդեր ու Աղթամարի սուրբ Խաչ  
 եկեղեցու փառքի պարծանքներ, որպեսզի սրանցով ուրախանան  
 սուրբ Խաչի մանուկներն ու սպասավորները: Թող նրանք այստեղ,  
 տերունական տոների և բոլոր սրբերի հիշատակների օրերին բերկ-  
 րանքով զվարճանան քաղցրեղանակ երգերով և իրենց սուրբ և երկ-  
 նաբացիկ աղոթքներում Հավերժ պահեն մեր հիշատակը: (Էջ 582-  
 583)

295. 1445թ. Աւետարան

*Երևան 6368*

*Գրիչ՝ Մարգարէ  
Վայր՝ Աւաք Վանք*

Արդ, գրվեց տերունական հրամանս գերունակ և հրաշափառ անապատում, ... տեր Սարգիս Տյուրիկեցի հեղահոգի, քաղցրեղանակ զասլարի և մեր մտերիմ եղբայր Երեմիա աբեղայի, սուրբ ուխտիս փակակալ, եղբայրասեր և սրբասեր Հակոբ աբեղայի աջակցությամբ: (Էջ 588)

**296. 1445թ. Սաղմոս**

*Երևան 6108*

*Գրիչ՝ Գրիգոր  
Վայր՝ Յանապիկ դղեակն Արդնոյ*

Արդ, գրվեց մեծ Դավիթ թագավորի և մարգարեի հոգու քնար և օրհնության գործիք աստվածաքնար երգարանը, որ երգում են Հոգով ուսումնասեր մանուկները սուրբ եկեղեցու դռանը: (Էջ 589-590)

**297. 1449թ. Անհայտ ձեռագիր**

«Հայապատում», Բ, Էջ 576-577 *Վայր՝ Մէրտին*

Ամեն առավոտ լուսի փոխարեն աղիողորմ կոկիծ է ծագում և ամեն օր արևի փոխարեն՝ արյան արտասուք, երեկոյան՝ երգ տրտմության և գիշերվա մեջ՝ խավար մահաբեր, Հավախոսին՝ կանայք լալկան և արշալույսին՝ ողբերգու պարավորներ: Պետք էր տեսնել արտասալողների ողբը և մղկտացողների անտանելի կոկիծը, ծերերին՝ արտասուքների արյան մեջ թաթախված և որդեկորույս մայրերին՝ կիսամահ նվազած: Այստեղ էին աղիողորմ գալարվող մուրազալի մանուկները, նորափեսան և նորահարսը՝ վայելուչ անկողնու փոխարեն, չոր գետնին և հողի վրա պառկած, Հարսանիքների փոխարեն՝ սավառնող սուզը և ուրախալի երգերի փոխարեն՝ լալկան կանայք և ողբերգակներ:

(Էջ 635-636)

**298. 1437թ. Շարակնոց**

Լենինգրադ, Արևելագիտության ինստիտուտ, 38

*Գրիչ՝ Յովանէս  
Վայր՝ Տըֆոյս*

Գրվեց եղանակավոր տառս, Հայկապյան տոմարի 986թ., աստվածահաճո ընտրյալ, սուրբ կրոնավոր և քաջ փիլիսոփիա, Տիգիս քաղաքի սուրբ Կաթողիկե եկեղեցու աթոռակալ տեր Սարգսի ձեռքով և ավարտվեց՝ բազմամեռ և անարհեստ գրիչ, սուտանուն Հովհաննեսի ձեռքով, որը Թիֆլիս քաղաքից էր: (Էջ 661)

**299. 1452թ. Շարակնոց**

*Երևան 3402*

*Գրիչ՝ Մաթէոս  
Վայր՝ Այրիվանք*

Փառք ամենասուրբ երրորդությանը՝ Հոր և Որդու և Սուլը Հոգու։ Աստծո խոսքի ծագումից լուսավորվեցին և չնորհաբաշխ սուլը Հոգով մաքրազարդութեցին մեր պետությունը, Հոգեկիր այրերով լի Հայկազյան սեւը՝ ուղղափառ Հայրապետներով և աստվածաբան վարդապետներով, որոնք կրթական վերածնությամբ մտահոգ, երաժշտական ձայների քաջորորակ բաժնամամբ շարականագրեցին շարականների երգերը վիպասան չափաբանությամբ ամբողջ տարվա համար. մեծ արուսյակի Հոլովման, Տերունական տոների և բոլոր սրբերի մասին, Պահքի, Ապաշխարության և Քրիստոսի հետ բոլոր ննջեցյալների հանգստի: Եղանակեցին օրհնության երգը տոների պայծառության և աստծո փառքերի պատվի համար, հրեշտակների համաձայնությամբ, սրբերի մասնակցությամբ և եկեղեցական դասերի հրճվանքով: Արդ, այս աստվածաշունչ երգարանիս պատվիրատուն Դանիել արեղան էր: ... Ծնկաչոք աղաչում եմ բոլորին, ովքեր ուսմամբ լուսավորվելու են ձեռագրովս, կամ օրինակելու են, հիշեցեք դրա ստացողն: Նրա հետ նաև ինձ՝ բազմամեղ Հոգի Մաթեոսին, նույնաբես գրիչ և այս ձեռագրի իրագործողը, ըստ իմ կարողության, Խլկեցի օրինակից, ստույգ խոպով և եղանակով: Նվիրեցի ձեռագիրս մեր հոգեսոր և Հարազատ Դանիելին՝ իբրև միրո շաղկապ, որը Տեր Աստված տալիս է վայեկելու բազմամյա ժամանակով: <sup>269</sup> (Էջ 15-16)

### 300. 1452թ. Քարոզագիրք Գրիգորի Տաթեւացույ

Երևան 2156

Գրիչ՝ Յովանէս

Վայր՝ Տիգիս

Արդ, գրվեց այս աստվածային մատյանս և վարդափիթիթ բուրաստանս, որ կոչվում է Քարոզգիրք: Այն կազմել ու Հավաքել է արի, քաջ հոեսոր և անհաղթ փիլիսոփա Գրիգոր Որոտնեցին, որը Քրիստոսի մոտ է: Արդ, ծնկաչոք աղաչում եմ՝ հիշեցեք վերոգրյալ ձեռագրիս ստացողին՝ անհաղթ փիլիսոփա և սրբամնյալ րաբունապետ Ստեփաննոսին: ... Նաև՝ հոգով նրան Հարազատ, սննդակից եղբայր, ճգնակեց կրոնավոր Հովհաննեսին, որը սրա առիթն ընձեռեց և իմաստության ուսման օգնական էր և ծառայեց մեծ աշխատանքով, որի համար տերը Հատուցելու է բյուրապատիկ՝ հանդերձալ կանոնով: Գերապատիկ, նրբահայաց, իմաստությամբ զարդարված և բարձրաստիճան Հոգեսոր Հայր էր նաև նրա ուսուցիչը՝ Կարապետ բարբունապետը, որը մեծ աշխատասիրությամբ ուսուցանում էր վարդապետական և երաժշտական գիտությունը: (Էջ 17-18)

### 301. 1452թ. Շարակնոց

Գրիչ՝ Յակոբ

Վայր՝ Մերտին

<sup>269</sup> Ժե գարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն երկրորդ (1451-1480), Եր., 1958, (թարգմանությունը մերն է, խմբագիր՝ Ռոզա Հովհաննիսյան):

Գրվեց ձայնքաղս, հայոց 901թ. և ավարտվեց նոյեմբերի 11-ին,  
Հակոբ արեղա անունով ապիկար գրչի ձեռքով: (Էջ 26-27)

302. 1453թ. Ողբ Մայրաքաղաքին ՀԱՍՏԱՄԲՈԼՈՒ, Առաքելի Բաղիշեցւոյ  
Երևան 8968

Ես անարժան ամենայնի,  
Որ վարդապետ անունս կոչի,  
Այլ ի գործոց խիստ եմ հեռի,  
Անմիտ, յիմար և փանաքի,  
Յարմարեցի զբանս ի կարգի,  
Ինձ յիշատակ ի յաշխարհի:  
Զի որք երգոյս այս հանդիպի,  
Զիս յիշեացէ կամօք բարի,  
Եւ ասացեն Տէր ողորմի,  
Ինձ՝ բազմամեղ Առաքելի,  
Որ զայս բաներս ի շար եղի՝  
Ողբանք Կոստանդինուպոլսի: (Էջ 31-32)

303. 1453թ. Գանձարան

Բողեան գրատուն, Մատենադարան, «Անհատական արխիվներ»,  
թղթ.20, (Էջ 1188-1189)

Գրիչ՝ Մելքիսեծ  
Վայր՝ Ավան գիւղ

Ծնկաչոք աղաչում եմ ձեզ, ով սուրբ քահանաներ, երբ եղանակեք  
կամ օրինակեք և կամ ուսանեք մեղեղի ու տաղ, հիշեցեք և ուղիղ  
սրտով ողորմի ասեք Մելքիսեղ գծողին և նորակնունք Մելքիսեծ  
ծաղկողին: (Էջ 34)

304. 1458թ. Շարակնոց

Երևան 3223

Գրիչ՝ Աւետիք  
Վայր՝ Աղբյուկի վանք

Աղաչում եմ բոլորին, ովքեր օգտվելու են այս երգարանից, ուսման  
կամ դիտելու նպատակով, թող ներողամիտ լինեն այն ամենի  
հանդեպ, ինչ սիսալ կհամարեն, քանզի իմ առաջին Շարակնոցն ու  
մագաղաթն էր, որ գրեցի: Ես՝ որ օտար երկրում պանդոխատ էի: (Էջ  
109)

305. 1459թ. Աւետարան

Երևան 7986

Գրիչ՝ Գրիգոր Անգեղակովթեցի  
Վայր՝ Կիկիթ

Այս աստվածախոս և աստվածաբան սուրբ Ավետարանի հոգևոր  
սիրով փափագողը ես էի՝ Գրիգոր Անգեղակովթեցիս: Ծերացած,  
անհիշատակ, անարժան ձեռքս առնելով գրիչ, գրեցի  
աստվածաշունչ կտակս, աստվածաբան երգս, քառաբուխ աղբյուրս  
և աստծո տան անկողոպտելի գանձը: (Էջ 118-119)

**306. 1460թ. Գանձարան**

Երևան 8188

Հետ. ստացող՝ Ախմէոն

Վայր՝ Բջնի

Դրվեց եղանակավոր տառիս հիշատակարանը, որ կոչվում է Գանձարան, Հայոց 909թ.: (Էջ 131)

**307. 1462թ. Յայսմաւուրք**

Երևան 1771

Առաքել Դավրիմեցի, Պատմութիւն, 1884, Էջ 324-329

Բ.Կիւեսերեան, Ցուցակ Անկիւրիոյ, Հ.160, սյուն 797-800/թերի/

(Զաքարիա կաթողիկոսին Աղթամարում դիմավորելու արարողության նկարագրություննեց)

Բողոքը նրան ընդառաջ էին գալիս խնկերով և մոմերով, խոյեր և եզներ զոհաբերելով, երկրպագելով սուրբ աջն ու Հայրապետին, Համբուրերով մեծ փափառքով: Այսպես հասան մինչև Տոսպ գավառը և մտան Վան քաղաքը՝ բազում եպիսկոպոսներով և վարդապետներով, քահանաներով և բազմամբոխ ժողովրդով, ձիերով և ձիավորներով: Առջևից խաչալամն ու քահանաները, Հետևից՝ քաղցր եղանակներով երգողները: Այսպես պերճաշուք և փառագոր մտան Վան քաղաք:

Օրեր անց պարոնի հրամանով նա գնաց իր աթոռանիստը՝ Աղթամար: Քաղաքից ելնելիս նրան ընդառաջ եկան Վանի եպիսկոպոսների, վարդապետների, քահանաների, ազատագունդ խոջաների խմբերը՝ ձիերով և սպառագինված ձիավորներով: Այսպես հասան ծովափնյա Ոստան քաղաքը, որտեղից ընդառաջ ելան քաղաքի բոլոր բնակիչները՝ քահանաներով և բազմամբոխ ժողովրդով, մեծամեծներից՝ մինչև փոքրերը՝ խնկերով և մոմերով, բարձրածայն եղանակներով: Մեծ հայրապետի շուրջը ավելի քան 1000 մարդ կար: Առջևից գնում էր խաչալամը, որի գլուխ ոսկի խաչը փայլում էր լույսի նման: Այսպես չքեղափայլ կարգով մտան Ոստան քաղաք: ...

Տեղ հասնելով, նա օրհնեց բոլորին շնորհաբաշն սուրբ աջով, համբուրեց բոլորին սրբության համբույրով և արձակեց նրանց խաղաղությամբ և օրհնությամբ: Եվ ինքը վերցրեց Լուսավորչի սուրբ աջը, նստեց նավը և գնաց Աղթամար աստվածաբնակ կղզին, որը իր հայրենի ժառանգությունն էր: Եվ երբ ելան ցամաք, նրանց ընդառաջ եկավ ծովեղի ամբողջ բնակչությունը՝ խնկերով և մոմերով, քահանաներով, քաղցրածայն եղանակներով: Նրանց ուղեկցեցին Աղթամարի սուրբ Խաչը և երկրպագեցին սուրբ աջն ու Հայրապետին: Հրաշագործ աստծուն օրհնություն ու փառաբանություն վեր հատնեցին, որ բոլորին արժանացրեց տեսնելու Լուսավորչի շնորհաբաշն սուրբ աջը:

**308. 1464թ. Շարակնոց  
Երևան 3481**

Գրիչ՝ Ղազար  
Վայր՝ Տարբերունուոյ երկիր,  
Արգելեան մենաստան

Զեռագրիս խնդրողն է սրբասեր և հեղահոգի կրոնավոր Վարդանը, իր եղբորորդի Հովհաննես կրոնավորի համար, որը չտեսավ և չվայելեց Երգարանս։ Դարձայ աղաչում եմ ձեզ, սուրբ հայրեր և եղբայրներ, ես՝ սուտանուն երեց Ազարիսա, որ խազեցի Շարակնոցը և գրեցի փոքրիկ Հիշատակարանը, Հիշե՛ք Մլրտիչ կրոնավորին, ծաղկող վարպետ Մինսա կրոնավորին, որոնք աշխատեցին տները խազել։ Լիաթոք Աստված ողորմի ասեք և Աստված՝ Հիշողներին և լաղոներին կողորմա, ամեն։ (Էջ 218-219)

**309. 1465թ. Շարակնոց**

Լեյդենի Համալսարան, Օշ. 5521, Ֆ.Մակեր, Ցուց. 61, Էջ 145-146  
Վայր՝ Աղթամար

Հիշեցե՛ք Քրիստոսով Հոչակավոր և անվանի նկարիչ տեր Մինսաին, որը նկարեց աննման սրբերին, որ կան այստեղ։ Նրա հետ նաև ինձ՝ աստծո մեղավոր ծառայիս, որ շարականներս գրեցի 914թ., նորմնծա տեր Ստեփանոս կաթողիկոսի Հայրապետության ժամանակ։

**310. 1466թ. Գանձարան**

Մ.Աթոռ 55, «Էջմիածին», 1951թ. ապրիլ-հունիս, Էջ 88  
Գրիչ՝ Սամուել  
Վայր՝ Երգնկա

Արդ, գրվեց եղանակավոր տառա, որ կոչվում է Գանձատետր, Երգնկա մայրաքաղաքում, Եկեղյաց գավառում, Կապոս անապատում . . . : (Էջ 251)

**311. 1466թ. Շարակնոց**

ԲՅՎ. 391  
Գրիչ՝ Ստեփանոս

Ով եղբայրներ, երբ Հարգեք եղանակս, Հիշեք սուտանուն Ստեփանոսին և իմ ծնողներին։ Գրվեց եղանակս Ստեփանոս սուտանուն քահանայի ձեռքով, . . . : (Էջ 254-258)

**312. 1467թ. Շարակնոց**

Երևան 8393  
Գրիչ՝ Մարգարէ  
Վայր՝ Մեծկերտու գաւառ,  
Սիրունքարի վանք

Գրվեց եղանակավոր տառա 916թ. . . . : Արդ, աղաչում եմ ձեզ բոլորիդ, որ տեսնում կամ եղանակում եք, Հիշեցեք Քրիստոսով անպիտան գրող Մարգարեիս, խոշորության և սիսալների համար մի մեղաղեք։ (Էջ 262)

**313. 1467թ. Ցայսմաւուրք**

Բակուրան, «Կիպրոսի կղզի», էջ 56-57

Հետ ստացող՝ Սարգիս եպիսկոպոս,  
առաջնորդ քաղաքիս  
Լաւքօշայ (Կիպրոս)

Հետո հայազգիները հրաման ստացան Յուանկներից, որ իրենք ևս պետք է հայցեն տիրոջ ողորմովթյունը: Հավաքվեցին և ելան եպիսկոպոսն ու քահանաները, ժողովուրդն ու վանականները, այլերն ու կանայք, ծերերն ու, առհասարակ, երիտասարդները: Եվ ապավինեցին Քրիստոս աստծո խաչելության գիտովթյանը և Հայոց Սուրբ Խաչ նոր, սքանչելագործ նշանին, որ այժմ Լեռուայա քաղաքում է: Եվ բոլորը շարժվեցին շուրջառների սուրբ զգեստով, սուրբ նշանով և սուրբ ավետարանով, սաղմոնելով, օրհներգովթյամբ և հոգեսոր երգերով, բազում արտասուրբներով և պաղատանքներով: Ենելով քաղաքի արևելյան դռնից, Հասան մինչև ասորիների Սուրբ Խաչ վանքը և այնտեղից դարձյալ վերաբառնալով քաղաք, մտան արևմտյան դռնից: (էջ 266)

314. 1469թ. Ողբ ի Մկրտիչ Նաղաշէ

ՔՅԲ, 84, էջ 67, Փիրլ. 6273, էջ 309

Ես Նաղաշ եպիսկոպոս՝ ծառայ կուսին  
Աչաւք տեսայ դառն կալիծ ողորմագին,  
Լալով լացի և ողբացի արտասուագին,  
Դառն արտասուաւք զողբա ասացի նոր մեռելին:  
Ի Հայոց մեծ թվականին յինն Հարիւրին,  
Եւ Համառաւտ այլ աւելի տասն և ութին,  
Աչաւք տեսի զողբա և զկալիծն ողորմագին  
ԶՄկրտին քաղաքն արար զամէնն լալագին: (էջ 284)

315. 1469թ. Տաղարան

ԱՅՀ, 299/559/, հ.Բ. 1112-1114

Գրիչ՝ Մկրտիչ  
Վայր՝ Բիւրական

Արդ, ես նուաստ յամենայնի  
Մկրտիչ անձն եղկելի  
Փափաքեցայ այս մատենի՝  
Աստուածաշունչ դատաստանի,  
Որում չափեալ ի յոտանի՝  
Սուրբն Ներսեսըն Կայեցի,  
Որ և անուն տառիս կոչի  
Յիւր նախագիծն՝ Յիառա Որդի...  
Այլ և Անհաղթ մեծին Դաւթի՝  
Բարձրացուցէքն ի յերգ Խաչի ...: (էջ 287)

316. 1471թ. Գանձարան

Երևան 4515, էջ 201 (Փիրլ. նշանարք Պատմ. Հայոց, Բ)

Գրիչ՝ Անդրէաս  
Վայր՝ Եւգոկիա

Գրվեց եղանակավոր տառա, որ կոչվում է Գանձատետր, անիմաստ քահանա Անդրիասի ձեռքով, Հայոց 920թ., Եղովիա քաղաքում, Ստեփանոս նախավկայի և սուրբ Սիմոնի տաճարում: (Էջ 329)

**317. 1478թ. Շարակնոց**

Երևան 6125

Գրիչ՝ Մկրտիչ  
Վայր՝ Տաշրա գաւառ,  
Ցոհան ՈՒՃՆԵցու

ուխտ

Փառք Տիրոջը, որ տվեց կարողություն Սլրտիչ եպիսկոպոսի հոգուն և մեղսաներկ անձին, Հասնելու Շարակնոց կոչված գրերիս ավարտին: Դրանք երգել են մեր նախնիները և ուղղափառ եկեղեցու աստվածաբնակ վարդապետները, Սուրբ Հոգու օժանդակությամբ, եկեղեցու պայծառության, Սիոնի մանուկների կրթության, Աստծո սրբերի հիշատակի և Տերունական տոների պատվի համար, իբրև մաղթանքներ, աղոթքներ և հոգևոր երգեր: (Էջ 429)

**318. 1478թ. Շարակնոց**

Ք8Բ, 38, Էջ 30

Գրիչ՝ Գրիգոր  
Վայր՝ Իշմայի վանք

Հայոց 927թ. գրվեց եղանակավոր տառա, որ կոչվում է Շարակնոց, լոկ անունով աբեղա Գրիգորի ձեռքով, մեծափառ վանքում, որ կոչվում է Իշմայի վանք, Ապտըլմսեհ նահատակի և սուրբ Կարապետի տաճարի Հովանավորությամբ: (Էջ 433)

**319. 1481թ. Շարակնոց**

Երուսաղէմ 1614/Հմմ.ՀԱ, 1960, Էջ 191-192/

Գրիչ՝ Ստեփանոս եպիսկոպոս  
Վայր՝ Խարբերթ, Աբղմանեհի

վանք

Գրվեց եղանակավոր տառա, Հայոց 930թ., սուրբ Կարապետ վանքում: ... Հիշեցեք Գրիգոր վարդապետի Հորեղորորդի տեր Բանարգեսին, որն ամենայն սիրով ընդունեց մեզ և աշխատում էր միաբանների հետ: ...: Նրա հետ միասին Հիշեցեք նաև մեր Հոգևոր եղբայրներ՝ տեր Ավետիք եղամիշտ վարդապետին, որը սովորեցրեց ընդունված ձայնավորները, տեր Հովսեփ քաջ փիլիսոփային, որը շատ աշխատեց մեզ հետ, ուսուցանելով դժվարախազ

**շարականները**, նաև՝ տեր Ավետիքին, որ մեր ընկերն էր նույն  
խմբից և որի Հետ մենք շատ աշխատեցինք: <sup>270</sup> (Էջ 10)

- 320. 1482թ.** Անդիտաց անպէտ Ամիրդովաթի Ամասիացւոյ  
«Անգիտաց անպէտ», Էջ 1-3, 25, 623-624  
Երևան 457

Եվ շնորհ տվեց աստված մարդուն, որպեսզի նա կատարի  
Հանձարեղ գործեր. դա աստվածապաշտությունն է,  
իմաստությունը, աստղաբաշխությունն ու երկրաչափությունը,  
թվաբանությունն ու երաժշտական արվեստը, ինչպես նաև  
քերականության արվեստը: (Էջ 23)

- 321. 1482թ.** Շարակնոց  
Երևան 6333 /Յովհ. Բարաղամեան, Յուց. Վասպուր./,  
Էջ 173, Լ8Վ. 1001

Գրիցեց եղանակավոր տառա իմաստուն և պատվարժան քահանա  
քաջ Մովկեսի ձեռքով: (Էջ 34)

- 322. 1484թ.** Գանձարան  
Երևան 4767

Գրիչ՝ Թումայ  
Վայր՝ Աղթամար

Արդ, ես՝ Սարգիս և իմ կենակից Եղիսամերը, ցանկացանք  
ունենալ լուսազարդ և ուրախարար խոսքեր: Իմ ազնիվ վաստակով  
ձեռք բերեցի այս ձեռագիրը և նվիրեցի սուրբ երախտավոր  
Աստվածածնի տաճարին՝ Ծկորի վանքին, որպեսզի սրանով  
ուրախանան սուրբ եկեղեցւ բոլոր մանուկները՝ համեղաբան  
գանձերով, քաղցրեղանակ մեղեղիներով և տաղերով: (Էջ 64)

- 323. 1485թ.** Սաղմոսարան  
Թավրիզ, ՄՏՄ

Գրիչ՝ Բարդուղիմէոս  
Վայր՝ Մաղարդավանք

Տաճար տեսայ մին լի լուսով,  
Վաթուն ու չորս ոսկի գոնով  
Հարիւր ու յիսուն պատուհանով.  
Կուսանք ի նա կային լարով,  
Գողք և պոռնիկը պարեն հոգով,  
Որ ոք նա դիմէ յուսով,  
Զնա ըմակ ոսկի թասով: (Էջ 72-73)

- 324. 1486թ.** Գանձարան

Մ.Աթոռ 1, «Էջմիածին» 1950թ. մայիս-հունիս, Էջ 81-82

Գրիչ՝ Յովսէփ  
Վայր՝ Ագուեաց վանք

<sup>270</sup> Ժե գարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն եղրորդ (1481-1500թթ.),  
Եր., 1967, (Թարգմանությունը մերն է, խմբագիր՝ Ծովա Հովհաննիսյան):

Զեռագիրս գրվեց Ազուլյաց վանքում, ամենաշնորհյալ սուրբ Աստվածածնի և մեր տեր Հայրապետ Թումա առաջյալի Հովանավորությամբ, երջանիկ, փառավոր Հոր և Հայրապետ տեր Ազարիի մոտ: Աստված թող նրան երկար օրեր չնորհի, ամեն: Ինչպես նաև՝ տեր Հովհաննեսին և նրա աշակերտ Փիլիպպոսին: Նրանք սաղմութերգուներ են: (Էջ 82)

### 325. 1487թ. Շարակնոց

Երևան 6273

Գրիչ՝ Դաւիթ

Վայր՝ Սըրկղունք

Արդ, գրվեց եղանակավոր տառա, Դավիթ քահանայի ձեռքով: (Էջ 97)

### 326. 1498թ. Գանձարան

Երևան 7961

Գրիչ՝ Մարգարէ

Վայր՝ Բալու, Նեխչրի գիւղ

Արդ, գրվեց սուրբ Գանձարանս և Հոգևոր բուրաստանս և եղանակավոր տառա Բալու գավառում, սուրբ Աստվածածին տաճարում, Նեխչրի գյուղում, Հայոց 947թ., անարժան և ապաշնորհ գրիչ Մարգարեի ձեռքով: Ես ևս փափազում էի ձեռք բերել այս գանձերն ու տաղերը: Այս տաղերը, որոնք այստեղ պակասում էին, ես հափաքեցի և գետեղեցի: Խնդրում եմ ձեզ, մի մեղադրեք ինձ այլեայլ թերությունների Համար: (Էջ 243)

### 327. 1490թ. Գանձարան

Երևան 6495

Գրիչ՝ Յովանէս Արճիշեցի

Վայր՝ Արճէշ

Յիշատակարան եւ գովեստ վարդապետացն  
Ըզմեղեղին ներբողին,  
Զոր և աստէն շարեալ հուսին՝  
Երգեաց Ներսէսըն Շնորհալին,  
Եւ սուրբ Գրիգոր Նարեկացին,  
Սըրիկ Կոստանդ՝ քաջ և արին,  
՚ի Աստոմ էրէց Ոստանեցին,  
Եւ մեծ Գրիգորըն Տաթեւացին,  
Եւ երգ Աւագ վարդապետին  
Քաղցր և անոշ, լաւ մեղեղին  
Եւ այլքն, որ չեն ի սոյն թուկն  
Եւ ճանաչնեմք զանուանս նոցին,  
Որ կան գըրեալ յանջինջ գըրին  
Եւ յանըսպառ յաւիտենին: (Էջ 152)

### 328. 1490թ. Մանրուամունք

Երուսաղէմ 1738

Գրիչ՝ Գրիգոր Տարաւնացի

Վայր՝ Երգնկա, Կայիփոսի  
վանք

Գրվեց եղանակավոր տառա, որ կոչվում է Մանրուառում և Տոնա-  
ցույց, Գրիգորիա Տարսոնացու ձեռքով, Ամլորդու վանքում: (Էջ  
160)

**329. 1492թ. Գանձարան**

Երևան 4782

Թամուրի տարրում Ալբնջայում խիստ են եղել: Այնտեղ է  
Մատթեոս վարդապետը ողբական բովանդակությամբ տաղը երգել:  
<sup>271</sup> (Էջ 185)

**330. 1492թ. Շարակնոց**

Հոռոմ 24, Տիմերան, Ցուցակ, Էջ 305

Նորոգող՝ Առում

Վերականգնվեց եղանակավոր տառա 941թ., մեղավոր, ծեր Առումի  
ձեռքով՝ Ներսես, Թաղեռու և Ստեփանոս դպիրների համար ...: (Էջ  
190)

**331. 1494թ. Ժողովածու մեկնութեանց**

Երևան 3275

Գրիչ՝ Մաղաքիա  
Վայր՝ Եկեղեց գաւառ,  
Կապոսի վանք

Հիշեցեք սուրբ ուխտիս առաջնորդ, սրբազն և սուրբ, ընտիր կրո-  
նավոր տեր Ներսեսին, ...նաև քաղցրաճայն երգիչ տեր Թաղեռու  
դասվարին և ...այլ աբեղաների, որ այստեղ են հավաքվել: (Էջ 204-  
205)

**332. 1494թ. Շարակնոց**

Երևան 2428

Գրիչ՝ Գրիգոր  
Վայր՝ Սիրունքարի վանք

Գրվեց Զայնքաղա 943թ., Ակրունքարի վանքում, սուրբ Հակոբ  
տաճարում, բազմամեղ և անարժան Գրիգոր աբեղայի ձեռքով: (Էջ  
208)

**333. 1496թ. Շարակնոց**

Երևան 1625

Գրիչ՝ Կարապետ  
Վայր՝ Աւագ վանք

Արդ, գրվեց եղանակավոր տառա, որ կոչվում է Շարակնոց, Խուլ  
կոչվող լավ և ընտիր օրինակից, Օհանես կրոնավորի ձեռքով: (Էջ  
233)

**334. 1497թ. Ծիսական մատեանք**

Երուսաղէմ 265

Կազմող՝ Կարապետ

Բայց մեք եկայք ի Սաղիմէ,

<sup>271</sup> Խոսքը «Սրբոյն Յակոբայ Ածբնայ Հայրապետի» տաղի մասին է, որ սկզբում է  
«Եյաւը գոչեմք բերելուանաւք» բառերով:

Երկրպագել փրկչին մերմէ,  
 Եւ մեր տեսեալ գերգս ի Դաւթէ՝  
**ԶՍաղմոսարանս** որ եղծեալ էր,  
 Հստ իմ կարեացս զսա նորոգէ,  
 Զկազմել սորա և զաւալէ:  
**Որ Հանսապազ յատեանն երգէ,**  
 Որ գողորմին սորա ասէ,  
 Յառաջիկայիցն և ի յետնէ,  
 Ախմարամիտս զձեզնէ ինդրէ՝  
 Խնամով պահէք զդա ի ձեթէ և ի մոմէ: (Էջ 252)

**335. 1406թ. Տօնացոյց եւ Մանրուսմունք**

Երուսաղէմ 1742 Գրիչ՝ Մկրտիչ  
 Զեր մաքրափայլ աղոթքներում Հիշեցեք եղանակավոր տառիս  
 ստացող Մկրտիչ կրոնավորին և Հակոբ վարդապետին, որը  
 քաղցրաճայն երգիչ և փիլիսոփա էր և որը իր օրինակը շնորհեց  
 մեզ: (Էջ 316)

**336. 1417թ. Մանրուսմունք**

Երուսաղէմ 2433 Գրիչ՝ Տիրատուր  
 Արդ, գրվեց եղանակավոր տառս սուրբ անապատում, սուրբ Լու-  
 սավորչի, սուրբ Կարապետի և այլ սրբերի տաճարում, բազմամեղ և  
 անարժան Տիրատուր արեղայի ձեռքով: (Էջ 345)

**337. 1422թ. Ճաշոց**

Բ.Կիւեսերեան, Յուց. Անկիւրիոյ, 161

Գրիչ՝ Սամուել  
 Վայր՝ Երուսաղէմ  
 Հիշեցեք նաև Հեղահոգի, քաղցրուսուց իմ վարժապետին,  
 Մատթեոս կրոնավորին, որ ճայնանիշերը սովորեցրեց ...: (Էջ 358)

**338. 1422թ. Ժողովածու**

Երուսաղէմ 1248

Գրիչ՝ Թումայ

Կաֆայեցի

Վայր՝ Եւսաթէի վանք  
 Հիշեցեք նաև իմ վարդապետին և ուսուցչին, անհաս երաժիշտ և  
 քաղցրաճայն փիլիսոփա Մեծապարոն սարկավագին, որը Սիոնի ման-  
 կանց ուսուցիչն էր, որին Քրիստոսը երկնքի հարյուրապատիկ ար-  
 քայությունն է տվել, որպիս անթառամ պսակ, անթառամ կյանք,  
 Հավիտենական կյանք: (Էջ 360-361)

**339. 1424թ. Շարակնոց**

Երևան 8599

Գրիչ՝ Յակոբ

Վայր՝ Բերկրի եղեկանք

Արդ, գրվեց եղանակավոր տառս, Մեծ Հայրի 973թ., ախմար և  
 սիալազիր, խելահեղ, անվիտան գրող, սուտանուն կրոնավոր  
 Հակոբի ձեռքով: ... Նրա հետ միասին ինդրում եմ Հիշել տիրողով

նաև ինձ՝ անիմաստ գրիչ Հակոբիս, նաև իմ նվազ, հոգեոր որդի  
Գրիգոր գվիրին, որ գեռ շատ պիտի աշխատի տները խազավորելու  
համար...: (Էջ 364)

**340. 1433թ. Ճաշոց**

Երուսաղէմ 3232

Գրիչ՝ Տիրատուր  
Վայր՝ Երուսաղէմ

Զեռագիրս գրվեց մեղապարտ և անարհեստ գրիչ Տիրատուրի ձեռ-  
քով, Հայոց 982թ., Նոյեմբերի 28-ին, Երուսաղեմ սուրբ քաղաքում,  
... Մարտիրոս եպիսկոպոսի և անհաս երգիչ և անհաղթ փիլիսոփիա  
սուրբ Հակոբ Գրիգորիսի փակակալության ժամանակ ...:(Էջ 374)

**341. 1444թ. Մանրուսմունք**

Երուսաղէմ 3420

Գրիչ՝ Յոհանէս  
Վայր՝ Յովա գիւղ

Արդ, գրվեց եղանակավոր տառա, որ կոչվում է Մանրուսմ, Հովս  
գյուղում, սուրբ Երրորդության տաճարում, Հայոց 893թ.,  
անարհեստ և փծուն գրիչ Յոհանեսի ձեռքով: (Էջ 403)

**342. 1464թ. Շարակնոց**

Երևան 2418

Գրիչ՝ Միքայել  
Վայր՝ Հունձք գիւղ

Արդ, գրվեց եղանակավոր տառա, որ կոչվում է Երգարան, Հայոց  
913թ., Քաջերունի երկրում, Հունձք գյուղում, ...:(Էջ 441)

**343. 1469թ. Շարակնոց**

ԲԿիւեսերեան, Յուցակ Ղալաթիոյ, 172

Գրիչ՝ Արիստակէս  
Վայր՝ Սանահին

Գրվեց եղանակավոր տառա, որ կոչվում է Շարակնոց, քանզի շար-  
ված են ինչպես ակներ, Արիստակես արեղայի ձեռքով, սուրբ Աստ-  
վածածնի տաճարում, որ այժմ Սանահին է կոչվում: (Էջ 452)

**344. 1473թ. Շարակնոց**

Երուսաղէմ 1684

Զեր սուրբ աղոթքներում, ով քաղցրածայն երգողներ, Հիշեցեք  
թերուս նորոգողին, գրչին, խազողին և ասացեք, Տեր Աստված թող  
ողորմա ձեռագրիս վրա աշխատողներին: (Էջ 455)

**345. 1479թ. Շարակնոց**

Երուսաղէմ 2470

Գրիչ՝ Մելքիսէթ  
Վայր՝ Առէստ գիւղ

Արդ, Հոգելից եղանակավոր մատյանս գրվեց Հայոց 928թ.,  
առաջին վարժապետ և հմուտ քարտուղար Խովլ մականունով  
Գրիգորի օրինակից, ...:(Էջ 461)

**346. 1482թ. Շարակնոց**

Երևան 4620

Գրիչ՝ Գրիգոր

Վայր՝ Ականց գեաւղաքաղաք

Արդ, գրվեց եղանակավոր վարդապիթիթ աստվածային սուլրա տառա, որ կոչվում է Շարակնոց, Քաջբերունի երկրում, Ականց կոչվող գյուղաքաղաքում: (Էջ 463)

347. 1485թ. Շարակնոց

Երուսաղէմ 1657

Գրիչ՝ Մկրտիչ

Վայր՝ Տփոլիս

Գրվեց եղանակավոր տառա, որ կոչվում է Շարակնոց, Հոգնամեղ և անարժան գրիչ Մկրտիչ երեցի ձեռքով: (Էջ 466)

348. XV դար. Շարակնոց

Երևան 7146

Գրիչ՝ Մարտիրոս

Ով՛ ընթերցողներ, որ երգում եք այս օրհներգերը, թող Աստված ողորմի մեզ՝ գծողներիս և ձեզ՝ ողորմացողներիդ, ամեն: (Էջ 510)

349. XV դար. Գանձարան

Երևան 3866

Գրիչ՝ Մկրտիչ

Գրվեց եղանակավոր տառա մեծ ջանքով և փափագով ..., լավ և ընտիր օրինակից, որ գրված է Ծերենցի ձեռքով: (Էջ 514)

350. XV դար. Գանձարան

Երևան 427

Գրիչ՝ Ստեփանոս

Ով եղբայր, տանտերերը երեքն են, գանձիս<sup>272</sup> եղանակը երեք անգամ փոխիր: Հիշիր սուրբ գրերիս ստացող Գրիգոր կրտնավորին և գրիչ՝ անարժան Ստեփանոսին: (Էջ 538)

ԱՅԼ ԱՂԲՑՈՒԽՆԵՐ

## ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

XII դար

351. Մանրուսաման գործնական կիրառության մասին

... ձայնավորների (խազերի) մանրուսումը կիրառել եկեղեցում, և ապա միայն գալ քաշանայի ձեռնադրության: <sup>273</sup>(Էջ 79)

352. Թուղթ տեսառն Գրիգորիսի կաթուղիկոսի Հայոց, գրեալ եղբօր նորին Ներսիսի եպիսկոպոսի Հրամանաւ նորին՝ի միջագեսոս ասորւոց յամայք կոչեցեալ նահանգին (Հուղարկավորության արարողակարգի մասին)

<sup>272</sup> Այսինքն՝ ընդօրինակվող գանձը նվիրված է երեքի՝ Բարդուղիմէոս, Հովհաննես և թագէոս առաքալներին:

<sup>273</sup> Ներսես Շնորհալի, թուղթ ընդհանրական արարեալ երիցս երանեալ սուրբ Հայրապետին մերոյ տեսառն Ներսիսի Շնորհալւոյ, Էջմիածին, 1865:

Իսկ ննջեցյալներին Քրիստոսով հիշելու համար եթե ցանկանում են կատարել մատաղ՝ այսպես են վարվում. Հավաքվում են քահանաները միասին եկեղեցու դռան մոտ՝ անկախ այն բանից, թե շատ մարդիկ են խմբված կամ եթե կա թեկուզ և մեկ մարդ, այրոջը պատրագում են և լցնում աղը տուրբ խաչի վրա, և երգում են զրված սաղմոսը և պաշտոներգությունը և ընթերցում են կարուացիկիքն ու աղոթքը՝ մեծ երկյուղով: Զերմեռանդ սրտով հիշում են մահացածի անունը և խնդրում են տիրոջից նրա մեղքերին թողություն: Ապա մորթում են անասունները, քահանաներին տալով սահմանված մասերը:

(Էջ 363-364)

### 353. Եկեղեցական նավակատիքի մասին

Առաջնայինն է (եկեղեցին) մաքրել հոգեսոր երգերով, սաղմոսներով և օրհնություններով, օծանել ինչպես դժխուհու և Հարսի, և ապա արժանավորել երկնավոր փեսային՝ Հաղորդության աստվածային խորհրդի կատարմամբ, ինչպես Մովսեսի խորանինը և Սողոմոնի տաճարինը, որ նախ՝ նավակատիքով և օծմամբ կատարեցին մեծահոչակ տոները և ապա աստծո փառքը իջավ երեւթապես և լցրեց նրանց:

(Էջ 397)

### 354. Տեառն Գրիգորի պատասխանի վարդապետացն Հայոց Հիւահսային կողմանցն. (ուղղափառ եկեղեցուն Հավատարիմ մնալու պատվիրան)

Եվ այս ամենի հակառակորդն ու դիմամարտն սկզբում ես էի և իմ գրով ու խոսքով ներկայացրի այդ, որովհետեւ մեզ՝ եղբայրներիս համարեցին պարտված: Ապա վկայաբերեցին, թե, «Ծանոթացանք ձեր երգերին և օրհնություններին՝ որ շարականներն են, որոնք առ աստված ձեր ճշմարիտ ուղղափառ դավանանքի կրողներն են»: Եվ բոլոր խնդիրներն ու իրենց Հայցերը պարզեցին և խաղաղության ու սիրո բազում այլ խոսքեր գրեցին և խոսեցին: (Էջ 436)

## ՈՂԲ ԵԴԵՍԻՈՅ

355. Ո՞ր են մանկունքն առագաստի,  
զի՞ոչ հնչեն զերպան Դաւթի:  
Զի՞արդ լուսալ ոչ հարկանեն  
զիողն հնչող տարսոնացի: <sup>274</sup>(Էջ 33)
356. Ո՞ր քաղցրաձայնն երածշտի  
կամ գեղգեղումն եղանակի,  
Ո՞ր ընթերցողքն են Սուրբ Տառի,

<sup>274</sup> Ներսես Շնորհապի, Ողբ Եղեսիոյ, Եր., 1973:

կամ վարդապետքն՝ ի հանդիսի: (էջ 34)

357. Մանկունք քո զուարթալի  
նման նորոգ բուրաստանի,  
Դատերք քո պաճուճալի  
յերգ եւ քնար միշտ ի խաղի: (էջ 37)

358. Ես՝ Եղեսիա, ՈՒռՀա քաղաք,  
որդեկորույս, որբ և այրի,  
Կանչեմ առ ձեզ ձայն կանացի,  
կականակիր եւ ողորմելի: (էջ 43)

359. Արաբական զորքի նկարագրությունից  
Զեռմամբ յեռեալ տագնապէին,  
մի առ միով արշաւէին,  
Փողս և գոսերս<sup>275</sup> գոչէին,  
իբրև յամացն որոտային: (էջ 70)

360. Արաբական արշավանքի նկարագրությունից  
Անդ ոչ դոյր երգ քահանային,  
և ոչ հնչումն աստուածային,  
Ոչ պաշտօնեայք սաղմոնէին,  
ոչ սարկաւագք ընթեռնուին:  
Զայս սաերով իսրախմանային,  
երգս և խնճյս յօրինէին,  
Ծափս ծափս հարկանէին,  
ոտիւք վազեալ կաքաւէին: (էջ 89)

### ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ

361. Ներսես Մեծի հուզարկավորության նկարագրությունից: IV դար  
Իսկ զմարմինն ողբովք առեալ,  
ի թիլն աւան զնա տարեալ,  
Յերգս յոգմոր պարաւորեալ,  
Ընդ նախնի հարցն հանդուցեալ: <sup>276</sup> (էջ 93)

362. Հայոց իշխան Գող Վասիլի Հուղարկավորության  
նկարագրությունից: XII դ.  
Զոր սաղմոսիւք օրհնաբանեալ  
Քահանայից դասուց առեալ  
Եւ ի շիրիմ մահու եղեալ  
Հուպ ի խորանն, որ անդ շինեալ: (էջ 123)

<sup>275</sup> Զեռագիր սարբերակ՝ «քնարս», մեկ այլ սարբերակ՝ «տաւկուս»: Նույն տեղում:

- 363.** Գրիգոր Մագիստրոսի Հուղարկավորության նկարագրությունից:
- XII դար
- Զոր սաղմոսիւք երգաբանեալ  
Քահանայիցն ակումբ առեալ,  
Զօրէն կոծոյն անդ կատարեալ  
Եւ ի շիրիմ հարցն ամփոփեալ: (Էջ 132)

**ՆԵՐՍԵՍ ԼԱՍԲՐՈՆԱՑԻ**  
XII դար

- 364.** Ներսէս տօնիցն՝ զարդարիչ,  
Եկեղեցոյ՝ կարգաց գըտիչ,  
Տէրունական՝ աւուրց պատմիչ,  
Ըստ խորհրդեամն՝ երգս յօրինիչ:<sup>277</sup> (Էջ 469)

- 365.** Ըստ խորհուրդի՝ երգ հորինող:...

Վասն Ոհրհայոյ՝ ողբա հաստատէր,  
Զաղետն՝ի մի՝ գործ աւարտէր.  
Սա և մանկանց՝ խրատ յօրինէր,  
Ոտանաւոր՝ թըւով բերէր:  
Շարականաց՝ կարգ աճեցնէր,  
Տարերգութիւնս՝ ՚ի ճահ առնէր.  
Քաղցր ձայնիւք՝ անջրպետէր,  
Որ երաժիշտ՝ սուրբ հոգւոյն էր: (Էջ 477)

- 366.** Զօրհնաբանիչս՝ իւր յօրդորէր,  
Նոր երգս առնով այսօր հրամէր.  
Օրիորդաց՝ խնջոյս առնէր,  
Այս հարսանեաց՝ օրս տօնէր:  
Որդւովքն մայր՝ յառաջ մատչէր,  
Քաղցր ձայնիւ՝ զփեսայն պատուէր.  
Մինն ընդ միոյն՝ գովօղ լինէր,  
Ըզկեանս յապա՝ փառօք հայցէր: (Էջ 481)

- 367.** Տնօրէնութեան՝ փրկչին մեծի,  
Ըստ շրջակայ՝ ամաց տօնի,  
Երգմ ներածէ փառատրելի,  
Եղանակօք ախորժելի: (Էջ 482)

- 368.** Աման՝ի ձեռս առեալ բուրման,  
Քեզ խնկարկեն՝ ամենեքեան.  
Առեալ ակումբ՝ զերգս օրհնութեան,

<sup>277</sup> Ներսէս Լամբրոնացի, Գովեստ ներբողական պատմագրական բանիւ յարագս վարուց մեծի հայրապետին Ներսիսի կայեցւոյ հայոց կաթողիկոսի, Էջմիածին, 1865:

**Նոր եղանակ՝ փոխսեն հնչման:** (Էջ 492)

**369. Զքո յարմարեալ՝ երգոցս բան,**

**Աշակերտացս՝ առեալ ՚ի ձայն.**

**Յիշատակի՝ օրս ցնծան,**

**Խօսին ընդ քեզ՝ դեմ յանդիման:** (Էջ 493)

**ԿԱՐԱՊԵՏ ՍԱՄՆԵՑԻ  
XII-XIII դար**

**370. Մեարոպ Մաշտոցի գործունեության մասին, աշխարհիկ կյանքը թող նելուց հետո:**

(Մերժեց) նաև թագավորների մեծարանքը և իշխանների պատիվ-ները և ուսմիկների գովերգությունները, ծաղկահոտ գինիներն ու արվեստավոր մատուֆակները, քաղցրաձայն տավիղները և ուշագրավ ջնարները, գողտրիկ կերակուրներն ու սրանց նման այլ բաներ: ... Լեզուն սանձում էր և շրթունքները փակում, (դրանք) չէր շարժում, ու չէր բացում ունայն խոսքերի (համար), այլ միշտ պարապում էր աստվածաշունչ մատյանով, (նրա) բերանը քննար էր և ատամները՝ լար(եր), շրթունքները՝ մատներ և լեզուն՝ կնտնտոց և Հոգին միախառնելով Աստծուն և լինելով երաժիշտ երգում էր Հոգևոր քաղցրաձայն երգեր՝ ի փառս սուրբ երրորդութեան: <sup>278</sup> (Էջ 379-380)

**371. Մեարոպ Մաշտոցի ճգնակեցության մասին:**

Կրկին նորոգում էր պասն ու աղոթքները՝ շարժվելով եփրատի ափերով զառ ի վեր, ծայրից ծայր անցնելով, մինչև Պալունյաց դյակը: Եվ այնտեղ փոքրագույն այրի մեջ անցկացնում էր քառասունքի օրերը, և յոթ (շաբաթ) անսնունդ անցկացնում էր ցերեկն ու գիշերը՝ երգելով երեք մանուկների երգերը: Հորինեց ապաշխարության եղանակները՝ ըստ պասի օրերի քանակի, որ ընդունելով երգվում է սուրբ եկեղեցում: (Էջ 382)

**372. Մեարոպ Մաշտոցի հուղարկավորության նկարագրությունից:**

Եվ վերցնելով տանում էին սուրբ մարմինը քաղաքից հեռու գտնվող Օշական գյուղը: Եվ կամարաձև լույս էր գնում նրա վրա, և հրեշտակները երգակցում էին քահանաներին՝ դամբանական երգեր երգելով, մինչև հասան գերեզմանին: (Էջ 462)

**ԱՌԱՔԵԼ ԲԱՂԻՇԵՑԻ  
XV դար**

<sup>278</sup> Կարապետ Սամնեցի, Ներբողեան յաղագս վարուց սրբոյն Մեարոբայ, «Արարատ», 1897:

**373. Բանք խրատականք յԱռաքել վարդապետէ Բաղիշեցոյ յաղագս  
մանկանց:**

Դու, որ տղայ ես հասակով,  
Մի ծույլ կենար մրափելով,  
Այլ հրեշտակաց նմանելով,  
Որ սաղմոսեն ձայնիւ երգով:<sup>279</sup> (Էջ 158)

**374. Եղերերգութիւն ի մահ նահատակութեան Ծերենց Գրիգոր վարդա-  
պետի Խլաթեցուոյ:**

Նման նախնոյն այն Ներսէսի՝  
Եղօր՝ մեծին Գրիգորի.  
Նոր զարդարեաց զեկեղեցի,  
Գանձ ու տաղիւ բազմագունի: (Էջ 207)  
Նոր ձայն երգեմ ի յատենի,  
Ներդողական ի չափ տաղի,  
Առ քեզ խոսիմ, Հայր ըաբունի,  
Միթե հոգիս միսիթարի: (Էջ 209)  
Եւ երգարանդ հոգոյն մեծի,  
Որ միշտ Հնչէր յեկեղեցի,  
Խոցեալ սրով յանօրինի,  
Որ խօսակից էր աղքատի: (Էջ 210)

### ԱՌԱՔԵԼ ՍՅՈՒԽԵՑԻ XV դար

**375. Ճառ IV. Թէ քանի զանազան բարիք կան այն քաղաք, զոր աստ ոչ  
գոյր**

Օտար գեղից ծափն ու պարեն  
ի լաց կու փոխի քեզ.  
Այն քաղաքին լաց ու աղաղակն  
ծիծաղ բերէ քեզ:  
Օտար տեղից խաղն ու գուսանն  
ձայն գումի տան քեզ.  
Այն գեղի գումն ու ողբալն  
ծափս ծափէ գքեզ:<sup>280</sup> (Էջ 81)

**376. Ճառ VI. Թէ զինչ է անուն այն քաղաքին, այսինքն՝ գերեզման,  
Հողվերք եւ Հանգիստ եւ շիրիմ  
Զայն ձեր լալոյ եւ ողբալոյ  
դառնայ գուսան ձեզ.**

<sup>279</sup> Առաքել Բաղիշեցի, Աստենագրութիւն, Եր., 1971:

<sup>280</sup> Առաքել Սյունեցի, Դրախտագիրք, Վենետիկ, 1956:

**Զի անդ պարեք և ծիծաղիք**  
 ու ծափ հարկանեք ձեզ:  
 Զայն Տէրն յայտնէ յԱւետարանն  
     յուլրախութիւն ձեզ.  
 Թէ լուան գձայն երգոց պարուցն  
     յօր հարսանեացն ձեզ: (Էջ 92)  
 Եւ բազմացո գձայն հառաչմանցդ  
     ի ձայն գուսանաց քեզ.  
 Եւ որչափ աստին զկուրծքդ բախես՝  
     անդէն պարես քեզ: (Էջ 93)  
 Այսօր չանա դու պատրաստել  
     նիւթ հարսանեաց քեզ.  
**Գինի ու գուսան և զարդարանք**  
     որ անդէն պարես քեզ: (Էջ 94)

377. Ճառ IX-XI. Զի վասն ոչ յիշելոց զաղքաստ ննջեցեալսն, կրկին պատժին. նախ՝ զի ի պսակաց զրկին, եւ երկրորդ՝ զի տանջանաց մատնին Անճառ հրճուան լինի նոցա  
     ու զարմանազան տես.  
 Անդ բարբառեն զերդ հարսանեաց,  
     ու այլ զանազան երգս:  
 Զի ձայն երգոցն այն եւ պարուցն,  
     է քաղցրազուարձ երգս.  
 Եւ հրճուաձայն եղանակօք  
     միշտ զարդարեն զերգս: (Էջ 130)

**ԳՐԻԳՈՐ ԱԿՆԵՐՁԻ**  
**/ՄԱՂԱՔԻԱ ԱԲԵՂԱ/**  
**XIII դար**

378. Թաթար-Մոնղոլների արշավանքի ժամանակ զոհվում է հայոց  
 Հեթում թագավորի որդիներից Թորոսը, իսկ Լևոնը գերվում է: Այս  
 լուրը լսելով սգում է հայոց արքունիքը: XIII դար  
 Այնժամ իշխանները սկսեցին անմիտիթար և ծանր սգով ողբակ, վայ  
 և եղուկ ասել, հիշելով իրենց թագավորի գեղեցիկ որդիներին,  
 մեկին՝ այլազգիների մոտ ծառայելու և մյուսին՝ անօրենների ձեռ-  
 քով սրախողխող լինելու պատճառով: Այդպիսի աղիողորմ արտա-  
 սուքներով լավիս էին ոչ միայն իշխանները, այլև քահանաները,

եկեղեցու վարդապետները՝ երգելով երեմիա մարգարեի ողբը:<sup>281</sup> (Էջ 43)

## ՍՊՎՍԵՍ ԵՐՁՆԿԱՑԻ XIII դար

379. Հայոց եկեղեցու ծխակարգի մասին:

Հայսմավուրքում գտնում ենք նաև սահմանված օրերից գուրս բազմաթիվ տոներ, որոնք հույները նույնպես տոնում են: Մենք ևս տոնում ենք՝ ավելացնելով օրվա պատկերը, ինչպես և հույները, շարականով և սրբերի պատմությունների ընթերցանությամբ: Կատարյալ տոները սահմանված օրերում ենք կատարում և օրվա ընթացքում երկու կամ երեք անգամ ենք ընթերցում պատմությունները: Եվ որովհետև շատերին հաճելի է այդ սովորությունը և որը չի գայթակղում պարզամիտներին, օրվա պատկերը բոլորի համար չենք ճշտում, այլ միայն նրանց՝ ում հավանում ենք, քարոզում ենք, հիշատակում սուրբ շարականով և ընթերցում ենք տառերով:

.../Հոռմեացիները քառամորյա պահքի օրերին ալելու չեն երգում: Զատիկին նախորդող շաբաթ երեկոյան բարձրաշնչյուն ձայնով բոլորը ալելու են գոյսում, տալով Հարության ավետիսը, քանզի ալելուն Հարության երգ է, երբ կտավը, որը սպո նշան է, խաչի վրայից հեռացնում են, ջահերի ու լապտերների զգալի լույսով քարոզում են Հարության ճանաչելի լույսը: Ինչից ակներև է դառնում, որ այս կարգը հին է: ... Մեծն Կյուրեղ Աղեքսանդրացին ասույդ ասում է. «Երեկոն հեռացնենք, որովհետև վաղվա օրը կարապետ է և այդ կարապետը ավետում է ուրախություն և ոչ տիրություն»: Եվ շատ պարզ է այն, որ շաբաթ երեկոն անվանում ենք կիրակնամուտ: Այսինքն դա Հարության սկիզբն է և հավիտենական լույսը, որի խորհուրդն մասին երգվում է այս շարականում: «Ծնծութեամբ երգեացուք ի յարութեան երեկոյին» և մյուս շարականում, որտեղ ասվում է. «Սուրբ էս Տէր զօրութեանց», որտեղ երգվում է քառամորյա պահքի մասին, քանզի միայն այդտեղ է, որ Հարությունը չի հիշում: Որովհետև սկզբնապես սահմանված է, որ ամբողջ տարվա ընթացքում կիրակնամուտին առում են «Սուրբ Աստուած»-ը: Իսկ աղուհացի ժամանակ, չնայած

<sup>281</sup> Սարգիս Աքեղայ, Պատմութիւն վասն ազգին նեսուաց, Ա. Դևոնքը, 1870, (թարգմանությունը մերն է, իմբագիր՝ Ռուսականիպան): Թեև հրատարակված աղյուրի հեղինակը Մազարիս արեգան է, սակայն պատմապիտության մեջ աղյուրը վերադրվում է Գրիգոր Ակներցուն: Տե՛ւ Յ. Մելիք-Բաղշան, Հայ ժողովրդի պատմության աղյուրագիտություն, Եր. 1996, էջ 130:

**Երգվում են Հարության այլ երգեր,** «Սուրբ աստուած»-ը ասվում է  
«խաչեցար»-ով: Դա նշանակում է, որ Հինանց բոլոր չորեքշաբթի-  
ներին և ուրբաթներին անպատճառ ասվում են, և քանի որ  
աղուհացքի շաբաթ օրերը սրբերի տոները երգերով ենք պատվում,  
ուրեմն այս կիրակիները ոչ թե ապաշխարության, այլ Հարության  
**երգեր են երգվում:**<sup>282</sup> (Էջ 37-38)

### **ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱԾԻ XIII դար**

- 380.** Ի վերայ Երկնային զարդուց  
իսկ որ ՚ի հետ սորին, գօտին  
Ափրողիտէս՝ է ըստ Հունաց՝  
Զօհրայ կոչի՝ նա ՚ի յազգէն  
Եւ ըստ Հայումը Լուսարեր  
Նոյն չափ և նա՝ պատէ զգօտին՝  
Զոր փայլածուն՝ ունի զընթացս  
Սմա բնութիւն՝ ասեն լինիլ՝  
Երգեցողաց՝ և գուսանաց՝  
Քուշակական:<sup>283</sup> (Էջ 33)

- 381.** Մանկավարժական կանոններ  
Եւ կամ չըլլայ թէ օտար, ժանգոտած ու դառն ջուրի նման պիղծ  
գործեր, կամ գուսանական ձայներ ու երգեր եւ աղտելի խօսքեր  
մտնելով ականջէն, կամ գարշելի ու անպատեհ տեսարաններ՝  
աչքէն, խառնեն ու պղտորեն մաքուր ու յստակ միտքը եւ այդ ձեւով  
անպտուղ դարձնեն: (Էջ 40)

- 382.** Անբարոյականության մասին:

Իսկ ուրկէ՛ սկսաւ այս մեղքն ու չարիքը: ... Շատ ժամանակ ետք,  
սատանայի չար հնարներով Կայէնի թոռներէն այր մարդիկ

<sup>282</sup> Սովոչի հայոց վարդապետի գրեալ պատասխանիք թղթոյն Տրավիզոնի առ  
Հաստացեալն Գրիգորի Երեց, Առանձնատիպ «Էջմիածին» անսագի 1975թ. N 1,3.  
(թարգմանությունը է, խմբագիր՝ Ռուզա Հովհաննիսյան):

<sup>283</sup> Թովհաննու վարդապետի Երգնկացւոյ զարդք երկնից առ Ալպոյ իշխան, Կալկաթա,  
1846:

Հնարեցին գուսանության արուեստը, իսկ կիները՝ սնգոյրը, ծարիրը եւ արդուզարդի այլ հնարներ ...: (Էջ 48)

**383. Ծեսերի մասին:**

Կնունքի եւ Պապի ժամանակ նաեւ պէտք չէ արբենալ կամ գուսան ու բող հրաւիրել, որովհետեւ անոնք գեւերը կը հրաւիրեն:

Քրիստոնեան պէտք չէ կնունքի կամ հարսանիքի ժամանակ պարէ ու խաղայ, ինչպէս կ'ընեն գեւերու մեծեաններուն մէջ եւ ամօթն ու պարկեշտութիւնը մոռցած կը լրբնան: (Էջ 74)

**384. Հուղարկավորության ծեսի մասին:**

Սուրբ Սահակ այս մելլը եւս կանոնադրած է, որ (սպավորները) լալու ժամանակ պետք չէ գինի գործածեն եւ մեռելին վրայ ողբ ու կոծ ընեն, ինչ որ դիւական է, այլապես եկեղեցւոյ դրան առջեւ ապաշխարութեան պարտական կ'ըլլան: (Էջ 76)

**385. Զեւնագրության մասին:**

ՈՒսման չափը, ըստ Ներսես Հայոց կաթողիկոսի հրամանին, եթէ ոչ ամբողջ Ս.Գիրքը, գէթ եկեղեցական գիրքերը պետք է ուղիղ կարդան եւ բոլոր շարականներն ու երաժշտական գիտելիքները իւրացրած ըլլան: Ոմանք ոչ սաղմուները գիտեն, ոչ ալ սուրբ պատարագի աղօթքները, եւ սուտ պատարագով կը խաբեն զԱստուած ու մարդիկ: (Էջ 87)

**386. Այ կանոն՝ քահանաներու եւ սարկաւագներու վերաբերող զանազան յանցանքներու մասին:**

Կը լսենք, քաղաքի մէջ ապրող զանազան քահանաներու եւ սարկաւագներու մասին, թէ առանց խոստովանութեան, պահքի օրերուն ոչ միայն չեն հրաժարիր գինիէ, այլեւ անյագաբար խմելով՝ արբեցութեան ախտով կը մըցին՝ գինեմոլներուն հետ, անպարկեշտութեամբ կը նատին հաւաքոյիմներու մէջ կըզուարձանան գուսանական երգերով, լիտի խաղերով եւ անսանաբարոյ մարդոց բազմապիսի արարքներով: (Էջ 98)

**387. Անտիօքի ժողովի Խ. կանոնը:**

Մեծ ժողովը որոշեց որ քահանան եւ եկեղեցւոյ հաւատացեալ ժողովուրդը երբ հարսանիքի երթան, պետք չէ պարեն ու խաղան, այլ պետք է պարկեշտութեամբ հաց ուստեն, ինչպես որ քահանաներուն վայել է: (Էջ 99)

**388. Թուղթ՝ Եկեղեց գաւառի իշխանին:**

Իշխանը պետք չէ գինեմոլ ու արբեցող ըլլայ, որովհետև գինին եւ արբեցողութիւնը, գուսանն ու պարը բոլոր մարդոց կը վնասեն: Ան որ կ'ուզէ Աստուծոյ եւ իր սուրբերուն սիրելի ըլլայ, պետք է ատէ գինովութիւնը, գուսանն ու բողը: (Էջ 112-113)

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒԻՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## ԶԵՌԱԳՐԵՐ

ՄՄ, ձեռ. 5611, էջ 94ա; ձեռ. N 3937, էջ 195ա; ձեռ. 2092, էջ 223;  
Կոմիտաս, Տեսր երաժշտության, Կոմիտասի փոնդ, թիվ 655, էջ 2:  
Հ.Հովհաննիսյան, Հայ երաժշտության պատմություն, 1939, ձեռագիր,  
Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան:

## ՍԿՅԲՆԱՂԲՅՈՒԻՐՆԵՐ

Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ պատմագրութիւն անցյից իւրոց եւ Նատր-  
Շահին Պարսից, Վալարչապատ, տպ, Ս.Էջմիածնի, 1870:

Աբուակլ Հայ, Պատմութիւն եկեղեցեաց եւ վանորէից Եղիպտոսի, Վենետիկ,  
1895:

Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց: Աշխատութեամբ Գ.Տէր-Մկրտչեան եւ  
Առ.Կանայեանց, Թիֆլիս, 1909:

Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914:

Ազաթանգեղոս, Հայոց պատմություն: Աշխարհաբար թարգմանությունը և  
ծանոթագրությունները Ա.Տէր-Դեռնոյանի, Երևան, Պետ. Համալ-  
սարանի հրատ., 1983:

Առաքել Սյունեցի, Դրախտագիրը, Վենետիկ, 1956:

Պատմութիւն Արիատակիսի Լաստիւերտցւոյ: Աշխատությամբ՝ Կ.Յուղայանի,  
Երևան, ՀՍՍՀ ԳԱ., 1963:

Պատմութիւն Արիատակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ, Թիֆլիս, 1912:

Արիատակիս Լաստիվերտցի, Պատմություն: թարգմանությունը՝ Վ.Գևորգյանի,  
Երևան, «Հայաստան», 1971:

Գրիգոր Մագիստրոս, Թղթեր, բնագիրն առաջաբանով և ծանոթագրություն-  
ներով, խմբագիր Կ.Կոստանյանց, Աղէքսանդրապոյ, 1910:

Մըրբոյ Հօրն Գրիգորի Շարեկայ վանից վանականի մատենագրութիւն,  
Թիշատակագրութիւնն ապամութեան ամենազօր նշանի  
աստուծան Խաչին, Վենետիկ, 1840:

Գրիգոր Նարեկացի, Մատենա Պղբերգութեան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ. հրատ., 1985:  
Եղիշէ վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին ի լրյու ածեալ  
բարդասութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան,  
Երևան, ՀՍՍՀ ԳԱ., 1957:

Մըրբոյ Հօրն Եղիշէ վարդապետի մատենագրութիւնք, Վենետիկ, 1859:

Եղիշէ, Վարդանի և Հայոց պատերազմի մասին թարգմանությունը և ծանոթա-  
գրությունները Ե.Տէր-Մինասյանի, Երևան, Պետ. Համալսարանի  
հրատ., 1978:

Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւնն Տանն Արծրունեաց,  
Թիֆլիս, 1917:

Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւնն Տանն Արծրունեաց, ի լրյու  
էած Ք.Պ. ի Ռ. Պետերբուրգ, 1887:

- Թովմա Արծրունի և Անանուն,** Պատմություն Արծրունյաց տան: Ներածությունը, թարգմանությունը և ծանոթագրությունները Վրեմ Վարդանյանի, Երևան, 1978:
- Թովմա Մեծոփեցի,** Պատմութիւն Լանկ-թամուրայ և յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860:
- Թովմա Մեծոփեցի,** Պատմագրություն, Պատմութիւն Լանկ-թամուրայ և յաջորդաց իւրոց, աշխատասիրությամբ Լևոն Խաչիկյանի, Երևան, «Մագաղաթ», 1999:
- Թովմա Մեծոփեցի,** Ցիշատակարան, Թիֆլիս, 1892:
- Կարապետ Սամնեցի,** Ներբողեան յաղաս վարուց սրբոյն Մեսրոբյայ, «Արարատ», Էջմիածին, 1897:
- Կիրակոս Գանձակեցի,** Պատմութիւն Հայոց, աշխատությամբ Կ. Մելք-Օհանջանյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ., 1961:
- Կիրակոս Գանձակեցի,** Հայոց պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարագ Առաքելյանի, Երևան, «Սովորական գրող», 1982:
- Կորյուն,** Վարդ Մաշտոցի, բնագիրը ձեռագրական այլ ընթերցվածներով, թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով էնուն պրոֆ. Մ. Աբեղյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ., 1941:
- Կորիւն վարդապետի,** Մամբրէի Վերծանողի և Դաւթի Անհաղթի մասնագրութիւնը, Վենետիկ, 1833:
- Հեթում պատմիչ,** Պատմութիւն թաթարաց, Վենետիկ, 1842:
- Ցովհաննու Դարդիլի** ժամանակագրութիւն Հայոց, ի հայրապետութեան ՏՏ. Մակարայ վեհափառ կաթողիկոսի Հայոց, Ա. Պետերբուրգ, 1891:
- Ցովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ,** Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:
- Ցովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ,** Պատմութիւն Հայոց: Աշ-խարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Գ. Թոուունյանի, Երևան, Պետ. համալսարանի Հրատ., 1996:
- Տեառն Ցովհաննու Մանդակունցւոյ** Հայոց Հայրապետի ծառք, Վենետիկ, 1836:
- Ցովհան Մամիկոնեան,** Պատմութիւն Տարօնոյ: Աշխատությամբ և առաջաբանով Ալ. Աբրահամյանի, Երևան, 1941:
- Ցովհան Մամիկոնյան,** Տարօնի պատմություն: Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Վարդան Վարդանյանի, Երևան, «Խորհրդային գրող», 1989:
- Ցովհաննու վարդապետի Երզնկացւոյ զարդք երկնից առ Ալպոյ իշխան,** Կալկաթա, 1846:
- Ղազար Փարպեցու Հայոց Պատմութիւնը եւ Վահան Մամիկոնեանին գրած թուղթը,** թարգմանեց Մինաս Քաջ. Տէր-Պետրոյանց, Ալէքսանդրապոլի, 1895:
- Ղազար Փարպեցու Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան:** Աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Մալխասեան, Տփիսիս, 1904:
- Ղազար Փարպեցի,** Հայոց պատմություն: Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Բագրատ Ուլուբաբյանի, Երևան, Պետ. Համալսարանի Հրատ., 1982:
- Մատթէոսի Ուռհայեցւոյ** ժամանակագրութիւն, Յերուսաղէմ, 1869:

- Մատթեոս Ուռհայեցի**, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898:
- Մատթեոս Ուռհայեցի**, ժամանակագրություն, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Հրաչ Բարթիլյանի, Երևան, «Հայաստան», 1973:
- Միկիթարայ Այրիվանեցւոյ պատմութիւն Հայոց, լոյս ընծայեց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860:**
- Մովսէս Խորենացու Հայկական պատմություն, աշխարհաբար թարգմանեց և լուսաբանեց Խորէն ծայրագոյն վարդապետ Ստեփանէ, Ս.Պ.ր., 1889:**
- Մովսէս Խորենացի, Հայոց պատմություն, Քննական բնագիրը Մ.Աբքայանի և Ս.Հարությունյանի: Լրացումները Ա.Սարգսյանի, Երևան, 1991:**
- Մովսէս Խորենացի, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունն ու մեկնաբանությունները Ստ.Մալխսապանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1981:**
- Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի: Քննական բնագիրը և ներածությունը՝ Վարագ Առաքելյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1983:**
- Մովսէս Կաղանկատուացի, Պատմություն Աղուանից աշխարհի: Թարգմանությունը և առաջաբանը և ծանոթագրությունները Վարագ Առաքելյանի, Երևան, «Հայաստան», 1969:**
- Պատմութիւն Շապէհոյ Բագրատումաւոյ, ի լոյս ածին Գ.Տէր-Մկրտչեան և Մեսրոպ Եպիկոպոս, Էջմիածին, 1921:**
- Սամուէլի քահանացի Անեցւոյ Հավաքումն ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893:**
- Պատմութիւն Սեբեոսի, աշխատ. Գ.Աբգարյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1979, 446 էջ:**
- Ստեփանոս Տարոնեցի Ասոտիկի, Պատմութիւն Տիեզերական, Կետեղբուրդ, 1885:**
- Տիեզերական Պատմութիւն Ստեփանոս վարդապետի Տարօնեցւոյ, ի լոյս ընծայեց Հանդերձ ծանօթութեամբք Կարապետ վարդապետ Շահնազարեանց, Փարիզ, 1859:**
- Ստեփանոս Օրբելիան, Ողբ ի սուրբ կաթուղիկն, Թիֆլիս, 1885:**
- Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբելէան Արքեպիսկոպոսի Սիսնեաց, Թիֆլիս, 1910:**
- Ստեփանոս Օրբելիան, Սյունիքի պատմություն: Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա.Աբգարյամյանի, Երևան, «Սովորական գրող», 1986:**
- Տարեգիրք Արարեալ Սմբատայ Սպարապետի Հայոց Որդոյ Կոստանդիայ կոմսին Կոոփիկոսոյ, ի լոյս բնճայեաց Հանդերձ ծանօթութեամբք Կարապետ վարդապետ Շահնազարեանց, Փարիզ, 1859:**
- Սմբատայ Սպարապետի տարեգիրք, Վենետիկ, Հրատ. Հայկական ընդհ. միութեան, 1956:**
- Սնձին Վարդանայ Բարձրագերդցւոյ, Պատմութիւն տիեզերական, ի լոյս ընծայեց Մ.Էմին, Մոսկվա, 1861:**
- Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ, 1862:**

**Փաստոսի Բուզանդացւոյ Պատմութիւնն Հայոց ի չորս գպրութիւնս, Վենետիկ,**  
**1914:**

**Փավստոս Բուզանդ, Պատմությունն Հայոց: Թարգմանությունը, ներածությունը**  
**և ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Երևան,**  
**«Հայաստան», 1968:**

**Թուղթ ընդհանրական արարեալ երիցս երանեալ սուրբ Հայրապետին մերոյ**  
**տեսառն Ներսիսի Ծնորհալոյ, Էջմիածին, 1865:**

**Ներսես Ծնորհալի, Թուղթ ընդհանրական, աշխատասիրությամբ է. Բաղդա-**  
**սարյանի, Երևան, ՀՀ ԳԱ.՝ 1995:**

**Ներսես Ծնորհալի, Ողբ Եղեսիոյ, քննական բնագիր, բանասիրական գիտողու-**  
**թյուններ, ծանոթագրություններ Մանիկ Մկրտչյանի, Երևան,**  
**ՀՍՍՀ ԳԱ, 1973:**

**Ներսես Լամբրոնացի, Գովեստ ներբողական պատմագրական բանիւ յաղագս**  
**վարուց մեծի Հայրապետին Ներսիսի Կայեցւոյ Հայոց կաթողիկոսի,**  
**Էջմիածին, 1865:**

**Ուխտանես Եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Էջմիածին, 1871:**

**Յիշատակարանք ձեռագրայ, Հատոր Ա. (Ե-ԺԳ դդ.), Անթիլիաս, 1951:**

**Հայերեն ձեռագրերի Հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1988:**

**Հայերեն ձեռագրերի Հիշատակարաններ, ԺԳ դար, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1984:**

**ԺԴ դարի Հիշատակարաններ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1950:**

**ԺԵ դարի Հիշատակարաններ, Մասն առաջին (1401-1450թթ.), Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1955:**

**ԺԵ դարի Հայերեն ձեռագրերի Հիշատակարաններ, Մասն երկրորդ (1451-**  
**1480), Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1958:**

**ԺԵ դարի Հայերեն ձեռագրերի Հիշատակարաններ, Մասն երրորդ (1481-**  
**1500թթ.), Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1967:**

**Մօվսես Խօրենացի, История Армении, пер. с древнеарм. яз., введение и**  
**прим. Г.Саркисяна, Ереван, "Айастан", 1990.**

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Աբեղյան Մ., Երկեր, հ.1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1966:
- Աբեղյան Մ., Երկեր, հ.3, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1968:
- Աբեղյան Մ., Հայ ժողովրդական վեպը, Թիֆլիս, 1908:
- Աբգարյան Գ., Ուշուարքյան Բ., Մի Հողվածի առթիվ, Պատասխան ընդդիմախոսի, Գրական թերթ, Երևան, 1986, N50:
- Աթայան Ռ., Հայկական խազային նոտագրություն, Երևան, 1959:
- Ալիշան Ղ., Հայապատում, Վենետիկ, 1901:
- Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. Գ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1977:
- Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. Դ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1979:
- Արևշատյան Ա., «Մաշտոց» ժողովածուն որպես հայ միջնարքյան երաժշտական մշակոյթի հուչարձան, Երևան, 1991:
- Արևշատյան Ա., Ո՞վ է «Զորս լսա պատկերի Քում» շարականի հեղինակը, «Եջմիածին», 1997, Դ-ե:
- Արևշատյան Ա., Հայ միջնարքյան «Ճայնից» մեկնություններ, Երևան, 2003:
- Արևշատյան Ա., Վկայաբանություն և Շարականերգություն. Հայկական Ուժագոյնի ԴԿ դարձվածքի առեղծվածը, «Հայկագեան Հայագիտական հանդես», Բեյրութ, 2003:
- Արևշատյան Ա., Դրիգոր Մագիստրոսը շարականագիր և տաղասաց, «Արվեստ և ժամանակ. Հայագիր Գյումրուց», Գյումրի, 2007, N1:
- Արևշատյան Ա., Ստեփանոս Սյունեցի. իրական անձը և վաստակը (Սյունեցի համանուն երկու երաժիշտների գյության հարցի շուրջ), «Հայ արվեստի Հարցեր» գիտական հոդվածների ժողովածու, հ.2, Երևան, 2009:
- Ալիշան Ղ., Հուշիկը Հայրենյաց Հայոց, հ.Բ, Վենետիկ, 1921:
- Ալիշան Ղ., Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873:
- Ակնարկ Հայ երաժշտության պատմության, հեղինակներ՝ Ք.Կուշնարյան, Մ.Մուրադյան, Գ.Գյուղակյան, Երևան, 1963:
- Առաքել Սյունեցի և իւր քերթուածքները, Վենետիկ, 1914:
- Բառզիրք Հայոց, Վենետիկ, 1728:
- Բարդուղիմեոս վարդ. Գէորգիան, Խորենացուն Խորենացիով պետք է Հասկանալ, Վաղարշապատ, 1899:
- Դավթյան Հ., «Ժողուեաց» երգերի անվանման առթիվ, Էջմիածին, 1973, N7:
- Գաթրճյան Հ., Պատմություն մատենագրութեան Հայոց, Կ.Պոլիս, 1851:
- Գրիգորյան Շ., Հայոց հին գուսանական երգերը, Երևան, 1971:
- Երնջակյան Լ., Աշուղական սիրավեպի ձևալորման պատմությունից, Լրաբեր Հասարակական գիտությունների, Երևան, 2002, N 2:
- Էմին Մ., Վէպք Հնոյն Հայաստանի, Մոսկվա, 1850:
- Թահմիզյան Ն., Մեսրոպ Մաշտոցն ու Հայոց հոգևոր երգարվեստը, Բանբեր մատենագրաբանի, 1964, N7:
- Թահմիզյան Ն., Ներդաշնակության Հենքի ուսմունքը միջնարքյան Հայաստանում, (V-VIդդ.), Պատմա-բանասիրական հանդես, 1966, N1:

- Թահմիպյան Ն.**, Կոմիտասը և Հայոց հոգևոր երգարվեստի ուսումնասիրության հարցերը, Կոմիտասական, Հ.1, Երևան, 1969:
- Թահմիպյան Ն.**, Քննական տեսություն Հայոց Հին և միջնադարյան երաժշտության պատմության, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1970, N 10:
- Թահմիպյան Ն.**, Դասողություններ Փարավեցու պատմության մեջ Սահմանադրության մեջ կամաց ազդեցությունը, Երևան, 1970, N 3:
- Թահմիպյան Ն.**, Ներսես Շնորհալին՝ երաժիշտ և երգահան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1973:
- Թահմիպյան Ն.**, Սահմանադրության մեջ կեղեցական երգարվեստը, «Էջմիածին», 1973, N1:
- Թահմիպյան Ն.**, Այունեցի համանուն երկու երաժիշտները և Հարության ավագ օրհնությունները, «Էջմիածին», 1973, N2:
- Թահմիպյան Ն.**, Բարսեղ Ճոնը և մասնագիտացված երգաստեղծության ծաղկումը Հայաստանում VII դարում, Բանբեր Եր. Համալսարանի, 1973, N1:
- Թահմիպյան Ն.**, Հաղարձնի վանքը և Խաչատուր Տարոնեցի երաժիշտ վարդապետը, Գիտական աշխատությունների միջբուհական ժողովածու, Արվեստագիտություն, Երևան, 1975:
- Թահմիպյան Ն.**, Անանիա Նարեկացու և Նարեկա վանքի երաժշտական ավանդույթների մասին, «Էջմիածին», 1976, N9:
- Թահմիպյան Ն.**, Գրիգոր Նարեկացին և Հայ երաժշտությունը V-XVդր., Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1985:
- Թահմիպյան Ն.**, Արդի հայաբանութիւն, Փասադենա, 2003:
- Թամրազյան Հ.**, Անանիա Նարեկացի: Կյանքը և մատենագրությունը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1986:
- Լեռնյան Գ.**, Աշուղական արուեստը, «Ազգագրական հանդիս», 1906, N13:
- Լեռնյան Գ.**, Թատրոնը Հին Հայաստանում, Երևան, 1941:
- Խաչկոնց Դ.**, Հայոց կրոնական բանաստեղծությունը, Թիֆլիս, 1904:
- Խանջապյան Է.**, Հայկական Հին երաժշտական գործիքները, Առանձնատիպ Հայաստանի պիտույքամական թանգարանի «Աշխատություններից», Հ.5, Երևան, 1959:
- Խաչերեան Լ.**, Գրիգոր Պահապունի Մագիստրոս: Կեանքն ու գործունէութիւնը, Լու Անճելլս, 1987:
- Խեչումյան Վ.**, Կոծի թատերականացված հանդեսներ, Սովետական գրականություն, 1972, N7:
- Խուզաբայյան Կ.**, Անահիտ ղիցուհու պաշտամունքի երաժշտաբանաստեղծական վերաբերությունները, Հայ ժողովրդական մշակույթ, XI հանրապետական գիտաժողով, Զեկուցումների Հիմնադրութներ, Երևան, 2001:
- Կոմիտաս**, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941:
- Հայ ժողովրդի պատմություն, Հ.Ա, Հ.Բ, Հ.Գ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1971, 1984, 1976:

- Հակոբյան Գ., Շարականների ժամրը հայ միջնադարյան գրականության մեջ,**  
Երևան, 1980:
- Համբարձումյան Հ., Մտորումներ Հոմերոսի մասին, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1964:**
- Հացոմի Վ., Ճաշեր և խնճույք հին Հայաստանի մեջ, Վենետիկ, 1912:**
- Հովհաննիսյան Հ., Թատրոնը միջնադարյան Հայաստանում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1978:**
- Հովհաննիսյան Հ., Հայ հին գրաման և նրա պայմանաձևերը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1990:**
- Զայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ պատարագի, Վաղարշապատ, 1878:**
- Զայնագրեալ Շարական հոգեոր երգոց, Երևան, 1997, Առաջարան, էջ XVIII:**
- Մելքոնյան Սպ., Հունական ազգեցությունը հայ երաժշտության տեսականի վրա,**  
**Թիֆլիս, 1914:**
- Մելքոնյան Սպ., Ուրվագիծ հայ երաժշտության պատմության, Երևան, 1935:**
- Մելքոնյան Սոտ., Հայ ժողովրդի պատմության աղյոյւրագիտություն,**  
**Երևան, 1996:**
- Միսիթար Գոշ, Ողիմպիանու և Եղովասիր ընտիր առակները, թարգմանությունը**  
**Խորէն քաջանա Միրզաքելյանի, Բաքու, Հայոց մարդասիրական**  
**ընկերության տպարան, 1878:**
- Նավոյան Մ., Տաղերի ժամրի ծագումնաբանությունը և ազատ մեղեղիաան**  
**մտածողությունը հայ միջնադարյան մասնագիտացված երգար-**  
**վեստում, Երևան, «Արճեց», 2001:**
- Նոր բառովիրք Հայկագեան լեզուի, Հ. Ա., Վենետիկ, 1836:**
- Նոր բառովիրք Հայկագեան լեզուի, Հ. Բ., Վենետիկ, 1837:**
- Շահվերդյան Ալ., Հայ երաժշտության պատմության ակնարկներ, Երևան, 1959:**
- Պալասանյան Սոտ., Պատմություն Հայոց գրականության, Թիֆլիս, 1865:**
- Սահակիան Ա., Փահլեւանեան Ա., Սաման ծոեր դիւյագնավէպը,**  
**առասպեկական ընդերք, վիպական կառոյց, վիպասանական**  
**եղանակ, Փասատինա, 1996:**
- Ստեփանյան (Հարությունյան) Հ., Անհատ երաժիշտների մասին հիշատակու-**  
**թյունները հայ պատմագրության մեջ, ԳԱԱ ՇՀՀ կենարոնի «Գի-**  
**տական աշխատություններ», Հ.4, Գյումրի, 2001:**
- Ստեփանյան (Հարությունյան) Հ., Որոշ դիտարկումներ օրհնության ժամրի**  
**մասին, «Մանրուսում» միջազգային երաժշտագիտական**  
**տարեգիրք, Հ.Ա., Երևան, 2002:**
- Ստեփանյան (Հարությունյան) Հ., Երաժշտությունը միջնադարյան Անիում, ՀՀ**  
**ԳԱԱ ՇՀՀ կենարոնի «Գիտական աշխատություններ», Հ.1,**  
**Գյումրի, 1998:**
- Ստեփանյան (Հարությունյան) Հ., Երաժշտությունը հին Հայոց ողբական**  
**արարողությունում: Միասկան պարը հայոց մեջ, Երևան, 2002:**
- Ստեփանյան (Հարությունյան) Հ., Հին Հայաստանի երաժշտական մշակութի-**  
**հարցերը Սրբուհի Լիսիցյանի աշխատություններում, ԳԱԱ ՇՀՀ**  
**կենարոնի «Գիտական աշխատություններ», Հ.6, Գյումրի, 2003:**
- Ստեփանյան (Հարությունյան) Հ., Երաժշտության տեսության խնդիրներին**  
**առնչվող հիշատակությունները հայ միջնադարյան**

պատմագրության մեջ, ԳԱԱ. ՇՀՀ կիստրոնի «Գիտական աշխատություններ», հ.7, Գյումրի, 2005:

**Ստեփանյան (Հարությունյան) Հ.**, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները վկայում են («Անհատ երաժշտություններ»), «Երաժշտական Հայաստան», Երևան, 2004, N 1 (12), էջ 21-23:

**Ստեփանյան (Հարությունյան) Հ.**, Մանագիտագիտական երաժշտության ժանրերի մասին հիշատակությունները Հայ միջնադարյան պատմագրության մեջ, «Մանրուսում» միջազգային երաժշտագիտական տարեփետք, հ.Բ, Երևան, 2005:

**Ստեփանյան (Հարությունյան) Հ.**, Հայոց գրերի գյուտը երաժշտատեական ինդիրների համատեքստում, Հայոց գրերի գյուտի 1600-ամյակին նվիրված միջազգային գլուխողութիւն գեկուցումների ժողովածու, Երևան, 2005:

**Ստեփանյան (Հարությունյան) Հ.**, Հայ միջնադարեան երաժշտութեան տեսութեանն առնչուղի յիշատակութիւնները Ե-ԺԵ դգ. ձեռագրերի յիշատակարաններում, Հայկագեան Հայագիտական Հանդէս, հ. ԻԶ, Պէյրութ, 2006:

**Ստեփանյան (Հարությունյան) Հ.**, Նվագարանները Հայ միջնադարյան գուսանական արվեստում, «Արվեստ և ժամանակ. Հայացք Գյումրուց», Գյումրի, 2006, N1:

**Ստեփանյան (Հարությունյան) Հ.**, Նվագարանները Հին Հայոց բանակում, ԳԱԱ. ՇՀՀ կենտրոնի «Գիտական այխատություններ», հ.9, Գյումրի, 2006:

**Ցիցիկյան Ա.**, Հայկական աղեղնային արվեստը, Երևան, 1977:

**Քալանթար Լ.**, Արվեստի մայրուղիններում, Երևան, 1963:

**Քաջունի Մ.**, Բառզիրք արուեստից և գիտութեանց և գեղեցիկ դպրութեանց, հ.Ա, Վենետիկ, 1892:

**Քոչարյան Ա.**, Երաժշտական գործիքները Հայաստանում: Հարկանային և չնչական գործիքներ, Երևան, «Ամրոց գրուպ», 2008:

**Օրմանյան Մ.**, Հայոց եկեղեցին, Կ. Պոլիս, 1912:

**Օրմանյան Մ.**, Ծիսական բառարան, Երևան, 1992:

**Ածոնց Հ.**, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915.

**Գօյն Գ.**, 2000 лет армянского театра, т. 1, Москва, 1952.

**Լիսիցյան Հ.**, Старинные пляски и театральные представления армянского народа, т.1, Ереван, 1958.

**Կոշնարես Խ.**, Вопросы истории и теории армянской монодической музыки, Ленинград, 1958.

**Տամազյան Հ.**, Теория музыки в древней Армении, Ереван, 1977.

**Տամազյան Հ.**, Ован Мандакуни и армянское духовное профессиональное песнопение.// V республиканская научная конференция по проблемам культуры и искусства Армении //, тезисы, Ереван, 1982.

**Տեր-Мարտirosов Փ.**, Терракоты из Аратшата (находки 1970), Լրագեր Հասարակական գիտությունների, 1973, N4:

**Խալատյան Գ.**, Армянский эпос в истории Армении Моисея Хоренского, т.1, Москва, 1896.

**Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

**Առաջաբան.....3**

**Գլուխ Ա.**

Հայ միջնադարյան պատմագրական աղբյուրների դերը  
նախաքրիստոնեական շրջանի երաժշտապատմական  
խնդիրների բացահայտման մեջ.....15

**Գլուխ Բ.**

Աշխարհիկ երաժշտական մշակույթի միջնադարյան  
բնորոշիչների արժեքավորումը Հայ պատմագրական  
աղբյուրների համատեքստում.....48

**Գլուխ Գ.**

Պատմագրական աղբյուրների ճանաչողական նշանակությունը  
Հայ միջնադարյան մասնագիտացված երաժշտության  
ուսումնասիրության մեջ.....72  
Ամփոփում.....112  
Ամփոփում անզերեն.....117  
Բնագրային հավելված .....121  
Սկզբնաղբյուրներ և գրականության ցանկ .....210

ՀԱՍՏԻԿ ՀԱՅԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ

ԵՐԱԺԾՏՈՒԹՅՈՒՆԸ V-XV դարերի  
ՀԱՅ ՍԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

HASMIK HARUTYUNYAN

MUSIC IN THE V-XV CENTURIES'  
ARMENIAN LITERATURE

Շապիկի առաջին էջին՝ Հ. ՀՈՎՆԱԹԱՆՑԱՆ  
«Ար Մովսես Խորենացի»

Հեղինակի Էլեկտրոնային հասցեն՝ [hasmik.har@mail.ru](mailto:hasmik.har@mail.ru)

Արքագրիչ և տեխ. խմբագրի՝ Ռ. Պ. Հովհաննիսյան  
Համակարգչային շարվածք  
և ձևավորում՝ Լ. Հ. Կոստանյանի

---

Պատկեր՝ N 0012, տպաքանակը՝ 200

Հանձնված է Հրատարակման 15. 12. 2009թ.

Շարվածքը համակարգչային, 13 հրատ մամուլ, չափար՝ 60x84 1/16,  
տպագրությունը՝ օֆսելթ:

Տպագրությունը՝ Ա/Զ Ռ. Ավետիսյան  
Հասցեն՝ ՀՀ, 3110, ք. Գյումրի, Գորկու 67/62